

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ՝
«ՀՀ ՆԳՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ» ՊՈԱԿ

«ՕՐԵՆՔԻ ՊԱՏՎԱՐ»
ԳԻՏԱՄԵԹՈՂԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ

ԱՄՍԱԳԻՐՆ ԸՆԴԳՐԿՎԱԾ Է ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԴՐՈՒՅԹՆԵՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ
ՀԱՄԱՐ ՀՀ ԿԳՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԿՈՄԻՏԵԻ
ՀԱՄԱՐ ԸՆԴՈՒՆԵԼԻ ԳԻՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՑԱՆԿՈՒՄ

*Հրատարակվում է ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի գիտական
խորհրդի երաշխավորությամբ*

Լրատվական գործունեության իրականացնող՝
«ՀՀ ՆԳՆ կրթահամալիր» ՊՈԱԿ, գրանցման վկայական
03Ա085891՝ տրված 15.09.2009թ.

Հասցե՝ Երևան 0004, Ծովակալ Իսակովի պողոտա 29

Էլեկտրոնային կայք՝ www.edupolice.am,

Էլեկտրոնային փոստ՝ orenqipatvarjournal@mail.ru,

Հեռ. 010-77-15-24

Համարի թողարկման պատասխանատու՝ պատասխանատու քարտուղար

Լ. Դավթյան:

Խմբագրությունը կարող է հրապարակել նյութեր՝ համամիտ չլինելով
հեղինակների տեսակետներին:

ОСНОВАТЕЛЬ И ИЗДАТЕЛЬ:
ГОСУДАРСТВЕННАЯ НЕКОММЕРЧЕСКАЯ ОРГАНИЗАЦИЯ «ОБРАЗОВАТЕЛЬНЫЙ
КОМПЛЕКС МВД РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ»
научно-методический журнал
«ЗАЩИТНИК ЗАКОНА»

*Издается по рекомендации Научного совета
Образовательного комплекса МВД Республики Армения*

**ЖУРНАЛ РЕКОМЕНДОВАН ВЫСШИМ КВАЛИФИКАЦИОННЫМ КОМИТЕТОМ И
ВКЛЮЧЕН В ПЕРЕЧЕНЬ ВЕДУЩИХ РЕЦЕНЗИРУЕМЫХ НАУЧНЫХ ЖУРНАЛОВ И
ИЗДАНИЙ, В КОТОРЫХ ПУБЛИКУЮТСЯ ОСНОВНЫЕ НАУЧНЫЕ РЕЗУЛЬТАТЫ
ДИССЕРТАЦИЙ НА СОИСКАНИЕ УЧЕНЫХ СТЕПЕНЕЙ ДОКТОРА И КАНДИДАТА НАУК**

Адрес: Ереван 0004, проспект Адмирала Исакова, 29

Официальный сайт: www.edupolice.am

Электронная почта: orenqipatvarjournal@mail.ru

Тел: 010-77-15-24

Ответственный за выпуск номера: ответственный секретарь Лилит Давтян

FOUNDER AND PUBLISHER:
“MIA EDUCATIONAL COMPLEX OF RA” STATE NON-PROFIT ORGANIZATION
“BULWARK OF LAW” scientific-methodical journal
*It is published with the warranty of the Scientific Council
of the MIA Educational Complex of RA*

**THE JOURNAL IS INCLUDED IN THE MAIN RESULTS AND FOR PUBLISHING THE THESIS IN
RA’S MINISTER OF EDUCATION AND SCIENCE HIGHER QUALIFICATION COMMITTEE’S IN
THE ACCEPTED SCIENTIFIC PUBLICATIONS LIST**

Address: 0004, Yerevan, 29 Admiral Isakov Avenue,

Official web-cite: www.edupolice.am

E-mail: orenqipatvarjournal@mail.ru

Tel.: +374 10-77-15-24

Journal Issue Manager, Responsible Secretary L. Davtyan

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Գլխավոր խմբագիր – ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար, ի.գ.թ., դոցենտ **Մանուկ Մուրադյան**,

Գլխավոր խմբագրի տեղակալ – ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի գիտահետազոտական և նորարարությունների գծով աշխատանքները համակարգող պրոռեկտոր **Էմիլ Մարգարյան**,

Պատասխանատու քարտուղար – ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի գիտական հետազոտությունների, նորարարությունների և կրթության զարգացման բաժնի առաջատար մասնագետ **Լիլիթ Դավթյան**:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝

ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ուսումնական աշխատանքները համակարգող պրոռեկտոր, ի.գ.թ., դոցենտ **Միսակ Մարկոսյան**,

Իրավաբանական գիտությունների դոկտոր **Գրիգոր Բաղիրյան**,

ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ոստիկանական ուսումնական ստորաբաժանման պետ, ի.գ.թ., դոցենտ **Գագիկ Գրիգորյան**,

ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ուսումնական գործընթացի կազմակերպման, վերահսկման և շարունակական կրթության ապահովման բաժնի պետ, ի.գ.թ., դոցենտ **Արտակ Մնացականյան**,

ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ոստիկանական ուսումնական ստորաբաժանման պետի տեղակալ, ի.գ.թ., դոցենտ **Արտակ Հովհաննիսյան**,

ՀՀ ՆԳՆ իրավաբանական վարչության պետ, ի.գ.թ. **Ռուսլան Մարանդյան**,

ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի դատավոր, ի.գ.թ., դոցենտ **Ռաֆիկ Խանդանյան**,

ՀՀ վարչական դատարանի նախագահ, ի.գ.թ. **Կարեն Զարիկյան**,

ՀՀ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատավոր, ի.գ.թ. **Զոն Հայրապետյան**,

ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ոստիկանական ուսումնական ստորաբաժանման քրեական իրավունքի և քրեական դատավարության ամբիոնի պայմանագրային դասախոս, ի.գ.թ., դոցենտ **Դավիթ Թումասյան**,

ՀՀ Սահմանադրական դատարանի նախագահի խորհրդական, ՀՀ վաստակավոր իրավաբան, ի.գ.դ., պրոֆեսոր **Աշոտ Խաչատրյան**,

Արդարադատության ակադեմիայի ռեկտոր, ի.գ.դ., պրոֆեսոր **Սերգեյ Առաքելյան**,

ՀՀ վաստակավոր իրավաբան, ի.գ.թ. **Հովհաննես Քոչարյան**,

ՌԴ ՆԳՆ Կրասնոդարի համալսարանի պետի առաջին տեղակալ, ոստիկանության գեներալ-մայոր, տ.գ.դ., պրոֆեսոր **Օլեգ Բուլզակով**,

ՌԴ ՆԳՆ կառավարման ակադեմիայի պետի տեղակալ, ոստիկանության գեներալ-մայոր, ի.գ.թ., դոցենտ **Ալեքսանդր Պարադնիկով**,

ՌԴ ՆԳՆ Սանկտ Պետերբուրգի համալսարանի պետի գիտական աշխատանքների գծով տեղակալ, ոստիկանության գնդապետ, ի.գ.դ., պրոֆեսոր **Մակսիմ Բավսուն**,

ՌԴ ՆԳՆ կառավարման ակադեմիայի պետական կառավարման տեսության և մեթոդոլոգիայի ամբիոնի պետի տեղակալ, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, դոցենտ **Անդրեյ Անիսին**:

РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ

Главный редактор - временно исполняющий обязанности ректора Образовательного комплекса МВД РА, кандидат юридических наук, доцент **Манук Мурадян**

Заместитель главного редактора - проректор по научно-исследовательской и инновационной работе Образовательного комплекса МВД РА **Эмиль Маргарян**

Ответственный секретарь - ведущий специалист отдела научных исследований, инноваций и развития образования Образовательного комплекса МВД РА **Лилит Давтян**.

ЧЛЕНЫ РЕДАКЦИОННОГО СОВЕТА

Проректор по координации учебной работы Образовательного комплекса МВД РА, кандидат юридических наук, доцент **Мисак Маркосян**

Доктор юридических наук **Григор Бадилян**
Начальник полицейского учебного подразделения Образовательного комплекса МВД РА, кандидат юридических наук, доцент **Гагик Григорян**

Начальник отдела организации, контроля и обеспечения непрерывного образования Образовательного комплекса МВД РА, кандидат юридических наук, доцент **Артак Мнацаканян**

Заместитель начальника полицейского учебного подразделения Образовательного комплекса МВД РА, кандидат юридических наук, доцент **Артак Ованнисян**

Начальник Юридического управления МВД РА, кандидат юридических наук **Руслан Марандян**

Судья Апелляционного административного суда РА, кандидат юридических наук, доцент **Рафик Ханданян**

Председатель Административного суда РА, кандидат юридических наук **Карен Зарикян**

Судья Уголовного суда общей юрисдикции РА г.Ереван, кандидат юридических наук **Джон Айрапетян**

Преподаватель кафедры уголовного права и уголовного судопроизводства полицейского учебного подразделения Образовательного комплекса МВД РА на договорной основе, кандидат юридических наук, доцент **Давид Тумасян**

Советник председателя Конституционного суда РА, Заслуженный юрист РА, доктор юридических наук, профессор **Ашот Хачатрян**

Ректор Академии юстиции, доктор юридических наук, профессор **Сергей Аракелян**

Заслуженный юрист РА, кандидат юридических наук **Ованнес Кочарян**

Первый заместитель начальника Краснодарского университета МВД России, генерал-майор полиции, доктор технических наук, профессор **Олег Булгаков**

Первый заместитель начальника Академии управления МВД РФ, генерал-майор полиции, кандидат юридических наук, доцент **Александр Парадников**

Заместитель начальника по научной работе Санкт-Петербургского университета МВД РФ, полковник полиции, доктор юридических наук, профессор **Максим Бавсун**

Заместитель начальника кафедры теории и методологии государственного управления Академии управления МВД РФ, доктор философских наук, доцент **Андрей Анисин**.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Բաբախանյան Արման

Քրեական օրենսգրքի ընդհանուր սաստիկ քրեական ենթաստիպանություններ
 Առնչվող հրավանդմանի ստիպանման ուղի շարունակներ.....7

Բազրատյան Ազատ

Հաստատված հետազոտությունների համար նորոգումների
 Հավաքում օրենսդիր-հետազոտման միջոցառման արդյունքներ
 Օգտագործման անհանգստություններ.....22

Իսրայելյան Գևորգ

Հաստատված հետազոտություններ հասարակ առաջ քրեականության
 Պատկերը հաստատված հանրապետություններում.....29

Հարությունյան Հերբերտ

Սահմանադրականության համար նորոգումներ ուղիք սահմանադրական
 Պատկերը հետազոտման փաստական հիմք.....36

Հովսեփյան Արմինե

Հանձնարարական լիազորությունների հիմնարկում հրավաճառություններ
 Խախտման հետազոտությունները եվ ղեկավարվում են ուղիներ.....48

Ղամբարյան Արթուր, Մուրադյան Մանուկ, Շաքարյան Թամարա

Միջազգային Պատկերը հանձնարարական հիմնարկում ենթաօրենսդրական
 Արդյունքները հանձնարարական (հետազոտման հիմնարկում եվ
 Վարչարարականության հիմնարկում).....61

Ղամբարյան Արթուր

Մեծամասնության արդարադատություններ.
 Տեսանկյունները մոդերնի եվ հետազոտությունների գերազանցությունները միջակ.....98

Մանուկյան Մարտին

Իշխանությունների հանձնարարական սպառնալիք
 Իրականացման հիմնարկում.....118

Մարկոսյան Միսակ

Տրանսպարանտություն միջոցի հավանական հասարակության հետ հարաբերություն
 Հանձնարարությունների եվ վարչական հրավաճառություններ
 Որպեսզի ուղի շարունակ.....128

Մարգարյան Արգար

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎ ԻՐԱՎԱԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ.....140

Մկրտումյան Աննա

ԿԵՆՍԱԲԺՇԿԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ՓՈԽՊԱՏՎԱՍՏՄԱՆ
ՆՊԱՏԱԿՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՄԱՐԴՈՒ ՕՐԳԱՆՆԵՐԻ ԵՎ ՀՅՈՒՄՎԱԾՔՆԵՐԻ
ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՈՒՄ.....149

Նալբանդյան Անահիտ

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՕՐԵՆՔՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ՆՈՐՄԱՏԻՎ
ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՄԻԱՏԵՍԱԿ ԿԻՐԱՌՄԱՆ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ
ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ.
ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՍՊԵԿՏՆԵՐ.....166

Շահումյան Անահիտ

ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ
ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ.....175

Иващенко Н.

АДМИНИСТРАТИВНО-ПРАВОВЫЕ АСПЕКТЫ ПРИМЕНЕНИЯ ФИЗИЧЕСКОЙ СИЛЫ
СОТРУДНИКАМИ ПОЛИЦИИ РОССИЙСКОЙ ФЕДЕРАЦИИ.....184

Русакова Галина

МУЛЬТИСЕНСОРНАЯ МЕТОДИКА ОБУЧЕНИЯ ИНОСТРАННОМУ ЯЗЫКУ
БУДУЩИХ СОТРУДНИКОВ ПОЛИЦИИ.....188

Տարդարյան Լուսինե

НЕКОТОРЫЕ ПСИХОЛОГИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ ТАКТИКИ ДОПРОСА.....193

Zaqaryan Ashot

PROHIBITIONS AS A MODERN MEANS OF LEGAL LIMITATION OF STATE POWER.....199

ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԱԳՐՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍՈՒՄ ՔՐԵԱԿԱՆ ԵՆԹԱՄՇԱԿՈՒՅԹԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԻՐԱՎԱՆՈՐՄԵՐԻ ԱՄՐԱԳՐՄԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱՀԱՐՅԵՐ

Բաբախանյան Արման

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի

քրեական իրավունքի ամբիոնի դասախոս,

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի դատավորի օգնական

DOI: 10.63925/18294847-2025.19op-01

Համառոտագիր: Սույն հոդվածում քննարկման առարկա է դարձվել ՀՀ քրեական օրենսգրքի Ընդհանուր մասում քրեական ենթամշակույթին առնչվող իրավա-կարգավորումների ամրագրման որոշ հիմնահարցեր: Հետազոտության արդյունքում հեղինակը եզրակացրել է, որ ՀՀ քրեական օրենսգրքի ընդհանուր մասի որոշ ինստիտուտներում առկա է քրեական ենթամշակույթին առնչվող հատուկ իրավա-կարգավորումներ սահմանելու անհրաժեշտությունը, իսկ մյուսներում այդպիսի իրավակարգավորումների բացակայությունը որևէ կերպ չի խոչընդոտում քրեական ենթամշակույթի դեմ արդյունավետ քրեաիրավական պայքար մղելուն՝ հաշվի առնելով նաև արտասահմանյան որոշ երկրների փորձը:

Բանալի բառեր: քրեական ենթամշակույթ, գողական աշխարհ, օրենքով գող, գողական աշխարհի ներկայացուցիչներ, քրեական օրենսգրքի ընդհանուր մաս:

1. Ներածություն

Քրեական ենթամշակույթի դեմ քրեաիրավական արդյունավետ և համալիր պայքար մղելու հանգամանքով պայմանավորված՝ կարևոր ենք համարում անդրադառնալ 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի¹ (այսուհետ նաև՝ գործող Օրենսգիրք) Ընդհանուր մասում առկա ինստիտուտներում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտության հարցին:

Գործող Օրենսգրքի ընդհանուր մասում առկա՝ քրեական ենթամշակույթին առնչվող միակ կարգավորումը նախատեսված է 85-րդ հոդվածում (պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելը), որում, որպես դատապարտյալի կողմից նոր հանցանք կատարելու հավանականությունը գնահատելիս հաշվի առնվող հանգամանք, օրենսդիրը դիտարկում է քրեական ենթամշակույթի նկատմամբ ունեցած վերա-

¹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք, ՀՕ-199-Ն, ընդունվել է 2021 թվականի մայիսի 5-ին, ուժի մեջ է մտել 2022 թվականի հուլիսի 1-ին, միասնական կայք, 2021.05.17-2021.05.30, պաշտոնական հրապարակման օրը՝ 27.05.2021:

բերմունքը: Նույնանման կարգավորում առկա էր նաև 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի² (այսուհետ նաև՝ նախկին Օրենսգրք) 76-րդ հոդվածում:

Հատկանշական է, որ «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2020 թվականի հունվարի 22-ի թիվ ՀՕ-87-Ն Հայաստանի Հանրապետության օրենքով³ փոփոխություններ և լրացումներ կատարվեցին միայն նախկին Օրենսգրքի հատուկ մասում և, ի թիվս այլնի, նախատեսվեցին քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ տալու կամ ստանալու, կամ պահպանելու, քրեական ենթամշակույթ կրող խմբավորում ստեղծելու կամ դեկավարելու, քրեական ենթամշակույթ կրող խմբավորմանը մասնակցելու կամ ներգրավելու, քրեական ենթամշակույթ կրող խմբավորման մասնակցին կամ քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող անձին դիմելու հանցակազմերը⁴: Նույնիսկ, այդ օրենքի նախագծի հիմնավորման մեջ⁵ չկար որևէ անդրադարձ քրեական ենթամշակույթի դեմ պայքարի արդյունավետությունը բարձրացնելու տեսանկյունից նախկին Օրենսգրքի ընդհանուր մասի ինստիտուտներում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտությանը:

Վերոգրյալով պայմանավորված՝ անհրաժեշտ է քննարկել գործող Օրենսգրքի ընդհանուր մասի որոշ ինստիտուտներում քրեական ենթամշակույթին առնչվող իրավակարգավորումներ նախատեսելու անհրաժեշտությունը՝ հաշվի առնելով նաև արտասահմանյան երկրների փորձը:

Հիմնական հետազոտություն

Գործող Օրենսգրքի 12-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված դեպքերում քրեական օրենքով նախատեսված արարքը Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս կատարած Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, այդ թվում՝ երկքաղաքացիություն ունեցող անձանց, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում

² Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրք, ՀՕ-528-Ն, ընդունվել է 2003 թվականի ապրիլի 18-ին, ուժի մեջ է մտել 2003 թվականի օգոստոսի 1-ին, ուժը կորցրել է 2022 թվականի հուլիսի 1-ին, ՀՀՊՏ 2003.05.02/25(260) Հոդ.407:

³ Տե՛ս «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՕ-87-Ն Հայաստանի Հանրապետության օրենք, ընդունվել է 2020 թվականի հունվարի 22-ին, ուժի մեջ է մտել 2020 թվականի փետրվարի 22-ին, ուժը կորցրել է 2022 թվականի հուլիսի 1-ին, ՀՀՊՏ 2020.02.21/13(1568) Հոդ.167:

⁴ Հարկ է նշել, որ նախկին Օրենսգրքով նախատեսված, վերը թվարկված հանցակազմերը որոշակի փոփոխություններով տեղ են գտել նաև գործող Օրենսգրքի 322-325-րդ հոդվածներում:

⁵ Տե՛ս «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2020 թվականի հունվարի 22-ի թիվ ՀՕ-87-Ն և «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» 2020 թվականի հունվարի 22-ի թիվ ՀՕ-88-Ն Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի ընդունման անհրաժեշտության վերաբերյալ հիմնավորումը (հասանելի է http://www.parliament.am/draft_docs7/K-288_himnavorum.pdf հղումով 16.10.2024թ. դրությամբ):

մշտապես բնակվող, քաղաքացիություն չունեցող անձանց, Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակով բնակվող, ապաստան հայցող կամ ապաստան ստացած անձանց քրեական պատասխանատվության հարցը լուծվում է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով՝ անկախ արարքը կատարելու վայրի պետության տարածքում այն հանցանք համարվելուց:

Նախկին Օրենսգրքով ոչ թե նշվում էր «ՀՀ միջազգային պայմանագրերով սահմանված դեպքերում» արտահայտությունը, այլ ներկայացված էր հանցավոր արարքների սահմանափակ շրջանակ, որոնց պարագայում ՀՀ քրեական օրենսդրությունը կիրառելի էր՝ անկախ այդ արարքների փաստացի կատարման պետությունում դրանք քրեականացված լինելուց, օրինակ՝ կաշառք ստանալը, կաշառք տալը և այլն: Գործող Օրենսգրքում տեղ գտած մոտեցումն առավել արդարացված է թվում, քանի որ ՀՀ-ի կողմից նոր միջազգային պարտավորությունների ստանձնման պարագայում կարիք չի լինի քրեական օրենսգրքում անընդհատ փոփոխություններ կատարել⁶:

Գողական աշխարհի ներկայացուցիչների, այդ թվում նաև՝ «օրենքով գողերի» որոշ մասը գտնվում է տարբեր երկրներում⁷, որտեղից էլ կարող են իրականացնել իրենց «գործառույթները»: Այլ կերպ՝ անձինք գործող Օրենսգրքի 322-325-րդ հոդվածներով սահմանված հանցակազմերով նախատեսված արարքները կարող են կատարել՝ գտնվելով նաև ՀՀ-ի սահմաններից դուրս, այդ թվում նաև՝ այնպիսի երկրներում, որտեղ այդպիսի արարքները քրեականացված չեն:

Հատկանշական է, որ «օրենքով գողերի» կողմից իրականացվող հսկողության առավել նկատելի առանձնահատկություններից է նրանց հեղինակությունը հանցավոր շրջանակներում՝ հիմնված համբավի վրա: Այսպիսով՝ ֆիզիկական ներկայությունն ընդհանրապես որոշիչ գործոն չէ այս հանցավոր ղեկավարների իշխանության և հեղինակության համար: Ընդհակառակը, հաղորդակցության լավ զարգացած ցանցը և հասարակության կողմից հանցավոր ղեկավարների դրական ընկալումն ապահովում են նրանց ազդեցությունը հանցավոր աշխարհում⁸:

Նման պայմաններում հարկ ենք համարում քննարկել, թե արդյո՞ք գործող Օրենսգրքի 322-325-րդ հոդվածներով սահմանված հանցակազմերով նախատեսված արարքները ՀՀ տարածքից դուրս կատարած ՀՀ քաղաքացիներին, այդ թվում՝ երկքաղաքացիություն ունեցող անձանց, ինչպես նաև ՀՀ-ում մշտապես բնակվող, քաղաքացիություն չունեցող անձանց, ՀՀ-ում փախստականի կարգավիճակով բնակվող, ապաստան հայցող կամ

⁶ Տե՛ս **Գաբուլյան Ա., Մարգարյան Ա., Միմոնյան Ս.**, ՀՀ քրեական նոր օրենսգրքում տեղ գտած հայեցակարգային մոտեցումների և նոր ինստիտուտների մեկնաբանման ուղեցույց, Եվրոպայի խորհուրդ, 2022, էջ 39, (հասանելի է <https://rm.coe.int/new-criminal-code-guideline-arm/1680a72c57> հղումով 16.10.2024թ. դրությամբ):

⁷ Տե՛ս **Малинин В.Б.** “Воры в законе” за рубежом: история проникновения, American Scientific Journal, 2017, № 15, էջեր 65-67, (հասանելի է <https://www.elibrary.ru/item.asp?id=32357014> հղումով 16.10.2024թ. դրությամբ):

⁸ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ Ashlarba v. Georgia գործով 2014 թվականի հուլիսի 15-ի վճռի 23-րդ կետը, գանգատ թիվ 45554/08, (հասանելի է <https://hudoc.echr.coe.int/?i=001-145572> հղումով 16.10.2024թ. դրությամբ):

ապաստան ստացած անձանց քրեական պատասխանատվության հարցը հնարավոր է լուծել գործող Օրենսգրքով՝ անկախ այդ արարքները կատարելու վայրի պետության տարածքում դրանք հանցանք համարվելուց: Այլ կերպ՝ արդյո՞ք առկա է Հայաստանի Հանրապետության որևէ միջազգային պայմանագիր, որը հնարավորություն կտար գողական աշխարհին առնչվող անձանց, գործող Օրենսգրքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով, ՀՀ-ում ենթարկել քրեական պատասխանատվության՝ քննարկվող հանցանքները ՀՀ տարածքից դուրս կատարելու դեպքում:

Այսպես, կազմակերպված հանցավորության դեմ պայքարի ոլորտում Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերը, մասնավորապես՝ «Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ» Միավորված ազգերի կազմակերպության կոնվենցիան⁹, «Սևծովյան տնտեսական համագործակցության մասնակից պետությունների կառավարությունների միջև հանցավորության և հատկապես դրա կազմակերպված ձևերի դեմ պայքարի բնագավառում համագործակցության մասին» համաձայնագիրը¹⁰, «Հանցավորության դեմ պայքարում Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների համագործակցության մասին» համաձայնագիրը¹¹, ինչպես նաև «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» Մինսկի կոնվենցիան¹², «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» Քիշնևի կոնվենցիան¹³, «Քրեական գործերով փոխադարձ օգնության մասին» եվրոպական կոնվենցիան¹⁴, չեն նախատեսում այնպիսի դրույթներ, որոնք հնարավորություն կտային գողական աշխարհին առնչվող անձանց, գործող Օրենսգրքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով, ՀՀ-ում ենթարկել քրեական պատասխանատվության՝ քննարկվող հանցանքները ՀՀ տարածքից դուրս կատարելու դեպքում:

Ստացվում է, որ գողական աշխարհի ներկայացուցիչները կարող են իրականացնել

⁹ Տե՛ս «Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ» Միավորված ազգերի կազմակերպության կոնվենցիա, ընդունվել է 2000 թվականի նոյեմբերի 15-ին, ՀՀ-ի համար ուժի մեջ է մտել 2003 թվականի սեպտեմբերի 29-ին, ՀՀԱԳՆՊՏ 2004.12.20/4(12):

¹⁰ Տե՛ս «Սևծովյան տնտեսական համագործակցության մասնակից պետությունների կառավարությունների միջև հանցավորության և հատկապես դրա կազմակերպված ձևերի դեմ պայքարի բնագավառում համագործակցության մասին» համաձայնագիր, ընդունվել է 1998 թվականի հոկտեմբերի 2-ին, ՀՀ-ի համար ուժի մեջ է մտել 2000 թվականի դեկտեմբերի 2-ին, ՀՀԱԳՆՊՏ 2004.12.20/5(13):

¹¹ Տե՛ս «Հանցավորության դեմ պայքարում Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների համագործակցության մասին» համաձայնագիր, ընդունվել է 1998 թվականի նոյեմբերի 25-ին, ՀՀ-ի համար ուժի մեջ է մտել 2001 թվականի ապրիլի 19-ին, ՀՀԱԳՆՊՏ 2004.12.20/3(11):

¹² Տե՛ս «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» կոնվենցիա, ընդունվել է 1993 թվականի հունվարի 22-ին, ՀՀ-ի համար ուժի մեջ է մտել 1994 թվականի դեկտեմբերի 21-ին, ՀՀԱԳՆՊՏ 2004.12.20/3(11):

¹³ Տե՛ս «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» կոնվենցիա, ընդունվել է 2002 թվականի հոկտեմբերի 7-ին, ՀՀ-ի համար ուժի մեջ է մտել 2005 թվականի փետրվարի 19-ին, (հասանելի է <https://www.arlis.am/> հղումով 16.10.2024թ. դրությամբ):

¹⁴ Տե՛ս «Քրեական գործերով փոխադարձ օգնության մասին» եվրոպական կոնվենցիան, ընդունվել է 1959 թվականի ապրիլի 20-ին, ՀՀ-ի համար ուժի մեջ է մտել 2002 թվականի ապրիլի 25-ին, ՀՀԱԳՆՊՏ 2004.12.20/5(13):

իրենց «գործառույթներն» օտարերկրյա այնպիսի պետություններից, որտեղ գործող Օրենսգրքի 322-325-րդ հոդվածներով սահմանված հանցակազմերով նախատեսված արարքները քրեականացված չեն՝ վստահ լինելով, որ ՀՀ-ում հայտնվելու դեպքում չեն ենթարկվի քրեական պատասխանատվության:

Այդպիսի խնդրահարույց իրավիճակ կարող է առաջանալ այն դեպքում, երբ բացակայեն անձին ՀՀ-ում քրեական պատասխանատվության ենթարկելու՝ գործող Օրենսգրքի 12-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված պայմանները¹⁵: Օրինակ՝ ՀՀ քաղաքացի «օրենքով գողն» այնպիսի պետությունում, որտեղ գործող Օրենսգրքի 322-325-րդ հոդվածներով սահմանված հանցակազմերով նախատեսված արարքները քրեականացված չեն, իր «գործառույթներն» իրականացնի՝ կատարելով արարք, որն ուղղված չէ ՀՀ շահերի, ՀՀ քաղաքացու, այդ թվում՝ երկքաղաքացիություն ունեցող անձի, ինչպես նաև ՀՀ-ում մշտապես բնակվող, քաղաքացիություն չունեցող անձի, ՀՀ-ում փախստականի կարգավիճակով բնակվող, ապաստան հայցող կամ ապաստան ստացած անձի կամ իրավաբանական անձի իրավունքների և ազատությունների դեմ:

Նման պայմաններում, կարծում ենք, որ գողական աշխարհի ղեկավարները քրեական պատասխանատվության ենթարկվելուց խուսափելու նպատակով կտեղափոխվեն այդպիսի երկրներ՝ այնտեղից հեռավար կարգով շարունակելով ղեկավարել գողական աշխարհը, և անհրաժեշտության դեպքում ՀՀ վերադառնալու պայմաններում ապահովագրված կլինեն քրեական պատասխանատվության ենթարկվելուց:

Նման իրավիճակը, կարծում ենք, էական վնաս կհասցնի քրեական ենթամշակույթի դեմ քրեաիրավական պայքար մղելու արդյունավետությանը, քանի որ կխոչընդոտի գողական աշխարհի ղեկավար կազմի ներկայացուցիչներին քրեական պատասխանատվության ենթարկելուն:

Այս իրավիճակի հաղթահարման առաջին տարբերակը համապատասխան միջազգային պայմանագրի կնքումն է, որը թույլ կտա գործող Օրենսգրքի 322-325-րդ հոդվածներով սահմանված հանցակազմերով նախատեսված արարքները ՀՀ տարածքից դուրս կատարած ՀՀ քաղաքացիներին, այդ թվում՝ երկքաղաքացիություն ունեցող անձանց, ինչպես նաև ՀՀ-ում մշտապես բնակվող, քաղաքացիություն չունեցող անձանց, ՀՀ-ում փախստականի կարգավիճակով բնակվող, ապաստան հայցող կամ ապաստան ստացած անձանց քրեական պատասխանատվության ենթարկել գործող Օրենսգրքով՝ անկախ այդ արարքները կատարելու վայրի պետության տարածքում դրանք հանցանք համարվելուց:

¹⁵ Քրեական օրենքով նախատեսված արարքը Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս կատարած անձի քրեական պատասխանատվության հարցը լուծվում է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով, եթե կատարված արարքն ուղղված է Հայաստանի Հանրապետության շահերի, Հայաստանի Հանրապետության քաղաքացու, այդ թվում՝ երկքաղաքացիություն ունեցող անձի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող, քաղաքացիություն չունեցող անձի, Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակով բնակվող, ապաստան հայցող կամ ապաստան ստացած անձի կամ իրավաբանական անձի իրավունքների և ազատությունների դեմ:

Նման տարբերակի թերությունը, սակայն, այն է, որ միջազգային պայմանագրի կնքման և վավերացման համար անհրաժեշտ է համաձայնության գալ այլ պետությունների հետ, որը կարող է և տեղի չունենալ: Բացի այդ, միջազգային պայմանագրերի կնքման և վավերացման գործընթացը, որպես կանոն, բավականին ժամանակատար է:

Երկրորդ տարբերակը գործող Օրենսգրքի 12-րդ հոդվածի 2-րդ մասում լրացում կատարելն է՝ ի լրումն Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված դեպքերի՝ թվարկվելով գործող Օրենսգրքի 322-325-րդ հոդվածներով նախատեսված հանցակազմերը: Այդ դեպքում քննարկվող իրավանորմի գործողությունը կտարածվի ոչ միայն Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված դեպքերի, այլ նաև գործող Օրենսգրքի 322-325-րդ հոդվածներով նախատեսված հանցակազմերի վրա՝ նպաստելով գողական աշխարհին առնչվող անձանց, հատկապես՝ դրա ղեկավար կազմի դեմ քրեաիրավական պայքար մղելու արդյունավետությունը բարձրացնելուն:

Համանման մոտեցում է դրսևորված նաև Վրաստանի քրեական օրենսգրքում¹⁶, որի 5-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ Վրաստանի քաղաքացիները և Վրաստանում քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակ ունեցողները, որոնք արտասահմանում կատարել են արարքներ, նախատեսված, ի թիվս այլնի, Վրաստանի քրեական օրենսգրքի 223¹-223⁴-րդ հոդվածներով (քրեական ենթամշակույթին առնչվող հանցակազմեր), որոնք չեն ճանաչվում հանցագործություն այն երկրի օրենսդրությամբ, որտեղ դրանք կատարվել են, քրեական պատասխանատվության են ենթարկվում Վրաստանի քրեական օրենսգրքի համաձայն:

Ամփոփելով վերոգրյալը՝ առաջարկում ենք գործող Օրենսգրքի 12-րդ հոդվածի 2-րդ մասում լրացում կատարել՝ ի լրումն Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված դեպքերի՝ թվարկվելով նաև գործող Օրենսգրքի 322-325-րդ հոդվածներով նախատեսված հանցակազմերը:

Քրեական ենթամշակույթին առնչվող իրավակարգավորումներ նախատեսելու տեսանկյունից քննարկման անհրաժեշտություն ունի նաև գործող Օրենսգրքի ընդհանուր մասի ինստիտուտներից օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելը:

Գործող Օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ «1. Հանցանքի շարժառիթների ու նպատակների, հանցավորի դերի, հանցանքը կատարելիս ու դրանից հետո նրա վարքագծի և այլ հանգամանքներով պայմանավորված՝ բացառիկ դեպքերում, որոնք այն աստիճան են նվազեցրել անձի կամ նրա կատարած արարքի հանրային վտանգավորության աստիճանը, որ դատարանի համոզմամբ սույն օրենսգրքի Հատուկ մասի հոդվածի սանկցիայով նախատեսված պատժի նվազագույն

¹⁶ Ст' у Уголовный кодекс Грузии (հասանելի է <https://matsne.gov.ge/ru/document/view/16426?publication=259> հղումով 16.10.2024թ. դրությամբ):

չափը կամ ժամկետը խիստ է տվյալ անձի համար, ինչպես նաև խմբի կողմից կատարված հանցանքի մասնակցի կողմից այդ խմբի կատարած հանցագործությունը բացահայտելուն աջակցելու դեպքում դատարանը կարող է նշանակել սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի կամ հոդվածի մասի սանկցիայով նախատեսված պատժի նվազագույն չափից կամ ժամկետից պակաս չափ, կամ ժամկետ, կամ ավելի մեղմ պատժատեսակ, քան նախատեսված է այդ հոդվածով կամ հոդվածի մասով: Բացառիկ կարող են ճանաչվել ինչպես առանձին մեղմացնող հանգամանքները, այնպես էլ այդ հանգամանքների համակցությունը:

2. Համագործակցության վարույթ կիրառելու դեպքում ևս դատարանը կարող է նշանակել սույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի կամ հոդվածի մասի սանկցիայով նախատեսված պատժի նվազագույն չափից կամ ժամկետից պակաս չափ, կամ ժամկետ, կամ ավելի մեղմ պատժատեսակ, քան նախատեսված է այդ հոդվածով կամ հոդվածի մասով»:

Վերոգրյալ իրավակարգավորման և քննարկվող ինստիտուտի առնչությամբ արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո¹⁷՝ հարկ ենք համարում քննարկել, թե արդյո՞ք անհրաժեշտ է նախատեսել օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատժ նշանակելու ինստիտուտի կիրառման արգելք քրեական ենթամշակույթին առնչվող հանցանքների դեպքում:

Այս հարցի քննարկման անհրաժեշտությունը պայմանավորված է ՌԴ քրեական օրենսգրքի¹⁸ 64-րդ հոդվածի 3-րդ մասի իրավակարգավորմամբ, որն արգելում է քննարկվող ինստիտուտի կիրառումը ՌԴ քրեական օրենսգրքի 210-րդ հոդվածի (հանցավոր համագործակցություն (հանցավոր կազմակերպություն) կազմակերպելը կամ դրան մասնակցելը) 4-րդ մասով (արարքի կատարումը հանցավոր հիերարխիայում բարձրագույն կարգավիճակ զբաղեցնող անձի կողմից), 210.1-ին հոդվածով (հանցավոր հիերարխիայում բարձրագույն կարգավիճակ զբաղեցնելը) նախատեսված հանցագործություն կատարելու մեջ մեղավոր անձանց նկատմամբ:

Կարծում ենք, որ գործող Օրենսգրքի 72-րդ հոդվածում քրեական ենթամշակույթին առնչվող հանցակազմերի կամ դրանց մի մասի առնչությամբ համանման արգելք նախատեսելն ընդունելի չէ:

Նման հետևությունը, առաջին հերթին, պայմանավորված է այն հանգամանքով, որ օրենսդիրը որևէ հանցանքի, այդ թվում նաև՝ քրեական ենթամշակույթին առնչվող հանցանքների համեմատությամբ հանրային վտանգավորության առավել բարձր աստիճան ունեցող հանցանքների դեպքում չի նախատեսել օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատժ նշանակելու ինստիտուտի կիրառման արգելք:

¹⁷ Տե՛ս **Գաբուլյան Ա., Մարգարյան Ա., Միմոնյան Ս.** նշված աշխ., էջեր 151-153, ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի՝ Հայկազ Հովհաննիսյանի գործով 2018 թվականի ապրիլի 18-ի թիվ LՂ2/0055/01/16 որոշման 11.1-ին կետը (հասանելի է https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=13229323905402212 հղումով 16.10.2024թ. դրությամբ):

¹⁸ Տե՛ս Уголовный кодекс Российской Федерации, (հասանելի է https://www.consultant.ru/document/cons_doc_LAW_10699/ հղումով 16.10.2024թ. դրությամբ):

Բացի այդ, հնարավոր չէ բացառել, որ քրեական ենթամշակույթին առնչվող հանցանքներ կատարած անձանցից որևիցե մեկի դեպքում առկա կլինեն գործող Օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված, օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելու հիմքերից մեկը:

Նման արգելք նախատեսելը նաև որևէ կերպ չի կարող նպաստել քրեական ենթամշակույթի դեմ քրեաիրավական պայքարի արդյունավետության բարձրացմանը: Դեռ ավելին, նման արգելքը կարող է հանգեցնել հակառակ արդյունքի: Մասնավորապես, քրեական ենթամշակույթին առնչվող հանցանքներ կատարած անձանցից որոշները, տեղյակ լինելով իրենց նկատմամբ օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելու ինստիտուտի կիրառման անհնարինության մասին և գիտակցելով, որ, անկախ իրենց համագործակցության բնույթից, քննարկվող ինստիտուտն իրենց նկատմամբ չի կիրառվի, կարող են այլևս չհամագործակցել իրավապահ մարմինների հետ: Նման դեպքերում վերջիններս այլևս շահագրգռված չեն աջակցել ոչ միայն իրենց կողմից կատարած հանցանքների բացահայտմանը, այլ նաև համագործակցության վարույթի շրջանակներում այլ անձանց կողմից կատարված հանցագործությունների բացահայտմանը և դրանք կատարած անձանց պատասխանատվության անխուսափելիության ապահովմանը (Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի¹⁹ 465-րդ հոդված):

Ամփոփելով վերոգրյալը՝ եզրակացնում ենք, որ գործող Օրենսգրքի 72-րդ հոդվածում բացակայում է օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելու ինստիտուտի կիրառման արգելք սահմանելու անհրաժեշտությունը՝ քրեական ենթամշակույթին առնչվող հանցանքների կամ դրանց մի մասի դեպքում, ինչպես որ սահմանված է ՌԴ քրեական օրենսգրքի 64-րդ հոդվածով:

Գործող Օրենսգրքի 84-րդ հոդվածի համաձայն՝ «1. Եթե դատարանը հանցանք կատարած անձի նկատմամբ կարճաժամկետ ազատազրկման, կարգապահական գումարտակում պահելու կամ ազատազրկման ձևով պատիժ նշանակելիս հանգում է հետևության, որ պատժի նպատակների իրականացումը հնարավոր է առանց պատիժը կրելու, ապա կարող է որոշում կայացնել այդ պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին:

2. Պատիժը պայմանականորեն չկիրառելու հիմքով պատժից կարող է ազատվել նաև այն անձը, որի նկատմամբ սույն օրենսգրքի 72-րդ հոդվածով նշանակվել է օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ կամ կիրառվել է համաձայնեցման, կամ համագործակցության, կամ արագացված վարույթ:

(...)

4. Պատիժը պայմանականորեն չկիրառելու վերաբերյալ որոշում կայացնելիս դատարանը պետք է հաշվի առնի հետևյալ հանգամանքները.

¹⁹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի, ՀՕ-306-Ն, ընդունվել է 2021 թվականի հունիսի 30-ին, ուժի մեջ է մտել 2022 թվականի հուլիսի 1-ին, միասնական կայք 2021.07.26-2021.08.08 պաշտոնական հրապարակման օրը՝ 28.07.2021:

1) անձին մեղսագրվող հանցանքի բնույթն ու վտանգավորությունը,

2) պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները,

3) հանցանք կատարածի անձը,

4) պատճառած վնասը հատուցելու կամ այլ կերպ հարթելու պահանջի բացակայությունը կամ այն հատուցած կամ այլ կերպ հարթած լինելու հանգամանքը, եթե հանցագործությամբ վնաս է պատճառվել (...)»:

Վերոգրյալ իրավակարգավորման և քննարկվող ինստիտուտի առնչությամբ արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո²⁰՝ հարկ ենք համարում քննարկել, թե արդյո՞ք անհրաժեշտ է նախատեսել պատիժը պայմանականորեն չկիրառելու ինստիտուտի կիրառման արգելք քրեական ենթամշակույթին առնչվող հանցանքների դեպքում:

Քրեական ենթամշակույթին առնչվող հանցանքների դեպքում օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելու ինստիտուտի կիրառման արգելք նախատեսելու հարցի շրջանակներում վերը ներկայացրած մեր պատճառաբանությունները, կարծում ենք, կիրառելի են նաև պատիժը պայմանականորեն չկիրառելու ինստիտուտի դեպքում և վկայում են քրեական ենթամշակույթին առնչվող հանցանքների կամ դրանց մի մասի դեպքում նաև պատիժը պայմանականորեն չկիրառելու ինստիտուտի կիրառման արգելք նախատեսելու անհրաժեշտության բացակայության մասին: Հետևաբար, գործող Օրենսգրքի 84-րդ հոդվածում ՌԴ քրեական օրենսգրքի 73-րդ հոդվածի 1-ին մասին նմանվող իրավակարգավորում նախատեսելու անհրաժեշտությունը բացակայում է, որն արգելում է քննարկվող ինստիտուտի կիրառումը ՌԴ քրեական օրենսգրքի 210-րդ հոդվածի 4-րդ մասով, 210.1-ին հոդվածով նախատեսված հանցագործություն կատարելու համար դատապարտված անձանց նկատմամբ:

Կարծում ենք՝ գործող Օրենսգրքում բացակայում է նաև ՌԴ քրեական օրենսգրքի 56-րդ հոդվածի 5-րդ մասում առկա իրավակարգավորման պես հանցագործությունների համակցության և դատավճիռների համակցության դեպքում ազատազրկման ձևով վերջնական նշանակվող պատժի առավել բարձր՝ վերին շեմ նախատեսելու անհրաժեշտությունը, երբ անձը կատարել է քրեական ենթամշակույթին առնչվող հանցանք:

Այսպես, գործող Օրենսգրքի 74-76-րդ հոդվածները նախատեսում են հանցագործությունների համակցության և դատավճիռների համակցության դեպքում ազատազրկման ձևով վերջնական նշանակվող պատժի այնպիսի վերին շեմեր, որոնք հնարավորություն են տալիս ապահովել արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքի իրացումը և պատժի նպատակներին հասնելը:

²⁰ Տե՛ս **Օհանյան Լ.Պ.**, Պատիժը պայմանականորեն չկիրառելը՝ ըստ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի. առկա վիճակը, հիմնախնդիրները, կատարելագործման ուղիները, ատենախոս. իրավ. գիտ. թեկնածուի գիտ. աստիճանի համար, Երևան, 2014, էջեր 15-17, 30-31, 74-78, ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի՝ Վահե Մարգարյանի գործով 2023 թվականի դեկտեմբերի 27-ի թիվ ԵՂ/0536/01/19 որոշման 18-18.1-ին կետերը, (հասանելի է <https://cassationcourt.am/precedent/precedent-single-decision/criminal-case/2251> հղումով 16.10.2024թ. դրությամբ):

Հետևաբար, գործող Օրենսգրքի 74-76-րդ հոդվածներում սահմանված ազատագրկման ձևով վերջնական նշանակվող պատժի վերին շեմերից որևէ շեղում նախատեսելու անհրաժեշտությունը քրեական ենթամշակույթին առնչվող հանցանքների կամ դրանց մի մասի դեպքում առկա չէ, իսկ նման տարբերակված մոտեցումը որևէ դրական ազդեցություն չի ունենա քրեական ենթամշակույթի դեմ քրեաիրավական պայքարի արդյունավետության բարձրացման գործում:

Գործող Օրենսգրքի 85-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «1. Կարգապահական գումարտակում պահելու կամ ազատագրկման ձևով պատիժ կրող դատապարտյալը դատարանի կողմից պայմանական վաղաժամկետ կարող է ազատվել պատժից, եթե դատապարտյալը կրել է պատժի՝ սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված համապատասխան նվազագույն ժամկետը, և դատարանը դատապարտյալի պատշաճ վարքագիծը և նրա կողմից նոր հանցանք կատարելու հավանականությունը գնահատող հանգամանքների վերաբերյալ իրավասու մարմինների ներկայացրած զեկույցների ուսումնասիրման հիման վրա համոզվում է, որ դատապարտյալի վերասոցիալականացումը հնարավոր է առանց պատժի մնացած մասը կրելու, քանի որ՝

- 1) պատժի կրման ընթացքում նա դրսևորել է պատշաճ վարքագիծ, և
- 2) նրա կողմից նոր հանցանք կատարելու հավանականությունը ցածր է»:

Ինչպես արդեն նշվել է, գործող Օրենսգրքում պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու հարցը քննարկելիս որպես դատապարտյալի կողմից նոր հանցանք կատարելու հավանականությունը գնահատելիս հաշվի առնվող հանգամանք՝ օրենսդիրը դիտարկում է քրեական ենթամշակույթի նկատմամբ ունեցած վերաբերմունքը:

Քննարկվող հանգամանքը սահմանվել էր նաև նախկին Օրենսգրքով՝ 2017 թվականին կատարված օրենսդրական փոփոխությունների արդյունքում²¹, որի հիմնավորման համաձայն՝ քրեական ենթամշակույթի հանդեպ դիրքորոշումը դինամիկ գործոններից է, որոնց վրա ազդելով՝ հնարավոր է նվազեցնել, չեզոքացնել նոր հանցագործությունների ռիսկը²²:

²¹ Տե՛ս «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու և «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2016 թվականի մայիսի 17-ի ՀՕ-49-Ն օրենքի 1-ին հոդվածը չեղյալ ճանաչելու մասին» Հայաստանի Հանրապետության թիվ ՀՕ-62-Ն օրենքի 1-ին հոդվածը, ընդունվել է 2017 թվականի մարտի 1-ին, ուժի մեջ է մտել 2017 թվականի հունիսի 1-ին, ուժը կորցրել է 2022 թվականի հուլիսի 1-ին, ՀՀՊՏ 2017.03.29/19(1294) Հոդ.321:

²² Տե՛ս «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու և «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության 2016 թվականի մայիսի 17-ի ՀՕ-49-Ն օրենքի 1-ին հոդվածը չեղյալ ճանաչելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեակատարողական օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի վերաբերյալ հիմնավորումը, (հասանելի է <http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=8561&Reading=0> հղումով 16.10.2024թ. դրությամբ):

Այս նորմը, ըստ էության, հղում է պարունակում անձի՝ քրեական ենթամշակույթի վերաբերյալ ունեցած սեփական դրական կամ բացասական ընկալմանը կամ, այլ կերպ ասած, հանդիսանում է անձի սուբյեկտիվ ու գնահատողական վերաբերմունքն այդ երևույթի նկատմամբ: Այսինքն՝ քրեական ենթամշակույթի նկատմամբ դատապարտյալի ունեցած վերաբերմունքով անհրաժեշտ է գնահատել նրա կողմից նոր հանցագործություն կատարելու ռիսկը²³:

Նման պայմաններում, հարկ ենք համարում քննարկել, թե արդյո՞ք անհրաժեշտ է պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու հարցը քննարկելիս որպես դատապարտյալի կողմից նոր հանցանք կատարելու հավանականությունը գնահատելիս հաշվի առնվող հանգամանք դիտարկել քրեական ենթամշակույթի նկատմամբ ունեցած վերաբերմունքը:

Վերը մեջ բերված տեսակետների և քննարկվող ինստիտուտի առնչությամբ արտահայտված իրավական այլ դիրքորոշումների լույսի ներքո²⁴՝ կարծում ենք, որ օրենսդիրն իրավացիորեն քրեական ենթամշակույթի նկատմամբ ունեցած վերաբերմունքը կարևորել է դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու հարցը քննարկելիս:

Այսպես, քրեական ենթամշակույթի նկատմամբ դրական վերաբերմունք ունենալը, այդ ենթամշակույթի գաղափարախոսությունն ընդունելը բարձրացնում է դատապարտյալի նոր հանցանք կատարելու հավանականությունը և չի կարող անտեսվել դատապարտյալին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու հարցը քննարկելիս: Եվ ընդհակառակը, քրեական ենթամշակույթի նկատմամբ բացասական վերաբերմունք ունենալը, այդ ենթամշակույթի գաղափարախոսությունը չընդունելը նվազեցնում է դատապարտյալի նոր հանցանք կատարելու հավանականությունը և այլ հանգամանքների հետ համակցության մեջ կարող է վկայել ապագայում դատապարտյալի իրավահպատակ վարքագիծ դրսևորելու, առանց պատժի մնացած մասը կրելու վերասոցիալականացումը հնարավոր լինելու մասին:

Այս առումով հատկանշական է, որ դատապարտյալի նոր հանցանք կատարելու հավանականությունը գնահատելիս գործող Օրենսգիրքը չի սահմանափակվել միայն գողական աշխարհին անդամակցելու հանգամանքով (ինչը, ինքնին, արդեն հանցանք է), այլ կիրառվել է ավելի լայն եզրույթ, որը հնարավորություն է տալիս

²³ Տե՛ս Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ թիվ ԵԴ/1369/01/20 քրեական գործով «Սահմանադրական դատարան դիմելու մասին» 2021 թվականի հունիսի 21-ի որոշումը (հասանելի է https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=45880421204095622 հղումով 16.10.2024թ. դրությամբ):

²⁴ Տե՛ս **Հովհաննիսյան Ա.Հ.** Պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, ատենախոս. իրավ. գիտ. թեկնածուի գիտ. աստիճանի հայցման համար, Երևան, 2013, էջեր 62-63, ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի՝ Արմեն Արմենյանի գործով 2019 թվականի ապրիլի 11-ի թիվ ԾԴ/0014/12/17 որոշման 14-14.1-ին կետերը (հասանելի է https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=13229323905402251 հղումով 16.10.2024թ. դրությամբ):

նոր հանցանք կատարելու բարձր հավանականություն ունեցող դատապարտյալ դիտարկել նաև գողական աշխարհին չանդամակցող, սակայն քրեական ենթամշակույթի գաղափարախոսության ազդեցության տակ գտնվող և դրան կատարմամբ դրական վերաբերմունք ունեցող անձանց: Նման մոտեցումն արդարացված է, քանի որ այդ հանգամանքը, այլ հանգամանքների հետ համակցության մեջ, օբյեկտիվորեն հիմք է ենթադրելու, որ դատապարտյալի նոր հանցանք կատարելու հավանականությունը բարձր է:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում ենք, որ պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու հարցը քննարկելիս որպես դատապարտյալի կողմից նոր հանցանք կատարելու հավանականությունը գնահատելիս հաշվի առնվող հանգամանք՝ օրենսդիրն իրավացիորեն դիտարկել է քրեական ենթամշակույթի նկատմամբ ունեցած վերաբերմունքը:

Քննարկվող ինստիտուտի շրջանակներում հարկ ենք համարում անդրադառնալ նաև այն հարցին, թե արդյո՞ք անհրաժեշտ է նախատեսել պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու արգելք՝ քրեական ենթամշակույթին առնչվող հանցանքների դեպքում:

Կարծում ենք, որ նման մոտեցումն ընդունելի չէ, առաջին հերթին, այն պատճառով, որ օրենսդիրը որևէ հանցակազմի, այդ թվում նաև քրեական ենթամշակույթին առնչվող հանցակազմերի համեմատությամբ հանրային վտանգավորության առավել բարձր աստիճան ունեցող հանցակազմերի դեպքում չի նախատեսել նման արգելք: Այս առումով հատկանշական է «Պայմանական ազատման (պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատման) վերաբերյալ» Եվրոպայի խորհրդի՝ նախարարների կոմիտեի թիվ Rec(2003)22 հանձնարարականի²⁵ 4ա կետը, ըստ որի՝ ազատագրված քննչական հետևանքները նվազեցնելու և արտաքին աշխարհի անվտանգությունը երաշխավորող որոշակի պայմանների կիրառմամբ ազատությունից զրկված անձանց սոցիալական վերականգնումը խթանելու նպատակով օրենքը պետք է պայմանական ազատումն ապահովի ազատագրված դատապարտված բոլոր անձանց, այդ թվում՝ ցմահ ազատագրված դատապարտվածների համար:

Բացի այդ, նման մոտեցման պարագայում կարող է առաջանալ այնպիսի իրավիճակ, երբ քրեական ենթամշակույթին առնչվող հանցանք կատարելու համար դատապարտված անձի վերասոցիալականացումը հնարավոր լինի առանց պատժի մնացած մասը կրելու, սակայն վերջինս հնարավորություն չունենա պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատվել միայն այն պատճառով, որ կատարել է քրեական ենթամշակույթին առնչվող հանցանք:

²⁵ Տե՛ս «Պայմանական ազատման (պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատման) վերաբերյալ» Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի թիվ Rec(2003)22 հանձնարարականն անդամ երկրներին, ընդունվել է 2003 թվականի սեպտեմբերի 24-ին, (հասանելի է <https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=09000016800ccb5a> հղումով 16.10.2024թ. դրությամբ):

Հետևաբար, ընդունելի է քրեական ենթամշակույթին առնչվող հանցանքների կամ դրանց մի մասի դեպքում պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու արգելք չնախատեսելու օրենսդրի մոտեցումը:

Եզրակացություն

Ամփոփելով վերոգրյալը՝ հանգում ենք հետևության, որ գործող Օրենսգրքի ընդհանուր մասի որոշ ինստիտուտներում առկա է քրեական ենթամշակույթին առնչվող հատուկ իրավակարգավորումներ սահմանելու անհրաժեշտությունը, իսկ մյուսներում այդպիսի իրավակարգավորումների բացակայությունը որևէ կերպ չի խոչընդոտում քրեական ենթամշակույթի դեմ արդյունավետ քրեաիրավական պայքար մղելուն:

НЕКОТОРЫЕ КЛЮЧЕВЫЕ ВОПРОСЫ ЗАКРЕПЛЕНИЯ ПРАВОВЫХ НОРМ, КАСАЮЩИХСЯ КРИМИНАЛЬНОЙ СУБКУЛЬТУРЫ, В ОБЩЕЙ ЧАСТИ УГОЛОВНОГО КОДЕКСА

Бабаханян Арман

Преподаватель кафедры уголовного права ЕГУ,

Помощник Судьи Уголовной палаты Кассационного суда РА

Аннотация. В данной статье рассмотрены некоторые вопросы закрепления правовых норм, касающихся криминальной субкультуры, в Общей части Уголовного кодекса Республики Армения. В результате исследования, также с учетом опыта некоторых зарубежных стран, автор пришел к выводу, что в одних институтах Общей части УК РА существует необходимость закрепления специальных правовых норм, касающихся криминальной субкультуры, а в других отсутствие такого правового регулирования никоим образом не мешает эффективной уголовно-правовой борьбе с криминальной субкультурой.

Ключевые слова: криминальная субкультура, воровской мир, вор в законе, представители воровского мира, общая часть уголовного кодекса.

SOME KEY ISSUES IN THE CONSOLIDATION OF LEGAL PROVISIONS ON CRIMINAL SUBCULTURE IN THE GENERAL PART OF THE CRIMINAL CODE

Babakhanyan Arman

Lecturer at Chair of Criminal Law of YSU,

Assistant to the Judge of the Criminal Chamber of the RA Cassation Court

Summary: This article addresses certain issues regarding the establishment of legal norms related to criminal subculture in the General Part of the Criminal Code of the Republic of Armenia. Based on the research, and taking into account the experience of some foreign countries, the author concludes that in some institutions of the General Part of the Criminal Code of the Republic of Armenia, there is a need to define special legal norms related to criminal subculture, while in others, the absence of such legal regulation does not hinder effective criminal law enforcement against the criminal subculture.

Key words: criminal subculture, thieves' world, thief in law, representatives of the thieves' world, General Part of the Criminal Code.

Հոդվածը գրախոսվել է՝ 22.10.2024թ.
Ներկայացվել է տպագրության՝ 10.11.2024թ.

**ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ
ՆՍՈՒՇՆԵՐԻ ՀԱՎԱՔՈՒՄ ՕՊԵՐԱՏԻՎ-ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ
ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Բազրատյան Ազատ

*ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ոստիկանական ուսումնական ստորաբաժանման
օպերատիվ-հետախուզական գործունեության և քրեագիտության ամբիոնի
դոցենտ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
DOI: 10.63925/18294847-2025.19op-02*

Համառոտագիր: Հոդվածում քննարկվում են համեմատական հետազոտությունների համար նմուշների հավաքում օպերատիվ-հետախուզական միջոցառման օրենսդրական ամրագրման հարցերը: Միաժամանակ փորձաքննության համար նմուշ ստանալ վարությամբ գործողությունը նշված միջոցառմամբ փոխարինելու վերաբերյալ տարբեր կարծիքները համադրվում են ազգային օրենսդրության, այդ թվում՝ նախադեպային իրավունքի նորմերի հետ: Հիմնավորվում է նաև օպերատիվ եղանակով ստացված նմուշները փորձագիտական հիմնարկ ներկայացնելու և այդ արդյունքներով դատավարական գործողություն կատարելու անհրաժեշտությունը: Այս առումով առաջարկվում է ընդհանուր մոտեցում ձևավորել օպերատիվ-հետախուզական և քննչական մարմինների համար՝ հաշվի առնելով գործողությունների հերթականությունը:

Բանալի բառեր՝ օպերատիվ-հետախուզական գործունեություն, օպերատիվ-հետախուզական միջոցառում, համեմատական հետազոտությունների համար նմուշների հավաքումը, փորձաքննության համար նմուշ ստանալը, փորձագիտական հետազոտություն:

Համեմատական հետազոտությունների համար նմուշների հավաքում օպերատիվ-հետախուզական միջոցառումը բնութագրվում է որպես նյութերի, առարկաների, իրերի, փաստաթղթերի և այլ նշումների հավաքում՝ համեմատություններ և ուսումնասիրություններ կատարելու համար: Կարևոր նշանակություն ունեցող այս միջոցառումը ներկայումս չունի լայն կիրառում, ինչը մեծապես պայմանավորված է նմուշների փորձագիտական հետազոտման և դրա արդյունքների դատավարական գործածման հեռանկարի բացակայությամբ: Նախքան քննարկումն այդ ուղղությամբ զարգացնելն առաջին հերթին անդրադառնանք իրավական ձևակերպման անճշտություններին: Ըստ վերը նշված սահմանման՝ նյութերի, առարկաների, իրերի և փաստաթղթերի հետ մեկտեղ համեմատական հետազոտությունների օբյեկտ են

համարվում նաև այլ նշումները, սակայն անհրաժեշտ է օգտագործել **նմուշ** բառը, քանի որ **նշման** ամրագրումը տեխնիկական բացթողման հետևանք է: Դրա հետ մեկտեղ, օպերատիվ-հետախուզական օրենքն իր մեջ ներառում է ուսումնասիրվող միջոցառման երկու անվանում՝ առաջացնելով եզրութաբանական խառնաշփոթ: Այսպես, «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածում այն կոչվում է համեմատական հետազոտությունների նմուշների հավաքում, իսկ նույն օրենքի 17-րդ հոդվածում՝ համեմատական հետազոտությունների համար նմուշների հավաքում: Անվանումներից առաջինում **համար** բառի բացակայությունն էապես փոխում է միջոցառման իմաստը, և այն ընկալվում է որպես համեմատական հետազոտման արդյունք հանդիսացող նմուշների ձեռքբերում, մինչդեռ միջոցառման նպատակն է հավաքել նմուշներ՝ հետագա հետազոտությունների համար: «Համեմատական հետազոտությունների համար նմուշների հավաքում» անվանումն առավել հստակ է փոխանցում քննարկվող միջոցառման էությունը:

Համեմատական հետազոտությունների համար նմուշների հավաքման օրենսդրական հասկացությունը չի սահմանափակում նմուշների տեսակները: Որոշ հեղինակները կարծիքով այս միջոցառումը վերաբերում է միայն նյութական օբյեկտներին¹, բայց արդարացիորեն համաձայնենք, որ համակարգչային ծրագրերը, տեխնոլոգիաները չեն դասվում նյութական օբյեկտների շարքին²: Այդ նմուշները հաճախ ստացվում են օպերատիվ-հետախուզական այլ միջոցառումների ընթացքում, օրինակ՝ շենքերի, շինությունների, կառույցների, տեղանքի և տրանսպորտային միջոցների հետազոտմամբ: Դրան հաջորդող ուսումնասիրությունները չեն ընդգրկվում համեմատական հետազոտությունների համար նմուշների հավաքման մեջ:

Համեմատական հետազոտությունների համար նմուշների հավաքում օպերատիվ-հետախուզական միջոցառումը դատավարական գործողությանն այլընտրանք դիտարկելու մասին տարբեր տեսակետներ են արտահայտվում: Մասնավորապես, Յու. Կուդրյավցևան անթույլատրելի է համարում դատավարական գործողության փոխարինումն օպերատիվ-հետախուզական միջոցառմամբ և դատավարական գործողությամբ ակնկալվող նմուշների ձեռքբերումն օպերատիվ-հետախուզական միջոցառմամբ: Տեղեկատվությունն ապացույց է միայն այն դեպքում, երբ նյութերն ստացվում են դատավարական կարգով՝ պահպանելով մարդու իրավունքների երաշխիքները³: Ըստ 2017 թվականի սեպտեմբերի 28-ի Ռուսաստանի Դաշնության Սահմանադրական դատարանի № 2211 որոշման՝ քննիչի հանձնարարությամբ

¹ Տե՛ս, օրինակ, **Дубонос Е. С.**, Основы оперативно-розыскной деятельности: Курс лекций / Под ред. **Г. К. Синилова**. – М.: ЮИ МВД РФ, Книжный мир, 2002. – Էջ 99:

² Տե՛ս **С.И. Захарцев**, Оперативно-розыскные мероприятия в России и за рубежом: Монография. / Под общ. ред. **В.П. Сальникова**, – СПб.: Санкт-Петербургский университет МВД России, 2003. – Էջ 32:

³ Տե՛ս **Кудрявцева Ю. А.** Получение образцов для сравнительного исследования в уголовном судопроизводстве России (процессуальная природа, порядок, доказательственное значение): автореферат ... канд. юрид. наук: 12.00.09 / **Ю. А. Кудрявцева**. – Челябинск, 2013. – Էջ 9:

օպերատիվ-հետախուզական միջոցառումները ոչ թե հակադրվում, այլ համաձայնեցվում են վարութային գործողություններին: Այս տրամաբանությունն ընդունելով և սխալ համարելով վարությի սահմաններում օպերատիվ եղանակով նմուշներ հավաքելու անթույլատրելիության մոտեցումը՝ Ա. Սուդնիցինի կարծիքով նմուշներն ինքնակամ ներկայացնելուց հրաժարվելու վերաբերյալ անձի դիմումի առկայությունը բավարար չէ օպերատիվ-հետախուզական նշված միջոցառումն անցկացնելու համար: Անձի հրաժարումն ստանալուց հետո նախևառաջ պետք է հաշվի առնել նմուշները հարկադրաբար ստանալու դատավարական այլընտրանքի հնարավորությունը և միայն դրանից հետո դիմել օպերատիվ-հետախուզական միջոցառման օգնությանը⁴:

Առաջնորդվելով ՀՀ քրեական դատավարության 254-րդ հոդվածով՝ բացառապես դատավարական կանոնների պահպանմամբ ձեռք բերված նմուշներն են ենթարկվում փորձագիտական հետազոտման՝ ապացուցողական զամբյուղում հետազայում ներառվելու համար: Տվյալ դեպքում խոսքը բնավ փորձաքննության համար նմուշ ստանալ վարութային գործողությունն ուսումնասիրվող միջոցառմամբ փոխարինելու մասին չէ: Այնուհանդերձ, օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքները կարող են ունենալ ազատ կամ պայմանականորեն ազատ նմուշների կարգավիճակ՝ առաջացել են մինչև հանցավոր ոտնձգությունը և որևէ կապ չունեն դրա հետ կամ այն կատարելուց հետո, սակայն հիմք չեն փորձաքննություն նշանակելու համար: Նույնի մասին են վկայում նաև դատաքննության նյութերը: Այսպես, չհամաձայնելով դատաձայնագրային փորձաքննության արդյունքներն անթույլատրելի ճանաչելու պնդմանը՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը հաստատում է, որ ներքին դիտում օպերատիվ-հետախուզական միջոցառմամբ ստացված ձայնագրությունը փորձագիտական հիմնարկին տրամադրվել է ոչ թե որպես փորձարարական, այլ որպես ազատ նմուշ: Ձայնի նույնականացման համար հիմք են հանդիսացել քննչական և դատական գործողությունների ընթացքում կատարված ձայնագրությունները: ՀՀ քրեադատավարական օրենքն օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքները որպես ձայնի ազատ նմուշ գործածելու և փորձագետին տրամադրելու որևէ սահմանափակում չի նախատեսում⁵: Ըստ էության՝ ներքին դիտման արդյունքները վերը նշված պարագայում փորձագիտական հիմնարկ են ներկայացվել դատավարական գործողությամբ ստացված ձայնի նմուշի հետ նույնականությունը պարզելու նպատակով:

Անձի իրավունքները և հիմնական ազատություններն էականորեն սահմանափակող վարութային գործողությունների համար հիմք հանդիսացող օպերատիվ-հետա-

⁴ Տե՛ս **Судницын А. Б.** Негласное получение биологических образцов для сравнительного исследования при производстве по уголовному делу: альтернатива процессуальному действию или подмена оперативно-розыскным мероприятием? // Вестник Сибирского юридического института МВД России. – 2019. – № 4 (37). – 16-20 էջեր:

⁵ Նկատի են ունեցվում ՀՀ քրեական դատավարության նախկին օրենսգրքի նորմերը: Տե՛ս https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=13229323905403056, 2023 թվականի մայիսի 26-ին ընդունված ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումը քրեական գործ թիվ ԵՇԴ/0088/01/17 մասին:

խուզական գործունեության արդյունքներին առաջադրվում են ավելի խիստ պահանջներ: Այսպես, թիվ ԵՇԴ/0073/07/15 քրեական գործի մասին ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշման համաձայն՝ բնակարանի խուզարկության ինքնուրույն հիմք են օպերատիվ տվյալները, որոնք հնարավոր է գնահատել: Գնահատման ընթացքում հաշվի են առնվում օպերատիվ-հետախուզական մի շարք միջոցառումների դատական վերահսկողության պահանջը որպես օրինականության երաշխիք, արդյունքների ամրագրման եղանակները, տեղեկությունների ստացման աղբյուրի բացահայտման փաստը և այլն: Այլ դեպքերում օպերատիվ տվյալներն օգտագործվում են խուզարկություն կատարելու անհրաժեշտության հարցը լուծելիս⁶: Սակայն այս կանոնները նույնությամբ չեն տարածվում օպերատիվ այն տվյալների վրա, որոնք հիմք են առանց նախնական դատական վերահսկողության վարութային գործողությունների համար: Օրինակ՝ հանցագործությանն անձի առնչության մասին վկայող օպերատիվ հարցման արդյունքները կարող են հիմնավորել փորձաքննության համար նմուշ ստանալ վարութային գործողության կատարումը: Ինչ վերաբերում է ուղղակիորեն համեմատական հետազոտությունների համար նմուշների հավաքում օպերատիվ-հետախուզական միջոցառմանը, ապա այստեղ նույնպես հնարավոր է հստակեցնել հանցավոր ոտնձգության մասնակիցների շրջանակը՝ խուսափելով լայնածավալ վարութային գործողություններից և նախատեսված պլանների բացահայտումից: Այս առումով երբեմն բավարար է օպերատիվ ստորաբաժանման աշխատակցի անմիջական ուսումնասիրությունը: Այսպես, օպերատիվ ստորաբաժանման աշխատակիցն օպերատիվ եղանակով ձեռք բերված ձեռագրի նմուշը համեմատում է դեպքի վայրում հայտնաբերված գրությունում առկա ձեռագրի հետ: Բայց և այնպես, համեմատական հետազոտությունների համար նմուշների հավաքում օպերատիվ-հետախուզական միջոցառման արդյունքների իրացումը պահանջում է նաև փորձագիտական հետազոտություն՝ հատկապես օպերատիվ-հետախուզական միջոցառմամբ այդ արդյունքները գնահատվելու անհրաժեշտության դեպքում, երբ ստացվում են նմուշների այնպիսի տեսակներ, ինչպիսիք են արյունը, թուփը, քրտինքը և այլն: Որպես ազատ կամ պայմանականորեն ազատ նմուշներ՝ օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքները, կարծում եմ, կարող են ներկայացվել փորձագիտական հիմնարկ, և այս տեսանկյունից ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգիրքը սահմանափակում նույնպես չի նախատեսում: Միաժամանակ նկատենք, որ նախկինում ՀՀ ներքին գործերի նախարարության կազմում գտնվող փորձաքրեագիտական ծառայությունը ներկայումս ՀՀ քննչական կոմիտեի կառուցվածքային ստորաբաժանումն է, ինչը լրացուցիչ երաշխիք է քրեական վարութի ընթացքում օպերատիվ-հետախուզական միջոցառմամբ ձեռք բերված նմուշները փորձագիտական հաստատություն ներկայացնելու համար: Անշուշտ, փորձաքննության արդյունքներն այդ դեպքերում չունեն ապացուցողական նշանակություն, սակայն հիմք են

⁶ Տե՛ս https://datalex.am:443/?app=AppCaseSearch&case_id=13229323905402019, <https://www.arlis.am/>:

հանդիսանում դատավարական կարգով նմուշ ստանալու և փորձագիտական հետազոտություն կատարելու համար: Բացի նրանից, որ փորձաքննության համար նմուշ ստանալ վարութային գործողությունը չի պահանջում դատարանի որոշում, քննարկվող օպերատիվ-հետախուզական միջոցառման արդյունքները շոշափելի են և չեն ընկալվում որպես վերացական օպերատիվ տվյալներ: Հիշատակված գործողությունների ճիշտ հերթականությունը կարող է ուղեցույց լինել օպերատիվ-հետախուզական և քննչական մարմինների համատեղ աշխատանքում:

Այսպիսով, անհրաժեշտ էմ համարում «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքում նախատեսել փոփոխություններ՝ համեմատական հետազոտությունների համար նմուշների հավաքում օպերատիվ-հետախուզական միջոցառման օրենսդրական ամրագրման բացթողումները վերացնելու նպատակով, ինչպես նաև ընդհանուր մոտեցում ձևավորել օպերատիվ-հետախուզական միջոցառումներ և վարութային գործողություններ ծրագրելիս և իրականացնելիս:

ОСОБЕННОСТИ ИСПОЛЬЗОВАНИЯ РЕЗУЛЬТАТОВ СБОРА ОБРАЗЦОВ ДЛЯ СРАВНИТЕЛЬНОГО ИССЛЕДОВАНИЯ

Багратян Азат

*Доцент кафедры оперативно-розыскной деятельности и криминалистики
учебного подразделения полиции Образовательного комплекса
Министерства внутренних дел Республики Армения,
кандидат юридических наук, доцент*

Аннотация. В научной статье изучаются проблемы законодательного оформления сбора образцов для сравнительного исследования. В этой связи различные мнения о возможности замены процессуального действия указанным оперативно-розыскным мероприятием сопоставляются с нормами национального законодательства, в том числе прецедентного права. Вместе с этим обосновывается необходимость передачи экспертному учреждению образцов, полученных оперативным путем, и на основе этих результатов проведения надлежащего процессуального действия. С учётом определённой последовательности действий предлагается выработать общий подход для оперативно-розыскных и следственных органов.

Ключевые слова: оперативно-розыскная деятельность, оперативно-розыскное мероприятие, сбор образцов для сравнительного исследования, получение образцов для экспертизы, экспертное исследование.

THE CHARACTERISTICS OF THE EMPLOYMENT OF THE RESULTS OF THE SAMPLE COLLECTION FOR THE COMPARATIVE ANALYSIS

Bagratyan Azat

*Associate Professor of the Department of Operative-Intelligence Activities and Criminology of the Police Training Division of the Educational Complex of the Ministry of Internal Affairs of the Republic of Armenia,
PhD in Law, Associate Professor*

Summary: This article studies the problems of legislative stipulation of the samples collection for the comparative analysis. With this regard different opinions on the possibility of the replacement of legal proceedings indicated by the operative-search measures are juxtaposed with the national legislative norms including the Case Law. Along with this, the necessity of introducing the samples to the expert institution and based on these results the conduct of legal proceedings is being substantiated. Given the sequence of actions, a common approach is suggested to form for the operative-search and investigative authorities.

Keywords: operative-search activity, operative-search measures, the sample collection for the comparative analysis, obtaining sample for expertise, expert research.

Հոդվածը գրախոսվել է՝ 10.01.2025թ.
Ներկայացվել է տպագրության՝ 25.01.2025թ.

ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՀԱՓՇՏԱԿՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐՈՂ ԱՆՁԻ ՔՐԵԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Իսրայելյան Գևորգ

ՀՀ ԳԱԱ Փորձաքննությունների

ազգային բյուրոյի քրեաբանության կիրառական հիմնախնդիրների

գիտահետազոտական կենտրոնի պետ,

Եվրասիա միջազգային համալսարանի դասախոս

իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

DOI: 10.63925/18294847-2025.19op-03

Համառոտագիր. Վերջին տարիների վիճակագրական տվյալների վերլուծությունը բացահայտել է համակարգչային հափշտակությունների կայուն աճ: Դա խոսում է կանխարգելիչ ներգործության ակտիվացման անհրաժեշտության մասին: Համակարգչային հափշտակությունների նկատմամբ կանխարգելիչ ներգործության ապահովման, մասնավորապես՝ անհատական կանխարգելիչ աշխատանքների կազմակերպման համար հարկավոր է նշված հանցատեսակների քրեաբանական բաղադրիչների, այդ թվում՝ հանցագործի անձի հետազոտության իրականացում:

Հոդվածում ներկայացված են համակարգչային հափշտակություններ կատարող անձի՝ հեղինակի կողմից իրականացված քրեաբանական հետազոտության արդյունքները՝ 2019-2024 թվականներին կայացված 30 դատական ակտերի տվյալների հիման վրա: Հետազոտության միջոցով բացահայտվել են հանցագործի անձի կառուցվածքային տարրերը բնութագրող հատկանիշները և դրանց քրեաբանական նշանակությունը:

Հեղինակի հետազոտության արդյունքները վկայում են, որ համակարգչային հափշտակություններ կատարող անձին ընդհանրացված ձևով բնորոշ է երիտասարդ տարիքի (24-40 տարեկան) քրեական ակտիվությունը, արական սեռին պատկանելությունը, ազգությամբ հայ, Հայաստանի Հանրապետության քաղաքացի լինելը, ամուսնական հարաբերությունների առկայությունը, ցածր կրթական մակարդակը, մշտական աշխատանքային զբաղվածության բացակայությունը, տեղեկատվական տեխնոլոգիաների հետ աշխատելու լավ հմտությունները, հանցանքը գերազանցապես շահադիտական դրդապատճառով կատարելը: Նշված և հանցագործին բնութագրող այլ տվյալները պետք է հաշվի առնվեն վերոհիշյալ հանցագործությունների անհատական կանխարգելման ուղղվածությունը որոշելիս, մեթոդն ընտրելիս և կազմակերպական բնույթի այլ հարցեր կարգավորելիս:

Բանալի բառեր. համակարգչային հափշտակություն, հանցագործի անձ, քրեաբանական պատկեր:

Ներածություն

Վիճակագրական տվյալները վկայում են համակարգչային հափշտակությունների քրեաբանական բացասական միտումների մասին: Այսպես, 2021 թվականին արձանագրվել է համակարգչային հափշտակության 181, 2022 թվականին՝ 461 (154.7%-ով աճ), 2023 թվականին՝ 630 դեպք (36.7%-ով աճ)¹: Դա խոսում է կանխարգելիչ ներգործության ակտիվացման անհրաժեշտության մասին:

Համակարգչային հափշտակությունների նկատմամբ կանխարգելիչ ներգործության ապահովման, մասնավորապես՝ անհատական կանխարգելիչ աշխատանքների կազմակերպման համար հարկավոր է նշված հանցատեսակների քրեաբանական բաղադրիչների, այդ թվում՝ հանցագործի անձի համալիր հետազոտության իրականացում:

Նշվածից ելնելով՝ սույն հետազոտության նպատակն է համակարգչային հափշտակություններ կատարող անձի քրեաբանական պատկերի բացահայտումը: Հետազոտության խնդիրն է հանցագործի անձի կառուցվածքային տարրերի ներկայացումը և դրանց քրեաբանական նշանակության բացահայտումը:

Հետազոտության առարկան են կազմել համապատասխան քրեական գործերով 2019-2024 թվականներին կայացված 30 դատական ակտ:

Հիմնական հետազոտությունը

Համակարգչային հափշտակություններ կատարող անձը բնորոշվում է որպես համապատասխան հանցագործություն կատարած մարդու՝ սոցիալապես նշանակալի հատկությունների ամբողջություն, որոնք, արտաքին պայմանների հետ զուգակցվելով, ազդում են նրա հանցավոր վարքագծի վրա²:

Քննարկվող հասկացության համար պարտադիր է այն հանգամանքը, որ հանցագործությունը կատարվում է անձին հատկանշական հակահասարակական հայացքների և կիրքեռանվտանգության հանդեպ բացասական վերաբերմունքի, այլոց սեփականության նկատմամբ ոտնձգություն կատարելու վաղորոք ծագած դիտավորության առկայության արդյունքում:

Համակարգչային հափշտակություններ կատարող անձն ունի որոշակի կառուցվածք, որը ներառում է հետևյալ ենթակառուցվածքները.

¹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության դատախազության 2022 թվականի գործունեության մասին հաղորդում, էջ 19 // https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/rep_50_8560351818.pdf (վերջին մուտք՝ 08.01.2025 թ.), Հայաստանի Հանրապետության դատախազության 2023 թվականի գործունեության մասին հաղորդում // https://www.prosecutor.am/storage/dynamic_web_pages/dyn_page_285_1465690793.pdf (վերջին մուտք՝ 08.01.2025 թ.), էջեր 16-17:

² Տե՛ս **Кобец П. Н.**, Личность рецидивиста и особенности ее формирования // Закон и право 2001, № 11, էջ 39:

1. Սոցիալ-ժողովրդագրական հատկանիշներ

Հատկանիշների այս խումբն են կազմում անձի սեռը, տարիքը, ընտանեկան և պաշտոնական դրությունը, մասնագիտությունը և այլ հատկանիշները:

Մեռային հատկանիշի առումով քննարկվող հանցատեսակները գերազանցապես կատարվել են տղամարդկանց կողմից (97,22 %): Կանայք, որպես կանոն, հանցակցել են հափշտակությունների կատարմանը:

Քրեական ակտիվությունն արձանագրվել է 24-40 տարիքային սահմանում:

Հանցանք կատարողների 94,44 %-ն ազգությամբ հայեր են, Հայաստանի Հանրապետության քաղաքացիներ:

Հանցավորների ընտանեկան դրությունն ունի հետևյալ պատկերը՝ 51,43 %-ն ամուսնացած է, 45,79 %-ը՝ ամուրի, 2,78 %-ը՝ ամուսնալուծված:

Մեր հետազոտության արդյունքները վկայում են, որ քննարկվող կատեգորիայի հանցավորներն ունեն ցածր կրթական մակարդակ: Այսպես, հանցավորների 69,44 %-ն ունի միջնակարգ, 27,78 %-ը՝ բարձրագույն, 2,78 %-ը՝ թերի բարձրագույն կրթություն:

Հանցագործների մեծամասնությունն աշխատանքային զբաղվածություն չունի: Այսպես, ուսումնասիրված անձանց 86,11 %-ը չի աշխատում: Փոխարենը նրանք լավ են տիրապետում համակարգչային տեխնոլոգիաներին, ինչի մասին են վկայում հանցանքի կատարման մեխանիզմի առանձնահատկությունները:

2. Բարոյական որակներ և հոգեբանական առանձնահատկություններ, դրդապատճառային ոլորտ

Բարոյական որակները և հոգեբանական առանձնահատկությունները թույլ են տալիս խորությամբ ճանաչել անձի բովանդակությունը: Հատկանիշների տվյալ խումբը հաճախ բաժանվում է ենթախմբերի, մասնավորապես՝ առանձնացվում են գիտակցության արժեքային-նորմատիվային բնութագրերը (հայացքներ, համոզմունքներ, արժեքային կողմնորոշումներ), պահանջմունքային-դրդապատճառային ոլորտը (պահանջմունքներ, հետաքրքրություններ, դրդապատճառներ)³:

Համակարգչային հափշտակությունների դրդապատճառներն առավելապես ուղղված են անձի նյութական հետաքրքրությանը՝ գումար, այլ արժեքներ ապօրինի ձեռք բերելուն: Ըստ այդմ՝ գերակշռող է շահադիտական դրդապատճառը:

Երբեմն համակարգչային համակարգ կամ ցանց ներթափանցելը, հափշտակություն կատարելը կապված է տարբեր տեսակի դեստրուկտիվ դրդապատճառների հետ: Այդպիսին է մոտ շրջապատում իրեն հաստատելը որպես սոցիալական և կենսաբանական էակ: Նշվածից ելնելով՝ շահադիտական շարժառիթից բացի հանդիպում է նաև ինքնահաստատումը: Երբեմն այդ շարժառիթները համադրվում են: Հաշվի առնելով

³ Տե՛ս **Чуфаровский Ю. В.**, Криминология в вопросах и ответах: учеб. пособие. – М.: ТК ВЕЛБИ, Изд.-во «Проспект», 2006, էջ 38:

հանցավորների տարիքային առանձնահատկությունները՝ շահադիտական և ինքնահաստատման շարժառիթների համադրությունը լիովին օրինաչափ է⁴:

Հանցանքի կատարման շարժառիթներից են նաև սեփական հմտությունների կատարելագործման ձգտումը, հետաքրքրասիրությունը⁵:

3. Իրավաբանական հատկանիշներ

Իրավաբանական հատկանիշներից են դատվածության առկայությունը, խմբի կազմում հանցանքը կատարելու փաստերը: Ուսումնասիրված անձանց 97,22 %-ը նախկինում դատվածություն չի ունեցել: Խմբի կազմում հանցանք կատարելու ցուցանիշը կազմում է 16,67 %:

Այսպիսով՝ համակարգչային հափշտակություններ կատարողներին ընդհանրացված ձևով բնութագրական է երիտասարդ տարիքը՝ 24-40 տարեկան, արական սեռին պատկանելությունը, ազգությամբ հայ, Հայաստանի Հանրապետության քաղաքացի լինելը, ցածր կրթական մակարդակը, ամուսնական հարաբերությունների առկայությունը, մշտական օրինական եկամուտի աղբյուրի բացակայությունը, շահադիտական դրդապատճառով հանցանք կատարելը, նախկինում դատվածություն չունենալը, տեղեկատվական տեխնոլոգիաների հետ աշխատելու լավ հմտությունները:

Վերը նկարագրված տվյալներն ունեն կարևոր քրեաբանական նշանակություն: Այսպես.

1) տարիքային բնութագրումը թույլ է տալիս դատել որոշակի տարիքային խմբի ներկայացուցիչների քրեածին ակտիվության դրսևորման ինտենսիվության աստիճանի և հանցավոր վարքի առանձնահատկությունների մասին,

2) կրթական մակարդակը մեծապես կանխորոշում է հանցագործության կատարման եղանակը, օգտագործվող միջոցների բնույթը,

3) բարոյական որակները և հոգեբանական առանձնահատկությունները թույլ են տալիս խորությամբ բացահայտել անձի բովանդակությունը, ընտրել հոգեբանական ներգործության արդյունավետ հնարքներ և այլն⁶:

Համակարգչային հափշտակություններ կատարող անձին նկարագրող տեղեկատվության հիման վրա պետք է կառուցվի այդ հանցատեսակների անհատական կանխարգելումը: Նշված տվյալները հնարավորություն են տալիս որոշել անհատական կանխարգելիչ միջոցառումների ուղղվածությունը (օրինակ՝ խմբային հանցանք կատարելու պարագայում դա այլ է, միանձնյա կատարելու դեպքում՝ այլ), ընտրել

⁴ Տե՛ս **Шапошников А. А.**, Криминологическая характеристика личности киберпреступника // <https://cyberleninka.ru/article/n/kriminologicheskaya-harakteristika-lichnosti-kiberprestupnika-1/viewer> (վերջին մուտք՝ 08.01.2025թ.):

⁵ Տե՛ս **Белевитина Ю. В.**, Криминологический портрет личности киберпреступника в современной России // Международный практический журнал «Инновационная наука», 12-2 / 2022, էջ 63:

⁶ Տե՛ս **Իսրայելյան Գ.**, Թմրահանցագործի անձը և Հայաստանի Հանրապետությունում թմրահանցագործությունների անհատական կանխարգելման որոշ հարցեր // ՀՀ սահմանադրական դատարան. Տեղեկագիր. 4 (112) 2023, էջ 56:

ներգրավվող անձ (օրինակ՝ արդյունավետ կարող է լինել ամուսնու կամ հանցավորի համար հեղինակություն ունեցող այլ անձի մասնակցությունը կանխարգելիչ միջոցառումներին) և այլն:

Եզրակացություն

Կատարված հետազոտության արդյունքները թույլ են տալիս ձևակերպել հետևյալ եզրահանգումները.

1. Համակարգչային հափշտակություններ կատարող անձին ընդհանրացված ձևով բնորոշ է երիտասարդ տարիքի (24-40 տարեկան) քրեական ակտիվությունը, արական սեռին պատկանելությունը, ազգությամբ հայ, Հայաստանի Հանրապետության քաղաքացի լինելը, ամուսնական հարաբերությունների առկայությունը, ցածր կրթական մակարդակը, մշտական աշխատանքային զբաղվածության բացակայությունը, տեղեկատվական տեխնոլոգիաների հետ աշխատելու լավ հմտությունները, հանցանքը շահադիտական դրդապատճառով կատարելը:

2. Վերը նկարագրված տվյալներն ունեն կարևոր քրեաբանական նշանակություն: Այսպես, տարիքային բնութագրումը թույլ է տալիս դատել որոշակի տարիքային խմբի ներկայացուցիչների քրեածին ակտիվության դրսևորման ինտենսիվության աստիճանի և հանցավոր վարքի առանձնահատկությունների մասին, կրթական մակարդակը մեծապես կանխորոշում է հանցագործության կատարման եղանակը, օգտագործվող միջոցների բնույթը, բարոյական որակները և հոգեբանական առանձնահատկությունները հնարավորություն են ընձեռում խորությամբ բացահայտել անձի բովանդակությունը, ընտրել հոգեբանական ներգործության արդյունավետ հնարքներ և այլն:

3. Համակարգչային հափշտակություններ կատարող անձին նկարագրող տեղեկատվության հիման վրա պետք է կառուցվի այդ հանցատեսակների անհատական կանխարգելումը: Նշված տվյալները հնարավորություն են տալիս որոշել անհատական կանխարգելիչ միջոցառումների ուղղվածությունը, ընտրել ներգրավվող անձ և այլն:

КРИМИНОЛОГИЧЕСКИЙ ПОРТРЕТ ЛИЧНОСТИ ПРЕСТУПНИКА, СОВЕРШАЮЩИЙ КОМПЬЮТЕРНОЕ ХИЩЕНИЕ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Исраелян Геворг

кандидат юридических наук, доцент,

Начальник Научно-исследовательского центра

прикладных проблем криминологии

Национального бюро экспертиз Национальной академии наук РА,

преподаватель Международного университета Евразия

Аннотация. Анализ статистических данных за последние годы выявил устойчивый рост компьютерных хищений. Это свидетельствует о необходимости активации предупредительного воздействия. В целях обеспечения предупредительного воздействия, в частности, для организации индивидуальных профилактических работ, необходимо осуществить исследование криминологических составляющих указанных преступлений, в том числе личности преступника.

В статье представлены результаты проведенного автором исследования лица, совершившего компьютерные хищения, на основе данных 30 судебных актов, принятых в 2019-2024 годах. В результате исследования раскрыты признаки, характеризующие структурные элементы личности преступника и их криминологическое значение.

Результаты исследования автора доказывают, что для лица, совершающего компьютерные хищения, в целом характерна криминальная активность в молодом возрасте (24-40 лет), принадлежность к мужскому полу, армянской национальности, гражданству Республики Армения, наличие супружеских отношений, низкий уровень образования, отсутствие постоянной работы, наличие хороших навыков работы с информационными технологиями, совершение преступления с корыстными мотивами. Указанные и другие данные, характеризующие преступника, должны учитываться при определении направления индивидуальной профилактики вышеупомянутых преступлений, выборе метода и решении других вопросов организационного характера.

Ключевые слова: компьютерное хищение, личность преступника, криминологический портрет.

THE CRIMINOLOGICAL PORTRAIT OF THE PERSONALITY OF A CRIMINAL WHO COMMITS COMPUTER THEFT IN THE REPUBLIC OF ARMENIA

Israyelyan Gevorg

Candidate of Legal Sciences, Associate Professor,

Head of the Scientific Research Center of

Applied problems in criminology of

National Bureau of Expertises of

National Academy of Sciences of the Republic of Armenia,

Lecturer of the Law Department at Eurasia International University

Summary: An analysis of statistical data in recent years has revealed a steady increase in computer theft. This indicates the need to activate the preventive effect. In order to ensure a preventive effect, in particular, for the organization of individual preventive work, it is necessary to carry out a study of the criminological components of these crimes, including the personality of a criminal.

The article presents the results of the author's study of a person who committed computer theft, based on data from 30 judicial acts adopted in 2019-2024. As a result of the study, the signs characterizing the structural elements of the criminal's personality and their criminological significance are revealed.

The results of the author's research prove that a person committing computer theft is generally characterized by criminal activity at a young age (24-40 years old), belonging to the male sex, Armenian nationality, citizenship of the Republic of Armenia, marital relations, low level of education, lack of permanent work, good information technology skills, committing a crime with selfish motives. These and other data characterizing the personality should be taken into account when determining the direction of individual prevention of these crimes, choosing a method and solving other organizational issues.

Key words: computer theft, criminal personality, criminological portrait.

Հոդվածը գրախոսվել է՝ 10.01.2025թ.

Ներկայացվել է տպագրության՝ 20.12. 2024թ.

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԴԱՎԱԿԱՆ ՆՈՐՄԻ ԽԱԽՏՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԻՄՔ

Հարությունյան Հերբերտ

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի

սահմանադրական իրավունքի ամբիոնի հայցորդ

DOI: 10.63925/18294847-2025.19op-04

Համառոտագիր: Սույն հետազոտական աշխատանքը նվիրված է սահմանադրական պատասխանատվության փաստական հիմք հանդիսացող սահմանադրական իրավահարաբերությունների սուբյեկտի արարքի՝ սահմանադրական իրավախախտման ինստիտուտի վերլուծությանը: Սահմանադրական իրավախախտման օբյեկտից անհրաժեշտ է տարբերել սահմանադրական իրավախախտման առարկան: Սահմանադրական իրավախախտման առարկան կազմում են սահմանադրաիրավական հարաբերությունների օբյեկտները: Լայն առումով սահմանադրական իրավախախտման առարկա կարող ենք համարել սոցիալական կարևոր ինստիտուտներ, ինչպիսին են պետությունն ու իրավունքը: Սահմանադրական իրավախախտման առարկա կարելի է համարել նաև այն իրավական ակտերը, իրականությունում գոյություն ունեցող վիճակները, սոցիալական արժեքները, որոնց հետ սահմանադրական իրավունքի նորմերը կապում են պետական կառույցների լիազորությունները, հանրային իշխանության մարմինների և պաշտոնատար անձանց իրավասությունները, անհատների իրավունքներն ու ազատությունները, սահմանադրաիրավական հարաբերությունների մասնակիցների գործունեությունը, նրանց վարքագիծը: Սահմանադրական պատասխանատվությունն իրավական հանրույթում ընկալվում է որպես հասարակության և պետության բացասական գնահատական քաղաքացու, պետական մարմնի, պաշտոնատար անձի և այլոց գործունեությանը, ինչպես նաև պետական հարկադրանք, իրավական նորմի սանկցիայի իրացում: Կատարված վերլուծությունների արդյունքում դիտարկվել են խնդրո առարկա հարաբերությունները կարգավորող իրավական ակտերում առկա թերությունները, բացերը, անորոշությունները և հակասությունները, որոնց վերացման, լրացման և հետագա կատարելագործման ուղղությամբ արվում են համապատասխան առաջարկություններ: Հեղինակը ներկայացրել է առանձնացված հարցերի լուծման տեսամեթոդաբանական իր տեսլականը: Օրինակների տեսքով դիտարկվել են որոշակի իրավիճակներ, որոնց շրջանակներում հիմնավորվել է, որ մինչ այժմ իրավաբանական դոկտրինում գոյություն ունեցող մոտեցումները հնարավորություն չեն տալիս բացահայտելու սահմանադրական իրավախախտման էությունը: Առաջարկվել են ներկա գործընթացներին առավել համահունչ մի շարք համակարգված տեսակետներ:

Բանալի բառեր- իրավաբանական փաստ, փաստական հիմք, սուբյեկտի սահմանադրաիրավական կարգավիճակ, հակասահմանադրական արարք, իրավախախտման սուբյեկտիվ կողմ, սահմանադրական դեղիկտ, սահմանադրական պատասխանատվության բովանդակություն, սահմանադրական սանկցիա, կոլեգիալ սուբյեկտ,

հանրային իշխանություն, բարձրագույն իրավաբանական ուժ:

Սահմանադրական պատասխանատվության նորմատիվ հիմքը նյութական իրավունքի նորմերն են, որոնք, սահմանելով հակաիրավական արարքի հատկանիշները, նախատեսում են նեգատիվ իրավաբանական պատասխանատվության կիրառման հիմքը: Իրավախախտումն իրավանորմի պահանջները խախտող և անբարենպաստ հետևանքներ առաջացնող վարքագծի ակտ է, իրավաբանական պատասխանատվության հիմք հանդիսացող իրավաբանական փաստ: Ըստ Վ. Ս. Ներսեսյանցի՝ իրավախախտումը դելիկտունակ սուբյեկտի ոչ իրավաչափ, հանրորեն վտանգավոր, մեղավորությամբ կատարված արարքն է (գործողությունը կամ անգործությունը), որի համար գործող իրավունքում նախատեսված է իրավաբանական պատասխանատվություն¹: Ա.Բ. Կովալենկոյի կարծիքով՝ իրավախախտումն օրենքով նախատեսված տարիքի հասած և իր արարքները կառավարելու ունակ անձի հանրորեն վտանգավոր վարքագիծն է²: Իրավախախտումը սեռային հասկացություն է այնպիսի տեսակային հասկացությունների համար, ինչպիսին կարգապահական, վարչական (զանցանք), քաղաքացիական, սահմանադրական (դելիկտ), քրեական (հանցանք) և այլ իրավախախտումներն են: Հայրենական իրավահամակարգում իրավախախտումը մեկնաբանվում է որպես իրավունքի նորմի, սոցիալական շահերի և արդարության խախտում, հանրորեն վտանգավոր և սոցիալապես վնասակար վարքագիծ: Կարծում ենք՝ օրինաչափ է, որ իրավախախտումը և դրա առանձին տեսակներն ուսումնասիրում են ինչպես իրավունքի ընդհանուր տեսության, այնպես էլ ճյուղային իրավաբանական գիտությունները: Հետազոտության մեթոդաբանական հիմք են կազմում համագործակցային, ինչպես նաև հատուկ՝ տրամաբանական, համակարգային-կառուցվածքային, համեմատական-իրավական մեթոդները:

Տարիներ շարունակ իրավախախտման և դրա «ավանդական» տեսակետների հասկացության, հատկանիշների, կազմի հիմնախնդիրները թեպետ հիմնավորված ուսումնասիրվել են, բայց անդրադարձ չի կատարվել սահմանադրական իրավախախտման հասկացությանը: Առավել ուշագրավ է այն հանգամանքը, որ իրավախախտումների շարքում չի նշվել սահմանադրական իրավախախտումը³: Սահմանադրական պատասխանատվության ինստիտուտի զարգացմանը համընթաց սահմանադրական իրավախախտումը գիտական ուսումնասիրման առարկա է դարձել:

Սահմանադրական պատասխանատվության փաստական հիմքը սահմանադրական իրավահարաբերությունների սուբյեկտի արարքն է, որը խախտում է սահմանադրաիրավական սանկցիայով պահպանվող նորմի դիսպոզիցիան: Սահմանադրական իրավախախտում կատարած սուբյեկտի նկատմամբ կիրառվում է նեգատիվ

¹ Տե՛ս Ներսեսյանց Վ.Ս., «Իրավունքի և պետության տեսություն», էջ 280:

² Տե՛ս Коваленко А. И., Теория государства и права, Вопросы и ответы, М., 1997, էջ 187.

³ Տե՛ս Теория государства и права, Под ред. А. И. Денисова, М., 1972, с.490-495; Общая теория государства и права, N 3, Отв. ред. М. Н. Марченко, М., 2002, էջ 454-462.

սահմանադրական պատասխանատվություն: Սահմանադրական իրավախախտումը և սահմանադրական պատասխանատվությունը հարաբերակցվում են որպես պատճառ (իրավախախտում) և հետևանք (պատասխանատվություն): Պատճառահետևանքային կապից կարող ենք եզրահանգել, որ սահմանադրական իրավախախտումը՝ որպես իրավաբանական փաստ, սահմանադրական պատասխանատվության անհրաժեշտ հիմքն է: Մեր ընկալմամբ՝ սահմանադրական իրավախախտումը հակաօրինական, ավելի կոնկրետ՝ հակասահմանադրական արարք է, որը ոտնձգում է սոցիալական կարևորագույն արժեքների, հասարակական և պետական կյանքի կազմակերպման սկզբունքների դեմ: Սահմանադրական պատասխանատվության միջոցները վրա են հասնում՝ կախված արարքի բնույթից, հասարակական վտանգավորության աստիճանից, առաջացրած հետևանքներից, սուբյեկտի սահմանադրաիրավական կարգավիճակից: Հետխորհրդային ժամանակաշրջանի իրավաբանական գրականության մեջ նշվում է, որ սահմանադրական պատասխանատվության փաստական հիմքը սահմանադրական դեխիկտն է⁴: «Դեխիկտ» տերմինը ծագել է լատիներեն «delictum» բառից, որը նշանակում է իրավախախտում, զանցանք: Այս տերմինն օգտագործվում է թե՛ հայրենական և թե՛ արտասահմանյան գրականություններում⁵: Ըստ Վ.Օ. Լուչինի՝ «Սահմանադրական դեխիկտը սահմանադրական պատասխանատվության սուբյեկտի՝ որպես սահմանադրական իրավահարաբերությունների մասնակցի արարքն է, որը չի համապատասխանում պատշաճ վարքագծի կանոններին և առաջացնում է սահմանադրական պատասխանատվություն»⁶: Կան հեղինակներ, որոնք առաջարկում են գիտական մակարդակով շրջանառության մեջ թողնել «պետական իրավախախտում» հասկացությունը⁷:

Քանի որ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը և սահմանադրական օրենսդրությունը չեն բացահայտում ոչ միայն «սահմանադրական պատասխանատվությունը», այլև «սահմանադրական իրավախախտում» հասկացությունների բովանդակությունը, հետևաբար, փորձ է արվում այն բնութագրել գիտական վերլուծությունների ճանապարհով: Այսպես, սահմանադրական իրավախախտումը մենք դիտարկում ենք լայն և նեղ ասպեկտներով: Լայն ասպեկտով սահմանադրական պատասխանատվության հիմքը բնութագրվում է որպես սուբյեկտի գործողության անհամապատասխանություն, անցանկալի վարքագծի դրսևորում, որը չի հանգում սպասված արդյունքի⁸: Սահմանադրական պատասխանատվության հիմք չպետք է համարել անհամապատասխանությունը «բարձր շահին» կամ աննպատակահարմարությանը, քանի որ վերջիններս հստակ իրավական ձևակերպում և ամրագրում

⁴ Տե՛ս **Виноградов В. А.**, Конституционная ответственность как вид юридической ответственности // Конституционно-правовая ответственность: проблемы России, опыт зарубежных стран, Кубань, 2014, էջ 97:

⁵ Տե՛ս **Nahmof S. H., Wells M. L., Taton T. A.**, Constitutional Torts. Anderson Publishing company, 1995.

⁶ Տե՛ս **Лучин В. О.**, Конституционные деликты // Государство и право, 2000, N 1, էջ 12:

⁷ Տե՛ս **Карасев М. Н.**, О государственно-правовой ответственности высших должностных лиц субъектов Российской Федерации// Журнал российского права, 2000, N7, էջ 32:

⁸ Տե՛ս **Авакьян С.А.**, Государственно-правовая ответственность// Советское государство и право, М., 1975, էջ 22:

չունեն, հայեցողական հասկացություններ են, որոնք սահմանադրաիրավական որակման համար կողմնորոշիչ չեն կարող դառնալ: Մենք համակարծիք ենք Վ. Օ. Լուչինի տեսակետին՝ ըստ որի հստակությունը և ամբողջականությունը բնորոշ չեն սահմանադրական դեղիկներին⁹: Կարևոր մի դիտարկում անենք. սահմանադրական իրավահարաբերությունների մասնակիցների վարքագիծը կանխորոշվում և գնահատվում է ոչ միայն իրավական նորմերով, այլ նաև երբեմն պայմանավորված է քաղաքական կողմնորոշումներով ու չափանիշներով: Այնուամենայնիվ, կարծում ենք, որ անթույլատրելի է «սահմանադրական իրավախախտում» հասկացության տարաբնույթ սահմանումների՝ արժեքային անորոշ հասկացությունների օգտագործումը: Մյուս կողմից՝ չպետք է սահմանափակել վերջինիս իմաստային բովանդակությունը՝ այն հանգեցնելով միայն «Սահմանադրության էական խախտման, որը կատարվել է մեղավորությամբ դեղիկոտունակ անձի կողմից, որն ունի հանրային վտանգավորություն, պատճառել է էական վնաս»¹⁰, կամ էլ միայն սահմանել, որ «սահմանադրական իրավախախտումը Սահմանադրության նորմերի դիտավորյալ խախտումն է»¹¹: Նշված մոտեցմանը համամիտ չենք, քանի որ սահմանադրական իրավախախտումը միայն Սահմանադրության խախտումը չէ: Կարող են խախտվել նաև սահմանադրական իրավունքի այլ աղբյուրների պահանջները, և խախտումը կարող է կատարվել ոչ դիտավորությամբ:

Այս առումով՝ Դ. Տ. Շոնն առաջարկում է ընդլայնել սահմանադրական պատասխանատվության առաջացման հիմքերի շրջանակը՝ ներառելով նաև քրեական օրենսգրքի նորմերի խախտումները, անբարոյական վարքագիծը և այլն¹²: Այս տեսակետին մենք այնքան էլ համամիտ չենք: Ինչպես նշվեց, սահմանադրական պատասխանատվության հիմքը սահմանադրական դեղիկն է, որն էականորեն տարբերվում է ոչ միայն քրեական պատասխանատվության հիմք հանդիսացող հանցանքից, այլև վարչական, քաղաքացիական, կարգապահական իրավախախտումներից: Միաժամանակ ավելացնենք նաև, որ սահմանադրական պատասխանատվության հիմք կարող է լինել ոչ միայն սահմանադրական նորմեր խախտող վարքագիծը, այլև սահմանադրական իրավանորմերով սահմանված տարբեր հանգամանքների առաջացումը, օրինակ՝ այլ սուբյեկտների գործողությունները¹³:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ կան երկրներ, որոնց օրենսդրությամբ պաշտոնատար անձանց սահմանադրական պատասխանատվության հիմք է համարվում անվայել, անբարո վարքագիծը (օրինակ՝ Մադագասկարի Հանրապետության Սահմանադրության 43-րդ հոդված)¹⁴:

⁹ Տե՛ս Լучин В. О., Ответственность в механизме реализации Конституции// Право и жизнь, 1992. էջ 39:

¹⁰ Տե՛ս Скифский Ф. С., Ответственность за конституционные правонарушения, Тюмень, 1998, էջ 12:

¹¹ Տե՛ս Витрук Н. В., Конституционная ответственность: вопросы теории и практики// Конституционно-правовая ответственность: проблемы России, опыт зарубежных стран, էջ 37:

¹² Տե՛ս Шоп Д. Т., Конституционная ответственность// Государство и право, 1995, N7.

¹³ Տե՛ս Виноградов В. А., Ответственность в механизме охраны конституционного строя, М., 2005, էջ 30:

¹⁴ Տե՛ս Чиркин В. Е., Конституционное право зарубежных стран, М., 2001, էջ 312:

Մեր կարծիքով՝ պաշտոնատար անձանց իրավախախտումները նաև անբարոյական արարքներ են: Կարևոր մի փաստ ևս արձանագրենք. պետաիշխանական լիազորություններով օժտված ցանկացած սուբյեկտ կարող է ցուցաբերել անբարոյ վարքագիծ, որը կարող է չորակվել որպես իրավախախտում, բայց տվյալ սուբյեկտի նկատմամբ կհանգեցնի վստահության կորստին, և չի բացառվում նաև, տվյալ սուբյեկտի հետագա պաշտոնավարման դադարեցման հիմք հանդիսանալ:

ԱՄՆ Մասաչուսեթս նահանգի Սահմանադրությամբ (18-րդ հոդված 1-ին մաս) ամրագրված է, որ պաշտոնատար անձինք պետք է համապատասխանեն «պատվախնդրության, արդարության, ազնվության, զսպվածության, բարոյականության, աշխատասիրության և օգտակարության պահանջներին»¹⁵: Բարոյական արժեքներն են դրված օրենսդրական համակարգի հիմքում, և բարոյական ու իրավական նորմերի պահպանության շնորհիվ է կառուցվում սահմանադրական օրինականությունը: Ասվածից չի հետևում, որ սահմանադրական պատասխանատվության փաստական հիմքն անբարոյական արարքն է: Սահմանադրական պատասխանատվության հիմքի առանձնահատկությունն այն է, որ օրենսդրական մակարդակով բացակայում են սահմանադրական իրավախախտումների հստակ ձևակերպումները¹⁶:

Սահմանադրական պատասխանատվության ինստիտուտի հստակեցումը դժվարանում է՝ պայմանավորված այն հանգամանքով, որ որպես սահմանադրական պատասխանատվության հիմք կարող է համարվել ոչ միայն սահմանադրական, այլև իրավունքի այլ ճյուղերին պատկանող իրավանորմերի խախտումը (օրինակ՝ Հանրապետության վարչապետի կողմից պետական դավաճանության կամ այլ հանցանքի կատարումը): Բերված օրինակում վրա է հասնում սահմանադրաիրավական սանկցիան՝ պաշտոնազրկումը, որին հաջորդում է քրեական պատասխանատվությունը:

Ասվածից կարող ենք եզրակացնել, որ սահմանադրական պատասխանատվության հիմք կարող են լինել ինչպես սահմանադրական, այնպես էլ այլ իրավախախտումները: Սահմանադրական պատասխանատվության միջոցները կարող են կիրառվել իրավաբանական պատասխանատվության այլ միջոցների հետ համատեղ: Սահմանադրական պատասխանատվությունը մի դեպքում կարող է նախորդել պատասխանատվության մյուս տեսակներին (քրեական, վարչական), իսկ այլ դեպքերում կիրառվել իրավունքի այլ ճյուղերով սահմանված ներգործության միջոցների գործադրումից հետո: Վերոգրյալի օրինակ կարող է լինել Ազգային ժողովի պատգամավորի ձերբակալումը, որից հետո օրենսդիրը նրան զրկում է պատգամավորական անձեռնմխելիությունից: Սահմանադրական պատասխանատվության հիմք կարող են լինել ոչ միայն գործողությունները, այլև անգործությունը, սահմանադրական պարտավորությունների չկատարումը: Դ. Տ. Շոնի կարծիքով՝ սահմանադրական պատասխանատվության

¹⁵ Տե՛ս Соединенные Штаты Америки: Конституция и законодательные акты, М., 1993.

¹⁶ Տե՛ս **Лучин В. О.** նշվ. աշխ., էջ 39:

հիմքն այն գործողությունը կամ անգործությունն է, որը վնաս է պատճառել կամ կարող էր պատճառել ժողովրդին, պետությանը՝ անկախ այն հանգամանքից, թե դրանով խախտվե՞լ են սահմանադրական իրավանորմերը, թե՝ ոչ¹⁷:

Իրավաբանական գրականության մեջ նշվում է, որ հակասահմանադրական վարքագիծը կարող է դրսևորվել հետևյալ ձևերով.

սահմանադրաիրավական նորմի չկիրառում,

սահմանադրաիրավական նորմի ոչ պատշաճ կիրառում,

սահմանադրաիրավական նորմի ուղղակի խախտում¹⁸:

Վերը թվարկվածներին մենք կավելացնեինք նաև, որ սահմանադրական իրավախախտման օբյեկտիվ կողմը կարող է դրսևորվել նաև սահմանադրական իրավունքի սուբյեկտների կողմից իրենց սահմանադրական իրավունքների չարաշահմամբ: Մեր կարծիքով՝ սահմանադրական իրավախախտման օբյեկտիվ կողմին գնահատական կարող է տալ այն սուբյեկտը, որն իրավասու է կիրառել սահմանադրաիրավական սանկցիա, կամ ում որոշումը վճռորոշ է սահմանադրական պատասխանատվության ենթարկելու գործընթացում:

Սահմանադրական պատասխանատվությունը նշանակում է պետության և հասարակության բացասական գնահատական քաղաքացու, պետական մարմնի, պաշտոնատար անձի, քաղաքական կուսակցությունների, հասարակական կազմակերպությունների, տեղական ինքնակառավարման մարմինների և այլոց գործունեությանը, ինչպես նաև պետական հարկադրանք, իրավական նորմի սանկցիայի իրացում¹⁹: Իրավաբանական գրականության մեջ նշվում է, որ սահմանադրական իրավախախտման օբյեկտիվ կողմը սուբյեկտի կողմից իր սահմանադրական պարտականությունները չկատարելն է կամ ոչ պատշաճ կատարելը: Իշխանական կառույցների սահմանադրական պարտականությունը նրանց ներկայացվող իրավական կարգադրագիրն է՝ ձեռք բերելու պոզիտիվ արդյունք՝ իր լիազորություններին համապատասխան²⁰: Այլ հեղինակների կարծիքով՝ սահմանադրական դեյիկտի օբյեկտիվ կողմը դրսևորվում է սահմանադրական արգելքների ուղղակի խախտման ձևով: Չնայած սահմանադրական իրավախախտման օբյեկտիվ կողմի բնորոշման բարդությունը պայմանավորված է սահմանադրական իրավանորմերը խախտած սուբյեկտների վարքագծի գնահատման հստակ, միանշանակ կամ համընդհանուր, բոլոր դեպքերի համար ընդունելի չափանիշների բացակայությամբ և այդպիսի չափանիշների սահմանման դժվարությամբ, բայց կարող ենք փաստել, որ սահմանադրական իրավախախտման օբյեկտիվ կողմը կազմում է սահմանադրական իրավահարաբերությունների մասնակիցների գործունեությունը

¹⁷ Տե՛ս **Шон Д.Т** Конституционно-правовая ответственность и юридические преимущества, Пенза, 2016, էջ 49-50:

¹⁸ Տե՛ս **Авакьян С.А.**, Государственно-правовая ответственность// Советское государство и право, М., 1975, էջ 22:

¹⁹ Տե՛ս **Боброва Н.А., Зражевская Т.Д.**, Նշվ. աշխ., էջ 66:

²⁰ Տե՛ս **Габричидзе Б.Н., Чернявский А.Г.**, Նշվ. աշխ., էջ 260:

(գործողությունը կամ անգործությունը), որը խախտում է Սահմանադրության գերակայության, բարձրագույն իրավաբանական ուժի, ուղղակի, անմիջական գործողության և մյուս սկզբունքները՝ կապված հանրային իշխանության իրացման հետ:

Որպես կանոն, սահմանադրական նորմի խախտումը ձևական կազմ ունի, այսինքն՝ չի պահանջվում նյութական հետևանքների առկայություն: Դա պայմանավորված է սահմանադրական իրավախախտման ակնհայտության և հասարակական մեծ հնչեղության հետ: Բայց եթե պատճառվում է վնաս, ապա, ինչպես վերը նշեցինք, սահմանադրական իրավախախտման օբյեկտիվ կողմը նյութական բնույթ է ստանում և ներառում է նաև սուբյեկտի վարքագծի ու հետևանքի՝ առաջացրած վնասի միջև պատճառահետևանքային կապը:

Իրավախախտման սուբյեկտիվ կողմը կազմում են մեղքը, նպատակները, շարժառիթները: Սահմանադրական իրավախախտումների մեծ մասը կարող է կատարվել թե՛ դիտավորյալ և թե՛ անզգույշ մեղքով: Երդում տալուց իր սահմանադրական պարտականությունները կատարելուց հրաժարվելը կարող է կատարվել միայն դիտավորությամբ: Իրավաբանական գրականության մեջ առկա է այն կարծիքը, ըստ որի՝ սահմանադրական իրավունքում մեղքը չպետք է դիտարկել միայն դրա հոգեբանական ձևերի՝ դիտավորության կամ անզգույշության կատեգորիաների միջոցով: Առաջարկվում է մեղքը որոշելիս կարևորել սոցիալ-քաղաքական այնպիսի չափանիշներ, ինչպիսիք են քաղաքական համոզմունքները, գործի շահերը և այլն²¹:

Վ. Օ. Լուչինի կարծիքով՝ թույլատրելի է պատասխանատվությունն օբյեկտիվորեն հակաիրավական արարքի համար, այսինքն՝ առանց իրավախախտման սուբյեկտի մեղքը հաստատելու²²: Նույն կարծիքն ունի նաև Տ. Դ. Զրաժնսկայան²³:

Իրավաբան-գիտնականների կարծիքը տարբերվում է այն հարցում, թե արդյո՞ք մեղքը համարել որպես սահմանադրական պատասխանատվության կիրառման պարտադիր պայման, թե՞ ոչ: Մի մասը կարծում է, որ առանց մեղքի չպետք է լինի պատասխանատվություն, և պատասխանատվությունն անհնար է պատկերացնել առանց մեղավոր անձի կամ մարմնի համար անբարենպաստ հետևանքների առաջացման: Իսկ անօրինական ակտերի վերացումը նրանք համարում են օրինականության վերականգնում և ոչ թե սահմանադրական պատասխանատվության կիրառում²⁴: Գիտնականների մյուս մասը, համարելով մեղքը որպես իրավաբանական պատասխանատվության հիմքի պարտադիր տարր, կոլեգիալ սուբյեկտի ընդունած իրավական ակտի վերացումը սահմանադրական պատասխանատվության միջոց է

²¹ Տե՛ս **Малиновская В.М.**, Նշվ. աշխ., էջ 18:

²² Տե՛ս **Лучин В.О.**, Նշվ. աշխ., էջ 14:

²³ Տե՛ս **Зражевская Т. Д.**, Из выступления на “Круглом столе” журнала “Государство и право” // Государство и право, 2000, N 3:

²⁴ Տե՛ս **Красбов М.А.**, Публично-правовая ответственность представительных органов за нарушение закона// Государство и право, 1993, N 6, էջ 50: **Савин В. Н.**, Ответственность государственной власти перед обществом// Государство и право, 2000, N 12, էջ 67:

համարում, նույնիսկ եթե չի հաստատվում կոնկրետ անձանց մեղքը, և ակտն ընդունած անձանց ու մարմնի համար չեն առաջանում անբարենպաստ հետևանքներ: Այս միջոցը համարվում է սահմանադրական սանկցիա, քանի որ ակնհայտ է նրանց գործունեության պետաիրավական բացասական գնահատականը, ովքեր ընդունել են այդ ակտը: Կարծում ենք, որ իրավական ակտի վերացումը և՛ սահմանադրաիրավական սանկցիայի տեսակ է, և՛ ինքնին անբավարար գնահատում է բովանդակում: Սահմանադրական իրավահարաբերություններում մեղքի հիմնահարցը բազմակողմանի և հիմնավորված ուսումնասիրման կարիք ունի:

Սահմանադրական պատասխանատվության բովանդակությունը, իրավաբանական բնույթը և հիմքերն առանձնահատուկ են, ուստի դրանց նկատմամբ չի կարելի կիրառել իրավաբանական պատասխանատվության ինստիտուտի համար ավանդական հասկացությունները, սկզբունքները և մոտեցումները: Մենք համակարծիք չենք այն գիտնականների հետ, որոնք մեղքի առկայությունը համարում են սահմանադրական պատասխանատվության կիրառման անհրաժեշտ պայման²⁵: Պետք է հաշվի առնել, որ առանց մեղքի պատասխանատվությունը հնարավոր է ոչ միայն սահմանադրական իրավահարաբերություններում. «անմեղ պատասխանատվությունը» սկզբունքորեն հնարավոր է նաև քաղաքացիաիրավական ոլորտում: Քաղաքացիական օրենսդրությունը փաստում է, որ առանց մեղքի պատասխանատվության ինստիտուտն էականորեն ընդլայնվել է, օրինակ, բարոյական վնասը փոխհատուցելու, ձեռնարկատիրական գործունեությունից բխող պարտականությունները կատարելու և այլ դեպքերում: Առանց մեղքի պատասխանատվությունը նախատեսված է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1061 հոդվածի առաջին մասում, իսկ ըստ 1062 հոդվածի՝ Հայաստանի Հանրապետությունը կրում է քաղաքացիաիրավական պատասխանատվություն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց պատճառած վնասի դեպքում²⁶:

Իրավաբանական գրականության մեջ նշվում է, որ սահմանադրական դելիկտների առնչությամբ մեղքի առկայությունը պատասխանատվության կիրառման անհրաժեշտ պայման է, թեև մեղքն այս դեպքում ոչ միշտ է համապատասխանում իր ավանդական ձևին²⁷: Սահմանադրական իրավախախտման սուբյեկտիվ կողմի առանձնացման փորձերը գրեթե միշտ դատապարտված են անհաջողության, քանի որ իրավախախտման կազմի հարյուրամյակներով մշակված կառուցվածքը սահմանադրական իրավունքում դառնում է անկենսունակ: Առանց մեղքի պատասխանատվության պաշտպանության օգտին բերվում է երեք հիմնական փաստարկ. առաջին՝ այդ պատասխանատվությունն ունի խթանող բնույթ, երկրորդ՝ պայմանավորված է տուժողի

²⁵ Տե՛ս **Бутусова Н. В.**, Конституционно-правовой статус российского государства: вопросы теории и практики, Москва, 2006, էջ 131:

²⁶ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրք:

²⁷ Նման տեսակետ է արտահայտել նաև Տ. Դ. Ջրածնակյան, տե՛ս *Государство и право*, 2000, N 3, էջ 26-28:

գույքային շահերի ապահովման անհրաժեշտությամբ և երրորդ՝ օրենքի տերմինաբանությամբ՝ համաձայն որի պատահականորեն պատճառված վնասը փոխհատուցելու պարտականությունը կոչվել է պատասխանատվություն²⁸: Մեր կարծիքով՝ սահմանադրական պատասխանատվությունը կարող է կիրառվել ինչպես իրավախախտման և նրա սուբյեկտիվ կողմի առանցքը կազմող մեղքի առկայության, այնպես էլ մեղքի ձևական բացակայության դեպքում: Սահմանադրական պատասխանատվության առանձնահատկությունն է պատասխանատվության հնարավորությունն առանց մեղքի: Առանց մեղքի պատասխանատվություն է պառլամենտական պատասխանատվությունը (նման իրավիճակ կարող է առաջանալ բացառապես խորհրդարանում քաղաքական ուժերի հարաբերակցության փոփոխության արդյունքում) կամ առանց մեղքի (այսինքն՝ իրավաբանական իմաստով մեղքի բացակայությամբ) պատասխանատվություն է պատգամավորի հետևանքը²⁹: Առանց մեղքի պատասխանատվության կիրառումը հիմնավորվել է 20-րդ դարի 50-ական թվականներից և հիմնականում վերագրվել է քաղաքացիական իրավունքին³⁰: Կան երկրներ, որտեղ սահմանադրորեն նախատեսվում է սահմանադրական պատասխանատվության սուբյեկտի մեղքը: Գերմանիայի Դաշնային Հանրապետության Սահմանադրության 61-րդ հոդվածի համաձայն՝ դաշնային սահմանադրական դատարանը կարող է դաշնային նախագահին պաշտոնանկ անել, եթե նա մեղավոր է հիմնական օրենքի կամ այլ օրենքի դիտավորյալ խախտման մեջ: Նման կարգավորումներ են նախատեսված նաև Ավստրիայի դաշնային սահմանադրական օրենքի 119-րդ հոդվածով, Հունգարիայի Հանրապետության Սահմանադրության 31-րդ հոդվածով, Հունաստանի Սահմանադրության 49-րդ հոդվածով³¹:

Սահմանադրական իրավահարաբերություններում մեղքը կարելի է համարել սուբյեկտի՝ սահմանադրական պարտականությունների պատշաճ կատարման հնարավորություն և նրա կողմից անհրաժեշտ բոլոր միջոցների չձեռնարկում՝ սահմանադրական իրավախախտում թույլ չտալու համար: Սահմանադրությունը՝ որպես բոլորի գործունեության համար «սահմաններ գծող» պատվիրանների ամբողջություն, բոլորի համար պարտադիր է: Սահմանադրությանը չենթարկվել, անկախ այն հանգամանքից, թե խախտողն ով է, իրավախախտում է: Սահմանադրական իրավախախտումը սուբյեկտի սահմանադրական պատասխանատվության փաստական հիմքն է: Սահմանադրությանը ենթարկվելը կկանխի սահմանադրական իրավախախտումները, կամրապնդի սահմանադրական կարգն ու օրինականությունը և ամբողջությամբ կյանքի կկոչի Հայաստանի Հանրապետության Սահմանադրության

²⁸ Տե՛ս **Малеин Н.С.**, Правонарушение: понятие, причины, ответственность, М., 1985, էջ 28-29, 155.

²⁹ Տե՛ս **Боброва Н. А.** Конституционная ответственность как элемент конституционного строя// Закон и право, 2003, N 9, էջ 28:

³⁰ Տե՛ս **Автимонов Б. С.** Гражданская ответственность за вред, причиненный источником повышенной опасности, М., 1952:

³¹ Տե՛ս Конституции государств Европы, М., 2001.

1-ին հոդվածը: Իրավական կյանքի բնականոն կենսագործման գործում առանցքային դեր ունի ժողովրդի զանգվածային իրավագիտակցությունը, որն իր արտացոլումն է ունենում հասարակական կարծիքում: Իրավակազմավորման գործընթացում, պետության օրենսդրական գործունեության մեջ էական նշանակություն ունեն օրինագծերի կամ կոնկրետ իրավաբանական դրույթների զանգվածային քննարկումները: Ժողովրդի զանգվածային իրավագիտակցությունը հատկապես կարևորվում է հանրաքվեների ժամանակ: Բնակչության իրավագիտակցության բարձր մակարդակն իրավական նորմի ճիշտ իրացման անփոխարինելի պայմանն է, պարտականությունների հստակ կատարման և իրավունքների իրավաչափ օգտագործման երաշխիքը: Մեր կարծիքով՝ իրավունքի իրացման երկու գործոն պետք է կյանքի կոչվեն. առաջինն իրավագիտակցության բարձր մակարդակն է, երկրորդը՝ պետական հարկադրանքի սպառնալիքը: Անհատի իրավագիտակցության ցածր մակարդակը կարող է հանգեցնել ոչ իրավաչափ գործողությունների կատարման, և, ընդհակառակը, անհատական իրավագիտակցության բարձր մակարդակը խթան, իրավական շարժառիթ է ծառայում իրավաչափ վարքագծի համար:

Օրենքները կարող են երևան գալ միայն հասարակության բավականաչափ զարգացած կյանքի, հասարակության մեջ զարգացած բազմատեսակ պահանջմունքների և համապատասխան բավարարման պայմաններում: Քանի որ օրենքի հետ կապված են գիտելիքը և միտքը, դրա երևան գալու համար անհրաժեշտ է նաև մշակութային զարգացման և կրթվածության որոշակի մակարդակ, որպեսզի այն չմնա միայն զգայականում, այլ կարողանա օգտվել համընդհանուր մակարդակից: Եվ վերջապես, պատասխանատվության հիմնահարցերը համակարգային բնույթ ունեն, և յուրաքանչյուր հիմնահարցի լուծումը հանգեցնելու է նոր հիմնահարցերի առաջադրմանը: Ընդ որում՝ որքան ավելի շատ նոր հիմնահարցեր են առաջանում, այնքան ավելի ինֆորմատիվ, արդյունավետ են համարվում լուծված հիմնահարցերը:

НАРУШЕНИЕ КОНСТИТУЦИОННО-ПРАВОВОЙ НОРМЫ КАК ФАКТИЧЕСКОЕ ОСНОВАНИЕ КОНСТИТУЦИОННОЙ ОТВЕТСТВЕННОСТИ

Арутюнян Герберт

Соискатель кафедры конституционного права ЕГУ

Аннотация: Данная исследовательская работа посвящена анализу деяния субъекта конституционных правоотношений, являющегося фактической основой конституционной ответственности, института конституционного правонарушения. Необходимо отличать объект конституционного правонарушения от объекта конституционного правонарушения. Объектом конституционного правонарушения являются объекты конституционно-правовых отношений. В широком смысле субъектом конституционного правонарушения можно считать такие важные социальные институты, как государство и право. Правовые акты, ситуации, существующие в действительности, социальные ценности, с которыми нормы конституционного права связывают полномочия государственных органов, полномочия органов государственной власти и должностных лиц, права и свободы личности, деятельность участников конституционно-правовых отношений, и их поведение также может рассматриваться как предмет конституционного нарушения. Конституционная ответственность в юридическом сообществе воспринимается как негативная оценка обществом и государством деятельности гражданина, государственного органа, должностного лица и других лиц, а также государственное принуждение, реализация санкции правовой нормы, неясности и противоречия, по устранению, дополнению и дальнейшему совершенствованию которых даны соответствующие рекомендации. Автор представил свое видео-методическое видение решения отдельных вопросов. В виде примеров были рассмотрены отдельные правовые ситуации, в рамках которых обосновано, что существующие в правовой доктрине подходы до сих пор не дают возможности раскрыть природу конституционного правонарушения. Был предложен ряд систематических взглядов, которые наиболее соответствуют текущим процессам.

Ключевые слова- юридический факт; фактическая основа; конституционный статус субъекта; неконституционный акт; субъективная сторона правонарушения; конституционный деликт; содержание конституционной ответственности; конституционная санкция; коллегиальное образование; публичная власть; высшая юридическая власть.

VIOLATION OF THE CONSTITUTIONAL LEGAL NORM AS A FACTUAL BASIS OF CONSTITUTIONAL RESPONSIBILITY

Harutyunyan Herbert

PhD student at the YSU Chair of Constitutional Law

Summary: This research work is dedicated to the analysis of the act of the subject of constitutional legal relations, which is the factual basis of constitutional responsibility, the institution of constitutional offense. It is necessary to distinguish the object of the constitutional offense from the object of the constitutional offense. The object of a constitutional offense is the objects of constitutional and legal relations. In a broad sense, we can consider such important social institutions as the state and law to be the subject of a constitutional offense. Legal acts, situations existing in reality, social values, with which the norms of constitutional law connect the powers of state structures, the powers of public authorities and officials, the rights and freedoms of individuals, the activities of the participants in constitutional and legal relations, and their behavior can also be considered as the subject of a constitutional violation. Constitutional responsibility in the legal community is perceived as a negative assessment of society and the state on the activity of a citizen, state body, official and others, as well as state coercion, realization of the sanction of a legal norm. As a result of the analysis, the shortcomings, gaps, uncertainties and contradictions in the legal acts regulating the relations in question were highlighted, and appropriate recommendations are made for their elimination, completion and further improvement. The author presented his video-methodological vision for the solution of individual issues. In the form of examples, certain legal situations were considered, within the framework of which it was justified that the approaches existing in the legal doctrine so far do not provide an opportunity to reveal the nature of the constitutional offense. A number of systematic views have been proposed that are most consistent with current processes.

Key words- legal fact; factual basis; constitutional status of the subject; unconstitutional act; subjective aspect of the offense; constitutional tort; content of constitutional responsibility; constitutional sanction; collegial entity; public authority; supreme legal power.

Հոդվածը գրախոսվել է՝ 02. 12. 2024թ.
Ներկայացվել է տպագրության՝ 20. 12. 2024թ.

**ՀԱՅԵՑՈՂԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ
ԻՐԱՎԱԶԱՓՈՒԹՅԱՆ ԽԱԽՏՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ
ԵՎ ԴՐԱՆՑ ՎԵՐԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ**

Արմինե Հովսեփյան

Հայաստանի եվրոպական համալսարանի

իրավագիտության ամբիոնի հայցորդ

DOI: 10.63925/18294847-2025.19op-05

Համառոտագիր: Վարչական իրավունքում հայեցողական լիազորությունների կիրառման իրավաչափության խախտման անթույլատրելիությունը հաշվի առնելով՝ հողվածում հեղինակն անդրադարձ է կատարել այն հանգամանքներին, որոնց վրա բացասական ազդեցություն են ունենում հայեցողական լիազորությունների կիրառման իրավաչափության խախտման հետևանքները: Որպես հայեցողական լիազորությունների կիրառման իրավաչափության խախտման հետևանքների վերացման ուղիներ՝ առաջարկվել են մշակել ու ընդունել հայեցողական լիազորությունների հայեցակարգ, ուղեցույց, ինչպես նաև կատարելագործել վերապատրաստման ինստիտուտը: Նշված առաջարկներն ուղղված են հայեցողական լիազորությունների կիրառման իրավաչափության ուղղությամբ գործադրվող ջանքերի իրականացմանը, վարչական իրավունքում հայեցողական վարչական ակտերի կայացման անկողմնակալության և արդյունավետության ապահովմանը՝ վերականգնելով վարչական մարմինների գործունեության նկատմամբ հանրության վստահությունը:

Բանալի բառեր – վարչական իրավունք, հայեցողական լիազորություն, մարդու իրավունքներ և ազատություններ, իրավաչափության խախտում:

Վարչական իրավունքում հայեցողական լիազորությունների կիրառման իրավաչափության խախտման անթույլատրելիությունն անվիճարկելի է եղել բոլոր ժամանակներում, սակայն ներկայումս այն առավել արդիական է դարձել՝ հաշվի առնելով իրավական և ժողովրդավարական պետության հիմքում դրված՝ մարդու իրավունքների պահպանման արժևորումը: Ըստ այդմ՝ հայեցողական լիազորությունների կիրառման իրավաչափության խախտումը երբևէ չի կարող համապատասխանել պետության սահմանադրական նպատակներին, ժողովրդավարական և իրավական մեխանիզմներին: Հայեցողական լիազորությունների կիրառման իրավաչափության անբակտելի բաղադրիչներն են օրենքի գերակայությունն ու մարդու իրավունքները: Վարչական մարմիններն իրենց ամենօրյա գործառույթների իրականացումը, այդ թվում՝ հայեցողական լիազորությունների մասով, բխեցնում են օրենքի գերակայությունից՝ հիմնվելով մարդու իրավունքների նկատմամբ հարգանքի

սկզբունքի վրա, հետևաբար, դրանցից որևէ մեկի խախտումը խաթարում է հայեցողական լիազորությունների կիրառման իրավաչափությունը՝ առաջացնելով վարչական մարմնի, անձանց ու կազմակերպությունների համար բացասական հետևանքներ: Հայեցողական լիազորությունների կիրառման իրավաչափության խախտման հետևանքների առաջացումը հաճախ պայմանավորված է վարչական մարմնի համապատասխան պաշտոնատար անձի վերաբերմունքով՝ օրենքի գերակայության և մարդու իրավունքների նկատմամբ:

Հայեցողության ձևավորումն իրավապահ սուբյեկտի ներքին մտածողության գործընթաց է, որն արտացոլում է իրականությունը՝ իրականացնելով արժեքային կողմնորոշումների, արժեքների, իրավական գիտակցության, տեսական և մասնագիտական պատրաստվածության հիման վրա, որոնք ազդեցություն ունեն նաև իրավական համակարգի ընդհանուր զարգացման և իրավապահ պրակտիկայի վրա: Իրավապահ սուբյեկտի հայեցողության ձևավորման մեխանիզմի գործարկման ելակետը գնահատման ենթակա կոնկրետ փաստական հանգամանքներն են և նորմատիվ լուծման տարբերակ ընտրելու ամրագրված հնարավորությունը, որի արդյունքը պատշաճ ձևակերպված ընթացակարգային որոշումն է¹:

Մեր կարծիքով՝ վարչական մարմինն իրեն վերապահված հայեցողական լիազորությունների շրջանակում պարզում է տվյալ գործով ոչ միայն իրավական անորոշության, այլև անբավարար փաստական հանգամանքների առկայությունը: Այսինքն՝ հայեցողական լիազորությունները յուրահատուկ գործիք են վարչական մարմնի ձեռքում՝ ստեղծված անորոշությունը հաղթահարելու և իրեն վերապահված վարչական պարտավորությունների կատարումն ապահովելու համար՝ բացառելով հայեցողական լիազորությունների կիրառման իրավաչափության խախտումը:

Հայեցողական լիազորությունների կիրառման իրավաչափության խախտման հետևանքները խնդիրներ են ստեղծում վարչական մարմինների համապատասխան պաշտոնատար անձանց վերապահված գործառույթների ու իրավասության ներդաշնակեցման, հայեցողության սահմանների հստակեցման, ինչպես նաև սահմանափակման իրական նախադրյալների ստեղծման հարցում՝ առաջացնելով սուբյեկտիվիզմի ու կամայականության դրսևորումներ:

Մեր դիտարկմամբ՝ նշված խնդիրների առաջացումը և ընդհանրապես հայեցողական լիազորությունների կիրառման իրավաչափության խախտման հետևանքները բացասական ազդեցություն են ունենում՝

- մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության բարձր առաքելության վրա,
- պետության առաջնահերթ ոլորտների՝ վարչարարության մասնագիտացված գործունեության սոցիալական և տնտեսական քաղաքականության ձևավորման վրա,

¹ St' u, Вячеславовна Л., Дискреционные полномочия прокурора в досудебном производстве России и других стран СНГ (сравнительно-правовое исследование) Специальность 12.00.09 – «Уголовный процесс» диссертация Москва 2018, էջ 43:

- ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից վարչական մարմնի նկատմամբ ձևավորված վստահության վրա,
- վերադաս վարչական մարմնի և դատական համակարգի վրա՝ ստեղծելով դրանց համար լրացուցիչ ծանրաբեռնվածություն:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 2-րդ գլուխն ամբողջությամբ նվիրված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներին և ազատություններին, որում ընդգրկված հոդվածներն արտահայտում են մարդու իրավունքների մասին միջազգային փաստաթղթերի դրույթների էությունը՝ ճանաչելով մարդու իրավունքները որպես բարձրագույն արժեք:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 23-րդ հոդվածի համաձայն՝ մարդու արժանապատվությունն անխախտելի է:

Մարդու արժանապատվությունը նրա իրավունքների և ազատությունների զարգացման հիմքն է:

Մասնավորապես, շրջանառվում են մարդու իրավունքների հետևյալ սահմանումները.

ա) Մարդու իրավունքները կոչված են ապահովելու յուրաքանչյուր անձի՝ հասարակության մնացած անդամների և պետական մարմինների կողմից իր մարդկային արժանապատվությանն ու պատվին համապատասխան վերաբերմունքի արժանալու իրավունքը:

բ) Մարդու իրավունքներն ամեն տեսակ անարդարությունների դեմ պայքարելու բարոյապես արդարացված միջոց են:

գ) Մարդու իրավունքներն ստիպում են, որ դատարաններն ու ոստիկանությունը պաշտպանեն հանցագործներին և ահաբեկիչներին՝ ի հաշիվ ժողովրդի մեծամասնության միջոցների և անվտանգության:

Մարդու իրավունքներն ունեն գերակայություն մարդկային համակեցության բոլոր կանոնների նկատմամբ²:

Մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությունը պայմանավորված է պետության զարգացվածությունով և ազգային օրենսդրությունում ներդրված մեխանիզմներով: Գոյություն ունեցող ազգային օրենքները, քաղաքականությունները, ընթացակարգերը և մեխանիզմները յուրաքանչյուր երկրում մարդու իրավունքների իրացման հիմնական գործոններն են: Մարդու իրավունքները դրված են ազգային սահմանադրական և օրենսդրական համակարգերի հիմքում:

Մարդու իրավունքների պաշտպանության ոլորտն ամբողջական դարձնելու նպատակով Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի կողմից 1950 թվականի նոյեմբերի 4-ին ընդունված «Մարդու իրավունքների և հիմնարար ազա-

² Տե՛ս, **Мазитова И.**, История защиты прав человека, Accessed February 18 2010; Available from, հասանելի է նաև <http://www.law.edu.ru/doc/document.asp>. (վերջին այցելություն՝ 03.02.2025)

տությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածը սահմանում է անձնական և ընտանեկան կյանքը հարգելու իրավունքը՝ նախատեսելով նաև դրա սահմանափակման հնարավորությունը: Հոդվածի 2-րդ կետը որպես սահմանափակման գլխավոր պայման նշում է, որ այն պետք է կատարվի օրենքի հիման վրա, այնուհետև թվարկում է այն հիմքերը կամ, ավելի ճիշտ կլինի ասել, նպատակները՝ հանուն որոնց կոնվենցիայի մասնակիցները կարող են ընդունել 8-րդ հոդվածով երաշխավորված իրավունքները սահմանափակող օրենք:

Կոնվենցիայի 8-րդ հոդվածի 2-րդ կետում նշվում է, որ իրավունքների սահմանափակումը կարող է տեղի ունենալ, եթե դա անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, հասարակական կարգի կամ երկրի տնտեսական բարեկեցության, ինչպես նաև անկարգությունների կամ հանցագործությունների կանխման, առողջության կամ բարոյականության պաշտպանության կամ այլ անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

Պետությունները 8-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված սահմանափակման հիմքերի վերաբերյալ որոշումներ կայացնելիս օգտվում են որոշակի ազատությունից, որը հայտնի է «հայեցողության սահման» ձևակերպմամբ: Այդ սկզբունքն առաջին անգամ սահմանվել է «Հենդիսայդն ընդդեմ Միացյալ Թագավորության» գործում: Սույն գործը վերաբերում էր արտահայտվելու ազատության իրավունքին, սակայն այն հավասարապես նշանակություն ունի նաև 8-րդ հոդվածին առնչվող գործերի քննության դեպքում: Նշված գործով ընդգծվում է, որ «տարբեր ժամանակ և տարբեր վայրերում բարոյական հիմքերին ներկայացվող պահանջների նկատմամբ հայացքները չեն համարվում միատեսակ, հատկապես մեր դարաշրջանում», և որ «պետական իշխանություններն իրենց երկրների իրական կյանքի հետ մշտական և անմիջական կապի շնորհիվ սկզբունքորեն գտնվում են ավելի լավ վիճակում, երբ արտահայտում են «սահմանափակման», «անհրաժեշտության» կամ «պատժային սանկցիայի» վերաբերյալ պահանջների կոնկրետ բովանդակության կապակցությամբ իրենց կարծիքը: Հայեցողության սահմանները որոշվում են ինչպես ներպետական օրենսդրությամբ, այնպես էլ պաշտոնատար անձանց, այդ թվում՝ դատավորների կողմից, որոնք դիմում են համապատասխան օրենքների մեկնաբանման և հնարավոր կիրառման պարզաբանման համար:

Իշխանության իրավասու ազգային մարմիններին տրված հայեցողության սահմանները կարող են փոփոխվել՝ կապված քննության առարկայի և դրա հիմքերի համապատասխան հանգամանքների փոփոխության հետ: Հայեցողության սահմանների որոշման ժամանակ կարող է առաջանալ երկու բնույթի խնդիր. մի դեպքում՝ եթե տարբեր պետությունների ներսում գոյություն ունեցող պրակտիկայի մեջ առկա է քննության առարկայի մեծ ընդհանրություն, ապա բավականին դժվար կլինի հիմնավորել նման պրակտիկայից շեղումը: Մեկ այլ դեպքում, եթե պետությունների պրակտիկան՝ կապված քննության առարկայի հետ, առանձնապես տարածված և մեծ

ընդհանրություն չունի, ապա պետություններին տրվող հայեցողության սահմանները կլինեն բավականին լայն³:

Վերոգրյալը ևս մեկ անգամ հավաստում է, որ իրավական և ժողովրդավարական պետությունում մարդու իրավունքներն ու ազատությունները մշտապես պետք է գտնվեն պետության ուշադրության և հոգածության ներքո՝ բացառելով հնարավոր խախտման դեպքերը, իսկ դրանց առաջացման պարագայում պետությունը գործադրում է հնարավոր բոլոր ջանքերն այդ խախտումները վերացնելու և իրավունքը վերականգնելու ուղղությամբ: Վարչական մարմինների գործունեության իրականացմամբ պետությունն իրականացնում է իր պարտավորությունները: Այսինքն՝ մի կողմից վարչական մարմնի համապատասխան պաշտոնատար անձը հայեցողական լիազորությունների կիրառմամբ պարտավորվում է խուսափել այնպիսի գործողություններից, որոնք կարող են խախտել մարդու իրավունքները, իսկ մյուս կողմից՝ ձեռնարկում է համապատասխան միջոցներ՝ մարդու իրավունքների իրականացումն ապահովելու համար:

Ըստ այդմ՝ վարչական մարմնի կողմից հայեցողական լիազորությունների իրավաչափ սահմանները որոշելիս պետք է հարգել մարդու իրավունքները և պաշտպանել դրանք՝ չմիջամտելով և չխոչընդոտելով այդ իրավունքների իրականացմանը, քանզի մարդու իրավունքները հարգելը վարչական մարմնի պարտականությունն է՝ հաշվի առնելով միջազգային պայմանագրերի և ազգային օրենքների պահպանման կարևորությունը:

Վարչական մարմնի հայեցողական լիազորությունների իրավաչափության խախտման հետևանքները բացասական են ազդում մարդու իրավունքների իրականացման վրա, հետևաբար, վարչական մարմինը պարտավոր է կանխել մարդու իրավունքների խախտումները՝ բավարար պայմաններ ստեղծելով մարդու իրավունքների իրացման համար: Օրինակ՝ պետությունը՝ հանձնա վարչական մարմնի, պետք է բոլոր հնարավոր միջոցներով ապահովի, որպեսզի անձը կամ կազմակերպության ներկայացուցիչը հասկանա իրեն ներկայացվող վարչական ակտը, իսկ համաձայն չլինելու դեպքում այն բողոքարկի վերադասության կարգով:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 1-ին հոդվածով սահմանվում է, որ Հայաստանի Հանրապետությունն ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է:

Պետության տնտեսական բարեկեցությունը կախված է նաև վարչական գործառույթների անխափան իրականացման հետ՝ դրանով իսկ ապահովելով նաև վարչարարության արդյունավետությունը: Վարչարարության զարգացումը նպաստում է նաև սոցիալական բարեկեցության բարելավմանը, քանի որ սոցիալական ոլորտին

³ Տե՛ս, Ավետիսյան Վ., Սահակյան Ս., Բաղայան Կ., Զինված ուժերում մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների վերաբերյալ դասընթացի կազմակերպման և անցկացման ուսումնական ձեռնարկ, ԵԱՀԿ Երևանյան գրասենյակ, էջ 109-110, հասանելի է նաև <https://www.osce.org/files/f/documents/5/9/100924.pdf>. (վերջին այցելություն՝ 03.02.2025)

վերաբերող բոլոր հարցերը վերապահված են վարչարարություն իրականացնող մարմիններին, հետևաբար, այս ոլորտում առավել հաճախ են կիրառելի դառնում հայեցողական լիազորությունները:

Սոցիալական օրենսդրության ոլորտում պետություններն ունեն հայեցողության լայն շրջանակ, որը, ելնելով սոցիալական արդարության և տնտեսական բարեկեցության շահերից, կարող է իրավաչափորեն հանգեցնել բնակչությանը վճարվող սոցիալական աջակցությունների կարգավորմանը և հարմարեցմանը (...):

Այնուամենայնիվ, ցանկացած այդպիսի միջոց պետք է համապատասխանի համաչափության պահանջներին⁴:

ՄԻԵԴ-ն արձանագրել է, որ օրենսդրին տրված հայեցողության շրջանակը քաղաքականության ընտրության հարցում պետք է լինի լայն, և նրա կողմից պետք է հարգվի «հանրային շահի» գնահատումը⁵:

Այսինքն՝ այս երկու ոլորտների քաղաքականության ձևավորման հարցում կարևոր է պահպանել հայեցողական լիազորությունների կիրառման իրավաչափությունը:

Ֆիզիկական և իրավաբանական անձանց մոտ վստահության պակաս ի հայտ է գալիս հատկապես վարչական մարմնի կողմից իրեն վերապահված հայեցողական լիազորությունների կիրառման իրավաչափության խախտման հետևանքով, քանի որ նույն վարչական մարմնում օրենքի կիրարկումը կարող է դրսևորվել տարբեր կերպ՝ ելնելով հայեցողական վարչական ակտ ընդունելու լիազորություն ունեցող պաշտանատար անձի սոցիալական ծագումից և աշխատանքի կազմակերպման մեջ նրա դերից:

Յուրաքանչյուրը պետք է իրավաչափ վստահություն ունենա վարչական մարմինների նկատմամբ, որպեսզի իր վարքագիծը կարգավորի այն համոզմամբ, որ իրեն հուզող խնդիրը կլուծվի վարչական մարմնի պատշաճ գործունեության արդյունքում:

Հայեցողական լիազորությունների կիրառման իրավաչափության խախտումները հանգեցնում են հայեցողական վարչական ակտերի բողոքարկման ծավալի աճին, քանի որ անձը կամ կազմակերպությունն իրեն վերաբերելի հայեցողական լիազորությունների կիրառմամբ ընդունված հայեցողական վարչական ակտերում իրավաչափության խախտման հետևանքների վերացման, ինչպես նաև իրավունքի վերականգնման նպատակով դիմում է վերադաս վարչական մարմին, իսկ մերժման պատասխան ստանալու դեպքում հայց է ներկայացնում դատարան: Այսինքն՝ վարչական մարմինը հայեցողական լիազորությունների կիրառման իրավաչափության խախտման արդյունքում լրացուցիչ բեռ է ստեղծում վերադաս վարչական մարմնի և դատարանի համար:

Նախքան հայեցողական լիազորությունների կիրառման իրավաչափության խախտման հետևանքների վերացման ուղիներին անդրադառնալը՝ քննարկենք այն

⁴ Տե՛ս, ՄԴ-ի 2012 թվականի դեկտեմբերի 14-ի թիվ ՄԴՈ-1061 որոշումը:

⁵ Տե՛ս, «Կարստն ու ուրիշները ընդդեմ Միացյալ թագավորության» գործով ՄԻԵԴ-ի 2009 թվականի սեպտեմբերի 15-ի որոշումը, գանգատ թիվ 42184/05:

հնարավոր միջոցները, որոնց հետևելով՝ վարչական մարմինը կարող է խուսափել նման հետևանքների վերացման ուղիներ փնտրելուց:

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ R (80) 2 հանձնարարականի (ինչը վերաբերում է վարչական մարմինների կողմից հայեցողական լիազորությունների իրականացմանը (ընդունվել է մարտի 11-ին 1980)) համաձայն՝ վարչական մարմինը հայեցողական լիազորություններ իրականացնելիս.

1) չի հետապնդում նպատակներ, որոնք հակասում են նրանց, որոնց համար տրվել են այդ լիազորությունները.

2) պահպանում է օբյեկտիվություն և անաչառություն՝ հաշվի առնելով միայն գործին առնչվող փաստերը.

3) պահպանում է օրենքի առջև բոլորի հավասարության սկզբունքը՝ խուսափելով անարդար խտրականությունից.

4) ապահովում է համապատասխան հավասարակշռություն որոշման ցանկացած անբարենպաստ հետևանքի, որը ոտնահարում է անհատների իրավունքները, ազատությունները կամ շահերը և այն նպատակը, որը հետապնդում է.

5) որոշում է կայացնում ողջամիտ ժամկետում՝ հաշվի առնելով քննարկվող հարցի առանձնահատկությունները...⁶

Այն փաստարկները, որոնք կարող են բերվել ի պաշտպանություն հայեցողության չարաշահման պահանջի, պետք է վերաբերեն վարչական գործողությունների օրինականությանը, ոչ միայն իմաստնությանը կամ նպատակահարմարությանը⁷:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը 1996 թվականի նոյեմբերի 15-ի «Դոմենիչինին ընդդեմ Իտալիայի» գործով որոշմամբ նշել է, որ հայեցողական լիազորությունների իրականացման համար ազգային օրենսդրությունը պետք է սահմանի հստակ սահմաններ և ընթացակարգեր⁸:

Վարչական մարմինները պարտավոր են իրենց հայեցողական լիազորությունները կիրառել օրենքի սահմաններում և ընդունել անկախ ու արհեստավարժ վարչական ակտեր՝ սահմանափակվելով իրենց առջև դրված առաջադրանքով և հրաժարվելով ցանկացած կողմնակի միջամտությունից:

Հայեցողական վարչական ակտերի իրավաչափության խախտման հետևանքների կանխարգելումը որոշվում է հայեցողական լիազորությունների բացահայտման հետևյալ հանգամանքները հաշվի առնելով՝

1) հայեցողական վարչական ակտի կայացման համար օրենսդրական պահանջների ապահովումը և բավարար փաստական հանգամանքների առկայությունը.

⁶ Տե՛ս, Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ R (80) 2 հանձնարարականը, որն ընդունվել է 1980 թվականի մարտի 11-ին, URL: <https://wcd.coe.int/ViewDoc.jsp?id=678043>. (վերջին այցելություն՝ 03.02.2025)

⁷ Տե՛ս, Assistant Professor, Columbia University School of Law. This article is based in large part on the author's stage, or internship, at the Conseil d'Etat in Paris from February through July 1975.

⁸ Տե՛ս, <https://kushnerenko.com.ua/2019/05/14/diskrecionnye-polnomochiya-sposoby-zashchity-granicy-sudebnogo-kontrolya/>. (վերջին այցելություն՝ 03.02.2025)

2) վարչական մարմնի կողմից օրենքով սահմանված հայեցողության սահմանների պահպանումը.

3) հայեցողական վարչական ակտով փաստական և իրավական հանգամանքների ճշգրիտ հիմնավորումը, որով հնարավոր կլինի խուսափել բացասական հետևանքներից.

4) վարչական մարմնի կողմից համաչափության սկզբունքի պահպանումը՝ համապատասխանեցնելով իրավական հետևանքը հայեցողության նպատակին:

Կարծում ենք, որ հայեցողական լիազորությունների կիրառման իրավաչափության խախտման հետևանքները կարող են լրջորեն վտանգել վարչական մարմնի գործունեությունը և կասկածի տակ առնել արդեն իսկ կայացված վարչական ակտերի օբյեկտիվությունը՝ ձևավորելով անվստահության մթնոլորտ: Ինչպես նաև թվարկված հանգամանքներն ուղղակիորեն փոխկապակցված են վարչական մարմինների անաչառ գործելու հետ, առանց որի անհնար է հայեցողական լիազորությունների կիրառմամբ իրականացնել նաև անձանց և պետության սահմանադրական իրավունքների արդյունավետ պաշտպանությունը՝ բացառելով վարչական մարմնի կամայական մոտեցման որևէ դրսևորում: Այսպիսով, հայեցողական լիազորությունների կիրառման իրավաչափության խախտման հետևանքների վերացման համար, մեր դիրքորոշմամբ, անհրաժեշտ է՝

1. մշակել ու ընդունել հայեցողական լիազորությունների հայեցակարգ՝ որպես վարչական ակտի կատարման նեգատիվ հետևանքների բացառման խթանիչ:

2. Մշակել վարչական մարմիններում հայեցողական լիազորությունների կիրառման էլեկտրոնային ուղեցույց՝ հիմքում դնելով յուրաքանչյուր վարչական մարմնին օրենքով վերապահված հայեցողական լիազորությունների կիրառման իրավաչափությունը և դրա խախտման բացասական հետևանքները:

3. Կատարելագործել վերապատրաստման ինստիտուտը՝ ելնելով միջազգային լավագույն փորձից:

Վարչական մարմնի հարուցած վարչական վարույթի վերջնական արդյունքը վարչական ակտի ընդունումն է, և դժվար է հավասարակշռություն պահպանել վարչական մարմնին տված ազատության և դրա սահմանափակման միջև, քանի որ վարչական մարմնին վերապահված է իր առջև ծագած խնդիրների լուծման ազատություն: Միննույն ժամանակ, այդ ազատության ոչ պատշաճ կիրառելիությունը հանգեցնում է անհատի հիմնարար իրավունքների ոտնահարմանը: Նշված հավասարակշռության հարցի լուծումը հայեցակարգի մշակումն է:

Մինչև 2021 թվականը գործող՝ Հայաստանի Հանրապետության Կառավարության 2015 թվականի հունվարի 22-ի նիստի թիվ 2 արձանագրային որոշման 2-րդ գլխի 3-րդ կետի համաձայն՝ որոշակի բնագավառում առկա խնդիրների համակարգային վերլուծությունների և գնահատման հիման վրա նախաձեռնող մարմնի կողմից մշակվում է այդ բնագավառում առկա խնդիրների համակարգային վերլուծությունները և գնահատումը կամ նոր մոտեցումները, կամ առկա մոտեցումներում իրականացվելիք փոփոխությունները նկարագրող հայեցակարգը:

Հայեցողական լիազորությունների հայեցակարգն իր մեջ կարող է ներառել հայեցողական վարչական ակտի ընդունման համար օրենսդրի նպատակը, դրա իրականացման համար ծագած խնդիրները՝ որոշելով դրանց հասնելու մարտավարությունը: Հայեցակարգի մշակման արդյունքում հնարավոր կլինի հասկանալ ներպետական օրենսդրության խնդիրները՝ հայեցողական վարչական ակտի կայացման հարցում, դրանց լուծման համար ուսումնասիրել միջազգային փորձը, հանդես գալ օրենսդրական բարեփոխումների կատարման նախաձեռնությամբ:

Հայեցակարգի գոյությունը կվկայի նաև վարչական մարմնի գործունեության, ինչպես նաև հայեցողական վարչական ակտի կայացման թափանցիկության, պատճառաբանվածության և հիմնավորվածության մասին՝ մշակելով նոր հայեցակարգ, որը կհամապատասխանի ժամանակակից պետության զարգացմանը՝ բավարարելով հասարակության և պետության կարիքները, իսկ դրա ստեղծման անհրաժեշտությունը պայմանավորված է այնպիսի կառուցվածքային տարրերի գոյությամբ, որոնք գնահատողական կատեգորիաներ կամ վերացական բնույթի հասկացություններ են և պահանջում են գործունեության իրականացման կարգ ու մեկնաբանում:

Հայեցողական լիազորությունների կիրառման էլեկտրոնային ուղեցույցի նպատակը վարչական մարմիններին օրենքով վերապահված հայեցողական լիազորությունների կիրառման և դրանց բացասական հետևանքների վերացման համար աշխատակիցների ու նրանց վերադաս մարմինների փոխգործակցության կարգի հիմունքների պարզաբանումն է:

Հայեցողական լիազորությունների կիրառման էլեկտրոնային ուղեցույցի մշակումը կնպաստի վարչական մարմինների աշխատակիցների աշխատանքային գործունեության բարելավմանը՝ ուղղորդելով հայեցողական լիազորությունների պատշաճ իրականացմանը: Նշված ուղեցույցով կարող է պարզաբանվել վարչական մարմնի ստորադաս և վերադաս աշխատակիցների փոխգործակցության կարգը՝ հայեցողական լիազորությունների կիրառման հարցում՝ ստեղծելով փոխշահավետ համագործակցություն, ինչպես նաև բացառելով հայեցողական լիազորությունների կիրառման իրավաչափության խախտման հետևանքների հնարավոր առաջացումը:

Վերապատրաստում անցկացնելու անհրաժեշտությունը վարչական մարմինների արդյունավետության կարևոր բաղադրիչն է, քանզի առանցքային նշանակություն ունեն վարչական մարմնի համապատասխան պաշտոնատար անձի խոր մասնագիտական գիտելիքները: Իրավիճակի ճիշտ գնահատումն ու վերլուծությունն է նպաստում պատշաճ հայեցողական վարչական ակտի կայացմանը, քանի որ պատշաճ վարչարարության և դրան ուղղված պահանջների պահպանմամբ ընդունված վարչական ակտի դեպքում է հնարավոր հասնել վարչական մարմնի, այդ թվում՝ պետության ցանկալի նպատակին:

Վերապատրաստման անցկացման արդյունավետության ապահովման առաջնային հարցը վերաբերում է թեմաների մշակմանը և վերապատրաստողների մասնագիտական գիտելիքներին: «Հայեցողական լիազորություն» թեմայի և դրան հարակից

թեմաների քննարկումը ենթադրում է տեղեկատվության տրամադրում, ինչպես նաև այնպիսի խնդիրների քննարկում, որոնք գործնականում լուրջ խոչընդոտներ են առաջացնում վարչական մարմնի համար՝ նպաստելով վերապատրաստման գործնական նշանակության արդյունավետության բարձրացմանը:

Վերոնշյալից ելնելով՝ օրենսդիր ու դատական համակարգերի միջև փոխհարաբերությունների ամրապնդումը, տեղեկատվության փոխանցումն առավել արդյունավետ դարձնելու համար, նաև հիմնվելով ֆրանսիական փորձի վրա, առաջարկում ենք օրենսդրական կարգավորմամբ Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի դատավորներին ներգրավել վերապատրաստման գործընթացին: Նշվածը կխթանի երկու համակարգերի համատեղ փոխգործակցությունը՝ ի նպաստ պետության, հանձնա վարչական մարմինների: Միաժամանակ, դատավորների ներգրավվածությունն ինքնին նշանակում է փորձի փոխանակում, քանի որ վերջիններս դատական պրակտիկայում ձեռքբերված հայեցողական լիազորությունների վերաբերյալ փորձը կարող են փոխանցել վարչական մարմինների համապատասխան պաշտոնատար անձանց՝ նվազեցնելով մարդու իրավունքների և օրինական շահերի հնարավոր խախտումները: Ավելին, վարչական մարմինները վերապատրաստումների միջոցով կարող են ձևավորել մեկ միասնական մոտեցում թե՛ վարչական մարմնի, թե՛ դատարանի համար՝ նպաստելով Հայաստանի Հանրապետության վարչական դատարանում գործերի քանակի կրճատմանը: Միննույն ժամանակ, վերապատրաստվողները Հայաստանի Հանրապետության վարչական դատավորների հետ կարող են քննարկել և հնարավոր լուծումներ փնտրել այնպիսի խնդրահարույց հարցերի վերաբերյալ, որոնց հետագայում հնարավոր է հանդիպել պրակտիկայում, իսկ դատավոր գիտնականների համար հնարավորություն կստեղծվի գիտական մոտեցում ցուցաբերել առաջադրված հարցերին: Բացի այդ, վերապատրաստման ժամանակ կարող են քննարկվել հայեցողական լիազորությունների կիրառման իրավաչափության նոր մոտեցումներ, որոնք կարող են առաջացնել օրենսդրական փոփոխությունների կատարման անհրաժեշտություն:

Այսպիսով՝ համարժեք զսպումների և հակակշիռների մեխանիզմի շրջանակներում կառուցվածքային հայեցողական լիազորությունների իրականացումը կարող է մեծապես նպաստել հանրային պարտականությունների կատարմանը՝ կանխելով ցանկացած չարաշահում, այդ թվում՝ անհիմն և կամայական որոշման: Հայեցողական լիազորությունների կիրառման իրավաչափության խախտման հետևանքների վերացման ուղիներից յուրաքանչյուրը կարող է նպաստել հայեցողական լիազորությունների կիրառման ուժեղացմանը և որոշումների կայացման գործընթացում արդարության, թափանցիկության, հաշվետվողականության և ամբողջականության վրա հիմնված համակարգի ապահովմանը:

Ուղեցույցները և հայեցակարգերը վարչական մարմնի անձնակազմի աշխատակիցներին ուղղորդում են իրենց գործառնություններն իրականացնել դրանց համապա-

տասխան՝ կանոնների և չափանիշների շեշտադրմամբ բարելավելով համապարփակ պլանավորման ճիշտ հավասարակշռությունը: Այսինքն՝ վարչական հայեցողության և վարչական ընթացակարգերում հայեցողական լիազորությունների կիրառման իրավաչափության դրսևորման վերաբերյալ տեսական և գործնական գաղափարների զարգացման ուսումնասիրությամբ, ինչպես նաև վարչական հայեցողության վերափոխման նոր միտումների դիտարկմամբ, հաշվի առնելով պետական կառավարման ժամանակակից համակարգի վերափոխման հիմնախնդիրները, դրա նոր ուղղությունները, հասարակության ու պետության շահերը, բացահայտելով վարչական հայեցողության առանձնահատկությունները՝ ներկայացրել ենք այն դիտարկումներն ու եզրահանգումները, որոնք կարող են նպաստել հայեցողական լիազորությունների իրավաչափության խախտման հետևանքների վերացմանը: Մեր ներկայացրած առաջարկներն ուղղված են հայեցողական լիազորությունների կիրառման իրավաչափության ուղղությամբ գործադրվող ջանքերի իրականացմանը, վարչական իրավունքում հայեցողական վարչական ակտերի կայացման անկողմնակալության և արդյունավետության ապահովմանը՝ նպաստելով վարչական մարմինների գործունեության նկատմամբ հանրության վստահության վերականգնմանը:

ПОСЛЕДСТВИЯ НАРУШЕНИЯ ПОДЛЕЖНОСТИ ОБРАЩЕНИЯ В СООТВЕТСТВУЮЩИЕ ОРГАНЫ И ПУТИ ИХ УСТРАНЕНИЯ

Овсебян Армине

Европейский университет Армении

соискатель кафедры права

Аннотация. Принимая во внимание недопустимость нарушения законности использования дискреционных полномочий в административном праве, автор статьи указал на обстоятельства, на которые негативно влияют последствия нарушения законности использования дискреционных полномочий. В качестве способов устранения последствий нарушения законности использования дискреционных полномочий предложено разработать и принять концепцию дискреционных полномочий, методические рекомендации, а также усовершенствовать институт повышения квалификации. Указанные предложения направлены на реализацию предпринимаемых усилий в направлении законности использования дискреционных полномочий, обеспечения беспристрастности и эффективности принятия дискреционных административных актов в административном праве, восстановления доверия общества к деятельности административных органов.

Ключевые слова - административное право, дискреционная власть, права и свободы человека, нарушение законности.

CONSEQUENCES OF VIOLATION OF THE PERMISSION TO APPEAL TO THE RELEVANT AUTHORITIES AND WAYS TO ELIMINATE THEM

Hovsepyan Armine

European University of Armenia

Applicant, Department of Law

Summary: Taking into account the inadmissibility of violating the legality of the exercise of discretionary powers in administrative law, the author of the article addressed the circumstances that are negatively affected by the consequences of violating the legality of the exercise of discretionary powers. As ways to eliminate the consequences of violating the legality of the exercise of discretionary powers, it was proposed to develop and adopt a concept of discretionary powers, a guide, as well as to improve the training institute. The above-mentioned proposals are aimed at implementing efforts aimed at the legality of the exercise of discretionary powers, ensuring the impartiality and effectiveness of the adoption of discretionary administrative acts in administrative law, restoring public confidence in the activities of administrative bodies.

Keywords – administrative law, discretionary power, human rights and freedoms, violation of legality.

Հոդվածը գրախոսվել է՝ 20.01.2025թ.

Ներկայացվել է տպագրության՝ 31.01.2025թ.

**ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻՆ ՀԱԿԱՍԵԼՈՒ ՀԻՄՔՈՎ
ԵՆԹԱՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԱԿՏԵՐՆ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼԸ
(ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ՎԱՐՉԱԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ)**

ՂԱՍԲԱՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ

*Հայ-ռուսական համալսարանի իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի ամբիոնի վարիչ, ՀՀ պետական կառավարման ակադեմիայի պրոֆեսոր,
իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ վաստակավոր իրավաբան*

ՍՈՒՐԱԴՅԱՆ ՄԱՆՈՒԿ

*ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար,
ՀՀ-ում ֆրանսիական համալսարանի դասախոս,
ՀՀ փաստաբանական ակադեմիայի դասախոս,
իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ*

ՇԱՔԱՐՅԱՆ ԹԱՄԱՐԱ

*ՀՀ պետական կառավարման ակադեմիայի իրավագիտության ամբիոնի վարիչ,
ՀՀ-ում ֆրանսիական համալսարանի դասախոս, Հայ-ռուսական համալսարանի
իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի ամբիոնի դասախոս,
իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ*
DOI: 10.63925/18294847-2025.19օր-06

Ամփոփագիր: Հոդվածը նվիրված է միջազգային պայմանագրին հակասելու հիմքով ենթաօրենսդրական ակտերն անվավեր ճանաչելու մեթոդաբանական և վարչա-դատավարական հիմնախնդիրներին, ինչպես նաև իրավական ինքնիշխանության հարցերին: Ներկայացված է ենթաօրենսդրական ակտերի իրավաչափության ստուգման եռաչափ համակարգը՝ սահմանադրականություն, օրինականություն և կոնվենցիոնալություն, և այս համատեքստում վեր է հանվել կոնվենցիոնալության չափացույցի անկենսունակությունը: Հիմնախնդրի խորքային վերլուծության համար անդրադարձ է կատարվել նաև միջազգային և ազգային իրավունքի հարաբերակցության տեսական մոտեցումներին՝ դուալիզմ և մոնիզմ՝ հատկապես կարևորելով ազգային իրավունքի համակարգում կիրառման հարցի որոշակիացման տեսանկյունից «pacta sunt servanda» սկզբունքը:

Հոդվածում գիտատեսական հարթության վրա քննարկվել են հետևյալ հիմնահարցերը՝ միջազգային պայմանագիրն արդյո՞ք նորմատիվ իրավական ակտ է և ին՞չ տեղ է զբաղեցնում իրավական ակտերի (օրենսդրության) աստիճանակարգության համակարգում, ռեալիստական և իրավահամեմատական տեսանկյուններից արդյո՞ք հիմնավորվում է ենթաօրենսդրական ակտերը կոնվենցիային հակասելու հիմքով անվավեր ճանաչելու գաղափարը:

Հոդվածում ներկայացվել է նաև ՀՀ վարչական դատարանի՝ ենթաօրենսդրական ակտը միջազգային պայմանագրին հակասելու հիմքով անվավեր ճանաչելու իրավասության օրինաչափության հիմնահարցը և դրա իրավահամեմատական տեսանկյունը, և եզրահանգում է արվել առ այն, որ վարչական դատարանը ոչ թե պետք է շրջանցի սահմանադրական արդարադատությունը և ենթաօրենսդրական ակտը միջազգային պայմանագրին հակասելու հիմքով անվավեր ճանաչի, այլ «Pacta sunt servanda» սկզբունքն ապահովի՝ անմիջապես կիրառելով միջազգային պայմանագրի դրույթը:

Հիմնաբառեր: միջազգային պայմանագիր, ենթաօրենսդրական ակտեր, կոնվենցիոնալության չափացույց, «pacta sunt servanda» սկզբունք, դուալիզմ, մոնիզմ, կոնվենցիային հակասություն, վարչական դատարանի իրավասություն, անվավեր ճանաչել:

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Օրենսդրական կարգավորումները և ՀՀ վճռաբեկ դատարանի դիրքորոշումը

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ ՀՀ վարչ. դատ. օր-ի) 191-րդ հոդվածի համաձայն.

«Վարչական դատարանին ընդդատյա են պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց **ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի**՝ դրանց համեմատ ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող **նորմատիվ իրավական ակտերին** (բացի Սահմանադրությունից) համապատասխանությունը վիճարկելու վերաբերյալ գործերը» (ընդգծումը՝ հեղ.):

Այս նորմում ՀՀ վարչական դատարանին իրավասություն է վերապահվել ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտը (այսուհետ՝ ենթաօրենսդրական ակտը) ճանաչել անվավեր, եթե այն հակասում է ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտերին: Օրենսդիրը չի թվարկել, թե բարձր իրավաբանական ուժ ունեցող ո՞ր նորմատիվ իրավական ակտերն են (բացի Սահմանադրությունից) համարվում ենթաօրենսդրական ակտերի իրավաչափությունն ստուգելու չափացույցը (մասշտաբը): ՀՀ իրավական համակարգում վարչական դատական նորմավերահսկողության (ուղղակի դատական վերահսկողության) սահմաններում «ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտ» ասելով հասկացվել է օրենքը (սահմանադրական օրենքները և «սովորական» օրենքները), իսկ միջազգային պայմանագիրը (այսուհետև՝ նաև կոնվենցիա), որը ենթաօրենսդրական ակտի համեմատությամբ թեև ունի ավելի բարձր իրավաբանական ուժ, չի համարվել նորմատիվ իրավական ակտ և ենթաօրենսդրական ակտի իրավաչափությունն ստուգելու չափանիշ: Այսինքն՝ ՀՀ վարչական դատարանը ենթաօրենսդրական ակտերի իրավաչափությունն ստուգում է միայն օրենքին համապատասխանելու տեսանկյունից: Այս պնդումը կասկածի տակ դրվեց թիվ ՎԴ/9227/05/23 վարչական գործով արտահայտված ընդհանուր իրավական դիրքորոշմամբ: Այս հարցի կապակցությամբ ՀՀ վճռաբեկ դատարանը 25.09.2024 թ. որոշմամբ նշել է.

«Անդրադառնալով Կոնվենցիայի՝ նորմատիվ իրավական ակտ հանդիսանալու հարցին՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է հետևյալը. վավերացման միջոցով միջազգային պայմանագիրն ընդգրկվում է **ներպետական օրենսդրություն** և **դառնում դրա մի մասնիկը**՝ օժտվելով պարտադիր կիրառելիության հատկանիշով: Ընդ որում՝ միջազգային պայմանագիրն այդպիսով ոչ միայն դառնում է իրավական համակարգի մի մասը, այլև **ընդգրկվում է ներպետական օրենսդրությունում և հավասարեցվում ազգային օրենքներին**, ըստ այդմ՝ **ներպետական օրենսդրության աստիճանակարգությունում հաջորդելով ՀՀ Սահմանադրությանը՝ զբաղեցնում է իր ուրույն տեղը**» (ընդգծումը՝ հեղ.):

ՀՀ վճռաբեկ դատարանը հստակ նշել է, որ ենթաօրենսդրական ակտի համեմատ ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտ ասելով պետք է հասկանալ ոչ միայն օրենքը, այլ նաև կոնվենցիան, ուստի եթե անձը, դիմելով ՀՀ վարչական դատարան, վիճարկում է իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի համապատասխանությունը կոնվենցիային, ապա ՀՀ վարչական դատարանը պարտավոր է ըստ էության քննության առարկա դարձնել դիմողի ներկայացրած փաստարկները: Այլ կերպ ասած՝ ՀՀ վարչական դատարանը պարտավոր է նորմավերահսկողության (ՀՀ վարչ. դատ. օր-ի 26-րդ գլխի) շրջանակում քննարկել ենթաօրենսդրական ակտի՝ կոնվենցիային համապատասխանելու հարցը: Եթե պարզվի, որ ենթաօրենսդրական ակտը հակասում է կոնվենցիային (գործնականում ենթաօրենսդրական ակտի ուղիղ հակասություն կոնվենցիային, որպես կանոն, քիչ հավանական է, որի մասին կլիտսվի հաջորդիվ), ապա ոչ թե պետք է հրաժարվի կիրառել ենթաօրենսդրական ակտը (անուղղակի դատական վերահսկողություն), այլ ենթաօրենսդրական ակտը պետք է ճանաչի անվավեր (ուղղակի դատական վերահսկողություն կամ նորմավերահսկողություն), ինչը նշանակում է, որ ներպետական իրավական ակտն իրավաբանորեն դադարում է գործել վերպետական (միջազգային) իրավունքին հակասելու հիմքով:

Այս որոշմամբ ՀՀ վճռաբեկ դատարանը ներմուծել է ենթաօրենսդրական ակտերի իրավաչափությունն ստուգելու ևս մեկ չափացույց՝ ենթաօրենսդրական ակտի համապատասխանությունը միջազգային պայմանագրին, որը կանվանենք ենթաօրենսդրական ակտերի կոնվենցիոնալություն:

Մինչև ՀՀ վճռաբեկ դատարանի նշված դիրքորոշումը բովանդակային առումով քննարկելն անհրաժեշտ է անդրադառնալ ենթաօրենսդրական ակտի կոնվենցիոնալության չափացույցի ներմուծման խնդրին:

1.2. Ենթաօրենսդրական ակտերի իրավաչափության ստուգման եռաչափ համակարգը. սահմանադրականություն, օրինականություն և կոնվենցիոնալություն

ՀՀ վճռաբեկ դատարանի նշված որոշմամբ ՀՀ-ում ներդրվել է ենթաօրենսդրական ակտերի իրավաչափության ստուգման եռաչափ (եռաստիճան) համակարգ՝ սահմանադրականություն, օրինականություն և կոնվենցիոնալություն: Մինչ այդ ՀՀ

իրավական համակարգում նախատեսված է եղել ենթաօրենսդրական ակտերի իրավաչափության ստուգման դուալիստական համակարգ՝ ենթաօրենսդրական ակտերի սահմանադրականությունը և օրինականությունը:

Ենթաօրենսդրական ակտերի իրավաչափության ստուգման դուալիստական համակարգը գործնականում առաջացրել է ենթաօրենսդրական ակտերի սահմանադրականության և օրինականության տարբերակման խնդիրը, որի արդյունքում քաղաքացիները երբեմն զրկվել են արդարադատության իրավունքից:

ՀՀ իրավունքի զարգացման պատմությունը վկայում է այն մասին, որ ՀՀ իրավական համակարգը տևական ժամանակ չի կոդմնորոշվել ենթաօրենսդրական ակտերի սահմանադրականության և օրինականության սահմանազատման հարցում: Ընդ որում՝ ենթաօրենսդրական ակտերի սահմանադրականությունը և օրինականությունը ոչ միայն ենթաօրենսդրական ակտերի իրավաչափության ստուգման չափացույցեր են, այլ նաև ՀՀ սահմանադրական դատարանի և այլ դատարանների իրավասության (ենթակայության կամ ընդդատության) տարանջատման միջոցներ են: Օրինակ՝ ՀՀ դատարանները, այդ թվում՝ ՀՀ վճռաբեկ դատարանը, 1999-2006թթ-ին, ի հակառակ ՀՀ քաղ. դատ. օր-ի 26-րդ գլխում նախատեսված կարգավորումների, հրաժարվում էին քննել քաղաքացիների այն դիմումները, որոնցով վիճարկվում էր ՀՀ Նախագահի և ՀՀ կառավարության նորմատիվ ակտերի օրինականությունը: Դատարանները նշում էին հետևյալ հիմնավորումը.

«ՀՀ քաղ. դատ. օր-ի 160 հոդվածի 1-ին կետի 2-րդ պարբերության համաձայն՝ դատարանի քննությանը ենթակա չեն այն ակտերն անվավեր ճանաչելու վերաբերյալ դիմումները, որոնց՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցի որոշելը սահմանադրական դատարանի բացառիկ իրավասությունն է»:

Այս պրակտիկայի պատճառներից մեկը (տեսանելի պատճառ) այն էր, թե իբրև ՀՀ ընդհանուր իրավասության դատարանները չեն տարբերակում ենթաօրենսդրական ակտերի օրինականությունը և սահմանադրականությունը. քաղաքացին վիճարկում էր ՀՀ Նախագահի հրամանագրի օրինականությունը, սակայն ՀՀ դատարանները միաձայն նշում էին, որ այդ հարցի քննությունը ենթակա է ՀՀ սահմանադրական դատարանին, մինչդեռ իրականում քաղաքացին վիճարկում էր հրամանագրի ոչ թե սահմանադրականությունը, այլ օրինականությունը¹:

Այս պրակտիկան վերացվեց միայն ՀՀ սահմանադրական դատարանի միջամտությամբ: ՀՀ սահմանադրական դատարանը 26.11.2006 թ. ՍԴՈ-665 որոշմամբ անդրադարձավ նաև իրավական ակտի՝ օրենքին և ՀՀ Սահմանադրությանը համապատասխանելու հարցերի սահմանազատման խնդրին:

¹ ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից ՀՀ Նախագահի և ՀՀ կառավարության նորմատիվ իրավական ակտերի օրինականությունն ստուգելու գործառնությունը հրաժարվելու ոչ տեսանելի պատճառը քաղաքական իշխանությանը չհակադրվելու և նրանցից անվտանգ հեռավորություն պահելու դատարանների ձգտումն էր: Տե՛ս Ղամբարյան Ա. Դատական քաղաքականությունը Հայաստանի Հանրապետությունում (մեթոդաբանական և համատեսական հիմնախնդիրներ): Եր.: ՌՀՀ, հրատ, 2013, էջ 260-261:

Այնուամենայնիվ, ենթաօրենսդրական ակտերի իրավաչափության ստուգման չափացույցերի տարանջատման խնդիրը դրանով չլուծվեց: ՀՀ օրենսդիրը 2007 թ. վարչ. դատ. օր-ով գերատեսչական նորմատիվ իրավական ակտերի՝ սահմանադրականության համապատասխանության հարցը որոշելը վերապահեց ՀՀ վարչական դատարանին²: Այսպես՝ 2007թ. ՀՀ վարչ. դատ. օր-ի 135-րդ հոդվածում սահմանվեց հետևյալ դրույթը.

«Վարչական դատարանին ընդդատյա են պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց նորմատիվ իրավական ակտերի վիճարկման վերաբերյալ հետևյալ գործերը. 1) գերատեսչական նորմատիվ իրավական ակտերի՝ ՀՀ Սահմանադրությունը համապատասխանությունը վիճարկելու վերաբերյալ գործերը (...):»

Գերատեսչական նորմատիվ իրավական ակտերի նկատմամբ սահմանադրական արդարադատության գործառույթը ՀՀ վարչական դատարանին վերապահելու մոտեցումն իրավաբանական համայնքում առաջացրեց տարաձայնություններ: ՀՀ սահմանադրական դատարանն այս անգամ ևս ստիպված եղավ միջամտել հարցին:

Գերատեսչական նորմատիվ իրավական ակտերի սահմանադրականությունը որոշելու գործառույթը ՀՀ վարչական դատարանին վերապահելու Օրենսդրի մոտեցումը ՀՀ սահմանադրական դատարանը 25.11.2008 թ. ՄԴՈ-780 որոշմամբ որակեց համակարգային անկատարություն, քանի որ Օրենսդիրը, հաշվի չառնելով ՀՀ Սահմանադրության 93-րդ հոդվածի միանշանակ պահանջը, վարչական արդարադատության ոլորտ է ներառել սահմանադրական արդարադատության առարկան: ՀՀ սահմանադրական դատարանը նշել էր, որ վարչական և սահմանադրական արդարադատության առկա շփոթն իրավակիրառական պրակտիկայում կարող է ստեղծել սահմանադրական նորմերի մեկնաբանման տարակերպ մոտեցումներ, որը լուրջ վտանգ է ներկայացնում երկրում Սահմանադրության գերակայության ու անմիջական գործողության ապահովման և հասարակական հարաբերությունների սահմանադրականացման միասնական քաղաքականության իրականացման համար³:

Օրենսդիրը ՀՀ վարչական դատարանի՝ գերատեսչական ակտերի սահմանադրականությունը որոշելու և այն անվավեր ճանաչելու լիազորությունը վերացրեց միայն 05.12.2013 թ. ընդունված նոր ՀՀ վարչ. դատ. օր-ում⁴:

Հայ իրավագետներն առ այսօր միակարծիք չեն գերատեսչական ակտերի

² Ուժը կորցրել է 07.01.2014թ-ին:

³ ՀՀ սահմանադրական դատարանը 2007 թ. ՀՀ վարչ. դատ. օր-ի 135-րդ հոդվածով նախատեսված կարգավորումը համարել է ՀՀ Սահմանադրության մի շարք հոդվածներին հակասող և այն որակել է երկրի իրավական անվտանգության սպառնալիք, սակայն որոշման եզրափակիչ մասում այն չի ճանաչել հակասահմանադրական: Դատարանը պարզապես կարևոր է համարել, որ ՀՀ ազգային ժողովն ուշադրություն դարձնի այս հիմնախնդրին:

⁴ Այս մասին տե՛ս Խանդանյան Ռ., Դատական վերահսկողությունը նորմատիվ բնույթի իրավական ակտերի նկատմամբ (տեսապատմական վերլուծություն): Եր.: 2024:

սահմանադրականության և օրինականության չափացույցերի հարցում: Օրինակ՝ Գ. Դանիելյանը նշում է.

«(...) Ասվածից բխում է, որ մարդու իրավունքների վերաբերյալ ցանկացած գերատեսչական ակտ կարող է վիճարկվել «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածին⁵ չհամապատասխանելու հիմքով, ուստի կարիք էլ չկա վիճարկելու դրա սահմանադրականությունը»⁶:

Նշված պատճառաբանությունից կարելի է ենթադրել, որ Գ. Դանիելյանը կասկածի տակ է դնում գերատեսչական ակտերի սահմանադրականության չափացույցի անհրաժեշտությունը, քանի որ ըստ նրա՝ մարդու իրավունքների ոլորտում գերատեսչական նորմատիվ իրավական ակտերի սահմանադրականության հարց չէր կարող ծագել, քանի որ նման ակտերը կարող էին հակասել միայն 2002 թ. «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի համապատասխան հոդվածին:

Դրան հակառակ՝ գերմանական իրավունքի տրամաբանությամբ մտածող այլ իրավաբաններ շարունակում են նշել, որ գերատեսչական նորմատիվ իրավական ակտերի սահմանադրականության չափացույցն անհրաժեշտ է, և գերատեսչական ակտերը հակասահմանադրականության հիմքով կարող է վերացնել (անվավեր ճանաչել) ոչ թե ՀՀ սահմանադրական դատարանը, այլ ՀՀ վարչական դատարանը⁷:

Գործնականում ՀՀ սահմանադրական դատարանը և ՀՀ վարչական դատարանը ևս չեն կարողանում կամ չեն ցանկանում սահմանազատել ենթաօրենսդրական ակտերի սահմանադրականությունը և օրինականությունը, որոնք նաև նրանց լիազորությունների տարանջատման չափանիշներ են: Օրինակ՝ «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 20.1-ին հոդվածի 3-րդ մասով սահմանված է.

«Անհատական պաշտպանության միջոցների ցանկը, դրանց կիրառման դեպքերն ու կարգը, ինչպես նաև սանիտարահամաճարակային անվտանգության կանոնները ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտով սահմանում է առողջապահության բնագավառում պետական կառավարման լիազոր մարմնի ղեկավարը»:

Օրենքի այս դրույթից հասկանալի է, որ ՀՀ առողջապահության նախարարը ենթաօրենսդրական ակտով կարող է կարգավորել անհատական պաշտպանության միջոցների կիրառման, սանիտարահամաճարակային անվտանգության կանոններին առնչվող հարցերը, բայց ոչ ֆինանսական բնույթի հարցեր: Մինչդեռ ՀՀ առողջապահության նախարարը, դուրս գալով լիազորող նորմի սահմաններից, 20.08.2021 թ. ընդունել է N 65-Ն հրամանը, որի 1-ին կետով աշխատողների համար սահմանել է հետևյալ պարտականությունը.

⁵ Ուժը կորցրել է 07.04.2018 թ.:

⁶ Դանիելյան Գ. Բ., Վարչական վարույթ և դատավարություն: Ուսումնական ձեռնարկ, Եր.: Տիգրան Մեծ, 2011, էջեր 305-306:

⁷ Հովհաննիսյան Գ., Ընդհանուր իրավագիտություն և իրավաբանական մեթոդաբանություն: Եր.: 2020, էջեր 155-156:

«Աշխատողները յուրաքանչյուր 14 օրը մեկ ներկայացնում են կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) ախտորոշման պոլիմերազային շղթայական ռեակցիայի հետազոտության (այսուհետ՝ ՊՇՌ հետազոտություն) բացասական արդյունքը հավաստող (...) սերտիֆիկատ (...): **ՊՇՌ հետազոտությունն իրականացնում է աշխատողն իր հաշվին** (ընդգծումը՝ հեղ.)»:

ՀՀ առողջապահության նախարարի այս հրամանի իրավաչափությունը պետք է ստուգել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի (վարչարարության օրինականությունը), «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 20.1-ին հոդվածի 3-րդ մասի տեսանկյունից, թե՞ ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի (օրինականության սկզբունքը) համապատասխանության տեսանկյունից:

Նշված դեպքով ակնհայտ էր, որ ՀՀ առողջապահության նախարարը դուրս է եկել օրենքով սահմանված իր առարկայական իրավասության սահմաններից, քանի որ վերը նշված օրենքի 20.1-ին հոդվածի 3-րդ մասը չի լիազորում Նախարարին ենթաօրենսդրական ակտով սահմանելու ֆինանսական բնույթի հարցը: Թեև Նախարարի հրամանն առաջին հերթին հակասում էր «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասին, որի համաձայն՝ վարչական մարմինների լիազորությունները սահմանվում են օրենքով կամ օրենքով նախատեսված դեպքերում՝ իրավական այլ ակտերով, սակայն ՀՀ սահմանադրական դատարանը նշված գործն ընդունել է վարույթ և Նախարարի ենթաօրենսդրական ակտի իրավաչափությունն ստուգել է սահմանադրականության տեսանկյունից:

ՀՀ Սահմանադրական դատարանը 23.12.2021 թ. ՍԴՈ-1621 որոշմամբ ՀՀ առողջապահության նախարարի քննարկվող հրամանի՝ «ՊՇՌ հետազոտությունն իրականացնում է աշխատողն՝ իր հաշվին:» նախադասության «իր հաշվին» բառակապակցությունը ճանաչել ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերին և 39-րդ հոդվածին հակասող և անվավեր՝ նկատի առնելով, որ ՊՇՌ հետազոտության ծառայությունից օգտվելիս դրա դիմաց վճարման պարտականություն ունեցողների շրջանակի սահմանումը դուրս է ՀՀ առողջապահության նախարարի՝ օրենքով սահմանված լիազորությունների շրջանակից:

ՀՀ սահմանադրական դատարանը փաստել է, որ Նախարարը դուրս է եկել «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 20.1-ին հոդվածի 3-րդ մասով սահմանված լիազորության սահմաններից, ինչը նշանակում է, որ Նախարարի հրամանի վիճարկվող դրույթն անմիջապես հակասում էր ոչ թե ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերին, այլ «Հայաստանի Հանրապետության բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 20.1-ին հոդվածի 3-րդ մասին, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածին:

Բոլոր դեպքերում փաստ է, որ այս գործով իրականացվել է ոչ թե վարչական, այլ սահմանադրական արդարադատություն: Ստացվում է, որ եթե օրենքով սահմանված է, որ գործադիր իշխանության մարմիններն ունեն «X» հարցերի շրջանակում ենթաօրենսդրական ակտ ընդունելու լիազորություն, սակայն այդ մարմինը դուրս է գալիս այդ լիազորության շրջանակից և կարգավորում է նաև այլ հարաբերություն, ապա դա ոչ թե այդ ակտի օրինականության, այլ սահմանադրականության հարց է (նման ակտերը հակասում են ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածին), ուստի նման հարցերը պետք է քննի ՀՀ սահմանադրական դատարանը: ՀՀ սահմանադրական դատարանի՝ վերը նշված գործով մոտեցումը չպետք է վերաճի կայուն պրակտիկայի:

Իրականում քիչ հավանական է, որ դասական իմաստով ենթաօրենսդրական ակտը, որը հիմնված է օրենքի վրա (խոսքը չի վերաբերում գործադիր իշխանության ռեզլամենտային ակտերին, որոնք ՀՀ իրավական համակարգում նախատեսված չեն⁸ կամ այն որոշումներին, որոնք սխալմամբ նշված են «Ն» (նորմատիվ) տառով, թեև դրանք ակնհայտորեն անհատական իրավական ակտեր են,⁹), կարող է ուղիղ (անմիջապես) հակասել ՀՀ Սահմանադրությանը: Եթե ենթաօրենսդրական ակտը հիմնված է օրենքի վրա, սակայն դրանով իսկ վնասում է սահմանադրական արժեքներ, ապա պետք է քննարկել օրենքի և դրա վրա հիմնված ենթաօրենսդրական ակտի սահմանադրականության հարցը: Իսկ եթե ենթաօրենսդրական ակտը հիմնված չէ օրենքի վրա, այսինքն՝ կարգավորում է հարաբերություններ, որոնք նախատեսված չեն օրենքով, ապա այս պարագայում պետք է քննարկել ենթաօրենսդրական ակտի օրինականության հարցը:

Այս ամենից պարզ է դառնում, որ ՀՀ իրավական համակարգը դեռևս չի կարողացել կողմնորոշվել ենթաօրենսդրական ակտերի սահմանադրականության և օրինականության սահմանազատման հարցում, սակայն այս չլուծված խնդրին ՀՀ վճռաբեկ դատարանը ավելացրել է ևս մեկը՝ ենթաօրենսդրական ակտերի կոնվենցիոնալությունը, որը ոչ միայն չլուծված խնդրին մեկ այլ խնդրով հավելում է, այլև պարունակում է ՀՀ վարչական դատարանի կողմից ենթաօրենսդրական ակտերի միջազգային պայմանագրերին հակասելու հիմքով անվավեր ճանաչելու եղանակով սահմանադրական արդարադատությունը շրջանցելու և Հայաստանի իրավական անվտանգությանը (ինքնիշխանությանը) վնասելու ռիսկեր:

1.3. Ենթաօրենսդրական ակտերի կոնվենցիոնալության չափացույցի անկենսունակությունը

Ենթաօրենսդրական ակտի կոնվենցիոնալությունը հիմնականում ոչ կենսունակ կամ առարկայազուրկ չափացույց է, քանի որ, որպես կանոն, քիչ հավանական է, որ դասական իմաստով ենթաօրենսդրական ակտն անմիջապես (ուղիղ) հակասի

⁸ Ենթաօրենսդրական և ռեզլամենտային ակտերի հարաբերակցության մասին տե՛ս Իրավունքի ընդհանուր տեսության հիմնախնդիրները: Ուսումնական ձեռնարկ: Գիտ. խմբ. Ա. Ղամբարյան: Եր.: 2024, էջեր 263-271:

⁹ Այս մասին՝ մանրամասն 4-րդ բաժնում:

միջազգային պայմանագրին՝ չհակասելով օրենքին: Ինչպես նշվեց, դասական իմաստով ենթաօրենսդրական ակտը հիմնված է օրենքի վրա, այսինքն՝ ընդունվում է օրենքով նախատեսված դեպքերում և ի կատարումն օրենքի (օրենքի վերապահում): Եթե ենթաօրենսդրական ակտն ընդունվել է օրենքով նախատեսված դեպքում և ի կատարումն օրենքի, ապա այս պարագայում կոնվենցիային կարող է հակասել օրենքը և դրա վրա հիմնված ենթաօրենսդրական ակտը: Ենթաօրենսդրական ակտն այս պարագայում, որպես կանոն, ուղիղ չի կարող հակասել կոնվենցիային: Եթե ենթաօրենսդրական ակտն ընդունվել է առանց օրենքի վերապահման և խաթարել է արժեքներ, որոնք սահմանված են նաև կոնվենցիայով, ապա այս պարագայում պետք է քննարկել ոչ թե ենթաօրենսդրական ակտի համապատասխանությունն անմիջապես կոնվենցիային, այլ օրենքին:

2. *Ստանձնած միջազգային պարտավորությունների և պետության ինքնիշխանության միջև հավասարակշռության ապահովում:* Պետությունը, վավերացնելով միջազգային պայմանագրերը, ճանաչում է դրանց կիրառելիությունը, սակայն իրեն իրավունք է վերապահում ներքին հարցերը կարգավորել ազգային իրավունքի մակարդակով: ՀՀ սահմանադրական գործող կարգավորումների պայմաններում միջազգային իրավունքն ի վիճակի է միայն «արգելափակել» հակասող ազգային նորմի գործողությունը, բայց չվերացնել այն: Նման մոտեցումը պահպանում է հավասարակշռությունը միջազգային հանրության առջև ստանձնած պարտավորությունների և պետության ինքնիշխանության միջև: Կարելի է արձանագրել, որ այս գաղափարն էական է նաև «Ֆիցմորիսի կոմպրոմիսի» տեսության դեպքում:

3. *Այն կիրառման առաջնայնության, ոչ թե չեղարկման հայեցակարգ է:* Կիրառման առաջնայնությունը ենթադրում է, որ միջազգային նորմն առաջնային է միայն ազգային իրավունքի հետ հակասության դեպքում, ինչը բխում է նաև ՀՀ սահմանադրության 5-րդ հոդվածի 3-րդ մասի բովանդակությունից: Այսպիսով՝ կիրառման առաջնայնության սկզբունքը չի դնում ազգային նորմը վերացնելու խնդիր, այլ այն կոնկրետ դեպքի համար ժամանակավորապես ոչ պիտանի է դարձնում:

Միջազգային իրավունքի կիրառման առաջնայնությունն ապահովում է պետության միջազգային պարտավորությունների կատարումը՝ չխաթարելով ազգային իրավունքի իրավական ուժը, ինչը թույլ է տալիս ներդաշնակորեն գոյակցել երկու իրավական համակարգերը:

Այսպիսով՝ եթե խոսում ենք իրավանորմերի գործողության առաջնայնության մասին (առնվազն, ՀՀ սահմանադրության կարգավորումների լույսի ներքո միջազգային իրավունքի նորմերին վերաբերելի չէ), ապա դրա արդյունքը պետք է լինի հակասող, ավելի ցածր իրավաբանական ուժ ունեցող ակտի անվավերությունը, իսկ եթե խոսում ենք կոնկրետ դեպքում միջազգային իրավունքի նորմի կիրառման առաջնայնության մասին, ապա ակտերի միջև հակասության դեպքում իրավակիրառ պետք է ընդամենը կիրառի միջազգային իրավունքի նորմը՝ որևէ կերպ այն չկապելով հակասող նորմի անվավերության կամ, առհասարակ, նման գործընթացի անհրաժեշտության հետ:

4. ՀՀ վարչական դատարանի՝ ենթաօրենսդրական ակտը միջազգային պայմանագրին հակասելու հիմքով անվավեր ճանաչելու իրավասության օրինաչափությունը

4.1 Ընդհանուր դրույթներ: Ինչպես արդեն նշվեց սույն հետազոտության առաջին բաժնում, ենթաօրենսդրական ակտերի ուղիղ հակասությունը միջազգային պայմանագրերին, որպես կանոն, ոչ կենսունակ է, քանի որ քիչ հավանական է, որ դասական իմաստով ենթաօրենսդրական ակտն անմիջապես (ուղիղ) հակասի միջազգային պայմանագրին՝ չհակասելով օրենքին: Եթե ենթաօրենսդրական ակտն ընդունվել է օրենքով նախատեսված դեպքում կամ ի կատարումն օրենքի, ապա տվյալ դեպքում կոնվենցիային կարող է հակասել օրենքը և դրա վրա հիմնված ենթաօրենսդրական ակտը, իսկ ենթաօրենսդրական ակտը, **որպես կանոն**, ուղիղ չի կարող հակասել կոնվենցիային:

Սույն աշխատանքում «որպես կանոն» եզրույթի կիրառումը պայմանավորված է այն հանգամանքով, որ կարող են լինել միջազգային պայմանագրերի տեսակներ, որոնք բովանդակային իմաստով օրենք են, սակայն ունեն միջազգային պայմանագրի ձև, որին կանոնադառնանք հաջորդիվ:

4.1.1 Sui generis միջազգային պայմանագրերը օրենք, թե՞ նորմատիվ պայմանագիր: Ինչպես նշեցինք, կարող են լինել միջազգային պայմանագրերի տեսակներ, որոնք բովանդակային իմաստով օրենք են, սակայն ունեն միջազգային պայմանագրի ձև, այլ կերպ ասած՝ միջազգային պայմանագրի ձև ունեցող բովանդակությամբ օրենք:

Այսպես, Սահմանադրական դատարանի՝ 10.10.2017 թ. ՄԴՈ-1381 որոշմամբ արտահայտվել է դիրքորոշում Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին պայմանագրի՝ որպես իրավական ակտի բնույթի վերաբերյալ, առ այն, որ տվյալ ակտը, ըստ էության, դասվում է *վերազգային* իրավունքի աղբյուրների շարքին: Դասական իմաստով միջազգային իրավունքի և վերազգային իրավունքի տարբերությունը հիմնականում այն է, որ վերջինիս նորմերով կարգավորում են ոչ միայն պետությունների միջև (**հորիզոնական**), այլ նաև պետության ներսում գործող (**ուղղահայաց**) հարաբերություններ:

Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ նախնական սահմանադրական վերահսկողության առարկա կարող են դառնալ Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ հորիզոնական իրավահարաբերություններ կարգավորող և պետության համար պարտավորություններ սահմանող նորմերը: Իսկ վերազգային իրավունքի աղբյուր հանդիսացող, բովանդակային առումով «օրենք» կատեգորիային համապատասխանող և ուղղահայաց իրավահարաբերություններ կարգավորող իրավունքի նորմերը կարող են ՀՀ սահմանադրական դատարանում սահմանադրական վերահսկողության առարկա հանդիսանալ «հետագա սահմանադրական վերահսկողության» կարգով՝ հաշվի առնելով նաև դրանում ամրագրված որևէ դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:

Վերը նշված դիրքորոշման համատեքստում գործնականում հնարավոր է, որ ենթաօրենսդրական ակտն ուղիղ հակասի միջազգային պայմանագրին, այս դեպքում՝

Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին պայմանագրի դրույթներին: Սակայն հարկ է նկատել, որ համանման վիճակներում գործ ունենք ոչ թե դասական իմաստով միջազգային պայմանագրի, այսինքն՝ Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ հորիզոնական իրավահարաբերություններ կարգավորող և պետության համար պարտավորություններ սահմանող նորմերն ամրագրող նորմատիվ պայմանագրի, այլ վերազգային իրավունքի աղբյուր հանդիսացող, բովանդակային առումով «օրենք» կատեգորիային համապատասխանող և ուղղահայաց իրավահարաբերություններ կարգավորող իրավունքի նորմեր բովանդակող ակտի հետ:

4.1.2 Վճռաբեկ դատարանի կողմից վարչական դատարանին անուղղակիորեն նոր իրավասության վերապահումը: Վճռաբեկ դատարանն իր՝ ՎԴ/9227/05/23 վարչական գործով 25.09.2024թ. որոշմամբ կարծես թե «լրացում» է կատարել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքում՝ սահմանելով նորմատիվ իրավական ակտերի նոր աստիճանակարգություն՝ միջազգային պայմանագիրը հավասարեցնելով ազգային օրենքներին, ըստ այդմ՝ արձանագրել, որ ներպետական օրենսդրության աստիճանակարգությունում միջազգային պայմանագիրը հաջորդում է ՀՀ Սահմանադրությանը:

Այս համատեքստում, Վճռաբեկ դատարանը նաև անուղղակիորեն նոր իրավասություն է վերապահել վարչական դատարանին՝ հայտնելով դիրքորոշում առ այն, որ ՀՀ վարչական դատարանը պարտավոր է *inter alia* ստուգել վիճարկվող նորմատիվ իրավական ակտի (կամ դրա դրույթի)՝ Կոնվենցիային (միջազգային պայմանագրին՝ ըստ հեղինակի) համապատասխանելու հանգամանքը:

Հարկ է նաև ընդգծել, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը՝ Հովհաննիսյանն ընդդեմ Հայաստանի 26.03.2024 թ. վճռում⁶³ նշել է, որ թեև Վարչական վերաքննիչ դատարանի այն եզրակացությունը, որ Կառավարության որոշումների ենթադրյալ հակասահմանադրականությունը վարչական դատարանների իրավասության շրջանակներում չէ, կարծես թե համապատասխանում է ՎԴՕ-ի 135-րդ հոդվածի 2-րդ կետին, պարզ չէ, թե ինչ հիմքերով է դատարանը հրաժարվել քննելու Կոնվենցիայի թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի պահանջների վիճարկվող Որոշման ենթադրյալ անհամապատասխանությունը՝ հաշվի առնելով, որ այն ժամանակ գործող խմբագրությամբ Սահմանադրության 6-րդ հոդվածի համաձայն՝ վավերացված միջազգային պայմանագրերը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են կազմել և գերակա էին դրանց չհամապատասխանող ներպետական իրավական դրույթների նկատմամբ: Սույն հաստատված նախադեպային իրավունքի լույսի ներքո Դատարանը եզրահանգում է, որ վարչական դատարանների՝ դիմումատուի բողոքն ըստ էության քննելու մերժումը խախտում է նրա՝ դատարանի մատչելիության իրավունքի բուն էությունը վիճարկելու համար Կառավարության կողմից ընդունված նորմատիվ ակտը, որը ենթադրաբար խախտել է նրա գույքային իրավունքները:

⁶³ Տես՝ Հովհաննիսյանն ընդդեմ Հայաստանի ՄԻԵԴ վճիռ (զանգատ թիվ 16480/13), 25-26-րդ կետեր:

Կառավարության «ՀՀ Արմավիրի մարզի Արևադաշտի գյուղական համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերն անհատույց սեփականության իրավունքով համայնքին փոխանցելու մասին» 18.11.2004 թ. N 1555-Ն որոշումը (այսուհետ՝ Կառավարության որոշում), որի վերաբերյալ դիրքորոշում է ներկայացրել ՄԻԵԴ-ը, ունի «Ն» (նորմատիվ) տառով նշում, սակայն տվյալ որոշման ուսումնասիրությունը թույլ է տալիս արձանագրելու, որ Կառավարության որոշման տվյալ գործին վերաբերելի 1-ին կետը պարունակում է անհատական կարգադրագիր, այսինքն՝ այն ունի ակնհայտ անհատական և ոչ նորմատիվ բնույթ, իսկ իրավական ակտում դրա բնույթի մասին նշված լինելը կամ նորմատիվ իրավական ակտի ընդունման ու ուժի մեջ մտնելու ընթացակարգով ընդունված և ուժի մեջ մտած լինելը որոշիչ չեն տվյալ իրավական ակտում ամրագրված իրավական կարգավորումը նորմատիվ կարգավորում որակելու համար:

Ավելին, ՀՀ վճռաբեկ դատարանը թիվ ՎԴ/0518/05/19 գործով 13.01.2022 թ. որոշմամբ արձանագրել է. «Նորմատիվ իրավական ակտերն այլ իրավական ակտերից տարբերվում են ինչպես բովանդակային, այնպես էլ ձևական չափանիշներով, որոնց շրջանակում առաջնային է բովանդակային չափանիշը: Ըստ այդմ՝ այս կամ այն իրավական ակտում դրա բնույթի մասին «Ն» (նորմատիվ) տառով նշումը և/կամ նորմատիվ իրավական ակտի ընդունման ու ուժի մեջ մտնելու ընթացակարգով ընդունված և ուժի մեջ մտած լինելը դեռևս որոշիչ չեն տվյալ իրավական ակտը նորմատիվ իրավական ակտ որակելու համար: Յուրաքանչյուր կոնկրետ դեպքում իրավական ակտի նորմատիվ բնույթը պարզելու նպատակով անհրաժեշտ է տվյալ իրավական ակտը ենթարկել բովանդակային վերլուծության»:

Անշուշտ, ՄԻԵԴ-ի դիրքորոշման հետ պետք է համաձայնել այն համատեքստում, որ անձը պետք է դատական պաշտպանության իր իրավունքն իրացնելու իրավական հնարավորություն ունենա, և այն չպետք է ներպետական իրավական դրույթների սխալ մեկնաբանման կամ կիրառման արդյունքում սահմանափակել: Նշված գործի փաստական հանգամանքներից պարզ է դառնում, որ դիմումատուի բողոքը մերժվել է, քանի որ դիմումատուն չի կատարել ՎԴՕ-ի 135-րդ հոդվածով սահմանված հիմնական պահանջը, քանի որ այն չի նշել ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտ, որի հետ վիճարկվող Որոշումը ենթադրաբար անհամատեղելի է: Քանի որ դիմումատուն հղում է կատարել Սահմանադրությանը և Կոնվենցիային, Վերաքննիչ դատարանը նշել է, որ կառավարության որոշումների սահմանադրականության վերաբերյալ վեճերը պատկանում են Սահմանադրական դատարանի իրավասությանը, մինչ ՎԴՕ-ի 135-րդ հոդվածը վերաբերում է միայն ներպետական իրավունքին և ոչ միջազգային պայմանագրերին՝ ներառյալ Կոնվենցիան:

Ինչպես բխում է վերոշարադրյալից՝ ՄԻԵԴ-ի դիրքորոշումը վերաբերում է անձի դատական պաշտպանության իրավունքի իրացմանը, և վերջինս նեղ մասնագիտական հարցեր քննարկման առարկա չի դարձրել, ուստի և նշվածով չի կարող հիմնավորվել Վճռաբեկ դատարանի քննարկվող որոշմամբ վարչական դատարանին նոր «լիա-

գործության» վերապահումը և իրավական ակտերի աստիճանակարգությունում միջազգային պայմանագրերի ներառման դիրքորոշումը:

Այսպիսով՝ անձը պետք է իրական հնարավորություն ունենա իր դատական պաշտպանության իրավունքի իրացման, և եթե ՀՀ վարչական դատարաններում ՀՀ վարչ. դատ. օր-ի 26-րդ գլխով սահմանված կարգով վիճարկվում է «Ն» նշումով իրավական ակտը, որն իրականում անհատական է, ապա այս դեպքում անձին դատական պաշտպանության իրավունքից չզրկելու համար հայցի (դիմումի) ընդունումը ոչ թե պետք է մերժել՝ վեճը ՀՀ վարչական դատարանին ենթակա չլինելու հիմքով, այլ դիմումը պետք է վերադարձնել՝ վարչական (անհատական) ակտերի վիճարկման ընդհանուր կարգով ներկայացնելու համար, ինչը և կիրառելի կլինե՞ր նաև վերոնշյալ գործի շրջանակներում ներկայացված դիմումի դեպքում:

4.3 Իրավահամեմատական տեսանկյունը:

Իրավահամեմատական հետազոտությունների արդյունքում հնարավոր է առանձնացնել մի քանի խումբ երկրներ, որոնց օրենսդրությամբ խնդրո առարկա հարցի վերաբերյալ սահմանված են տարբեր կարգավորումներ:

Որոշ երկրների իրավական համակարգերում սահմանված են օրենքների և ենթօրենսդրական ակտերի՝ սահմանադրությանը և միջազգային նորմերին կամ պայմանագրերին հակասելու հիմքով գործով վարույթը կասեցնելու և Սահմանադրական դատարան դիմելու պրակտիկան:

Այսպես, Լատվիայի «Վարչական դատավարության մասին» 25.11.2001 թ. օրենքի 104-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական ակտի կամ փաստացի գործողության իրավաչափությունն ստուգելիս կասկածի դեպքում դատարանն ստուգում է՝ արդյո՞ք համապատասխանում է կիրառված իրավական նորմն ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական նորմին:⁶⁴

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե դատարանը եզրահանգում է, որ իրավունքի նորմը չի համապատասխանում Լատվիայի Սահմանադրությանը կամ միջազգային իրավունքի նորմին (ակտին), ապա դատարանը կասեցնում է գործով դատավարությունը և պատճառաբանված դիմում է Լատվիայի Սահմանադրական դատարան: Սահմանադրական դատարանի որոշումն ուժի մեջ մտնելուց հետո դատարանը վերսկսում է գործով դատավարությունը և հետագա դատավարությունում հիմնվում է Սահմանադրական դատարանի դիրքորոշման վրա:

Մինևույն ժամանակ, Լատվիայի «Սահմանադրական դատարանի մասին» 14.06.1996 թ. օրենքի 17-րդ հոդվածի 1-ի մասի 9-րդ ենթակետի համաձայն՝ Լատվիայի Սահմանադրական դատարան կարող են դիմել... Լատվիայի ներպետական օրենսդրության միջազգային պայմանագրերին համապատասխանության դիմումով նաև քրեական, քաղաքացիական և վարչական գործեր քննող դատարանները:

⁶⁴ Տե՛ս՝ <https://lawyer-khroulev.com/wp-content/uploads/2022/06/Administrativno-Processualnij-Zakon-Latvii-2017.pdf>

Համանման իրավակարգավորում է նաև Սլովակիայի սահմանված օրենսդրությամբ, մասնավորապես, Սլովակիայի Սահմանադրության 160-րդ հոդվածի համաձայն՝ Սլովակիայի Սահմանադրական դատարանը որոշում է կայացնում օրենքների՝ սահմանադրությանը համապատասխանության վերաբերյալ, ինչպես նաև օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի՝ միջազգային պայմանագրերին և միջազգային իրավունքի սկզբունքներին համապատասխանության վերաբերյալ (...)⁶⁵:

Դրան գուցահեռ՝ Սլովակիայի քրեադատավարական և քաղաքացիադատավարական օրենսդրությամբ ամրագրված է դատարանների գործով դատաքննությունը կասեցնելու և Սահմանադրական դատարանի դիմելու իրավունքը, եթե դատարանը եզրահանգում է, որ նորմատիվ իրավական ակտը, (նույնիսկ ամենացածր իրավաբանական ուժ ունեցող), հակասում է Սահմանադրությանը, օրենսդրությանը կամ ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական նորմերին, ինչպես նաև միջազգային պայմանագրերին⁶⁶:

Մեկ այլ խումբ երկրների իրավական համակարգերում սահմանված են օրենքների և ենթաօրենսդրական ակտերի՝ սահմանադրությանը, ինչպես նաև ենթաօրենսդրական ակտերի՝ օրենքներին հակասելու հիմքով գործով վարույթը կասեցնելու և Սահմանադրական դատարանի դիմելու պրակտիկան, իսկ միջազգային պայմանագրերի մասով որևէ կարգավորում սահմանված չէ, օրինակ՝ Լիտվիա⁶⁷, Խորվաթիա⁶⁸:

Երրորդ խումբ երկրների իրավական համակարգերում սահմանված են օրենքների և ենթաօրենսդրական ակտերի՝ սահմանադրությանը հակասելու հիմքով վարույթը կասեցնելու և Սահմանադրական դատարանի դիմելու պրակտիկան, ինչպես նաև ենթաօրենսդրական ակտերի՝ օրենքներին հակասելու հիմքով վարչական արդարադատության իրականացման կարգավորումները, իսկ միջազգային պայմանագրերի մասով կրկին որևէ կարգավորում սահմանված չէ, օրինակ՝ Ռուսաստանի Դաշնություն⁶⁹, Դրղստան⁷⁰, Ղազախստան⁷¹, Մոլդովա⁷²:

Այլ կերպ ասած՝ միասնական կարգավորում արտասահմանյան երկրներում

⁶⁵ Տե՛ս <https://www.us-rs.si/en/legal-basis/constitution>:

⁶⁶ Տե՛ս Соловьев А.А. Правовое регулирование судебного нормоконтроля.опыт зарубежных государств. М.: Изд. ИНФРА-М, 2019. С. 74.

⁶⁷ Տե՛ս Լիտվիայի Հանրապետության վարչական դատավարության օրենսգիրքը, 19.09.2000 թ., <https://e-seimas.lrs.lt/portal/legalAct/lt/TAD/TAIS.162936?jfwid=>

⁶⁸ Տե՛ս Խորվաթիայի Հանրապետության «Սահմանադրական դատարանի մասին» 03.05.2002 թ. օրենքը, https://www.usud.hr/sites/default/files/dokumenti/The_Constitutional_Act_on_the_Constitutional_Court_of_the_Republic_of_Croatia_consolidated_text_Official_Gazette_No_49-02.pdf

⁶⁹ Տե՛ս Ռուսաստանի Դաշնության վարչական դատավարության օրենսգիրքը, 08.03.2015թ., https://www.consultant.ru/document/cons_doc_LAW_176147/376390c2e0b4d19fbd9ad25590e17fce8a5c2671/

⁷⁰ Տե՛ս Դրղստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգիրքը, 25.01.2017թ., <https://cbd.minjust.gov.kg/3-28/edition/1265033/ru>

⁷¹ Տե՛ս Ղազախստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգիրքը, 20.06.2020թ., <https://adilet.zan.kz/rus/docs/K2000000350>

⁷² Տե՛ս Մոլդովայի Հանրապետության վարչական դատավարության օրենսգիրքը, 19.07.2017թ., https://www.legis.md/cautare/getResults?doc_id=146158&lang=ru#

սահմանված չէ, սակայն այն երկրներում, որոնցում հստակ կարգավորված է նաև միջազգային պայմանագրերին հակասության վերաբերյալ դրույթ, այս խնդրի լուծումը, որպես կանոն, սահմանադրական արդարադատության տիրույթում է, այլ ոչ թե վարչական արդարադատության:

4.3 Եզրահանգումներ: Այսպիսով՝ հարկ է ընդգծել, որ Վճռաբեկ դատարանի կողմից վարչական դատարանին՝ ենթաօրենսդրական ակտը միջազգային պայմանագրին հակասելու հիմքով անվավեր ճանաչելու իրավասություն վերապահելով՝ վարչական դատարանին անուղղակիորեն նաև վերապահում է ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի սահմանադրականության հարցի լուծումը: Դիցուք, պատկերացնենք մի իրավիճակ, երբ վարչական դատարանը *inter alia* ստուգել է վիճարկվող ենթաօրենսդրական ակտի (կամ դրա դրույթի)՝ միջազգային պայմանագրին, կոնկրետ դեպքում՝ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիային համապատասխանելու հանգամանքը, ընդ որում՝ կոնվենցիայի այն դրույթին, որն ամբողջությամբ արտացոլված է ՀՀ Սահմանադրությունում: Տվյալ դեպքում ստացվում է, որ վարչական դատարանն անուղղակիորեն լուծեց ենթաօրենսդրական ակտի (կամ դրա դրույթի) նաև սահմանադրությանը համապատասխանության հարցը, ինչի իրավասությունը վերապահված է Սահմանադրական դատարանին:

Ուստի, Վճռաբեկ դատարանի կողմից վարչական դատարանին՝ ենթաօրենսդրական ակտը միջազգային պայմանագրին հակասելու հիմքով անվավեր ճանաչելու իրավասություն վերապահելով՝ այն ենթադրում է նաև շրջանցել սահմանադրական արդարադատությունը, այդ դեպքում վերը նշված իրավասության վերապահումը չի կարող համարվել իրավաչափ՝ վարչական արդարադատության և սահմանադրական արդարադատության իրականացման համատեքստում: Այս տեսանկյունից նաև պատահական չէ, որ այն երկրներում, որոնցում հատուկ ընդգծված է նաև միջազգային պայմանագրերին հակասության վերաբերյալ դրույթ, այդ հակասության հարցի լուծման լիազորությունը վերապահված է սահմանադրական դատարանին, այլ ոչ թե վարչական դատարանին:

Ուստի այս համատեքստում հարկ է նշել, որ վերը նշված իրավիճակում վարչական դատարանը ոչ թե պետք է շրջանցի սահմանադրական արդարադատությունը և **ենթաօրենսդրական ակտը միջազգային պայմանագրին հակասելու հիմքով անվավեր ճանաչի, այլ «Pacta sunt servanda» սկզբունքն ապահովի՝ անմիջապես կիրառելով միջազգային պայմանագրի դրույթը:**

Ինչ վերաբերում է ՄԻԵԴ-ի որոշման, ապա ինչպես հիմնավորվեց նախորդիվ, ՄԻԵԴ-ի դիրքորոշումը վերաբերում է անձի դատական պաշտպանության իրավունքի իրացմանը, և այդ դիրքորոշմամբ չի կարող հիմնավորվել Վճռաբեկ դատարանի քննարկվող որոշմամբ վարչական դատարանին նոր «լիազորության» վերապահումը և իրավական ակտերի աստիճանակարգությունում միջազգային պայմանագրերի ներառման եզրահանգումը:

5. Ամփոփում

1. ՀՀ վճռաբեկ դատարանի *ex nihilo* դիրքորոշումն ունակ չէ խարխալելու իրավունքի պաշտոնական աղբյուրների համակարգում նորմատիվ իրավական ակտի և նորմատիվ պայմանագրի՝ որպես իրավունքի առանձին աղբյուրների մասին ճանաչում ստացած մոտեցումը: Միջազգային պայմանագիրը որակելով որպես օրենսդրության մաս, առանց որևէ իրավաչափ նպատակի՝ Վճռաբեկ դատարանը հակադրվել է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ օրենսդրության և օրենսդրական ակտերի բնորոշումներին, որի արդյունքում «վերակենդանացրել է» մի քանի տասնամյակ առաջ իրավունքի պաշտոնական աղբյուրների համակարգում առկա խառնաշփոթը: ՀՀ վճռաբեկ դատարանի այս դիրքորոշումը չի կարող հիմք ծառայել նշելու, որ իրավական նորմերի աստիճանակարգության մեջ միջազգային պայմանագիրը հաջորդում է Սահմանադրությանը:

2. Միջազգային իրավունքի կիրառման առաջնայնությունն ազգային նկատմամբ չի հանգեցնում ազգային իրավունքի անվավերության, քանի որ այս սկզբունքը վերաբերում է միայն դրա կիրառման կարգին, այլ ոչ թե ազգային իրավունքի իրավական ուժի հարցին: Սա նշանակում է, որ ազգային իրավունքը մնում է վավեր, բայց միջազգային նորմի հետ բախվելիս, ինչպես նշված է նաև ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի 3-րդ մասում, առաջնայնությունը կտրվի ՀՀ վավերացված միջազգային իրավունքին: Օրենսդիրը վարչական դատարանին ընդդատյա՝ նորմատիվ իրավական ակտերի վիճարկման գործերի շարքում, ըստ էության, չի ներառել ՀՀ վավերացված միջազգային պայմանագրերին դրանց համապատասխանության հարցը որոշելու հնարավորությունը՝ կարևորելով վավերացված միջազգային պայմանագրի կիրառման առաջնայնությունը:

3. Վճռաբեկ դատարանը փորձել է լուծել տևական ժամանակ դոկտրինում լուծում չգտած՝ միջազգային պայմանագրի և Սահմանադրության կոլիզիոն նախապատվության հարցը և, առանց որևէ հիմնավորման, պարզապես հայտարարել է որ միջազգային պայմանագիրը ներպետական օրենսդրության աստիճանակարգությունում հաջորդում է ՀՀ Սահմանադրությանը:

4. «Հորինել է» ենթաօրենսդրական ակտը միջազգային պայմանագրին հակասելու հիմքով անվավեր ճանաչելու Վարչական դատարանի իրավասությունը, որը՝ որպես գաղափար, «չծնված»՝ արդեն իսկ մահացած է, քանի որ նախ՝ գործնականում քիչ հավանական է մի իրավիճակ, երբ դասական իմաստով ենթաօրենսդրական ակտն ուղիղ կհակասի միջազգային պայմանագրին՝ չհակասելով օրենքին:

Երկրորդ՝ Վճռաբեկ դատարանի կողմից վարչական դատարանին՝ ենթաօրենսդրական ակտը միջազգային պայմանագրին հակասելու հիմքով անվավեր ճանաչելու իրավասություն վերապահելով՝ վարչական դատարանին անուղղակիորեն նաև վերապահում է ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի սահմանադրականության հարցի լուծումը՝ շրջանցելով սահմանադրական արդարադատությունը:

Երրորդ՝ միջազգային փորձը ցույց է տվել, որ այն երկրներում, որոնցում հատուկ

ընդգծված է նաև միջազգային պայմանագրերին հակասության վերաբերյալ դրույթ, այդ հակասության հարցի լուծման լիազորությունը վերապահված է սահմանադրական դատարանին, այլ ոչ թե վարչական դատարանին:

5. Վարչական դատարանը ոչ թե պետք է շրջանցի սահմանադրական արդարադատությունը և ենթաօրենսդրական ակտը միջազգային պայմանագրին հակասելու հիմքով անվավեր ճանաչի, այլ «Pacta sunt servanda» սկզբունքն ապահովի՝ անմիջապես կիրառելով միջազգային պայմանագրի դրույթը:

6. Անձը պետք է ունենա իր դատական պաշտպանության իրավունքի իրացման իրական հնարավորություն, և եթե ՀՀ վարչական դատարաններում ՀՀ վարչ. դատ. օր-ի 26-րդ գլխով սահմանված կարգով վիճարկվում է «Ն» նշումով իրավական ակտ, որն իրականում անհատական է, ապա այս դեպքում անձին դատական պաշտպանության իրավունքից չզրկելու համար հայցի (դիմումի) ընդունումը ոչ թե պետք է մերժել՝ վեճը ՀՀ վարչական դատարանին ենթակա չլինելու հիմքով, այլ դիմումը պետք է վերադարձնել՝ վարչական (անհատական) ակտերի վիճարկման ընդհանուր կարգով ներկայացնելու համար:

7. ՀՀ վճռաբեկ դատարանի քննարկված դիրքորոշումը չպետք է համարվի բուհում դասավանդվող նյութը վերափոխելու առիթ. այն չի կարող օգտագործվել իրավունքի տեսության և իրավունքի այլ ճյուղերի դասընթացների շրջանակում իրավունքի աղբյուրների համակարգը և օրենսդրության համակարգը վերանայելու և միջազգային պայմանագիրն օրենսդրության համակարգի մաս ճանաչելու համար:

ПРИЗНАНИЕ ПОДЗАКОННЫХ АКТОВ НЕДЕЙСТВИТЕЛЬНЫМИ НА ОСНОВАНИИ ПРОТИВОРЕЧИЙ МЕЖДУНАРОДНОМУ ДОГОВОРУ (МЕТОДИЧЕСКИЕ И АДМИНИСТРАТИВНЫЕ ПРОБЛЕМЫ)

ГАМБАРЯН АРТУР

Заведующий кафедры теории права и конституционного права Российско-Армянского университета, профессор Академии государственного управления Республики Армения, доктор юридических наук, профессор, заслуженный юрист РА

МУРАДЯН МАНУК

Кандидат юридических наук, доцент, временно исполняющий обязанности ректора Образовательного комплекса МВД РА, преподаватель Французского университета в Армении, преподаватель Академии адвокатуры РА

ШАКАРЯН ТАМАРА

Заведующий кафедры права Академии государственного управления РА, преподаватель Французского университета в Армении, кафедры Теории государства и права Российско-Армянского Университета, кандидат юридических наук, доцент

Аннотация: Статья посвящена методологическим и административно-правовым вопросам признания подзаконных актов недействительными на основании их противоречия международному договору, а также вопросам правового суверенитета. Представлена трехмерная система проверки законности подзаконных актов: конституционализм, законность и конвенциональность, и в этом контексте подчеркивается несостоятельность критерия конвенциональности.

Также рассматриваются теоретические подходы к соотношению международного и национального права: дуализм и монизм, с особым акцентом на принцип «*pacta sunt servanda*», особенно в контексте уточнения порядка применения международного права в системе национального законодательства.

В статье на научном уровне обсуждаются следующие ключевые вопросы: является ли международный договор нормативным правовым актом и какое место он занимает в системе иерархии правовых актов (законодательства), а также с реалистической и правосравнительной точки зрения обоснована ли идея признания подзаконных актов недействительными на основании их противоречия конвенции?

В статье также рассматривается вопрос о правомерности компетенции Административного суда РА признать подзаконный акт недействительным по причине его противоречия международному договору и его сравнительно-правовой аспект.

Ключевые слова: международный договор, подзаконные акты, критерий конвенционности, принцип «*pacta sunt servanda*», дуализм, монизм, противоречие конвенции, юрисдикция административного суда, признание недействительным.

RECOGNITION OF BY-LAWS AS INVALID ON THE BASIS OF CONTRADICTIONS WITH AN INTERNATIONAL TREATY (METHODOLOGICAL AND ADMINISTRATIVE PROBLEMS)

GHAMBARYAN ARTUR

*Chairman of the Department of Theory of Law and Constitutional Law of
Russian-Armenian University, Full Professor of the State Administration Academy
of the Republic of Armenia, Doctor of Law, Full Professor, Honored lawyer of the RA*

MURADYAN MANUK

*Candidate of Law, Associate Professor,
Acting Rector of the Educational Complex of the Ministry of Internal Affairs
of the Republic of Armenia, Lecturer at the French University in Armenia,
Lecturer at the Academy of Advocacy of the Republic of Armenia*

SHAKARYAN TAMARA

*Head of Chair of Law Public Administration Academy of the RA, lecturer France University
in Armenia, Chair of Theory of State and Law of the Russian-Armenian University,
PhD in Laws, Associate professor of Law*

Abstract: The article explores the methodological and administrative-judicial challenges related to declaring sub-legislative acts invalid on the grounds of their contradiction to international treaties, alongside issues concerning legal sovereignty. It introduces a three-tiered framework for assessing the legality of sub-legislative acts - constitutionality, legality, and conventionality, and highlights the practical limitations of the conventionality criterion.

The article also analyzes theoretical approaches to the relationship between international and domestic law, namely dualism and monism, with particular emphasis on the principle of “pacta sunt servanda” in clarifying the applicability of international treaties within the national legal system. The article discusses the following key issues on a scientific level: is an international treaty a normative legal act, and what place does it occupy in the hierarchy of legal acts (legislation)? Also, from a realist and comparative legal perspective, is the idea of recognizing sub-legislative acts as invalid due to their contradiction with the convention justified?

Finally, the article examines the legitimacy of the competence of the Administrative Court of the Republic of Armenia to annul sub-legislative acts on such grounds and evaluates this issue through a comparative legal lens.

Keywords: international treaty, sub-legislative acts, criterion of conventionality, “pacta sunt servanda” principle, dualism, monism, contradiction to the convention, jurisdiction of the administrative court, annulment.

Հոդվածը գրախոսվել է՝ 26.03.2025թ.
Ներկայացվել է տպագրության՝ 04.04.2025թ.

**ՄԵՏԱՄՈՂԵՌՆԻ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ
ՏԱՏԱՆՈՒՄՆԵՐԸ ՄՈՂԵՌՆԻ ԵՎ ՀԵՏՄՈՂԵՌՆԻ
ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ**

ՂԱՄԲԱՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ

Բ.գ.դ., պրոֆեսոր, Հայ-ռուսական (Մլավոնական) համալսարանի
իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի ամբիոնի վարիչ,
ՀՀ պետական կառավարման ակադեմիայի պրոֆեսոր,
իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ վաստակավոր իրավաբան
DOI: 10.63925/18294847-2025.19օր-17

Բանալի բառեր: Մոդեռն, հետմոդեռն, մետամոդեռն, *contra legem*, թվային հասարակություն, ճշմարտություն, տատանվող իրավաբան:

Ամփոփագիր: Հոդվածում հեղինակը նպատակադրվում է ներկայացնել մոդեռնի և հետմոդեռնի միջև արդարադատության գերակայությունների տատանումները, ինչի նպատակով ի դերն է հանում մոդեռնի, հետմոդեռնի և մետամոդեռնի ընդհանուր բնութագրերը, ապա հիմնվելով ներքոնշյալ երեք հիմնահարցերի վրա վերլուծում է մետամոդեռնին բնորոշ ճոճանակային տատանումները:

Հեղինակը նշում է, որ մետամոդեռնի իրավաբանը որոշումներ կայացնելիս մեկ ճոճվում է դեպի մոդեռն և փորձում է լինել անկեղծ, ապա վերադառնալով հետմոդեռն՝ կրկին ընտրում է հեզնանքն ու ցինիզմը(1), մեկ ճոճվում է դեպի մոդեռն և ընտրում օբյեկտիվ ճշմարտությունը, ապա վերադառնում է հետմոդեռն և խոսում է ձևական ճշմարտության մասին(2), կամ ճոճվում է դեպի ապացույցների թույլատրելիության մոդեռնիստական ընկալումը, ապա վերադառնում է հետմոդեռն և խոսում մարդու իրավունքների խախտմամբ ձեռք բերված ապացույցների անթույլատրելիության մասին(3):

Հեղինակը կարծում է, որ ժամանակակից հասարակության թվայնացման պայմաններում, երբ հասարակությունը թվային տեխնոլոգիաների միջոցով ակամա ականատես է դառնում հանցագործության իրականացման փաստին, տրանսֆորմացվում է նաև ապացույցների թույլատրելիության սկզբունքի ընկալումը դատարանի կողմից, թույլ տալով շեղումներ և բացառություններ:

Հեղինակի կողմից օգտագործվել են գիտահետազոտական բազմաթիվ մեթոդներ, և, մասնավորապես, սոցիոլոգիական մեթոդը՝ հանձինս հոդվածում ներկայացված հարցման:

1. Ընդհանուր դրույթներ

Մոդեռնի ժամանակաշրջանը (XIX-րդ դարի վերջ - XX-րդ դարի կեսեր) բնութագրվում է ունիվերսալիզմով, ռացիոնալիզմով, պրոգրեսով, ինչպես նաև՝ գաղափարական միասնությամբ, երբ մարդն հավատում էր օբյեկտիվ իրականությունը բանականությամբ բացահայտելու հնարավորությանը կամ մեծ պատմվածքներին (նարատիվներին), օրինակ՝ ֆաշիզմին: Մոդեռնի բարոյականությունը և իրավունքը բացարձակ էին, այսինքն՝ առկա էին ընդհանուր (ունիվերսալ) կանոններ և մաքսիմաներ, օրինակ՝ միակ իրավունքը դա պոզիտիվ իրավունքն էր, որն անսխալական և անհակասական կանոնների համակցություն է կամ օրինակ՝ Կանտի կատեգորիկ իմպերատիվը:

Հետմոդեռնի ժամանակաշրջանը (XX-րդ դարի կեսեր - XXI-րդ դարի սկիզբ) բնութագրվում է ռելյատիվիզմով (հարաբերականությամբ) և բազմակարծությամբ, հեգնանքով, նիհիլիզմով, մեծ պատմվածքների (կոմունիզմ, ֆաշիզմ և այլ պատմվածքների) մերժմամբ: Հետմոդեռնը մերժում է մեկ միասնական օբյեկտիվ ճշմարտությունն ու կարծում է, որ ճշմարտությունը միշտ հարաբերական է և կախված է պատմական և սոցիալական համատեքստից: Հնարավոր չէ աշխարհը բացատրել մեկ միասնական տեսությամբ կամ գաղափարախոսությամբ: Հետմոդեռնը նաև բնական իրավունքի վերածննդի ժամանակաշրջանն է, իսկ հետմոդեռնի իրավաբանականությունը՝ ինտեգրատիվ իրավահասկացողությունն է:

Եվրոպայում «հետմոդեռնի արմատները պետք է փնտրել Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո լայն տարածում գտած անորոշության, թերահավատության և բազմակարծության մթնոլորտում»¹, իսկ հետխորհրդային պետություններում հետմոդեռնիստական հայեցակարգը հստակ և վառ արտահայտվեց միայն ԽՍՀՄ փլուզումից հետո:

Մարդն ընտրում է և անընդհատ չի բավարարվում իր ընտրությամբ: Այսօր մարդկությանը չեն բավարարում ո՛չ մոդեռնը, ո՛չ հետմոդեռնը. ո՛չ մոդեռնի պարզ միասնությունը, ո՛չ հետմոդեռնի ցինիզմը և հեգնանքը, ո՛չ մոդեռնի ռացիոնալիզմը, ո՛չ էլ հետմոդեռնի իռացիոնալիզմը: Մա է զարգացման ներկա փուլի՝ մետամոդեռնի էությունը²:

Մետամոդեռնի ժամանակաշրջանը (XXI-րդ դարի սկզբից մինչև մեր օրերը) հետմոդեռնի վերաիմաստավորման և մոդեռնին բնորոշ արժեքների վերածննդի ժամանակահատվածն է: Մետամոդեռնը «փորձում է վեր բարձրանալ մոդեռնի և հետմոդեռնի ծայրահեղություններից»³:

¹ Летов О.В. От постпозитивизма к постмодернизму // Вестник культурологии. 2010. №3.

URL: <https://cyberleninka.ru/article/n/ot-postpozitivizma-k-postmodernizmu> (дата обращения: 13.04.2024).

² Տե՛ս Բავսյն Մ. Վ., Попов Д. В. «Метамодерн в праве: осцилляция в точке Канетти. Статья I. пролиферация норм и разум» // Научный вестник Омской академии МВД России. 2018. № 4 (71), էջ 64:

³ Տե՛ս Երշով В.В. «Право в контексте парадигмы метамодерна» // Правосудие. 2019. №2, էջ 15–33:

«Մետամոդեռն» բառի մեջ «մետա-» նախածանցը բացատրվում է «մետաքսիս» (μεταξύ) բառի միջոցով, որը նշանակում է «միջև»⁴: Մետամոդեռնի համատեքստում խոսել մետաքսիսի մասին նշանակում է խոսել մոդեռնի և հետմոդեռնի հակադիր բևեռների (ծայրահեղությունների, գերակայությունների) միջև շարժման մասին, որտեղ մոդեռնի և հետմոդեռնի արժեքների միջև տեղի է ունենում ոչ թե հավասարակշռություն, այլ ճոճանակաձև տատանում (օսցիլյացիա, լատիներեն՝ *oscillo* – տատանվել⁵):

Մետամոդեռնի իրավաբանը ճոճվող, տատանվող իրավաբան է. նա որոշումներ կայացնելիս մեկ ճոճվում է դեպի մոդեռն և փորձում է լինել անկեղծ (բայց ոչ միամիտ), այնուհետև վերադառնում է հետմոդեռն և կրկին ընտրում է հեգնանքը և ցինիզմը (1), կամ ճոճվում է դեպի մոդեռն և ընտրում օբյեկտիվ ճշմարտությունը, այնուհետև վերադառնում է հետմոդեռն և խոսում է ձևական (դատարանում ապացուցված) ճշմարտության մասին (2), կամ ճոճվում է դեպի ապացույցների թույլատրելիության մոդեռնիստական ընկալումը, ըստ որի՝ թույլատրելի է ցանկացած վերաբերելի ապացույց, այնուհետև վերադառնում է հետմոդեռն և խոսում է մարդու իրավունքների խախտմամբ ձեռք բերված ապացույցների անթույլատրելիության մասին (3):

Առանձին-առանձին քննարկենք այս ոլորտներում առկա ճաճանակաձև տատանումները:

2. Տատանումները մոդեռնի միամտության և հետմոդեռնի հեգնանքի միջև. մետամոդեռնի նոր անկեղծությունը

2.1. Մետամոդեռնի «նոր անկեղծությունը»

Մոդեռնը բնութագրվում է գաղափարական միամտությամբ: Ին-դոկտրինացիայի⁶ միջոցով մարդիկ հավատացին մեծ պատմվածքներին, օրինակ՝ ֆաշիզմին, կոմունիզմին, իսկ իրավաբանները հավատացին, որ պետության պոզիտիվ իրավունքն անսխալական է, անհակասական է և գուրկ է բացերից:

Հետմոդեռնին բնութագրական է հեգնանքը, նմանակեղծումը (իմիտացիան), սիմուլյակրիզմը⁷, ցինիզմը, նիհիլիզմը, մասնավորապես՝ մեծ պատմվածքների մերժումը: «Դժվար է հասկանալ, թե հետմոդեռնի «անկեղծ» սուբյեկտը իրականում

⁴ 1989 թվականին Ֆոգելենը փաստաթղթերի հիման վրա հաստատեց, որ Պլատոնն իր «Միմալոգիկոնում» մետաքսիս բառն օգտագործել է, որպեսզի նկարագրի երկու ծայրահեղությունների միջև մնալու զգացողությունը. խոսել մետաքսիսի մասին նշանակում է խոսել (հակառակ) բևեռների միջև շարժման մասին: Ընդ որում՝ խոսքը ոչ թե այդ բևեռների բինարության կամ հավասարակշռության մասին է, այլ ճոճանակի, որը ճոճվում է տարբեր ծայրահեղությունների միջև: Տե՛ս **Аккер Р. ван ден, Вермюлен Т.** «Периодизирова 2000-е, или Появление метамодернизма // Метамодернизм. Историчность, аффект и глубина после постмодернизма». / Перевод с англ. В. М. Липки. М.: РИПОЛ классик, 2019. <https://metamodernism.ru/emergence-of-metamodernism/>

⁵ Այս մասին տե՛ս **Тёрнер Люк.** «Манифест метамодернизма (Metamodernist Manifesto)» // <https://metamodernism.ru/manifesto/>

⁶ Լատիներենից՝ *in* — «ներս» և *doctrina* — «ուսմունք, տեսություն, դոկտրին»: Ին-դոկտրինացիան մարդկանց գիտակցության մեջ գաղափարական կարծրատիպերի, սոցիալական գաղափարների, կրոնական հայացքների ներդրումն է, որոնք համոզում են ինչ-որ մեկի կամ ինչ-որ քաղաքականության իրավացիության, արդարացիության մեջ:

⁷ Լատիներեն՝ *simulo* - կեղծել, *simulacrum* - նմանություն, պատճեն:

անկեղծ է, թե՛ նա, ինքն իրեն թաքցնելով դիսկուրսիվ դիմակի ներքո՝ պարզապես խաղում է անկեղծություն»⁸:

Իրավունքի տեսաբանները նշում են.

«Հետմոդեռնիստական հոետորաբանության մեջ այլևս չկա համաձայնության գաղափարը, որն ապահովում էր կամայականության դեմ առնվազն նվազագույն «շոշափելի» երաշխիքներ, իսկ «հետմոդեռնի» դատավորը, ո՛չ ապացույցները գնահատելիս, ո՛չ էլ նորմերը մեկնաբանելիս, այլևս չի կարող հույս դնել որևէ մեկի վրա : (...) Դատավորն այս դեպքում նմանվում է արիստոտելյան խոհեմ անհատի, որն արդարի և անարդարի մասին դատում է՝ չունենալով հստակ չափանիշներ»⁹:

Ի տարբերություն նախորդ ժամանակաշրջանների՝ մետամոդեռնն անկեղծության, հույսի, ռոմանտիզմի, հուզականության ու մեծ պատմվածքների և ունիվերսալ ճշմարտությունների ներուժի վերածնունդն է, որտեղ չեն անտեսվում նաև այն ամենը, ինչ սովորել ենք հետմոդեռնի ժամանակներից: «Մետամոդեռնի մանիֆեստի» հեղինակ Լ. Թերները նշում է.

«Մենք մետամոդեռնի մանիֆեստը դիտարկում ենք որպես (. . .) հեզնանքի և անկեղծության միջև տատանում: (...) Մետամոդեռնի սերունդը գիտակցում է, որ մենք կարող ենք միաժամանակ լինել հեզնական և անկեղծ. պարտադիր չէ, որ մեկը ճնշի մյուսին»¹⁰:

Ասվածը չի նշանակում, որ անհրաժեշտ է վերադառնալ մոդեռնի միամտությանը, երբ ամեն բան ընկալվում է որպես բնական և ճշմարիտ: «Հետմոդեռնի հեզնանքը չի կորցրել իր նշանակությունը»¹¹, պարզապես՝ նոր անկեղծությունը դառնում է մետամոդեռնի գլխավոր թեմաներից մեկը: Մետամոդեռնը, հաղթահարելով մոդեռնի գաղափարական միամտությունը և հետմոդեռնի հեզնանքն ու ցինիզմը, անկեղծությունը և ազնվությունը դիտարկում է որպես մարդու վարքագծի հիմնական շարժառիթ:

Մետամոդեռնի հանրային-քաղաքական կյանքում հաջողության են հասնում այն տեքստերը, այդ թվում՝ դատական տեքստերը, որտեղ հեղինակը ոչ թե կեղծում կամ թաքցնում է իրականությունը կամ ձևացնում (նմանակում) է իրականություն, այլ հնարավորինս անկեղծ նկարագրում իր գործողությունները և որոշումները:

⁸ Տե՛ս **Эшельман Рауль**. «Перформатизм как преодоление постмодерна» // Философско-литературный журнал «Логос». 2021. №6 (145), էջ 10:

⁹ Տե՛ս **Самохина Е. Г.** «Постмодернистская теория права» // В поисках теории права: коллективная монография / под ред. Е. Г. Самохиной, Е. Н. Тонкова. - СПб.: Алетея, 2021, էջ 75:

¹⁰ **Luke Turner** «Metamodernism: A Brief Introduction» // In the press, Theory, January 12, 2015. <https://www.metamodernism.com/2015/01/12/metamodernism-a-brief-introduction/>

¹¹ **Гусельцева М.С.** «Метамоде́рнизм в психологии: новые методологические стратегии и изменения субъективности» // Вестник Санкт-Петербургского университета. Психология. 2018. Т. 8. Вып. 4. С. 335, **Гребенюк А. А.** «Культурно-исторический анализ переживаний человека эпохи метамоде́рнизма» // Азимут научных исследований: педагогика и психология. 2019. Т. 8. № 1(26). С. 327.

4.2. Մետամոդեռնի դատական անկեղծությունը

Հետմոդեռնի արդարադատությունը, արտացոլելով ժամանակի աշխարհընկալումը, մի շարք հարցերում աչքի է ընկնում անկեղծության և ազնվության պակասությամբ: Հետմոդեռնի դատավորը երբեմն դատական ակտերում օգտագործում է այնպիսի ձևակերպումներ, որոնք ոչ թե արտացոլում են իրականությունը, այլ կեղծում կամ թաքցնում են այն: Օրինակ՝ հետմոդեռնի դատավորը քաջ գիտակցում է, որ օրենքներում հնարավոր են անտրամաբանություններ, թերություններ ու սխալներ, իսկ նման թերություններ ունեցող օրենսդրական դրույթներին ենթարկվելը (կիրառելը) երբեմն պարզապես անհնարին է (առկա է ֆիզիկական անհնարիություն), կամ էլ դրանք կիրառելը կառաջացնի աղադակող աստիճանի հիպեր-անտրամաբանական կամ հիպեր-անարդար հետևանքներ¹²: Պոզիտիվիստ դատավորը, ամենայն հավանականությամբ, գիտակցում է, որ նման իրավիճակներում պետք է շարժվի ոչ թե օրենքում նշված ուղիով, այլ պետք է ընտրի մեկ այլ ճանապարհ, որի դեպքում նա կշեղվի օրենքի տեքստից (իսկ եթե միտքը ձևակերպենք առավել անկեղծ, ապա՝ կհակադրվի օրենքի տեքստին):

Այս իրավիճակում դատավորը տատանվում է, թե լեզվական ինչ արտահայտություններով պետք է նկարագրի այդ «մեկ այլ ճանապարհը». դատական ակտը շարադրելիս նա ազնվորեն և անկեղծորեն իր վարքագիծը պետք է նկարագրի *contra legem* իրավունքի զարգացման դոկտրինի տերմինաբանությամբ և օգտագործի «օրենքին հակառակ իրավակիրառում» ձևակերպումը, թե՞ իրականությունը կեղծելով և «օրենսդրի իրական կամքը բացահայտել» ձևակերպումը որպես վահան օգտագործելով՝ պետք է խոսի «օրենքը շտկող մեկնաբանման (*interpretation corrective, abrogans*)» կամ օրենքում չնախատեսված «ողջամտի բացառության» մասին:

Հետմոդեռնի արդարադատությունը, հեզնելով իրականությունը, կօգտագործի «օրենքը շտկող մեկնաբանություն» կամ «ողջամտի բացառություն» ձևակերպումները, այլ կերպ ասած՝ կձևացնի անկեղծություն: Մինչդեռ, մետամոդեռնի արդարադատությունը կընտրի անկեղծության ճանապարհը և կնշի, որ իրավունքի (արդարության) սկզբունքների հիման վրա հակադրվում է օրենքի հիպեր-անարդար կամ հիպեր-անտրամաբանական կարգավորմանը (*contra legem* իրավունքի զարգացում): Այս ամենը ներկայացնենք օրինակներով:

ՀՀ քր. դատ. օր.-ի 107-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մահվան պատճառը քրեական վարույթում կարող է հաստատվել միայն դատաբժշկական փորձագետի եզրակացությամբ: Պատկերացնենք, որ հանցագործն իր գոհին սպանել է դիակիզարանում հրկիզելու եղանակով, որի արդյունքում գոհի մարմինն ամբողջությամբ այրվել է: Նա սպանության այս ընթացքը տեսաձայնագրել է:

¹² Օրենսդրական կարգավորման այն աղադակող անտրամաբանությունը կամ անարդարությունը, որը հնարավոր է որոշել «տասնչորս տարեկան երեխայի» բանաձևով, կանվանենք հիպեր-անտրամաբանություն կամ հիպեր-անարդարություն: «Տասնչորս տարեկան երեխայի» բանաձևի մասին տե՛ս **Гамбарян А.С.** «Принцип законности и положение «судья подчиняется закону» в контексте доктрины развития права *contra legem*» // *Правоприменение*. 2023. Т. 7, № 4. С. 15–24. DOI: 10.52468/2542-1514.2023.7(4).15-24.

ՀՀ քր. դատ. օր.-ի 107-րդ հոդվածի 1-ին մասը իմպերատիվ պահանջում է մահվան պատճառը հաստատել բացառապես դատաբժշկական փորձագետի եզրակացությամբ: Այս պարագայում ինչպես կվարվեն հետմոդեռնի և մետամոդեռնի արդարադատությունները:

Հետմոդեռնի արդարադատությունը, օրենքի պահանջը կատարելու մասին կեղծ տպավորություն ստեղծելու նպատակով կնշանակի դատաբժշկական փորձաքննություն և փորձագետին կտրամադրի սպանության տեսաձայնագրությունը, իսկ փորձագետը, իր հերթին, ձևացնելով թե իբրև կատարում է փորձաքննություն՝ կուսումնասիրի տեսաձայնագրությունը և կտա մահվան հավանական պատճառի մասին եզրակացություն: Սա հետմոդեռնին բնորոշ՝ արդարադատության հեգնանքն է իրականության հանդեպ:

Նկարագրված հիպոթետիկ իրավիճակում ի սկզբանե պարզ է, որ իրականում փորձաքննություն չի կարող կատարվել, քանի որ դատաբժշկական փորձաքննության համար անհրաժեշտ է կատարել դիակի հետազոտություն, իսկ ծայրահեղ դեպքերում՝ հիվանդության պատմության վերաբերյալ բժշկական փաստաթղթերի ուսումնասիրություն: Տեսաձայնագրության հիման վրա մահվան պատճառը հաստատելու նպատակով կատարված գործողությունը ոչ թե փորձաքննություն է, այլ փորձաքննության սիմուլյակր, այսինքն՝ գոյություն չունեցող իրականության պատճեն:

Մետամոդեռնի արդարադատությունն այս իրավիճակին կմոտենա անկեղծությամբ և կփաստի, որ դիակի բացակայության կամ գոնե բժշկական փաստաթղթերի (հիվանդության պատմության) բացակայության պայմաններում առկա է ՀՀ քր. դատ. օր.-ի 107-րդ հոդվածի 1-ին մասի իմպերատիվ պահանջի կատարման ֆիզիկական անհնարինություն, այնուհետև, հիմք ընդունելով *contra legem* իրավունքի զարգացման դոկտրինը, կվկայակոչի «*lex non cogit ad impossibilia*» (օրենքը չի պահանջում անհնարինը) իրավական մաքսիմը և ՀՀ քր. դատ. օր.-ի 107-րդ հոդվածի 1-ին մասի իմպերատիվ կարգավորմանը հակառակ կսահմանի նոր կանոն՝ դիակի կամ հիվանդության պատմության բացակայության դեպքում մահվան հավանական պատճառը կարող է հաստատվել դեպքի տեսաձայնագրմամբ¹³:

Մեկ այլ օրինակ: Հետմոդեռնի հեգնանքի օրինակ է այն գիտնականների դիրքորոշումը, ըստ որի ՌԴ-ում 24.06.2023թ. Պրիգոժինի զինված ապստամբության դեպքով հարուցված քրեական գործը կամովին հրաժարվելու հիմքով կարճելն համապատասխանում է ՌԴ քր. օր.-ի 31-րդ հոդվածում ներդրված իմաստին: Այսպես, Լ. Գոլովկոն նշում է.

«Դատելով ՌԴ Անվտանգության Դաշնային Ծառայության մամուլի հաղորդագրության ժլատ ձևակերպումներից («նրանք դադարեցրել են

¹³ Դամբարյան Ա. «Հանրային իրավունքի զարգացումը օրենքին հակառակ (*contra legem*) «օրենքը չի պահանջում անհնարինը» իրավական մաքսիմի հիման վրա» // Բանբեր արդարադատության ակադեմիայի, 2023, № 1 (9), էջեր 47-67:

գործողությունները, որոնք ուղղակիորեն ուղղված են հանցագործության կատարմանը»՝ քրեական գործը կարճվել է զինված ապստամբության հանցագործությունից կամովին հրաժարվելու պատճառով, ինչը, ՌԴ քր. օր.-ի 31-րդ հոդվածում դրված իմաստի միանգամայն ճիշտ մեկնաբանությունն է: Ուստի Քննչական մարմինները նույնիսկ ստիպված չէին հանուն պետական նպատակահարմարության, մարդկանց կյանքի պահպանման և քաղաքացիական պատերազմի կանխարգելման գործել ոչ միայն *contra legem*, այլև *extra legem*¹⁴:

Արդյո՞ք անկեղծ է պրոֆեսորը, երբ նշում է, որ այս դեպքով քրեական գործի կարճումը համապատասխանում է ՌԴ քր. օր.-ի՝ կամովին հրաժարվելու մասին դրույթին կամ, երբ նշում է, որ այս դեպքում առկա չէ ո՛չ *contra legem*, ո՛չ էլ *extra legem* իրավակիրառում. կարծում ենք՝ ոչ: Նման գնահատկանք հետմոդեռնին ներհատուկ հեզմանք է իրականության հանդեպ: Թերևս քչերը կասկածի տակ կդնեն, որ Պրիգոժինի զինված ապստամբությունն ավարտված հանցագործություն է: Այս փաստը դժվար է վիճարկել, քանի որ թվային հասարակությունն առցանց կամ հետառցանց դիտել է այդ հանցագործության կատարման ընթացքը (անմիջականորեն հայտնաբերել է հանցավոր դեպքը) և բոլորի համար պարզ էր, որ նրանց հանցավոր գործողություններն ավարտվել էին մինչև ՌԴ մայրաքաղաք հասնելը: Կասկածից վեր է, որ այս պարագայում զուտ պոզիտիվ քրեական իրավունքի տեսանկյունից հանցագործությունից կամովին հրաժարվելու ինստիտուտը կիրառելի չէր:

Հստակեցնենք, որ Պրիգոժինի զինված ապստամբության գործով քրեական հետապնդումը դադարեցնելու կապակցությամբ առարկություն չունենք: Ցանկացած բանական մարդ կպնդի, որ այդ իրավիճակում, երբ մարդկանց կյանքին սպառնացող վտանգները կանխելու հիմնական կամ միակ միջոցը Պրիգոժինի զինված ապստամբության գործով քրեական հետապնդումը դադարեցնելն էր, ապա այդ հետապնդումը պետք է անկասկած դադարեցվեր: Խնդիրն այն է, թե քրեական հետապնդումը դադարեցնելը իրավաբանական ին՞չ ձևակերպումներով պետք է ներկայացվեր: Անկեղծ և ազնիվ չեն այն իրավաբանները, ովքեր այս իրավձակը «փաթեթավորում են» որպես *intra legem* իրավակիրառում:

Ի տարբերություն հետմոդեռնի իրավաբանի, մետամոդեռնի իրավաբանը ոչ թե կխաղար անկեղծություն, այլ կլիներ անկեղծ և կնշեր, որ այս գործով ռուսական քրեական իրավունքը զարգացվել է ՌԴ քր. օր.-ին հակառակ¹⁵: Նա, հիմք ընդունելով *contra legem* իրավունքի զարգացման դոկտրինը, կվկայակոչեր մարդկանց անվտանգությունը (կյանքի իրավունքը) ապահովելու սկզբունքը, այնուհետև՝ քրեական հետապնդումը դադարեցնելու հիմքերի սպառիչ ցանկի մասին օրենսդրական

¹⁴ См. у Головко Л.В. «Вооруженный мятеж Е. Пригожина как зеркало российского неолиберализма» // Закон, 2023. № 7, էջ 75:

¹⁵ Այս պարագայում *contra legem* իրավունքի զարգացման դոկտրինը ինքնաբավ կլիներ, եթե այդ որոշումը հաստատվեր նաև ՌԴ դատական համակարգի կողմից:

կարգավորումներին հակառակ, կսահմաներ քրեական հետապնդումը դադարեցնելու նոր հիմք, այն է՝ զինված ապստամբության գործերով քրեական հետապնդումը կարող է դադարեցվել, եթե առկա է անձանց կյանքը և հասարակական անվտանգությունն ապահովելու անհրաժեշտություն:

3. Տատանումները մոդեռնի օբյեկտիվ ճշմարտության և հետմոդեռնի ձևական ճշմարտության միջև

3.1. Օբյեկտիվ ճշմարտության նկատմամբ հետմոդեռնի հակահետմոդեռնիստական հարձակումները

ԽՍՀՄ փլուզումից հետո «հետմոդեռնի կարգախոսների ներքո, որը համընդհանուր ճշմարտության փոխարեն նախընտրում էր բացարձակ բազմակարծությունը (...), բացարձակ ճշմարտության ժխտման հետևանքով գիտելիքն ամենուր փոխարինվեց գիտելիքի սուռոգատներով (փոխնակներով)»¹⁶:

Հետմոդեռնի աշխարհընկալման պայմաններում, որտեղ գերակայում է բազմակարծությունը և ռելյատիվիզմը, այլևս դժվար է պնդել, որ դատավարական ապացուցումն ունի մեկ նպատակ, այն է՝ բացահայտել օբյեկտիվ ճշմարտությունը: Հետմոդեռնի բազմակարծությունը և ռելյատիվիզմը կասկածի տակ են դնում օբյեկտիվ ճշմարտության՝ որպես արդարադատության միակ նպատակի մասին տոտալիտար դատողությունները: Հետմոդեռնի քրեական դատավարությունում ապացուցման նպատակը դիտարկվում է բազմակարծության տեսանկյունից, օրինակ՝ ռուս դատավարագետներն ապացուցման նպատակի թեմայի շուրջ առայսօր իրականացնում են բուռն բանավեճեր, առանձնացնում են ապացուցման նպատակի տարբեր մոդելներ, օրինակ՝ ձևական ճշմարտությունը, ապացուցված ճշմարտությունը կամ կոնվենցիոնալ ճշմարտությունը:

Հետմոդեռնի հայեցակարգը թեև նշում է իմացության հարաբերական և ժամանակավոր լինելու մասին, սակայն դա չի նշանակում, որ, օրինակ, քրեական դատավարությունն, առհասարակ, պետք է մերժի ճշմարտության գաղափարը: Արդարադատության ոլորտում ճշմարտության բացահայտման նպատակի մերժումը արդարադատությունը կվերածեր աննպատակ կամ ինքնանպատակ գործընթացի: Օրինակ՝ Իտալիայում քրեական դատավարության դոկտրինը համաձայն չէ այն պնդման հետ ըստ որի՝ ճշմարտություն գոյություն չունի, հակառակ դեպքում դատական գործառույթը իմաստ չէր ունենա. դատավորը պատմական կոնկրետ պահի պարտավոր է որոշում կայացնել՝ հիմնվելով դատավարության ընթացքում ձեռք բերված տվյալների վրա, որոնք ապագայում կարող են նաև հերքվել, բայց որոշման արդարացիությունը կառուցվում է գիտելիքի հավաստիության վրա, որն առկա է եղել որոշում կայացնելու պահին¹⁷:

¹⁶ Տե՛ս **Дорошков В.В.** «Уголовное правосудие в условиях метамодерна и умеренного консерватизма: монография». М.: Изд. Прометей, 2023 էջ 16:

¹⁷ Տե՛ս **Барабанов П.К.** «Уголовный процесс Италии». М.: Изд. «Спутник +», 2019, էջ 150-151:

Արդարադատության նպատակի վերաբերյալ հետմոդեռնի բազմակարծությունը չի կարող տոտալ մերժել օբյեկտիվ ճշմարտությունը. դա հակասում է հենց հետմոդեռնի ռեյատիվիզմին: Օբյեկտիվ ճշմարտության տոտալ մերժումը հակահետմոդեռնիստական մոտեցում է:

3.2. Օբյեկտիվ ճշմարտության վերադարձը դատական ճշմարտության «հագուստով»

Մետամոդեռնի ժամանակաշրջանում տեղի է ունենում արդարադատության նպատակի վերախմաստավորում: Մետամոդեռնի տատանվող իրավաբանն այլևս համաձայն չէ օբյեկտիվ ճշմարտության տոտալ մերժման կամ օբյեկտիվ ճշմարտությանը հասանելու անհնարինության մասին դատողությունների հետ:

Մյուս կողմից՝ տատանվող իրավաբանին վախեցնում է օբյեկտիվ ճշմարտությունը՝ որպես գերակայություն հռչակելու միտքը, քանի որ նրա հիշողությունում դեռ թարմ է 1930-ականներին տարածված՝ ամեն գնով, այդ թվում՝ ինկվիզիցիոն մեթոդներով օբյեկտիվ ճշմարտությունը բացահայտելու պրակտիկան: Ավելին, XXI-րդ դարի սկզբին շատերին ցնցեց այն փաստը, երբ Եվրոպական դատարանում հաստատվեց, որ Հայաստանի դատավորներից մեկը 1999թ. արդարացրել էր վկաների նկատմամբ ոստիկանների կիրառած խոշտանգումները՝ վկայակոչելով ճշմարտությունը բացահայտելու նպատակը: Այդ դատավորը դատավճռում էքսպլիցիտ (ուղիղ) գրել էր.

«Դատարանը գնահատական տալով վկաներ Տ.-ի և Ա.-ի նախաքննության և դատաքննության ժամանակ տված հակասական ցուցմունքներին, գտնում է, որ իրականում ոստիկանության աշխատակիցների կողմից ռազմական ոստիկանության բաժնում բռնություն է գործադրվել ճշմարտությունը բացահայտելու համար»¹⁸:

Այժմ կարելի է վստահաբար ասել, որ մետամոդեռնը չի կարող տոտալ հերքել արդարադատության ոլորտում օբյեկտիվ ճշմարտությունը բացահայտելու (կամ այն իրավաբանորեն ձևակերպելու) հնարավորությունը:

Պատահական չէ, որ 30 տարի առաջ ռուս դատավարագետների կողմից մերժված օբյեկտիվ ճշմարտությունը դանդաղ քայլերով կրկին վերադառնում է ռուսական քրեադատավարական իրականություն, սակայն, քողարկված «դատական ճշմարտություն» անվամբ¹⁹: Ընդ որում, դատական ճշմարտության ռուսական հայեցակարգը չպետք է շփոթել ձևական ճշմարտության կամ դատարանում ապացուցված ճշմարտության հայեցակարգերի հետ հետ, ըստ որի՝ ճշմարտություն է այն պատմությունը, որը նկարագրել է դատարանը՝ իր դատավճռում:

¹⁸ Տե՛ս Եվրոպական դատարանի Հարությունյան ընդդեմ Հայաստանի գործով 2007թ. հունիսի 7-ի վճիռը:

¹⁹ Այս մասին տե՛ս **Пальчикова Н. В.** «К вопросу о характере истины в уголовно-процессуальном познании» // Общество и право. 2009. № 5, էջ 243-247, **Степняк В.Ю.** Судебная истина в уголовном судопроизводстве // Вестник Пермского университета. Юридические науки. 2016. №1 (31), էջ 112-12, **Соловьева Н. А., Шинкарук В. М.** «Интерпретации истины в уголовном процессе: компаративный анализ» // Logos et Praxis. 2016. № 3 (33), էջ 56-60. **Дорошков В.В.** «Уголовное правосудие в условиях метамодерна и умеренного консерватизма: монография». М.: Изд. Прометей, 2023, էջ 270-271:

Դատական ճշմարտության հայեցակարգում գերակայությունը տրվում է մոդեռնի օբյեկտիվ ճշմարտությանը, որը զուգակցվում է հետմոդեռնի ժամանակաշրջանին հայտնի գործիքային և ժամանակային սահմանափակումներով (զսպման կառուցակարգերով): Այլ կերպ ասած՝ դատական ճշմարտության հայեցակարգը ենթադրում է օբյեկտիվ ճշմարտության բացահայտում, սակայն ոչ ամեն գնով ու ոչ ամեն եղանակով: Օբյեկտիվ ճշմարտությունը բացահայտելու նպատակով ապացույցներ ձեռք բերելու եղանակները կամ մեթոդները անսահմանափակ չեն, այն չի կառուցվում «նպատակը արդարացնում է միջոցները» մաքիավելիստական բանաձևի վրա, որը կանաչ լույս է տալիս խոշտանգումներին և դրա արդյունքում ձեռք բերված ապացույցների օգտագործմանը: Դատական ճշմարտության հայեցակարգի կողմնակիցների կարծիքով դատական (իսկ իրականում՝ օբյեկտիվ) ճշմարտությունը պետք է բացահայտել օրենքով սահմանված կարգով, իսկ այդ կարգը չի կարող հակասել իրավունքի սկզբունքներին: Դժմարտությունը բացահայտելու նպատակը չի կարող պահանջել, որ դատավարությունը լինի անվերջ՝ դրանով իսկ վնասելով վարույթի ողջամիտ ժամկետի սկզբունքին:

Դատական ճշմարտության հայեցակարգի ռուսական տարբերակը դժվար է համարել ճոճվող տատանումների ընտրության արդյունք:

Նախ՝ դատական ճշմարտության հայեցակարգը ոչ թե տատանվում է մոդեռնի օբյեկտիվ ճշմարտության և հետմոդեռնի ձևական ճշմարտության միջև, այլ փորձում է օբյեկտիվ ճշմարտությունը զուգակցել որոշակի զսպող կառուցակարգերի հետ, մինչդեռ մետամոդեռնին հատուկ է ճոճանակաձև տատանումը օբյեկտիվ ճշմարտությունից դեպի ձևական ճշմարտությունը, և հակառակը:

Երկրորդ՝ «դատական ճշմարտություն» ձևակերպման գործածումն անկեղծ չէ, քանի որ այն արտահայտում է ոչ թե ճշմարտության նոր հայեցակարգ, այլ իրականում կոչված է քողարկելու հետխորհրդային իրավաբանին վախեցնող օբյեկտի ճշմարտությունը: Մինչդեռ, ինչպես նշվեց, մետամոդեռնն անկեղծության հարթակ է, որտեղ հարաբերվող կողմերը պետք է լինեն հնարավորինս ազնիվ: Սա նշանակում է, որ հարկ չկա օբյեկտիվ ճշմարտությունը թաքցնել «դատական ճշմարտություն» ձևակերպմամբ: Հատկապես ցանցային (թվային) հասարակությունում, որտեղ մարդիկ շատ հաճախ առցանց հետևում են հանցագործության կատարման ընթացքին, օբյեկտիվ ճշմարտությունը որևէ լեզվական ձևակերպումներով քողարկելը դառնում է իրականության հանդեպ հեզմանք: Ցանցային հասարակությունում վերանում են «օբյեկտիվ ճշմարտություն» ձևակերպումից խուսափելու կամ այն այլ ձևակերպումների միջոցով քողարկելու պատճառները:

3.3. Օբյեկտիվ ճշմարտությունը ցանցային հասարակությունում

Մետամոդեռնի ժամանակաշրջանում մոդեռնի օբյեկտիվ ճշմարտության և հետմոդեռնի ձևական ճշմարտության փաստարկներում անտեսվում են դեռևս 2010թ-ից ձևակերպում ստացած ավտոմոդեռնի (Ռոբերտ Սամուելս) կամ դիջիտալմոդեռնի (Ալան Կիրբի) հայեցակարգերը, որոնք կենտրոնանում են այն բանի վրա, թե ինչպես են նոր

տեխնոլոգիաները (համացանց, համակարգիչ, սմարթֆոն, սոցիալական ցանցեր, տելեգրամ ալիքներ և այլն) վերափոխում սոցիալական հարաբերությունների կառուցվածքը: Այս առումով ներկայիս հասարակությունը թվային կամ ցանցային հասարակություն է:

Օբյեկտիվ ճշմարտության կողմնակիցները իրենց փաստարկներում դեռևս հաշվի չեն առնում հանցանքի կատարման ընթացքին ուղիղ հեռարձակմամբ առցանց (այսուհետ՝ առցանց) հետևելու (անմիջականորեն հայտնաբերելու) կամ հանցանքի կատարման ընթացքն ամրագրած տեսաձայնագրությունը հետագայում համացանցում դիտելու եղանակով հանցավոր դեպքին անմիջականորեն հետևելու (այսուհետև՝ հետառցանց) թվային հասարակության հնարավորությունը: Դատավարագետները դեռևս անում են արխաիկ պնդումներ.

«Քրեադատավարական ճանաչողության առարկա են (...) անցյալի կոնկրետ փաստերը, որոնք հնարավոր չէ վերարտադրել և անմիջականորեն ընկալել»²⁰:

Այս մոտեցման կողմնակիցները պարզապես նշում են, որ եթե հանցագործությունը կատարվել է ակներևության պայմաններում (հրապարակայնորեն), ապա որևէ բարդություն չի ներկայացնում ականատեսներին հարցաքննելու եղանակով ճշգրտորեն վերականգնել անցյալի պատկերը: «Այսպես՝ ինքնաթիռն առևանգած ահաբեկիչների բոլոր գործողությունները պարզվում են հեշտությամբ և բացարձակ հուսալիորեն, գրեթե բոլոր առ բոլոր ճշգրտությամբ: Դրա համար բավական է հարցաքննել ուղևորներին ու անձնակազմի անդամներին, որոնց անունները նախապես հայտնի են»²¹:

Այս պնդման կողմնակիցներն անտեսում են այն իրողությունը, որ օրինակ՝ 22.03.2024թ.-ին «Կրոկուս Սիթի Հոլլում» տեղի ունեցած ահաբեկչության հանգամանքները բոլոր առ բոլոր ճշգրտությամբ պարզելու համար այլևս հացաքննությունը միակ կամ լավագույն միջոց չէ: Ցանցային հասարակությունն ինքնին ականատես է եղել այդ դեպքի հիմնական հանգամանքներին, նա անմիջականորեն հայտնաբերել է դրանք, ուստի նա այլևս կարիք չունի, որ որևէ մեկը հարցաքննության միջոցով վերականգնի նախկինում տեղի ունեցած դեպքի պատկերը:

Հանցանքի կատարման ընթացքի տեսաձայնագրությունն օբյեկտիվ իրականության (հանցանքի կատարման ընթացքի) արտացոլված կրկնօրինակումն է (հայելային արտացոլանքն է), որը, ի տարբերություն արտացոլված օբյեկտի, կարող է բազմակի անգամ վերարտադրվել: Դատավարագետները իրավացիորեն նշում են.

«Ձայնագրությունների և տեսագրությունների վերարտադրության ժամանակ ստեղծում է այսպես կոչված «ներկայության տպավորություն», որը թույլ է տալիս յուրովի դառնալ դրանցում ֆիքսված իրադարձությունների «ականատես», քանի որ դրանց հետագոտման ընթացքում դատարանը և գործին մասնակցող անձինք հնարավորություն են ստանում գործի հանգամանքներն ընկալել գրեթե այն ծավալով, որով կրնալեին այդ

²⁰ Տե՛ս **Օրլով Ю. К.** «Современные проблемы доказывания и использования специальных знаний в уголовном судопроизводстве: научно-учебное пособие». М.: Изд. Проспект, 2016, էջ 20:

²¹ Տե՛ս **Օրլով Ю. К.** Указ. Соч, էջ 21:

իրադարձությունների անմիջական ականատեսը լինելու դեպքում»²²:

Ավտոմոդեռնի (մետամոդեռնի) արդարադատությունը հաճախ փորձում է ոչ թե ապացույցների միջոցով հետադարձ հայացքով (ռետրոսպեկտիվ) վերակառուցել իրականությունը և բացահայտել օբյեկտիվ ճշմարտությունը, այլ դատարանը պարզապես իրավաբանորեն արձանագրում է ցանցային հասարակության աչքի առաջ տեղի ունեցած դեպքը և դրան տալիս է իրավաբանական որակում: Ընդ որում, ժամանակակից դատավորը ևս ցանցային հասարակության մասն է:

Հանցանքի կատարման ընթացքին առցանց կամ հետառցանց հետևելու (դեպքն անմիջականորեն հայտնաբերելու) պայմաններում որևէ պաշտոնատար անձ կամ դատավարական փաստաթուղթ ի գործու չէ կասկածի տակ դնել այն օբյեկտիվ ճշմարտությունը, որը թվային հասարակության համար մակրոմակարդակում բացահայտված է: Օրինակ՝ որևէ քննիչ կամ դատավոր չի կարող հայ հասարակությանը համոզել, որ 2018թ. հեղափոխության ժամանակ ռադիոտուն ներխուժելը հակաիրավական (արգելված) արարք չէ կամ հանցակազմի հատկանիշներ չի պարունակում. ցանցային հասարակության համար օբյեկտիվ ճշմարտությունը բացահայտված է եղել այն պահից, երբ նա առցանց ականատես է եղել ռադիոտուն բռնությամբ ներխուժելու ընթացքին, ուստի հանցակազմի բացակայության հիմքով քրեական վարույթը կարճելու մասին դատավարական որոշումը հետմոդեռնիստական ոճի հեզնանք է իրականության հանդեպ: Այս պարագայում քրեական վարույթը պետք է կարճվեր ոչ թե հանցակազմի բացակայության ռեաբիլիտացիոն հիմքով, այլ՝ ոչ ռեաբիլիտացիոն հիմքով:

Միևնույն ժամանակ, այս ամենում նկատվում է պարադոքս, քանի որ ցանցային հասարակության կողմից հանցանքի կատարմանն առցանց կամ հետառցանց հետևելու և օբյեկտիվ ճշմարտությունը բացահայտելու (անմիջականորեն հայտնաբերելու) մասին դատողությունը ոչ թե հիմնավորում է դատարանի կողմից օբյեկտիվ ճշմարտությունը բացահայտելու հնարավորությունը, այլ իրականում հերքում է դա. չէ՞ որ վերը նշվածով ստացվում է, որ ցանցային հասարակության համար մակրոմակարդակում օբյեկտիվ ճշմարտությունը արդեն իսկ բացահայտված է, իսկ դատարանը չի կարող բացահայտել մի բան, որն արդեն իսկ բացահայտված է: Այս իրավիճակում դատարանը միկրոմակարդակում պարզապես հստակեցնում է դեպքի մանրամասները, այնուհետև՝ դրանք իրավաբանորեն ձևակերպում:

Նկարագրված իրավիճակում ցանցային հասարակությունը, կարծես, զբաղեցնում է դատարանի տեղը. հանցավոր արարքի կատարման ընթացքին առցանց կամ հետառցանց ականատես ցանցային հասարակությունը օբյեկտիվ ճշմարտության բացահայտման հարցով փաստացի վերածվում է դատարանի սուբստիտուտի²³ (այս

²² Տե՛ս **Боннер А.Т.** «Аудио- и видеозаписи как доказательство в гражданском и арбитражном процессе» // Законодательство, 2008. № 3, էջ 83-84, **Մեղրյան Ս.** «Ապացուցումը և ապացույցները Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարությունում»: Եր.: Արդարադատության ակադեմիա, 2020, էջ 254:

²³ Լատիներեն՝ substitutio - փոխարինում:

պարադոքսն առնչվում է ցանցային հասարակությունում ժամանակի և տարածության փոփոխության վերաբերյալ փիլիսոփայական բարդ հարցերին, որոնք պետք է թողնել ապագայի քննարկմանը):

Մետամոդեռնի արդարադատությունը տատանվում է օբյեկտիվ և ձևական ճշմարտությունների միջև, ուստի ճոճանակաձև այս տատանման ընտրությունը կարող է կանգնել ոչ միայն օբյեկտիվ, այլ նաև ձևական ճշմարտության վրա, օրինակ՝ հանցագործության դեպքի տեսաձայնագրման բացակայության պայմաններում, եթե մեղադրյալն ընդունել է մեղքը, որի արդյունքում իրականացվում է պարզեցված վարույթ, ապա այս պարագայում գործ ունենք ձևական ճշմարտության հետ: Այս դեպքում ճշմարիտ պետք է համարել այն պատմությունը, որը նկարագրել է դատավորը իր դատավճռում:

Այնուամենայնիվ, մետամոդեռնի արդարադատությունում, որտեղ ցանցային հասարակությունն առավել հաճախ է հնարավորություն ունենանում առցանց կամ հետառցանց հետևելու հանցանքի կատարման ընթացքին, ճոճանակաձև տատանումն առավել հաճախ է ընտրելու մոդեռնի օբյեկտիվ ճշմարտությունը:

Իսկ ինչ անել, եթե ցանցային հասարակությունն առցանց կամ հետառցանց հետևել է հանցանքի կատարմանը, սակայն հանցագործության կատարման ընթացքի տեսաձայնագրությունը (կրիչը), որպես ապացույց, վարույթն իրականացնող մարմինը ձեռք է բերել օրենքով սահմանված կարգի էական խախտմամբ: Այս պարագայում ապացույցների թույլատրելիության ինստիտուտն արդյո՞ք կենսունակ է, արդյո՞ք նա կարող է շարունակելու կատարելու իր ավանդական գործառնությունը:

4. Տատանումներն ապացույցի թույլատրելիության որոշելիս և ցանցային ակտիվիզմի ազդեցությունը

4.1. Ապացույցի թույլատրելիությունը մոդեռնի և հետմոդեռնի ժամանակաշրջանում

Ապացույցի թույլատրելիությունը ոչ բոլոր ժամանակներում է անվերապահորեն ճանաչվել որպես ապացույցի ինքնուրույն հատկանիշ, այն առավելապես հետմոդեռնի արդարադատության ինստիտուտ է: Մոդեռնի ժամանակաշրջանում ապացույցի թույլատրելիությունը որոշվել է վերաբերելիությամբ: Այսպես՝ Ա. Վիշինսկին նշում էր, որ որպես ապացույց թույլատրելի են գործի համար նշանակություն ունեցող բոլոր հանգամանքները²⁴: Նման մոտեցմամբ, ըստ էության, մերժվում էր ապացույցի թույլատրելիության հատկանիշը, քանի որ, անկախ ապացույցի ձեռքբերման եղանակի օրինականությունից, այն թույլատրելի էր, եթե վերաբերելի էր: Մոդեռնի ժամանակաշրջանի ապացույցի թույլատրելիությունն ըստ էության ապացույցի վերաբերելիությունն էր:

Այն, որ ապացույցի թույլատրելիության կանոնն առավելապես հետմոդեռնի արդարադատության հատկանիշ է, ապացուցվում է նաև տարբեր երկրների պրակտիկայում (օրինակ՝ ԱՄՆ-ի, Կանադայի, Իռլանդիայի քրեական դատավարությունում ապացույցի թույլատրելիությունը ճանաչվում է որպես ապացույցի

²⁴ См. у **Вышинский А.Я.** «Теория судебных доказательств в советском праве». М.: 1941, էջ 153:

հատկանիշ, սակայն դա ոչ բոլոր ժամանակներում է այդպես եղել²⁵: Անգլիական իրավունքում առայսօր ապացույցը թույլատրելի ճանաչելու հիմնական չափանիշը ոչ թե այն ձեռք բերելիս օրենքի խիստ պահպանումն է, այլ նրա անմիջական ունակությունն է՝ ապացուցելու դատարանում հաստատման ենթակա հանգամանքները²⁶: Հետխորհրդային պետություններում ապացույցի թույլատրելիության ինստիտուտը դոկտրինալ լայն ճանաչում և գործնական նշանակություն ստացավ 1990 ականներից հետո:

Մետամոդեռնի իրավաբանը կրկին տատանվում է մոդեռնի ապացույցի վերաբերելիության-թույլատրելիության և հետմոդեռնի ապացույցի թույլատրելիության միջև: Թեև քրեական արդարադատության արժեհամակարգում ապացույցի թույլատրելիության ինստիտուտին մշտապես հատկացրել ենք պատվավոր տեղ, սակայն այսօր տատանվում են այն հարցում, թե արդյոք կարել է հանցագործության կտարման տեսաձայնագրությունը, որով հասարակությունն առցանց կամ հետառցանց հետևել է հանցանքի կատարմանը, ճանաչել անթույլատրելի, եթե այն ձեռք է բերվել մարդու հիմնական իրավունքների խախտմամբ:

4.2. Ցանցային ակտիվիզմը և դատավորի ինտերպասիվությունը

Ինչպես նշվեց, ցանցային հասարակությունն առցանց կամ հետառցանց կարող է անմիջականորեն հետևել հանցանքի կատարմանը, որի արդյունքում այդ հասարակությունը համացանցում կազմակերպում է ակտիվ քննարկումներ (ցանցային ակտիվիզմ)²⁷: Նման քննարկումներ տեղի են ունենում հատկապես մարդու դեմ ուղղված հանցագործությունների պարագայում, որտեղ ուժգին է նաև էմոցիանալ գործոնը: Օրինակ՝ հայ հասարակությանը ցնցել էր այն դեպքը, երբ նա հետառցանց, այսինքն՝ համացանցում հայտնված տեսաձայնագրությունը դիտելու միջոցով, անմիջականորեն ականատես եղավ, թե ինչպես է մայրը իր անչափահաս դստեր նկատմամբ կատարում տարաբնույթ անպարկեշտ (սեռական բնույթի) գործողություններ: Ընդ որում, մայրը անչափահասի նկատմամբ կատարած իր գործողությունները տեսաձայնագրել էր՝ այն հետագայում վաճառելու և շահույթ ստանալու նպատակով: Ցանցային հասարակությունը, համացանցում հայտնված տեսաձայնագրությունը դիտելու արդյունքում, նախաձեռնել էր ակտիվ քննարկումներ:

Դժվար է կլինի անկեղծության հարթակում հերքել այն, որ ցանցային ակտիվիզմն ահռելի ազդեցություն ունի դատավորի վարքագծի վրա: Ապացուցման կարիք չունի նաև այն, որ դատավորի վարքի վրա մետամոդեռնի ցանցային ակտիվիզմի ներգործության ինտենսիվությունը էապես գերազանցում է հետմոդեռնի թղթային ԶԼՄ-ի ազդեցությանը:

²⁵ Սյու մափին տե՛ս **Барабанов П.К.** «Уголовный процесс в США». М.: Изд. «Спутник +», 2023, էջ 295, Недопустимость доказательств в уголовном процессе Российской Федерации и государств англо-американской и романо-германской правовых семей: учебное пособие. Под науч. ред. А.Г. Волеводза. М.: Изд. Прометей, 2022, էջ 69:

²⁶ Տե՛ս **Головко Л.В., Гущенко К.Ф., Филимонов Б.А.** «Уголовный процесс зарубежных стран: учебное пособие. 2-е изд., доп. и испр.», М.: Зерцало-М, 2002, էջ 86:

²⁷ Ցանցային ակտիվիզմն ունակ է նաև աղճատել իրականությունը: Հասկանալի է, որ օրյեկտիվ ճշմարտությունը հաստատվում է ոչ թե ցանցային ակտիվիզմով, այլ հանցանքի ընթացքի տեսաձայնագրությամբ, եթե հիմքեր չկա կասկածելու, որ այդ տեսաձայնագրությունը արհեստական բանականության կողմից կեղծված է:

Դատավորի և փաստաբանի վարքագծի նման խորքային փոփոխությունների պատճառը, ամենայն հավանականությամբ, իրենց անձի նկատմամբ դրսևորված ցանցային ակտիվիզմն է: Եթե այդ ակտիվիզմը կարող է ազդել դատավորի՝ այս տեսակի վարքագծի վրա, ապա հարց է ծագում, թե դատավորն արդյոք ունակ է հանցանքի ընթացքն ամրագրած տեսաձայնագրության վերաբերյալ իրավական որոշումներ կայացնելիս, օրինակ՝ տեսաձայնագրության թույլատրելիության հարցը քննարկելիս, հակադրվել տեսաձայնագրության մեջ արտացոլված իրականությանը և դրա շուրջ ընթացող ցանցային ակտիվիզմին:

Սույն հարցի պատասխանը քննարկենք մոր կողմից դատեր նկատմամբ անպարկեշտ գործողություններ կատարելու վերը նշված դեպքով: Ենթադրենք, որ մոր կատարած տեսաձայնագրությունը ձեռք է բերվել բնակարանի անձեռնմխելիության իրավունքի խախտմամբ, և այն հանդիսանում է մեղադրանքի միակ ապացույցը, այսինքն՝ եթե այդ տեսաձայնագրությունը ճանաչվի անթույլատրելի, ապա դատարանը պետք է կայացնի արդարացման դատավճիռ: Այս տեսաձայնագրությունն արդյո՞ք կճանաչվի անթույլատրելի և արդյո՞ք կկայացվի արդարացման դատավճիռ:

Այդ տեսաձայնագրության՝ որպես ապացույցի թույլատրելիության որոշման հարցում մեր տատանումը պայմանավորված է երկու հանգամանքով: Մի կողմից՝ իրավաբանների համար անվիճելի է, որ բնակարանի անձեռնմխելիության իրավունքի աղաղակող խախտմամբ ձեռք բերված տվյալները պետք է ճանաչվեն անթույլատրելի: Մյուս կողմից՝ հանգիստ չի թողնում այն հարցը, թե մետամոդեռնի արդարադատության և ցանցային հասարակության պայմաններում նույնիսկ բնակարանի անձեռնմխելիության իրավունքի խախտմամբ ձեռք բերված տեսաձայնագրությունն անթույլատրելի ճանաչելու մասին դասական մոտեցումն արդյո՞ք կարող է համարվել որպես անվերապահ կանոն:

Տնական մտորումների և էմպիրիկ ուսումնասիրության արդյունքում այլևս չենք կարող միանշանակել պնդել, որ նույնիսկ բնակարանի անձեռնմխելիության իրավունքի խախտմամբ ձեռք բերված տեսաձայնագրությունը ցանցային հասարակությունում և մետամոդեռնի արդարադատությունում անվերապահորեն պետք է չունենա որևէ դատավարական նշանակություն:

Եթե ցանցային հասարակությունը հետառցանց (համացանցում հայտնված այդ տեսաձայնագրությունը դիտելով) հետևել է երեխայի նկատմամբ մոր կատարած անպարկեշտ գործողություններին (անմիջականորեն հայտնաբերել է դրանք), ապա դա նշանակում է, որ այդ հասարակության համար օբյեկտիվ ճշմարտությունը մակրոմակարդակում արդեն իսկ բացահայտված է, ուստի ցանցային հասարակությունը տեսաձայնագրված փաստերի մասով փաստացի փոխարինում է դատավորին՝ վերածվելով դատարանի սուբստիտուտի, իսկ դատավորն օբյեկտիվորեն հայտնվում է «ինտերպասիվության (Interpassivity) վիճակում»²⁸: Սա նշանակում է, որ, քննարկվող

²⁸ Տե՛ս **Мазоренко Д. А.** «Автомодернизм после постмодерна. Как выглядит «Социальное» в цифровую эпоху?» // *Galactica Media: Journal of Media Studies*. 2019. №2, էջ 209, **Samuels R.** «Auto modernity after post-modernism: Autonomy and Automation. In Culture, Technology, and Education. Digital Youth, Innovation, and the Unexpected». M: The MIT Press. 2007.

իրավիճակում, դատական ակտը թեև կայացնում է դատավորը, սակայն այդ ժամանակ մեխանիզմներն աշխատում է միայն դատավորի ձեռքը, իսկ տեսաձայնագրությամբ ամրագրված փաստական տվյալների մասով նրա համոզմունքը կանխորոշված է հանցանքի կատարմանն առցանց կամ հետառցանց ակատանես ցանցային հասարակության կողմից:

Իրավաբանի համար այս դատողությունը կթվա տարօրինակ, սակայն այս հարցում պետք է գերակայի մետամոդեռնի անկեղծությունը: Եթե ցանցային ակտիվիզմը կարող է ստիպել դատավորին նույնիսկ վիրահատական միջոցներով արմատապես վերափոխել իր արտաքինը, ապա քիչ հավանական է, որ այդ նույն դատավորն ունակ է կայացնելու մի որոշում, որը հակադրվում է տեսաձայնագրությամբ ամրագրված իրականությանը և դրան ակատանես ցանցային հասարակության դիրքորոշմանը: Այլ կերպ ասած՝ քիչ հավանական է, որ դատավորը կարող է անթույլատրելի ճանաչել մեղադրանքի միակ ապացույցը և կարող է կայացնել արդարացման դատավճիռ:

Հայաստանի տարբեր ԲՈՒՀ-երի իրավաբանական ֆակուլտետների 2-րդ կուրսից բարձր ուսանողների շրջանակներում անցկացվել է հարցում՝ հետևյալ բովանդակությամբ. բնակարանի անձեռնմխելիության իրավունքի խախտմամբ ձեռք բերված տեսաձայնագրությունը, որը մեղադրանքի միակ ապացույցն է, արդյո՞ք կհամարեք թույլատրելի ապացույց: Հարցմանը մասնակցել է 125 ուսանող, որոնցից 73.6 % (92 ուսանող) պատասխանել է, որ այո, այդ տեսաձայնագրությունը կահամարի թույլատրելի ապացույց, իսկ 26.4 % (33 ուսանող) պատասխանել է, որ այն չի համարի թույլատրելի: Հարցման են ենթարկվել ուսանողները, քանի որ՝ 1) նրանք նոր ժամանակների ցանցային հասարակության ակտիվ մասնակիցներ են, 2) տիրապետում են սահմանադրական և քրեադատավարական իրավունքի ճյուղերին, 3) նրանց մտածողության մեջ դեռևս չի գերակայում ֆորմալացված մտածողությունը:

Այսպիսով՝ հանցանքի կատարման ընթացքի տեսաձայնագրությունը, եթե նույնիսկ ձեռք է բերվել օրենքի էական խախտմամբ, ցանցային հասարակությունում այն պետք է պահպանի իր դատավարական նշանակությունը, սակայն պետք է փնտրել այն իրավական ձևեր, որի շրջանակներում մի կողմից՝ դատական կարգով կվերահաստատվի ցանցային հասարակության կողմից անմիջականորեն բացահայտված օբյեկտիվ ճշմարտությունը, մյուս կողմից՝ ապացույցի թույլատրելիության ինստիտուտին էական վնաս չի պատճառվի:

4.3. Օրենքի էական խախտմամբ ձեռք բերված տեսաձայնագրության դատավարական նշանակությունը

Ցանցային հասարակությունում հանցանքի կատարման ընթացքն ամրագրող տեսաձայնագրությունը, որը ձեռք է բերվել օրենքի էական խախտմամբ, կարող է պահպանել դատավարական արժեքը հետևյալ ճանապարհներից որևէ մեկով:

Տարբերակ առաջին. առանց դատարանի որոշմամբ բնակարանի խուզարկության արդյունքում ձեռք բերված տեսաձայնագրությունը ճանաչվում է անթույլատրելի, սակայն քննիչը դրանից հետո այլ քննչական գործողությունների միջոցով ձեռք է բերում համացանցում ներբեռնված նույն տեսաձայնագրությունը և դա է ճանաչում որպես իրեղեն ապացույց:

Այս տարբերակը թեև գործնական առումով պարզ է, նույնիսկ արդյունավետ է, սակայն այդ տարբերակի դեմ կարելի է բերել երկու փաստարկ, որոնք հարցի լուծման այս տարբերակի կենսունակությունը զրոյացնում են: 1) Այս տարբերակն ըստ էության ապացույցի թույլատրելիության ինստիտուտը քողարկված ձևով շրջանցելու մասին է, ինչն էապես արժեզրկում է թույլատրելիության ինստիտուտը: 2) Հանցանքի ընթացքի տեսաձայնագրությունը իրեղեն ապացույց է, իսկ իրեղեն ապացույցներն անփոխարինելի են: Եթե տեսաձայնագրությունը, որպես իրեղեն ապացույց, անթույլատրելի է, ապա այն չի կարող փոխարինվել տեսաձայնագրության պատճեններով:

Տարբերակ երկրորդ՝ մակրոմակարդում հանցագործության դեպքի տեսաձայնագրությունը (կրիչը) դուրս է բերվում ապացույցների թույլատրելիության ինստիտուտի գործողության տիրույթից և նույնիսկ առանց դատարանի որոշմամբ բնակարանի խուզարկության միջոցով ձեռք բերված ապացույցը ճանաչվում է օգտագործման համար պիտանի: Այս մոտեցումը վտանգավոր է, քանի որ պարարտ հող է ստեղծում մոդեռնի արդարադատությանը ներհատուկ «թույլատրելի է այն ապացույցը, որը վերաբերելի է» կոնցեպտը վերակենդանացնելու համար:

Այս տարբերակը սկզբունքորեն անընդունելի է, քանի որ այն հակասում է քրեադատավարական արժեհամակարգում պատվավոր տեղ զբաղեցնող ապացույցի թույլատրելիության ինստիտուտի էությանը: Ապացույցի թույլատրելիության հատկանիշը կորցնում է իր ինքնավարությունը և այն որոշվում է ապացույցի վերաբերելիությամբ:

Տարբերակ երրորդ՝ տեսաձայնագրված հանցանքի դեպքը, որը դարձել է ցանցային ակտիվության առարկա, ճանաչվում է որպես հանրահայտ (կամ ակնհայտ) փաստ և դուրս է բերվում ապացուցման առարկայից: Այս պարագայում տեսաձայնագրված հանցանքի փաստն համարվում է ապացուցված, այն այլևս ապացուցման կարիք չունի: Այս պարագայում տեսաձայնագրության կրիչը հանրահայտ փաստի մասով չի ճանաչվում որպես իրեղեն ապացույց, ուստի նրա նկատմամբ ապացույցի թույլատրելիության կանոնները կիրառելի չեն:

Ի դեպ, Շվեյցարիայի քր. դատ. օր.-ի 139-րդ հոդվածի իմաստով ապացուցումը չի իրականացվում այն փաստերի վերաբերյալ, որոնք ակնհայտ են, կամ քրեական վարույթի մարմիններին հայտնի են: Հետևապես դրանք դուրս են բերվում ապացուցման առարկայից²⁹: Ռուսական քրեական դատավարության տեսության մեջ, բացի հանրահայտ փաստերից, առանձնացվում են նաև ակնհայտ փաստերը, որոնք ևս ապացուցման կարիք չունեն³⁰:

Ակնհայտ փաստերը վարույթն իրականացնող մարմինը հայտնաբերում է անմիջականորեն՝ այս կամ այն հանգամանքը անմիջականորեն դիտարկելիս: Օրինակ՝ Կ. Կալինովսկին դատական նիստի ժամանակ դատավորի կողմից մեղադրյալի հակաիրավական վարքագծի անմիջական դիտարկումը համարում է ապացուցման ինքնուրույն միջոց՝ այն անվանելով «անմիջականորեն հայտնաբերում», իսկ անմիջականորեն հայտնաբերված փաստը որակել է որպես հանրահայտ փաստի

²⁹ Տե՛ս **Трефилов А. А.** «Уголовный процесс зарубежных стран. Том 1 (15)». М.: Изд. НИПКЦ Восход-А. 2016, էջ 290:

³⁰ Տե՛ս **Селина Е.В.** «Доказывание с использованием специальных познаний по уголовным делам». М.: Изд. Юрлитинформ, 2003, էջ 44-45:

տարատեսակ³¹: Այս իրավիճակում դատավորը, մեղադրյալին նիստերի դահլիճից հեռացնելու մասին որոշում կայացնելիս մեղադրյալի հակաիրավական վարքագծի վերաբերյալ ապացույցներ չի հավաքում (ապացուցում չի իրականացնում), այլ օգտագործում է մեղադրյալի հակաիրավական վարքագծի հանրահայտ փաստը:

Նույն տրամաբանությամբ, ցանցային հասարակությունը և դատավորը, որպես այդ հասարակության մաս, առցանց կամ հետ առանց հետևելով հանցանքի կատարման ընթացքին անմիջականորեն հայտնաբերում է հանցավոր վարքագիծը, որը կարող է որակվել որպես հանրահայտ (ակնհայտ) փաստ: Բոլոր դեպքերում, «անմիջականորեն հայտնաբերումը» որպես ապացուցման միջոց ճանաչելու, և դրա արդյունքները՝ որպես հանրահայտ փաստ ճանաչելու հարցերը պետք է դառնան գիտության քննարկման առարկան: Հատկապես պետք է պարզել այս իրավիճակում դատավարության սկզբունքների, մասնավորապես՝ անմեղության կանխավարկածի սկզբունքի «գործունակության» հարցը:

Եթե տեսաձայնագրության մեջ արտացոլված հանցավոր վարքագիծը ճանաչում ենք որպես հանրային փաստ, ապա այդ տեսաձայնագրությունը թեև դատարանում չի օգտագործվում որպես ապացույց, սակայն կարող է օգտագործվել այլ դատավարական նպատակներով, օրինակ, այն կարող է օգտագործվել հարցաքննությունների ժամանակ, երբ անհրաժեշտ է այն ցուցադրելով հստակեցնելու կամ վիճարկելու դատարանում տրված ցուցմունքները կամ կարող է օգտագործվել փորձաքննության կատարման ժամանակ՝ որպես նյութ: Ցանցային ակտիվության առարկան կազմող դեպքը հանրահայտ փաստ ճանաչելու դեպքում հանցանքի կատարման ընթացքի տեսաձայնագրությունը չի համարվելու մակրոմակարդակում դեպքը հիմնավորող մեղադրական ապացույց:

Այսպիսով՝ մետամոդեռնի արդարադատության ժամանակ, տեսաձայնագրված հանցանքի դեպքը, որ դարձել է ցանցային ակտիվիզմի առարկա, պետք է համարել է ապացուցման կարիք չունեցող հանրահայտ փաստ:

Եզրակացություններ

Մետամոդեռնը միավորում է մոդեռնի և հետմոդեռնի արդարադատության գերակայությունները, սակայն դա դասական իմաստով միավորում չէ, այլ գերակայությունների միջև ճոճանակաձև տատանումներ է: Մետամոդեռնի ժամանակ մոդեռնի և հետմոդեռնի արժեքների միջև տատանումները և աշխարհընկալման փոփոխությունները չեն կարող չազդել հասարակական-քաղաքական համակարգում կարևոր տեղ զբաղեցնող արդարադատության վերաիմաստավորման վրա:

³¹ St 'u Калиновский К. Б. «Бремя доказывания в уголовном процессе: динамический или статический подходы» // Юридическая истина в уголовном праве и процессе: сборник статей по материалам Всероссийской научно-практической конференции 16-17 марта 2018 г. СПб., 2018, էջ 98:

ПРАВОСУДИЕ МЕТАМОДЕРНА: КОЛЕБАНИЯ МЕЖДУ ПРИОРИТЕТАМИ МОДЕРНА И ПОСТМОДЕРНА

ГАМБАРЯН АРТУР

Заведующий кафедры теории права и конституционного права
Российско-Армянского университета,
профессор Академии государственного управления Республики Армения,
доктор юридических наук, профессор, заслуженный юрист РА

Аннотация. В статье автор представляет колебания приоритетов между модерном и постмодерном, в рамках которого выявляет общую характеристику модерна, постмодерна и метамодерна, затем, основываясь на нижеприведенных трех вопросах, анализирует присущие метамодерну маятникообразные колебания.

Автор отмечает, что при принятии решений юрист метамодерна то колеблется в сторону модерна, пытаясь быть честным, то возвращается к постмодерну, вновь выбирая иронию и цинизм (1), или склоняется в сторону модерна, выбирая объективную истину, после чего возвращается к постмодерну и толкует о формальной истине(2), либо же колеблется в сторону модернистского понимания допустимости доказательств, затем возвращается к постмодерну и толкует о допустимости доказательств, приобретенных нарушением прав человека(3).

Автор считает, что в условиях цифровизации современного общества, последнее, посредством цифровых технологий волей-неволей становится свидетелем факта совершения преступления, в результате которого трансформируется и понимание принципа допустимости доказательств судом, допуская отклонения и исключения от него.

Автором использованы различные научно-исследовательские методы, а, в частности, метод социологического исследования, в лице представленного в статье опроса.

Ключевые слова: модерн, постмодерн, метамодерн, *contra legem*, цифровое общество, истина, колеблющийся юрист.

METAMODERN JUSTICE: OSCILLATING BETWEEN MODERN AND POSTMODERN PRIORITIES

GHAMBARYAN ARTUR

*Chairman of the Department of Theory of Law and Constitutional Law
of Russian Armenian University, Full Professor of the State Administration
Academy of the Republic of Armenia, Doctor of Law, Full Professor,
Honored lawyer of the RA*

Annotation. *In the article the author intends to present the oscillation of priorities between modernity and postmodernity, for the purpose of which he identifies the general characteristic of modernity, postmodernity and metamodernity, then, based on the three questions below, analyses the inherent qualitative oscillations of metamodernity.*

The author observes that the metamodern lawyer, when making decisions, either swings towards modernity and tries to be honest, then returns to postmodernity, again choosing irony and cynicism (1), or swings towards modernity and chooses objective truth, then returns to postmodernity and talks about formal truth(2), or swings towards a modernist understanding of the admissibility of evidence, then returns to postmodernity and talks about the admissibility of evidence acquired by human rights violations (3).

The author believes that in the conditions of digitalisation of modern society, when society, through digital technologies willy-nilly witnesses the fact of committing a crime, as a result of which the understanding of the principle of admissibility of evidence by the court is also transformed, allowing deviations and exceptions from it.

The author has used various research methods and, in particular, the method of sociological research, represented by the survey presented in the article.

Keywords. *modernity, postmodernity, metamodernity, contra legem, digital society, truth, oscillating lawyer.*

ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԱՆՋԱՏՄԱՆ ՄԿՋԲՈՒՆՔԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԴԻԱԼԵԿՏԻԿԱՆ

Մանուկյան Մարտին

*Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի
Հանրային պաշտպանի գրասենյակի մոնիտորինգի պատասխանատու,
Երևանի «Գլաձոր» համալսարանի իրավագիտության ամբիոնի դասախոս,
իրավաբանական գիտությունների թեկնածու
DOI: 10.63925/18294847-2025.19op-07*

Ամփոփագիր: Իշխանությունների տարանջատումն ինքնանպատակ չէ: Այն միջոց է, որով հնարավոր է դառնում ապահովելու իշխանության և կառավարման արդյունավետ գործունեությունը, կանխելու իշխանության կենտրոնացումը մեկ անձի կամ մի բուր մարդկանց ձեռքում, ինչպես նաև ապահովելու իշխանության սուբյեկտների միջև մրցակցության ինստիտուցիոնալացումը: Այսօր, երբ Հայաստանում հաստատվել է կառավարման խորհրդարանական մոդելը, ազգային օրակարգում պետք է անպայման դրված լինի օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների լեգիտիմության ճգնաժամի հաղթահարման հիմնախնդիրը: Ըստ այդմ՝ կարևոր է համարվում այն, որ անհրաժեշտ է հետևողականորեն ամրապնդել զսպումների և հակակաշիռների համակարգը պետական իշխանության թևերի միջև, բարձրացնել դրանց փոխգործակցության արդյունավետությունը, արդիականացնել գործադիր իշխանության կառուցվածքը, ապահովել օրենքի գերակայությունը պետական և հասարակական կարգի բոլոր ոլորտներում՝ առաջնորդվելով այն սկզբունքով, որ օրենքը վեր է ցանկացած հեղինակությունից: Հռչակվում առաջադրվել է այն գաղափարը, ըստ որի՝ Հայաստանում պետք է ներդնել իշխանության թևերի համագործակցության վրա հիմնված և արդյունավետության, թափանցիկության, հասարակությանը պարբերաբար հաշվետվության սկզբունքներով գործող պետական կառավարման ազգային նոր մոդել՝ իշխանության փոխելիության, ազատ ընտրությունների անցկացման կառուցակարգերը կատարելագործելու համար:

Հիմնաբառեր. իշխանությունների տարանջատում, օրենսդիր գործադիր, դատական, իշխանության կենտրոնացում, զսպումների և հակակաշիռների համակարգ, պետական իշխանություն, ինստիտուցիոնալացում, կառավարման խորհրդարանական ձև, իշխանության թևեր, Կոնգրես, ընտրիչների կոլեգիա, սենատորներ, Նախագահ;

Խորհրդարանի իրական դերը, պառլամենտարիզմի փաստական ազդեցությունը ժողովրդավարական համակարգերի քաղաքական կյանքի վրա կախված է յուրաքանչյուր երկրում սահմանադրորեն հաստատված իշխանությունների տարանջատման կարգից: Նրա առաջացումը կապում են 17-րդ դարում Անգլիայում ստեղծված ազատական քաղաքական-իրավական տեսությունների և ամենից առաջ

Ջոն Լոքի անվան հետ: Վերջինիս մեկնաբանմամբ՝ որպեսզի պետությունը՝ իբրև քաղաքական իշխանություն, չվերածվի բացարձակ բռնակալական ուժի, չկենտրոնանա մեկ անձի կամ մի բուռ մարդկանց ձեռքում, անհրաժեշտ է իրականացնել միասնական պետական իշխանության տարանջատում՝ օրենսդիր, գործադիր և դաշնային իշխանությունների:¹ Ընդ որում՝ դատական իշխանությունը Լոքն անհրավացիորեն ներառում էր գործադիր մարմինների համակարգի մեջ, ինչը հետագայում շտկվեց ֆրանսիացի նշանավոր իրավագետ և փիլիսոփա Շառլ-Լուի Մոնտեսքյոի կողմից: Ըստ Մոնտեսքյոի՝ իրավունքի գերակայությունը հնարավոր է ապահովել միայն իշխանությունների տարանջատման միջոցով անյպես, որ «նրանք հնարավորություն ունենան զսպել միմյանց»:

Ազատ պետությունը, ըստ Մոնտեսքյոի իրավափիլիսոփայական ուսմունքի, տեսականորեն պետք է հիմնվի իշխանությունների տարանջատման և փոխադարձ հակակշռման, հասարակության տարբեր սոցիալական խավերի միջև գերագույն իշխանության բաժանման սկզբունքների վրա: Իշխանությունների տարանջատումը քննարկող տեսության մեջ ոչ միայն ենթադրում է աշխատանքի քաղաքական բաժանումը, այլև իշխանության բաժանումը տարբեր սոցիալական խավերի միջև, որը կոչված է արտահայտելու նրանց ձևավորման հարաբերակցությունը:

Համաձայն Մոնտեսքյոի սահմանադրական նախագծի՝ օրենսդիր իշխանությունը «Հանդիսանում է միայն պետության ընդհանուր կամքի արտահայտությունը...»:² Նրա հիմնական քաղաքական առաքելությունն է՝ ձևավորել իրավունքը պետության պոզիտիվ (դրական) օրենքների տեսքով, որոնք պարտադիր են բոլոր քաղաքացիների համար: Ըստ Մոնտեսքյոի, ամենից բաղձալին այն է, երբ օրենսդիր իշխանությունը պատկանում է ողջ ժողովրդին: Սակայն այնպիսի պետություններում, ինչպիսին Ֆրանսիան է, դա անհնարին է իրականացնել՝ պետության տարածքի մեծության և տարբեր սոցիալական խմբերի, այդ թվում նաև՝ ազնվականության առկայության պատճառով: Այդ իսկ պատճառով օրենսդիր իշխանությունը նպատակահարմար է վերապահել ժողովրդի ներկայացուցիչներին և ազնվականության ժողովներին: Օրենսդիր մարմնի պալատները (ներկայացուցչական ժողով և օրենսդիր կորպուս) իրենց նիստերն անցկացնում են իրարից անջատ, իսկ օրենքներն ընդունում են միայն փոխադարձ համաձայնությամբ: Օրենսդիր ժողովը ոչ միայն հրապարակում է օրենքներ, այլև հսկողություն է իրականացնում թագավորի և նախարարների կողմից դրանց իրականացման նկատմամբ: Օրինախախտման համար օրենսդիր ժողովը կարող է նախարարներին ենթարկել պատասխանատվության: Իր հերթին գործադիր իշխանությունը՝ հանձնիս թագավորի, զսպում և հակակշռում է օրենսդիր իշխանությանը հնարավոր կամայականություններից՝ օժտված լինելով արգելք դնելու իրավունքով օրենսդիր ժողովի որոշումների վրա, ինչպես նաև որոշելով նրա

¹ St' u Локк Дж., Избранные философские произведения.-М.,т.2, 1960, էջ 115:

² St' u Монтескье III., Избранные произведения.М.,1955, էջ 292:

աշխատանքի կանոնակարգը և արձակելով այն: Միապետի անձնավորությունը համարվում է սրբազան:

Գործադիր իշխանությունն ազատ պետության մեջ նախատեսված է օրենսդիր իշխանության կողմից ընդունված օրենքների կիրառման համար: Հենց այս պատճառով մեծ իրավագետ-փիլիսոփան արդարացիորեն կարծում էր, որ «գործադիր իշխանությունն ինքնասահմանափակ է՝ իր իսկ էությամբ»:³ Դրանով ամենից առաջ օժտված է միապետը, քանի որ «կառավարման այս կողմը, որը համարյա միշտ պահանջում է արագ գործելակերպ, ավելի լավ կիրականացվի մեկ անձի կամ մեկ մարմնի կողմից, քան թե շատերի»:⁴

Գործադիր իշխանություն կարող են իրականացնել նաև այլ անձինք՝ բացառությամբ օրենսդիր ժողովի անդամների, ինչն անհապաղ կհանգեցնի ազատության կորստի:

Օրենսդիր և գործադիր իշխանությունների համագործակցությունը երաշխավորում է իրավունքի իրական լինելը, որը, վերջին հաշվով, արտահայտում է տարբեր սոցիալական խավերի և ուժերի բախվող շահերի համաձայնությունը:

Դատական իշխանությունը «պատժում է հանցագործներին և լուծում մասնավոր անձանց խախտումները» այն ժամանակ, երբ մյուս երկուսը կարգավորում են պետության ընդհանուր գործերը: Այդ իսկ պատճառով՝ քաղաքացիների ազատությունը և անվտանգությունն ամենից առաջ կախված են դատական իշխանության ճշգրիտ և արդյունավետ աշխատանքից: Կարծես թե այս խոսքերն ասված են հետխորհրդային հասարակությունների, ներառյալ՝ Հայաստանի համար: Մոնտեսքյոն առաջարկում էր դատական իշխանությունը վերապահել ժողովրդից ընտրված անձանց, որոնք կհավաքվեն ըստ անհրաժեշտության՝ իրենց լիազորությունների իրականացման համար:⁵

Շ.Մոնտեսքյոի իշխանությունների տարանջատման տեսությունը ժամանակին մեծ դեր է խաղացել, քանի որ ինչ-որ չափով սահմանափակել է միապետի դատական և օրենսդիր իշխանությունը: Դրա հետ մեկտեղ, այդ տեսությունն ուներ էական թերություններ, քանի որ փաստացի այն բերեց պետական իշխանության միասնականության հիմնախախտմանը՝ գործադիր իշխանությունն անկախացրեց օրենսդիր մարմիններից, որը դարձավ անվերահսկելի, իսկ օրենսդիր մարմինները վերածեց մի կառույցի, որը կարող էր ընդունել օրենքներ, բայց իրավունք չուներ հետևել դրանց կատարմանը: Իշխանության առանձին ճյուղերի միջև պարբերաբար առաջանում էին դիմաբախումներ: Իշխանությունների տարանջատման տեսությունը ֆրանսիայի ականավոր իրավագետի և փիլիսոփայի **փոխգիշման տիպական օրինակ է:**

Իշխանությունների տարանջատման սկզբունքն առաջին անգամ կիրառվել է Ամերիկայի Միացյալ Նահանգներում: Միացյալ Նահանգների «հիմնադիր հայրերից» մեկը՝ Ալեքսանդր Համիլտոնը, համոզված էր, որ իշխանությունների տարանջատման

³ Տե՛ս նույն տեղում, էջ 296:

⁴ Տե՛ս նույն տեղում:

⁵ Տե՛ս **Азаркин Н.М.**, Из истории политической и правовой мысли. М., 1988, էջ 70:

հետևանքով ստեղծված զսպումներն ու հակակշիռները միանգամայն անհրաժեշտ են, քանզի մարդիկ եսապաշտ են և հանուն հասարակության բարօրության՝ պետք է հաղթահարեն իրենց ժլատությունն ու փառասիրությունը: Նշված հանգամանքները հաշվի առնելով, ընդգծում էր Համիլտոնը, ցանկացած սահմանադրություն կվերածվի դատարկահնչյուն սնապարծության⁶: Նրա գործընկեր Ջեյմս Մեդիսոնը ևս «Ֆեդերալիստ» հանդեսում հրապարակել է բազմաթիվ հոդվածներ՝ ամերիկյան սահմանադրության, հատկապես՝ իշխանությունների տարանջատման սկզբունքի կիրառման վերաբերյալ: Ըստ Մեդիսոնի՝ իշխանության երեք թևի բաժանման հիմնական դժվարությունը ոչ թե արգելքների և հակակշիռների սահմանումն է, որն անհրաժեշտ է իշխանությունների լիազորությունների հավասարակշռման համար, այլ այն, որ իշխանության լիազորությունները հավասար չեն բաժանվում, ինչը բխում է երկրի կառավարման ոլորտում աշխատանքի բաժանման առանձնահատկություններից և իշխանությունների երեք թևի սահմանազատման բարդությունից: *Մեդիսոնը նաև ԱՄՆ-ի սահմանադրության առաջին տասը լրացումների* (իրավունքների մասին բիլլի) *հեղինակն է*:⁷

Ժամանակակից տեսության մեջ և քաղաքական պրակտիկայում իշխանությունների բաժանման սկզբունքը միանշանակորեն չի ըմբռնվում և իրականացվում: Ոմանք, հետևելով Ամերիկայի «հիմնադիր հայրերին», այդ սկզբունքը համարում են ժողովրդավարության իրագործման անփոփոխ պայմանը: Ուրիշներն այդ սկզբունքը թերագնահատում են: Ըստ ամերիկացի քաղաքագետ Մ.Պարենտիի՝ հասարակության մեջ, որտեղ հարստությունը փոքրամասնության ձեռքում է, իշխանության բաժանումը պետության տարբեր թևերի միջև միշտ չէ, որ նշանակում է ժողովրդավարականացում, ավելի շուտ՝ ընհակառակը: Ամերիկայում այդ սկզբունքը (միջոցը) ուղղված է ժողովրդական հուզումների և դասակարգային կառուցվածքում անցանկալի փոփոխությունների կանխմանը: Ստացվում է, որ, մի կողմից, զսպումների և հակակշիռների ամերիկյան համակարգը թույլ չի տալիս, որ իշխանության որևէ թևը հաստատի իր մենաշնորհը, այլ խոսքերով՝ որևէ խումբ բռնատիրի պետական իշխանությունը, մյուս կողմից՝ շրջափակում է ժողովրդի մեծամասնության ազդեցությունն իշխանության վրա: «Հիմնադիր հայրերի» մտահղացմամբ՝ իշխանությունների բաժանման համակարգն օրենսդրական զսպումների և հակակշիռների ներմուծմամբ պետք է ստեղծի այնպիսի քաղաքական համակարգ, որը ժողովրդին կմեկուսացնի կառավարմանն անմիջական մասնակցությունից⁸:

Հնարավոր է, որ Մ.Պարենտիի այս գնահատականն ունի իր հիմնափաստարկները: Եվ այսուամենայնիվ, այդ սկզբունքն ուղղված է եղել պետության մեկ անձի կամ օլիգարխական խմբի կողմից իշխանության բռնատիրման դեմ: Այսօր այդ սկզբունքը

⁶ Տե՛ս Բեդերալիստ.-Մ., 1993, էջ 334-335:

⁷ Տե՛ս История политических учений (под ред. В.С.Нерсисянца), М., 2003, էջ 379-392:

⁸ Տե՛ս **Перенти М.**, Демократия для немногих, -М., 1990, էջ 268

քննադատում են նախնառաջ նրանք, ովքեր ձգտում են ավտորիտարիզմի կամ դրա արդարացման: Իշխանությունների տարանջատման ամերիկյան համակարգի կարևորագույն տարրերն են.

1. Պետական իշխանության բարձրագույն մարմինները ձևավորվում են տարբեր կերպ՝ ընտրվում են ուղղակի ընտրություններով՝ ըստ ընտրական օկրուգների, իսկ երկրի նախագահը՝ անուղղակի եղանակով, ընտրիչների կոլեգիայի կողմից, որոնց ընտրում են համընդհանուր ընտրություններում:

2. Պետական իշխանության յուրաքանչյուր մարմնի լիազորությունների ժամկետները տարբեր են. օրինակ՝ ներկայացուցիչների պալատի համար՝ երկու տարի, սենատորների համար՝ հինգ տարի, Նախագահի լիազորությունների ժամկետը՝ չորս տարի, Գերագույն դատարանի անդամները նշանակվում են ցմահ:

3. Իր գործունեության ոլորտում իշխանության յուրաքանչյուր թև չի օգտվում մենաշնորհային լիազորություններից: Այդ մեխանիզմն անվանում են զսպումների և հակակշիռների համակարգ: Այսպես, չնայած նրան, որ Նախագահն ունի միանգամայն լայն լիազորություններ, Կոնգրեսն իր կոմիտեների և հանձնաժողովի միջոցով իրականացնում է դաշնային վարչակազմի գործունեության նկատմամբ վերահսկողություն:

Իշխանությունների տարանջատման ամերիկյան համակարգը, ֆրանսիական որոշ հետազոտողների գնահատմամբ, խստորեն սահմանազծված չէ: Նախագահը մասնակցում է օրենսդրական գործունեությանը՝ օգտագործելով «վետո»-ի իրավունքը: Մյուս կողմից՝ Կոնգրեսը մասնակցում է գործադիր իշխանության գործունեությանը, քանի որ նշանակում է բաժրաստիճան ծառայողների և վավերացնում, հաստատում է պայմանագրեր: Բացի այդ, նա զբաղվում է դատական գործառնությով. Կոնգրեսին է վերապահված իմպիչպենտ (նախագահին պաշտոնաթող անելու) իրականացնելու իրավունքը⁹:

Անգլիական քաղաքական համակարգում իշխանությունների տարանջատման առանձնահատկությունն է գործադիր իշխանության նկատմամբ օրենսդիր իշխանության գերիշխանությունը: Միաժամանակ, կառավարությունն օժտված է օրենսդրական նախաձեռնության իրավունքով:

Պառլամենտարիզմի համակարգում իշխանությունների տարանջատման սկզբունքը ներառում է հետևյալ տարրերը.

1. Օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների ինքնավարության ճանաչումը, արգելվում է իշխանության ցանկացած սուբյեկտին լինել իշխանության մեկից ավելի թևի կրողը:

2. Բացառվում է իշխանության մեկ ճյուղի կողմից մյուսի ազդեցության ոլորտ ներխուժելու, վերջինիս փոխարինելու հնարավորությունը:

⁹ St' u Исполнительная власть, судебная власть и учредительная власть во Франции. М.: Изд-во посольства Франции в Москве, 1993, էջ 17:

3. Ճանաչվում է իշխանության թերի միջև փոխգործակցության անհրաժեշտությունը:

Յուրաքանչյուր իշխանություն սահմանափակում է այլ իշխանության գործունեության դաշտը, սակայն միասին նրանք կազմում են պետական իշխանությունը՝ որպես համակարգ: Ըստ գերմանացի մեծ փիլիսոփա Գ.Հեգելի՝ իշխանությունները պետք է տարբերակվեն միայն որպես հասկացության պահեր, որոնք նշանակում են ամբողջը: Պետք է իշխի ամբողջականը, որին պետք է ենթարկվեն ու դրանից կախման մեջ լինեն մյուս իշխանությունները, իշխանության մյուս թերը: Հեգելն իր քննադատությունն ուղղում էր ԱՄՆ-ում և Ֆրանսիայում հռչակված իշխանությունների բաժանման սկզբունքի վերացական մեկնաբանության դեմ՝ կեղծ համարելով իշխանությունների ինքնուրույնությունը և նրանց փոխադարձ սահմանափակումը, քանի որ տարանջատումը նաև ծնում է թշնամանք նրանց միջև, փոխադարձ վախ և հակազդեցություն: Ըստ Հեգելի՝ որպես արդյունք՝ ստեղծվում է «համընդհանուր հավասարակշռություն, բայց ոչ կենդանի միասնություն»:

Հեգելի ինքնիշխանության հասկացությունն ամբողջի (միասնական պետական իշխանության) գերիշխանությունն է և իշխանությունների մյուս թերի ենթակայությունը նրան: Այդ ներքին ինքնիշխանության համար անհանդուրժելի է, երբ պետական իշխանության առանձին տեսակներ կամ պետության որևէ գործառույթ դառնում է մասնավոր սեփականություն: Պետության մեջ չի կրող լինել մեկ այլ ուժ, որը բարձր է նրանից կամ լինի հավասար նրան, քանի որ դա նշանակում է միասնական պետական իշխանության ինքնիշխանության կորուստ¹⁰:

Միաժամանակ, չպետք է մոռանալ, որ խորհրդարանական ժողովրդավարության համար իշխանությունների տարանջատումն ինքնանպատակ չէ: Այն միջոց է, որ հնարավոր է դառնում՝ ա) ապահովել իշխանության և կառավարման արդյունավետ գործունեությունը, բ) կանխել իշխանության գերկենտրոնացումն առանձին սուբյեկտների ձեռքում, գ) ապահովել իշխանության սուբյեկտների միջև մրցակցության ինստիտուցիոնալացումը:

Իշխանության թերի միջև փոխհավասարակշռության պահպանումը, ըստ էության, պետության և հասարակության կայուն և լեգիտիմ զարգացման հուսալի հիմքն է: Դրա կարևորությունն առանձնապես անհրաժեշտ է երկրի զարգացման տագնապալի, կրիտիկական պահերին:

Այսօր, երբ Հայաստանում հաստատվել է կառավարման խորհրդարանական ձևը կամ մոդելը, ազգային օրակարգում պետք է անպայման դրված լինի օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների լեգիտիմության ճգնաժամի հաղթահարման հիմնախնդիրը: Մեր կարծիքով, դրա համար այսօր անհրաժեշտ է **նախնառաջ՝** հետևողականորեն ամրապնդել զսպումների և հակակաշիռների համակարգը

¹⁰ См. у Гегеля Г., Работы разных лет.-М., 1972, էջ 309:

պետական իշխանության թևերի միջև, բարձրացնել դրանց փոխգործակցության արդյունավետությունը: **Երկրորդ**, արդիականացնել գործադիր իշխանության կառուցվածքը, բարձրացնել պետական որոշումների մշակման և ընդունման գործընթացի նկատմամբ խորհրդարանական և հասարակական վերահսկողության արդյունավետությունը: **Երրորդ**, ապահովել օրենքի գերակայությունը պետական և հասարակական կարգի բոլոր ոլորտներում՝ առաջնորդվելով այն սկզբունքով, որ օրենքը վեր է ցանկացած հեղինակությունից, և որ օրենքի մեկնաբանությունը տրվում է միայն անկախ դատարանի կողմից: **Չորրորդ**, մշակել Հայաստանում պետական կառավարման նոր մոդել՝ արդյունավետության, թափանցիկության, հայ հասարակությանը պարբերաբար հաշվետվության սկզբունքներով: Պետական կառավարման ազգային նոր մոդելը պետք է հիմնվի իշխանության թևերի, կուսակցությունների, բիզնես-ընտրանու, ակադեմիական և բուհական գիտության, հասարակական կազմակերպությունների արդյունավետ համագործակցության վրա: **Հինգերորդ**, կատարելագործել իշխանության փոխելիության, ազատ ընտրությունների անցկացման կառուցակարգերը:

ДИАЛЕКТИКА ОСУЩЕСТВЛЕНИЯ ПРИНЦИПА РАЗДЕЛЕНИЯ ВЛАСТЕЙ

Манукян Мартин

Сотрудник по мониторингу канцелярии

общественного защитника палаты адвокатов Республики Армения,

преподаватель кафедры права Ереванского университета «Гладзор»,

кандидат юридических наук

Резюме: Разделение властей не является самоцелью. Это средство, с помощью которого становится возможным обеспечить эффективное функционирование власти и управления, не допустить концентрации власти в руках одного человека или нескольких людей, а также обеспечить институционализацию конкуренции между субъектами правительства. Сегодня, когда в Армении утвердилась парламентская модель управления, вопрос преодоления кризиса легитимности законодательной, исполнительной и судебной власти должен быть поставлен в национальную повестку дня. Соответственно, считается важным, что необходимо последовательно укреплять систему сдержек и противовесов между ветвями государственной власти, повышать эффективность их взаимодействия, модернизировать структуру исполнительной власти, обеспечить верховенство власти во всех аспектах государственного и общественного порядка, руководствуясь принципом, согласно которому закон выше любой власти. В статье выдвигается идея, согласно которой в Армении следует внедрить новую национальную модель государственного управления, основанную на сотрудничестве ветвей власти и действующую на принципах эффективности, прозрачности, регулярной отчетности перед обществом, с целью повышения структур изменчивости правительства и проведения свободных выборов.

Ключевые слова: разделение властей, концентрация законодательной, исполнительной, судебной власти, система сдержек и противовесов, государственная власть, институционализация, парламентская форма правления, ветви власти, Конгресс, коллегия выборщиков, сенаторы, президент

DIALECTICS OF IMPLEMENTING THE PRINCIPLE OF SEPARATION OF POWERS

Manukyan Martin

*Monitoring Officer of the Public Defender Office
of the Chamber of Advocates of the Republic of Armenia,
Lecturer of the Law Department
of the Yerevan “Gladzor” University,
Candidate of Legal Sciences*

Summary: Separation of powers is not an end in itself. It is a means by which it becomes possible to ensure the effective functioning of power and governance, to prevent the concentration of power in the hands of one or several people, as well as to ensure the institutionalization of competition between government entities. Today, when the parliamentary model of governance has been established in Armenia, the issue of overcoming the crisis of legitimacy of the legislative, executive and judicial branches of power should be put on the national agenda. Accordingly, it is considered important that it is necessary to consistently strengthen the system of checks and balances between the branches of government, increase the effectiveness of their interaction, modernize the structure of the executive power, ensure the supremacy of power in all aspects of state and public order, guided by the principle that the law is above any authority. The article puts forward the idea that a new national model of public administration should be introduced in Armenia, based on the cooperation of the branches of government and operating on the principles of efficiency, transparency, regular reporting to the society, with the aim of increasing the changeability of the government structures and holding free elections.

Keywords: separation of powers, concentration of legislative, executive, judicial power, system of checks and balances, state power, institutionalization, parliamentary form of government, branches of government, Congress, Electoral College, Senators, President.

Օգտագործված գրականության ցանկ

1. **Локк Дж.** Избранные философские произведения.-М.,т.2, 1960, с.115.
2. **Монтескье Ш** Избранные произведения.М.,1955,с.292
3. **Азаркин Н.М.** Из истории политической и правовой мысли.М.,1988, с.70.
4. Федералист.-М.,1993,ц.334-335.
5. История политических учений (**под ред.В.С.Нерсисянца**),М.,2003, с.379-392
6. **Перенти М.** Демократия для немногих, -М., 1990 ,с.268
7. Исполнительная власть, судебная власть и учредительная власть во Франции. М.: Изд-во посольства Франции в Москве, 1993, с.17
8. **Гегель Г.** Работы разных лет.-М., 1972, с.309

Հոդվածը գրախոսվել է՝ 12.09.2024թ.
Ներկայացվել է տպագրության՝ 28.09.2024թ.

ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՄԱՐԱՆԻՇԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱՏՈՒՄՆԵՐԻ ՈՐԱԿՄԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ

Մարկոսյան Միսակ

ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ուսումնական աշխատանքները

համակարգող պրոֆեսոր, իրավաբանական

գիտությունների թեկնածու, դոցենտ

DOI: 10.63925/18294847-2025.19op-08

1. Ներածություն: Տրանսպորտային միջոցի հաշվառման համարանիշի հետ կապված հանցագործությունները և վարչական իրավախախտումները նախատեսող իրավական նորմերի համակարգային վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանցով նախատեսված որոշ արարքներ ունեն նման կամ համընկնող հատկանիշներ, ինչն իրավակիրառ պրակտիկայում կարող է հանգեցնել այդ արարքների սահմանազատման հետ կապված խնդիրների: Սույն աշխատանքի նպատակն է ուրվագծել տրանսպորտային միջոցի հաշվառման համարանիշի հետ կապված հարակից կամ համընկնող հանցագործությունների և վարչական իրավախախտումների շրջանակը, առանձնացնել դրանց սահմանազատման չափանիշները, ինչպես նաև ներկայացնել քրեաիրավական ու վարչաիրավական նորմերի միջև կոլիզիաների լուծման և վերացման վերաբերյալ առաջարկություններ:

2. Տրանսպորտային միջոցի հաշվառման համարանիշը որպես հանցագործության առարկա: Տրանսպորտային միջոցի հաշվառման համարանիշը որպես հանցագործության առարկա նախատեսված է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի (այսուհետ՝ քր.օր.) 456-րդ (Փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ կամ տրանսպորտային միջոցների պետհամարանիշներ հափշտակելը, շորթելը, ոչնչացնելը, վնասելը կամ թաքցնելը) և 458-րդ (Տրանսպորտային միջոցի կամ հրազենի նույնականացման տարրերը կեղծելը կամ ջնջելը) հոդվածներում¹:

¹ Քր.օր.-ի վերոնշյալ երկու հոդվածներում նույն առարկան բնութագրելու համար օրենսդիրն օգտագործել է տարբեր ձևակերպումներ. 456-րդ հոդվածում նշված է «տրանսպորտային միջոցի պետհամարանիշը» բառակապակցությունը, իսկ 458-րդ հոդվածում՝ «տրանսպորտային միջոցի հաշվառման համարանիշը» բառակապակցությունը: Դա հակասում է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասին, որը սահմանում է՝ «Նորմատիվ իրավական ակտում միևնույն միտքն արտահայտելիս կիրառվում են միևնույն բառերը, տերմինները կամ բառակապակցությունները՝ որոշակի հերթականությամբ»: Կարծում ենք՝ քր.օր.-ի 456-րդ հոդվածում «պետհամարանիշ» բառն անհրաժեշտ է փոխարինել «հաշվառման համարանիշ» բառերով, քանի որ ոլորտային օրենսդրությունում («Ճանապարհային երթևեկության անվտանգության մասին» օրենք, ՀՀ կառավարության 2010 թվականի սեպտեմբերի 9-ի N 1251-Ն որոշում) գործածվում է հենց «հաշվառման համարանիշ» բառակապակցությունը: Ավելին, տրանսպորտային միջոցը նպատակային նշանակությամբ շահագործելու համար այն պետական գրանցումից հետո ենթակա է պետական հաշվառման, որի անվանական և տրամաբանական հետևանքն էլ հաշվառման համարանիշերի և այդ հաշվառման տվյալներն ամբողջացնող փաստաթղթի՝ հաշվառման վկայագրի հատկացումն է:

Քր.օր.-ի 456-րդ հոդվածի 1-ին մասի դիսպոզիցիան ունի հետևյալ բովանդակությունը՝ «Ուրիշի անձնագիրը կամ նույնականացման քարտը կամ իրավունք վերապահող, պարտականությունից կամ պատասխանատվությունից ազատող կամ իրավաբանական նշանակություն ունեցող տեղեկություն պարունակող փաստաթուղթը, դրոշմը, կնիքը կամ տրանսպորտային միջոցի պետհամարանիշը հափշտակելը, շորթելը, ոչնչացնելը, վնասելը կամ թաքցնելը»։ Մեջբերված դիզպոզիցիայի վերլուծությունից բխում է, որ նշված հոդվածով քրեորեն պատժելի են համարվում տրանսպորտային միջոցի հաշվառման համարանիշի հետ կապված հետևյալ արարքները՝

1. հափշտակելը,
2. շորթելը,
3. ոչնչացնելը,
4. վնասելը,
5. թաքցնելը:

Քր.օր.-ի 458-րդ հոդվածի 1-ին մասի դիսպոզիցիան ունի հետևյալ բովանդակությունը՝ Տրանսպորտային միջոցի հաշվառման համարանիշը կամ տրանսպորտային միջոցի նույնականացման այլ տարրը կամ հրազենի նույնականացման տարրը կեղծելը կամ ջնջելը՝ կեղծողի կողմից անձամբ կամ այլ անձի կողմից այն օգտագործելու կամ իրացնելու նպատակով, կամ այն իրացնելը կամ օգտագործելը: Մեջբերված դիզպոզիցիայի վերլուծությունից բխում է, որ նշված հոդվածով քրեորեն պատժելի են համարվում տրանսպորտային միջոցի հաշվառման համարանիշի հետ կապված հետևյալ արարքները՝

1. կեղծելը,
2. ջնջելը,
3. իրացնելը,
4. օգտագործելը:

Ընդ որում, կեղծելը և ջնջելը հանցագործություն են համարվում միայն այն դեպքում, երբ այդ արարքները կատարվում են կեղծողի² կողմից անձամբ կամ այլ անձի կողմից տրանսպորտային միջոցի հաշվառման համարանիշն օգտագործելու կամ իրացնելու նպատակով, իսկ իրացնելու և օգտագործելու առարկան կեղծ կամ ջնջված հաշվառման համարանիշն է:

3. Տրանսպորտային միջոցի հաշվառման համարանիշը որպես վարչական իրավախախտման առարկա: Տրանսպորտային միջոցի հաշվառման համարանիշն որպես վարչական իրավախախտման առարկա նախատեսված է Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի (այսուհետ՝ ՎԻՎՕ) 123.5-րդ (Տրանսպորտային միջոցների հաշվառման համարանիշի օգտագործման կանոնները խախտելը) և 124.7-րդ (Համայնքներում վճարովի ավտոկա-

² Կարծում ենք՝ ճիշտ կլիներ հոդվածում նշել «կեղծողի կամ ջնջողի կողմից» բառակապակցությունը:

յանատեղերի համար օրենքով սահմանված տեղական վճարը չվճարելը կամ առանց հաշվառման համարանիշի կամ հաշվառման համարանիշի առնվազն մեկ նիշը փակված վիճակում կայանելը) հոդվածներում³:

Վերոնշյալ հոդվածների դիսպոզիցիաների վերլուծությունից բխում է, որ վարչական իրավախախտումներ են համարվում տրանսպորտային միջոցի հաշվառման համարանիշի հետ կապված հետևյալ արարքները՝

1) անընթեռնելի հաշվառման համարանիշով տրանսպորտային միջոցներ վարելը (123.5-րդ հոդվածի 1-ին մաս),

2) ստանդարտին չհամապատասխանող հաշվառման համարանիշով տրանսպորտային միջոցներ վարելը (123.5-րդ հոդվածի 1-ին մաս),

3) տրանսպորտային միջոցի հաշվառման համարանիշի առնվազն մեկ նիշը փակելը (123.5-րդ հոդվածի 1.1-ին մաս),

4) տրանսպորտային միջոցի հաշվառման համարանիշը սահմանված տեղում չփակցնելը (123.5-րդ հոդվածի 2-րդ մաս),

5) ժամանակավոր համարանիշի օգտագործման ժամկետը լրանալուց հետո տրանսպորտային միջոցը այդ համարանիշերով վարելը (123.5-րդ հոդվածի 3-րդ մաս),

6) առանց հաշվառման համարանիշի տրանսպորտային միջոցներ վարելը (123.5-րդ հոդվածի 4-րդ մաս),

7) կեղծված հաշվառման համարանիշով տրանսպորտային միջոցներ վարելը (123.5-րդ հոդվածի 4-րդ մաս),

8) փոխարինված հաշվառման համարանիշով տրանսպորտային միջոցներ վարելը (123.5-րդ հոդվածի 4-րդ մաս),

9) տրանսպորտային միջոցը տնօրինողի կողմից հաշվառման համարանիշն այլ անձի հանձնելը (123.5-րդ հոդվածի 5-րդ մաս),

10) դեղին հիմնագույնի հաշվառման համարանիշերը ուղևորափոխադրումների իրականացման երթուղին սպասարկելու ժամկետի ավարտից հետո չվերադարձնելը (123.5-րդ հոդվածի 7-րդ մաս),

11) Հայաստանի Հանրապետության տարածքում կանոնավոր ուղևորափոխադրումներ (բացառությամբ միջպետականի) իրականացնող իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից սպասարկվող երթուղում սպիտակ հիմնագույնի հաշվառման համարանիշ ունեցող տրանսպորտային միջոցների շահագործումը (123.5-րդ հոդվածի 8-րդ մաս),

12) դեղին հիմնագույնի հաշվառման համարանիշը այլ տրանսպորտային միջոցի

³ Տրանսպորտային միջոցի հաշվառման համարանիշն որպես վարչական իրավախախտման առարկա նախատեսված է նաև ՎԻՎՕ-ի 132-րդ հոդվածով (Անսարքություններ ունեցող տրանսպորտային միջոցների շահագործումը թույլատրելի և տրանսպորտային միջոցների շահագործման կանոնների այլ խախտումները), սակայն դրանում նշված՝ տրանսպորտային միջոցի հաշվառման համարանիշի հետ կապված արարքներն առանձին քննարկման առարկա չեն դառնա սույն աշխատանքում, քանի որ այդ արարքներն արդեն իսկ քննարկվելու են ՎԻՎՕ-ի 123.5-րդ հոդվածի շրջանակներում:

վրա տեղադրելը (123.5-րդ հոդվածի 10-րդ մաս),

13) գույգ հաշվառման համարանիշեր ունեցող տրանսպորտային միջոցը մեկ հաշվառման համարանիշով վարելը (123.5-րդ հոդվածի 16-րդ մաս),

14) ավտոտրանսպորտային միջոցը կամ դրա կցորդը համայնքային վճարովի ավտոկայանատեղում առանց հաշվառման համարանիշի կայանելը (124.7-րդ հոդված),

15) ավտոտրանսպորտային միջոցը կամ դրա կցորդը համայնքային վճարովի ավտոկայանատեղում հաշվառման համարանիշի առնվազն մեկ նիշը փակված վիճակում կայանելը (124.7-րդ հոդված):

4. Տրանսպորտային միջոցի հաշվառման համարանիշի հետ կապված հարակից կամ համընկնող հանցագործությունների և վարչական իրավախախտումների շրջանակը: Քր.օր.-ի և ՎԻՎՕ-ի մեջբերված հոդվածների համակարգային վերլուծությունը թույլ է տալիս ուրվագծել տրանսպորտային միջոցի հաշվառման համարանիշի հետ կապված հարակից կամ համընկնող հանցագործությունների և վարչական իրավախախտումների շրջանակը:

Մասնավորապես, իրավակիրառ պրակտիկայում կարող են առաջանալ հարցեր, թե ինչ չափանիշներով պետք է սահմանազատել՝

1) տրանսպորտային միջոցի հաշվառման համարանիշը թաքցնելը (քր.օր.-ի 456-րդ հոդվածի 1-ին մաս) առանց հաշվառման համարանիշի տրանսպորտային միջոցներ վարելուց (ՎԻՎՕ-ի 123.5-րդ հոդվածի 4-րդ մաս) և ավտոտրանսպորտային միջոցը կամ դրա կցորդը համայնքային վճարովի ավտոկայանատեղում առանց հաշվառման համարանիշի կայանելուց (ՎԻՎՕ-ի 124.7-րդ հոդված),

2) տրանսպորտային միջոցի հաշվառման համարանիշն իրացնելը (քր.օր.-ի 458-րդ հոդվածի 1-ին մաս) տրանսպորտային միջոցը տնօրինողի կողմից հաշվառման համարանիշն այլ անձի հանձնելուց (ՎԻՎՕ-ի 123.5-րդ հոդվածի 5-րդ մաս),

3) տրանսպորտային միջոցի կեղծ կամ ջնջված հաշվառման համարանիշն օգտագործելը (քր.օր.-ի 458-րդ հոդվածի 1-ին մաս) անընթեռնելի կամ ստանդարտին չհամապատասխանող հաշվառման համարանիշով տրանսպորտային միջոցներ վարելուց (ՎԻՎՕ-ի 123.5-րդ հոդվածի 1-ին մաս),

4) տրանսպորտային միջոցի կեղծ հաշվառման համարանիշն օգտագործելը (քր.օր.-ի 458-րդ հոդվածի 1-ին մաս) կեղծված հաշվառման համարանիշով տրանսպորտային միջոցներ վարելուց (ՎԻՎՕ-ի 123.5-րդ հոդվածի 4-րդ մաս):

5. Տրանսպորտային միջոցի հաշվառման համարանիշի հետ կապված հարակից հանցագործությունների և վարչական իրավախախտումների սահմանազատման չափանիշները:

5.1. Տրանսպորտային միջոցի հաշվառման համարանիշը թաքցնելու (քր.օր.-ի 456-րդ հոդվածի 1-ին մաս) սահմանադատումն առանց հաշվառման համարանիշի տրանսպորտային միջոցներ վարելուց (ՎԻՎՕ-ի 123.5-րդ հոդվածի 4-րդ մաս) և ավտոտրանսպորտային միջոցը կամ դրա կցորդը համայնքային վճարովի ավտոկայանատեղում առանց հաշվառման համարանիշի կայանելուց (ՎԻՎՕ-ի 124.7-րդ հոդված):

Քր.օր.-ի 456-րդ հոդվածի 1-ին մասի դիսպոզիցիայում նշված է, որ այդ հանցագործության առարկան ուրիշի տրանսպորտային միջոցի հաշվառման համարանիշն է, իսկ ՎԻՎՕ-ի 123.5-րդ հոդվածի 4-րդ մասի և 124.7-րդ հոդվածի բովանդակությունից բխում է, որ այն վերաբերում է անձի կողմից օրինական հիմունքներով վարվող տրանսպորտային միջոցին: Հետևաբար, քր.օր.-ի 456-րդ հոդվածի 1-ին մասը կիրառելի է այն դեպքերի նկատմամբ, երբ հանցավորը իրեն չպատկանող տրանսպորտային միջոցի հաշվառման համարանիշը թաքցնում է դրա օրինական տիրապետողից (օրինակ, դրա գտնվելու վայրը հայտնելու դիմաց գումար պահանջելու նպատակով), իսկ ՎԻՎՕ-ի 123.5-րդ հոդվածի 4-րդ մասը և 124.7-րդ հոդվածը կիրառելի են, երբ անձն իր կողմից օրինական հիմունքներով վարվող տրանսպորտային միջոցի հաշվառման համարանիշը թաքցնում է պետությունից (օրինակ, տրանսպորտային միջոցի նույնականացումը դժվարացնելու և այդ տրանսպորտային միջոցի մասնակցությամբ հնարավոր իրավախախտումների համար պատասխանատվությունից խուսափելու նպատակով): ՎԻՎՕ-ի 123.5-րդ հոդվածի 4-րդ մասը և 124.7-րդ հոդվածը կիրառելի են նաև այն դեպքերում, երբ տվյալ տրանսպորտային միջոցին ընդհանրապես հատկացված չէ հաշվառման համարանիշ:

5.2. Տրանսպորտային միջոցի հաշվառման համարանիշն իրացնելու (քր.օր.-ի 458-րդ հոդվածի 1-ին մաս) սահմանազատումն տրանսպորտային միջոցը տնօրինողի կողմից հաշվառման համարանիշն այլ անձի հանձնելուց (ՎԻՎՕ-ի 123.5-րդ հոդվածի 5-րդ մաս):

Քր.օր.-ի 458-րդ հոդվածի 1-ին մասի բովանդակությունից բխում է, որ իրացման դեպքում որպես հանցագործության առարկա կարող է հանդես գալ տրանսպորտային միջոցի միայն կեղծ կամ ջնջված հաշվառման համարանիշը, իսկ ՎԻՎՕ-ի 123.5-րդ հոդվածի 5-րդ մասը կիրառելի է, եթե անձը մեկ ուրիշին է հանձնում տրանսպորտային միջոցի իսկական և չջնջված հաշվառման համարանիշը:

5.3. Տրանսպորտային միջոցի կեղծ կամ ջնջված հաշվառման համարանիշն օգտագործելու (քր.օր.-ի 458-րդ հոդվածի 1-ին մաս) սահմանազատումն անընթեռնելի կամ ստանդարտին չհամապատասխանող հաշվառման համարանիշով տրանսպորտային միջոցներ վարելուց (ՎԻՎՕ-ի 123.5-րդ հոդվածի 1-ին մաս):

Նշված արարքների սահմանազատման համար նախ անհրաժեշտ է հասկանալ, թե ինչ է նշանակում կեղծ, ջնջված, անընթեռնելի և ստանդարտին չհամապատասխանող հաշվառման համարանիշ:

Հաշվառման համարանիշի կեղծումը կարող է լինել ինչպես լրիվ (երբ պատրաստվում է ամբողջությամբ կեղծ հաշվառման համարանիշ), այնպես էլ մասնակի (երբ իսկական հաշվառման համարանիշի վրա կատարվում են փոփոխություններ)⁴: Դա նշանակում է, որ լրիվ կեղծման դեպքում կեղծ հաշվառման համարանիշն

⁴ Ст. 11 Архипов А.А. Уголовная ответственность за преступления, связанные с фальсификацией номерных регистрационно-учетных параметров транспортных средств: авто-реф. дис. ... канд. юрид. наук. Тюмень, 2011, էջ 11:

օգտագործելու առարկան տրանսպորտային միջոցի ամբողջությամբ կեղծ հաշվառման համարանիշն է, իսկ մասնակի կեղծման դեպքում՝ տրանսպորտային միջոցի իսկական, բայց մասնակիորեն կեղծված հաշվառման համարանիշը:

Ջնջված պետք է համարել այն իսկական հաշվառման համարանիշը, որի վրա ջնջված է որևէ նիշ կամ դրա մի մասը, ինչի հետևանքով հնարավոր չէ նույնականացնել տվյալ տրանսպորտային միջոցը (օրինակ, «8» թվի մասնիկը ջնջված է այնպես, որն այն նմանվել է «6» թվին): Ընդ որում, պարտադիր չէ, որ ջնջումը կատարած լինի ջնջված հաշվառման համարանիշն օգտագործող անձը: Հաշվառման համարանիշը ջնջելը և այն օգտագործելը քր.օր.-ի 458-րդ հոդվածում նախատեսված են որպես հանցակազմի օբյեկտիվ կողմի ինքնուրույն, երկրնորելի դրսևորումներ: Հետևաբար, ջնջված հաշվառման համարանիշի օգտագործման հանցակազմն առկա է ինչպես այն դեպքում, երբ հաշվառման համարանիշը ջնջել է այն օգտագործող անձը, այնպես էլ այն դեպքում, երբ ջնջումը այլ անձի արարքի կամ որևէ այլ արտաքին ներգործության հետևանք է (օրինակ՝ տևական ժամանակի ընթացքում տեղի ունեցած աստիճանական գունաթափման): Ջնջված հաշվառման համարանիշն օգտագործելու առարկան տրանսպորտային միջոցի իսկական, բայց ջնջված հաշվառման համարանիշն է:

Անընթեռնելի հաշվառման համարանիշի հասկացությունը տրված է ՎԻՎՕ-ի 123.5-րդ հոդվածի 11-րդ մասում, համաձայն որի՝ անընթեռնելի հաշվառման համարանիշ է այն համարանիշը, որի թեկուզ մեկ նիշը ցերեկը, պարզ եղանակին գունաթափման կամ այլ պատճառներով, բացառությամբ առնվազն մեկ նիշը փակելու դեպքերի, անշարժ տրանսպորտային միջոցի վրա տեղադրված վիճակում տեսանելի չէ 40 մետր հեռավորությունից: Ինչպես երևում է մեջբերված նորմից, եթե հաշվառման համարանիշի թեկուզ մեկ նիշը գունաթափվել է, ապա ՎԻՎՕ-ի 123.5-րդ հոդվածի 11-րդ մասի իմաստով այն համարվում է անընթեռնելի: Նիշի գունաթափումը կարող է տեղի ունենալ ինչպես մարդու դիտավորյալ ներգործության (օրինակ, ներկը մաքրելու), այնպես էլ՝ առանց մարդու դիտավորյալ ներգործության (օրինակ, եղանակային պայմանների տևական ազդեցության) հետևանքով: Այսպես, հայերենում “գունաթափում” նշանակում է ինչպես գունաթափելը, այնպես էլ՝ գունաթափվելը⁵: Անընթեռնելի դառնալու այլ պատճառ կարող է լինել, օրինակ, հաշվառման համարանիշի կեղտոտվածությունը, ձյունով ծածկված լինելը և այլն: ՎԻՎՕ-ի 123.5-րդ հոդվածի 11-րդ մասի իմաստով անընթեռնելի կարող է համարվել միայն իսկական հաշվառման համարանիշը:

Ինչ վերաբերում է ստանդարտին չհամապատասխանող հաշվառման համարանիշին, ապա որպես այդպիսին կարող է համարվել այն առարկան, որը չի համապատասխանում հաշվառման համարանիշներին պետության կողմից ներ-

⁵ Տե՛ս Աղայան Է. Արդի հայերենի բացատրական բառարան: «Հայաստան» Հրատարակչություն, Երևան, 1976, էջ 268:

կայացվող պահանջներին և դրանց համար սահմանված ստանդարտին⁶: Այսինքն՝ տվյալ դեպքում էական նշանակություն է ստանում ոչ թե հաշվառման համարանիշի բովանդակությունը, այլ տեխնիկական հատկանիշներն ու ձևավորումը (պատրաստման նյութը, չափերը, գույնը, նիշերի տառատեսակն ու չափերը և այլն): Ստանդարտին չհամապատասխանող հաշվառման համարանիշով տրանսպորտային միջոց վարելու համար վարչական պատասխանատվության սահմանումը պայմանավորված է նրանով, որ այդ արարքը վնաս է պատճառում տրանսպորտային միջոցների հաշվառման կարգն ապահովող հասարակական հարաբերություններին:

Ելնելով վերոգրյալից՝ կարծում ենք, որ կեղծ և անընթեռնելի հաշվառման համարանիշների տարբերությունը կայանում է նրանում, որ կեղծ հաշվառման համարանիշը մարդու դիտավորյալ արարքի (հաշվառման համարանիշի ամբողջական կամ մասնակի կեղծման) արդյունք է, և կեղծ հաշվառման համարանիշի վրա ընթեռնելի են բոլոր նիշերը: Այլ հարց է, որ դրանց բովանդակությունը չի համապատասխանում իրականությանը: Ի տարբերություն կեղծի՝ անընթեռնելի հաշվառման համարանիշը այդպիսին է դարձել կա՝մ առանց մարդու դիտավորյալ ներգործության (օրինակ՝ ծածկվել է առատ ձյան հետևանքով) կամ մարդու այնպիսի դիտավորյալ ներգործության արդյունքում, որը չի դրսևորվել հաշվառման համարանիշի կեղծմամբ (օրինակ՝ ցեխոտելը):

Կեղծ և ստանդարտին չհամապատասխանող հաշվառման համարանիշների տարբերությունը կայանում է նրանում, որ կեղծ հաշվառման համարանիշի դեպքում խեղաթյուրված է համարանիշի բովանդակությունը, իսկ ստանդարտին չհամապատասխանող հաշվառման համարանիշի դեպքում՝ պահպանված չեն դրան ներկայացվող տեխնիկական պահանջները: Հետևաբար, եթե, օրինակ, անձը կորցրել է իր տրանսպորտային միջոցի հաշվառման համարանիշը, ինչից հետո պատրաստել է նույն նիշերով հաշվառման համարանիշ և այն փակցրել է իր տրանսպորտային միջոցին, ապա դա ոչ թե կեղծ, այլ ստանդարտին չհամապատասխանող հաշվառման համարանիշ է: Իսկ եթե նույն իրավիճակում անձը պատրաստել է ստանդարտին

⁶ Տե՛ս ՀՀ կառավարության 2010 թվականի սեպտեմբերի 9-ի «Պետական գրանցման ենթակա տրանսպորտային միջոցների տեսակների ցանկը, տրանսպորտային միջոցների պետական հաշվառման կարգը, պետական գրանցման և պետական հաշվառման համար պարտադիր ներկայացվող փաստաթղթերի ցանկերը, տրանսպորտային միջոցի սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականի, պետական հաշվառման ազգային ու միջազգային վկայագրերի և «Ժամանակավոր ներմուծում» մաքսային ընթացակարգով Հայաստանի Հանրապետություն ներմուծված տրանսպորտային միջոցների հաշվառման վկայագրի ձևերը, «Ժամանակավոր ներմուծում» մաքսային ընթացակարգով Հայաստանի Հանրապետություն ներմուծված տրանսպորտային միջոցների հաշվառման կարգը, հաշվառման համարանիշերին ներկայացվող պահանջները, ինչպես նաև տրանսպորտային միջոցների համարանիշերի հաշվառման ու հատկացման կարգը սահմանելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 30-ի N 1853-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի օգոստոսի 30-ի N 1041-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1251-Ն որոշման 11-րդ հավելվածը, ինչպես նաև ՀՀ էկոնոմիկայի նախարարության Ստանդարտացման և չափազիտության ազգային մարմնի «Տրանսպորտային միջոցների հաշվառման համարանիշեր. Տիպեր և հիմնական չափեր. Տեխնիկական պահանջներ» ՀՍ 110-2014 ստանդարտը/<https://www.armstandard.am/standart/2824> (վերջին այցելության ամսաթիվ՝ 21.02.2024թ.):

չհամապատասխանող այնպիսի հաշվառման համարանիշ, որը նաև բովանդակությամբ չի համապատասխանում իր տրանսպորտային միջոցին հատկացված իսկակական հաշվառման համարանիշին, ապա դա արդեն պետք է գնահատել որպես կեղծ հաշվառման համարանիշ:

Անդրադառնալով ջնջված և անընթեռնելի հաշվառման համարանիշերի հարաբերակցությանը՝ պետք է նշել, որ գործող իրավակարգավորումների պարագայում առկա է քրեաիրավական և վարչաիրավական նորմերի կոլիզիա այն դեպքերի կապակցությամբ, երբ անձը տրանսպորտային միջոցը վարում է ջնջված (կամ որ նույնն է՝ գունաթափված) հաշվառման համարանիշով: Այդ արարքը համապատասխանում է ինչպես ջնջված հաշվառման համարանիշն օգտագործելու հանցակազմին (քր.օր.-ի 458-րդ հոդվածի 1-ին մաս), այնպես էլ՝ անընթեռնելի (մասնավորապես գունաթափված) հաշվառման համարանիշով տրանսպորտային միջոց վարելու գանգակազմին (ՎԻՎՕ-ի 123.5-րդ հոդվածի 1-ին մաս):

Այդ կոլիզիան վերացնելու համար առաջարկում ենք ՎԻՎՕ-ի 123.5-րդ հոդվածի 11-րդ մասում կատարել փոփոխություն. անընթեռնելի հաշվառման համարանիշի հասկացությունից դուրս բերել գունաթափման պատճառով անընթեռնելի դարձած հաշվառման համարանիշը, որպեսզի դրա օգտագործման համար վրա հասնի քրեական պատասխանատվություն: Այս առաջարկը հիմնավորվում է նրանով, որ գունաթափված (ջնջված) նիշերով հաշվառման համարանիշի օգտագործման վտանգավորության աստիճանն ավելի բարձր է, քան այլ պատճառներով (կեղտոտված, ձյունով ծածկված) անընթեռնելի դարձած հաշվառման համարանիշի օգտագործումը, քանի որ վերջին դեպքում անընթեռնելիությունը համեմատաբար ավելի հեշտ է վերացնել: Իսկ գործող օրենսդրության պայմաններում վերոնշյալ կոլիզիայի լուծման եղանակին կանդրադառնանք սույն աշխատանքի առանձին հատվածում:

Ինչ վերաբերում է ջնջված և ստանդարտին չհամապատասխանող հաշվառման համարանիշների տարբերությանը, ապա ստանդարտին չհամապատասխանող հաշվառման համարանիշը պետք է ունենա այնպիսի բովանդակություն (նիշերի համապատասխանություն իսկակական հաշվառման համարանիշին), որը թույլ կտա նույնականացնել տվյալ տրանսպորտային միջոցը: Հետևաբար, օրինակ, եթե հաշվառման համարանիշի մեկ թիվը ամբողջությամբ ջնջված է, ապա դա արդեն ոչ թե ստանդարտին չհամապատասխանող, այլ ջնջված հաշվառման համարանիշ է:

Տրանսպորտային միջոցի կեղծ հաշվառման համարանիշն օգտագործելու (քր.օր.-ի 458-րդ հոդվածի 1-ին մաս) սահմանազատումը կեղծված հաշվառման համարանիշով տրանսպորտային միջոցներ վարելուց (ՎԻՎՕ-ի 123.5-րդ հոդվածի 4-րդ մաս):

Տրանսպորտային միջոցի կեղծ հաշվառման համարանիշն օգտագործելու հասկացության ծավալն ավելի լայն է, քան կեղծված հաշվառման համարանիշով տրանսպորտային միջոց վարելու հասկացության ծավալը, քանի որ կեղծ հաշվառման համարանիշն օգտագործում պետք է համարել նաև, օրինակ, կայանված տրանսպորտային միջոցի վրա այդ հաշվառման համարանիշի փակցված լինելը:

Ինչ վերաբերում է կեղծված հաշվառման համարանիշով տրանսպորտային միջոց վարելուն, ապա այդ արարքի կապակցությամբ առկա է կոլիզիա քր.օր.-ի 458-րդ հոդվածի 1-ին մասի և ՎԻՎՕ-ի 123.5-րդ հոդվածի 4-րդ մասի միջև: Նշված կոլիզիան վերացնելու համար առաջարկում ենք ՎԻՎՕ-ի 123.5-րդ հոդվածի 4-րդ մասից հանել կեղծված հաշվառման համարանիշով տրանսպորտային միջոցներ վարելու վերաբերյալ կարգավորումը, ինչի արդյունքում կեղծ հաշվառման համարանիշ օգտագործելու բոլոր դեպքերի համար վրա կհասնի քրեական պատասխանատվություն քր.օր.-ի 458-րդ հոդվածով: Իսկ գործող օրենսդրության պայմաններում վերոնշյալ կոլիզիայի վերացումը լուծման եղանակին կանդրադառնանք սույն աշխատանքի առանձին հատվածում:

6. Տրանսպորտային միջոցի հաշվառման համարանիշի հետ կապված համընկնող հանցագործությունները և վարչական իրավախախտումները նախատեսող նորմերի միջև կոլիզիաների լուծումը:

Ինչպես պարզ դարձավ համապատասխան քրեաիրավական և վարչաիրավական նորմերի համակարգային վերլուծությունից, ջնջված հաշվառման համարանիշով տրանսպորտային միջոց վարելու կապակցությամբ առկա է կոլիզիա քր.օր.-ի 458-րդ հոդվածի 1-ին մասի և ՎԻՎՕ-ի 123.5-րդ հոդվածի 1-ին մասի միջև, իսկ կեղծ հաշվառման համարանիշով տրանսպորտային միջոց վարելու կապակցությամբ առկա է կոլիզիա 458-րդ հոդվածի 1-ին մասի և ՎԻՎՕ-ի 123.5-րդ հոդվածի 4-րդ մասի միջև:

ՎԻՎՕ-ի 9-րդ հոդվածի 2-րդ պարբերությունը սահմանում է՝ «Սույն օրենսգրքով նախատեսված իրավախախտումների համար վարչական պատասխանատվություն առաջանում է, եթե այդ խախտումները իրենց բնույթով քրեական պատասխանատվություն չեն առաջացնում գործող օրենսդրությանը համապատասխան»: Եթե առաջնորդվենք այդ կանոնով, ապա քննարկվող երկու դեպքերում էլ պետք է կիրառվի քր.օր.-ի 458-րդ հոդվածը:

Բացի այդ, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 40-րդ հոդվածը սահմանում է իրավական կոլիզիաների լուծման կանոնները: Նշված հոդվածի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտերի նորմերի միջև կոլիզիաների դեպքում, ըստ հերթականության, կիրառվում են հետևյալ կանոնները, ընդ որում՝ յուրաքանչյուր հաջորդ կանոնը կիրառվում է, եթե կիրառելի չէ նախորդ կանոնը՝

- 1) ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտի նորմը.
- 2) ընդհանուր նորմի և հատուկ նորմի միջև կոլիզիաների դեպքում գործում է հատուկ նորմը, սակայն եթե նորմատիվ իրավական ակտն ունի ընդհանուր և հատուկ մասեր, ապա այդ մասերի նորմերի միջև կոլիզիայի դեպքում գործում են ընդհանուր մասի նորմերը.
- 3) ավելի ուշ ուժի մեջ մտած նորմատիվ իրավական ակտի նորմերը.
- 4) ֆիզիկական և իրավաբանական անձանց համար բարենպաստ նորմատիվ իրավական ակտի նորմը, եթե այդ նորմի կիրառմամբ չեն շոշափվում այլ անձանց իրավունքները կամ օրինական շահերը:

ՎԻՎՕ-ն և քր.օր.-ն ունեն հավասար իրավաբանական ուժ, և քննարկվող նորմերը չեն գտնվում ընդհանուր և հատուկ նորմերի հարաբերակցության մեջ, ինչպես նաև չեն հանդիսանում նույն նորմատիվ իրավական ակտի ընդհանուր և հատուկ մասերի

նորմեր: Հետևաբար՝ քննարկվող դեպքերի կապակցությամբ կիրառելի է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 40-րդ հոդվածով սահմանված երրորդ կանոնը, որի ուժով քննարկվող դեպքերում դարձյալ պետք է կիրառվի քր.օր.-ի 458-րդ հոդվածը, քանի որ այն ավելի ուշ է մտել ուժի մեջ, քան ՎԻՎՕ-ի 123.5-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերը:

Սակայն կարծում ենք, որ քննարկվող դեպքերի կապակցությամբ քրեաիրավական և վարչաիրավական նորմերի կոլիզիան հոգուտ քրեաիրավական նորմերի լուծելը արդարացի չէ: Ինչպես իրավացիորեն նշվում է մասնագիտական գրականության մեջ, օրինաստեղծի թույլ տված սխալի բացասական հետևանքները չի կարող կրել իրավախախտը: Համընկնող հանցակազմի և զանցակազմի կոլիզիայի դեպքում պետք է նախապատվություն տալ զանցակազմին, եթե կոնկրետ դեպքում քրեական իրավունքի նորմերի համեմատությամբ, զանցանքի համար նախատեսված պատասխանատվությունն առավել մեղմ է⁷:

7. Եզրակացություն

Այսպիսով՝ սույն աշխատանքի շրջանակներում կատարված ուսումնասիրության արդյունքներով հնարավոր եղավ ուրվագծել տրանսպորտային միջոցի հաշվառման համարանիշի հետ կապված հարակից հանցագործությունների և վարչական իրավախախտումների շրջանակը, առանձնացնել դրանց սահմանազատման չափանիշները:

Միևնույն ժամանակ պարզվեց, որ առանձին դեպքերում առկա են քրեաիրավական և վարչաիրավական նորմերի կոլիզիաներ, որոնց վերացման համար առաջարկում ենք՝

1. ՎԻՎՕ-ի 123.5-րդ հոդվածի 4-րդ մասի դիսպոզիցիան շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Առանց հաշվառման համարանիշի կամ փոխարինված հաշվառման համարանիշով տրանսպորտային միջոցներ վարելը»,

2. ՎԻՎՕ-ի 123.5-րդ հոդվածի 11-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Անընթեռնելի հաշվառման համարանիշ է այն համարանիշը, որի թեկուզ մեկ նիշը ցերեկը, պարզ եղանակին (բացառությամբ առնվազն մեկ նիշը կամ դրա մի մասը փակելու կամ ջնջված լինելու դեպքերի) անշարժ տրանսպորտային միջոցի վրա տեղադրված վիճակում տեսանելի չէ 40 մետր հեռավորությունից»:

Իսկ նախքան նշված կոլիզիաների վերացումն անհրաժեշտ է առաջնորդվել «Կասկածի դեպքում մեղմ որոշման օգտին (in dubio mitius)» մաքսիմով և անձի արարքը որակել որպես վարչական իրավախախտում:

Բանալի բռնեք. հանցանք, վարչական իրավախախտում, տրանսպորտային միջոց, հաշվառման համարանիշ, իրավական նորմերի կոլիզիա

⁷ Տվյալ դեպքում քրեաիրավական և վարչաիրավական նորմերի միջև կոլիզիան պետք է լուծվի «in dubio mitius» մաքսիմի հիման վրա, որի մասին առավել մանրամաս տե՛ս Ղամբարյան Ա., Մուրադյան Մ., Մկրտչյան Մ. «Կասկածի դեպքում մեղմ որոշման օգտին (in dubio mitius)» մաքսիմի կիրառությունն իրավական անորոշությունները լուծելիս//Մահմանադրական դատարան: Տեղեկագիր: 3 (111) 2023, էջ 9-44:

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ КВАЛИФИКАЦИИ ПРЕСТУПЛЕНИЙ И АДМИНИСТРАТИВНЫХ ПРАВОНАРУШЕНИЙ, СВЯЗАННЫХ С РЕГИСТРАЦИОННЫМ ЗНАКОМ ТРАНСПОРТНОГО СРЕДСТВА

Маркосян Мисак

Проректор по учебной работе

Образовательного комплекса МВД РА,

кандидат юридических наук, доцент

В статье анализируются уголовно-правовые и административно-правовые нормы, предусматривающие ответственность за преступления и административные правонарушения, связанные с регистрационным знаком транспортного средства. Особое внимание уделяется совпадающим и сходным признакам этих деяний, а также трудностям их разграничения.

Автор рассматривает проблемные вопросы квалификации преступлений и административных правонарушений, связанных с регистрационным знаком транспортного средства, и предлагает рекомендации по критериям их разграничения, а также по разрешению и устранению коллизий между уголовно-правовыми и административно-правовыми нормами.

Ключевые слова: преступление, административное правонарушение, транспортное средство, регистрационный знак, коллизия правовых норм

SOME ISSUES OF QUALIFYING CRIMES AND ADMINISTRATIVE OFFENSES RELATED TO VEHICLE REGISTRATION PLATES

Misak Markosyan

Vice-Rector for Academic Affairs

Educational Complex of the Ministry of

Internal Affairs of the Republic of Armenia

PhD in Law, Associate Professor

This article analyzes the criminal and administrative legal provisions establishing liability for crimes and administrative offenses related to vehicle registration plates. Special attention is given to the overlapping and similar elements of these acts, and the challenges of distinction between respective crimes and offenses.

The author examines problematic aspects of qualifying crimes and administrative offenses related to vehicle registration plates and offers recommendations on the criteria for differentiating relative crimes and offenses, as well as on resolving and eliminating collisions of criminal and administrative legal norms.

Keywords: crime, administrative offense, vehicle, registration plate, collision of legal norms.

Հոդվածը գրախոսվել է՝ 20.03.2025թ.

Ներկայացվել է տպագրության՝ 27.03.2025թ.

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԵՎ ԻՐԱՎԱԳԻՏԱԿՑՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

Մարգարյան Աբգար

*ՀՀ ՆԳՆ կրթահամալիրի ոստիկանական ուսումնական ստորաբաժանման
ընդհանուր իրավաբանական առարկաների ամբիոնի ավագ դասախոս
DOI: 10.63925/18294847-2025.19op-09*

Համառոտագիր: Գիտական հոդվածում քննարկվում են հարցադրումներ, որոնք վերաբերում են իրավագիտակցության հասկացությանը և էությանը, իրավունքի և իրավագիտակցության փոխկապակցվածությանը, ինչպես նաև իրավաստեղծման և իրավակիրառման գործընթացում իրավագիտակցության դերին և ազդեցությանը: Ավելին, իրավական նորմերի ստեղծումը նաև իրավագիտության շարունակական ներագդման արդյունք է: Իր հերթին իրավունքը, ներգործելով հասարակական, մասնագիտական և անհատական իրավագիտակցության վրա, ձևավորում է վարքաբանական և իրավաընկալման նորացված մոդել՝ դրանով նաև պայմանավորելով երկրում իրականացվող իրավական բարեփոխումների ընթացքը և արդյունքները:

Բանալի բառեր: Իրավունք, իրավագիտակցություն, փոխազդեցություն, հանրային կարծիք, հասարակական գիտակցություն, հասարակական հարաբերություններ, վարքագիծ:

Բոլոր ժամանակներում իրավունքի և իրավագիտակցության փոխազդեցության խնդրի ուսումնասիրումը, նրանց միասնության և տարբերության բացահայտումը սոցիալ-իրավական կյանքում եղել է արդիական: Դժվար է թերագնահատել յուրաքանչյուր անհատի՝ որպես սոցիալապես և քաղաքականապես ակտիվ անձի, ձևավորման գործում իրավունքի և իրավագիտակցության ունեցած կարևոր նշանակությունը՝ հիմնված ազատական-ժողովրդավարական արժեհամակարգի վրա: Մարդկային ձգտումները՝ ապրել և արարել քաղաքակիրթ և կանոնակարգված հասարակությունում, վաղուց հիմնավորել են այդ արժեքների ձևավորման գործընթացում իրավագիտակցության և իրավունքի ունեցած անգնահատելի դերը: Ե՛վ իրավագիտակցությունը, և՛ իրավունքը, անշուշտ, կարիք ունեն շարունակական կատարելագործման, զարգացման, գիտական վերլուծության և վերաարժևորման:

Ժամանակակից իրավունքի տեսությունը հրաժարվել է դիտարկել իրավական խնդիրները բացառապես ձևական-իրավաբանական շրջանակներում: Իրավունքի տեսությունն անհիշելի ժամանակներից իր հետաքրքրության ոլորտի մեջ է ներառել տարբեր գիտակցության ձևերի հետ իրավունքի ունեցած փոխազդեցության հիմնա-

խնդիրները, որոնցից մեկը չափազանց սերտորեն է կապված իրավունքի հետ: Դա իրավագիտակցությունն է, որը շատ հաճախ նույնացվում է իրավունքի հետ:

Որպես հասարակական գիտակցության ձև կամ բնագավառ՝ իրավագիտակցությունն արտացոլում է իրավական իրականությունն իրավաբանական գիտելիքների և առհասարակ իրավունքի գնահատման միջոցով: Իրավունքի տեսության մեջ գոյություն ունեն տարբեր տեսակետներ իրավագիտակցության հասկացության սահմանման վերաբերյալ: Ե. Ա. Լուկաշևայի կարծիքով՝ իրավագիտակցությունը, «հայացքների, պատկերացումների, գաղափարների, հույզերի, տրամադրությունների ամբողջություն է, որոնք կանխորոշում են հասարակության մեջ որոշակիացված իրավակարգի ներդրման և գործողության անհրաժեշտության գիտակցումը»¹: Ըստ Ս.Ս. Ալեքսենի՝ իրավագիտակցությունը «հասարակական կյանքի սուբյեկտիվ ոլորտին առնչվող երևույթ է, որը շատ մոտ է իրավունքին և արտահայտում է մարդկանց վերաբերմունքն իրավունքի նկատմամբ»²: Ս.Ա. Կոմարովը նշում է, որ իրավագիտակցությունը «իրավունքի գիտակցումն է, մարդկանց պատկերացումների, զգացմունքների համահավաք արտահայտությունն է ինչպես գործող, այնպես էլ ցանկալի իրավունքի նկատմամբ»³: Ըստ պրոֆեսոր Վ.Ն. Խրոպանյուկի՝ «Իրավագիտակցությունը գաղափարների, հայացքների, ավանդույթների, ապրումների ամբողջություն է, որն արտահայտում է մարդկանց վերաբերմունքը հասարակական կյանքում իրավական երևույթների նկատմամբ»⁴: Ինչպես նշում է ակադեմիկոս Վ.Ս. Ներսեսյանը՝ «Իրավագիտակցությունն իրավունքի՝ որպես սոցիալական իրականության առանձնահատուկ երևույթի գիտակցման ձև է»⁵: Հաշվի առնելով տարբեր հեղինակների կարծիքները և փորձելով համադրել դրանք՝ կարելի է իրավագիտակցությունը ներկայացնել որպես անհատների և խմբերի գիտելիքների, պատկերացումների, հույզերի, հայացքների և գնահատականների ամբողջություն, որն արտահայտում է մարդկանց վերաբերմունքը գործող և ցանկալի իրավունքի, դրա կիրառման և արտահայտման ձևերի նկատմամբ⁶:

Իրավունքի և իրավագիտակցության հարաբերակցության հարցում, կարծում ենք, նպատակահարմար չէ այս երևույթների ոչ նույնականացումը, ոչ էլ միմյանց հակադրումը: Վերջիններս սոցիալ-իրավական կյանքի տարբեր երևույթներ են, ուստի անհնար է խոսել իրավագիտակցության մասին իրավունքից դուրս, այնպես, ինչպես իրավունքի մասին՝ իրավագիտակցությունից դուրս: Իրավական նորմը, իրավահարաբերությունը,

¹ Տե՛ս **Лукашева Е. А.**, Социалистическое правосознание и законность, М.: Юрид. лит., էջ 17:

² Տե՛ս **Алексеев С. С.**, Теория права. — М.: Издание 2-е, переработанное и дополненное Издательство БЕК, 1995г., էջ 201:

³ Տե՛ս **Комаров С.А.** 1996, Общая теория государства и права, Курс лекций, издание 2-ое, исправленное и дополненное, Москва, «Манускрипт», էջ 237:

⁴ Տե՛ս **Хропанюк В.Н.**, 1995, Теория государства и права, 2-е издание, дополненное, исправленное, под ред. профессора **Стрекозова В.Г.**, Москва, «ДТД», էջ 203:

⁵ **Ներսիսյան Վ. Ս.**, Իրավունքի և պետության տեսություն, Վ. Ներսիսյան. - Եր.: Նաիրի, 2001, էջ 91:

⁶ Տե՛ս՝ Պետության և իրավունքի տեսություն, Ուսումնական ձեռնարկ, Հեղ. Խումբ: Գիտ. Խմբ.՝ **Ա. Ղամբարյան, Մ. Սուրադյան.** -3-րդ լրամշակված հրատ., Երևան: Լուսաբաց հրատարակչատուն, 2018, էջ 282:

իրավագիտակցությունը փոխկապակցված երևույթներ են և պայմանավորում են միմյանց գոյությունը: Դժվար է չհամաձայնել այն տեսակետի հետ, որ իրավունքի և իրավագիտակցության հարաբերակցությունը դրսևորվում է փոխադարձաբար միմյանց վրա ազդելու և միմյանց գոյությունը հիմնավորելու մեջ, ինչի արդյունքում վերջիններիս միջև ծագում է հակադարձ կախվածություն: Ասվածի ապացույցն այն է, որ իրավական բարեփոխումները ժամանակի ընթացքում հանգեցնում են համապատասխան բովանդակային փոփոխությունների հասարակական իրավագիտակցության մեջ, և ճիշտ հակառակ գործընթացին ենք ականատես լինում, երբ բովանդակային փոփոխությունների են ընթարկվում իրավական նորմերը: Ակնհայտ է, որ, առանց իրավագիտակցության ակտիվ դերակատարության, իրավունքը չի կարող արդյունավետորեն ազդել հասարակական հարաբերությունների վրա: Այն ոչ միայն նախորդում է իրավական նորմերի ստեղծմանը, այլև ուղեկցում է վերջիններիս իրենց գործողության ողջ ընթացքում, անգամ նրանց ուժը կորցնելուց հետո: Առանձին անհատների իրավագիտակցության զարգացման մակարդակից, հասարակության իրավական մշակույթի որակից և այս սոցիալ-իրավական երևույթների հասունության աստիճանից է մեծապես կախված իրավունքի դերակատարությունը, ինչպես նաև իրավական կարգավորման մեխանիզմի արդյունավետությունը:

Իրավաստեղծման և իրավունքի իրացման գործընթացում իրավագիտակցության ունեցած ազդեցությունն ուղղակի վկայությունն է նրա, որ ոչ իրավունքը, և ոչ էլ իրավագիտակցությունը չեն կարող զարգանալ մեկուսի վիճակում: Օրենսդիրը, հասարակական հարաբերությունները բերելով իրավական կարգավորման դաշտ, դրանց հաղորդում է իրավական բնույթ, տալիս կոնկրետ ձև և բովանդակություն, ինչի արդյունքում էլ իրավական նորմերն ընկալվում են որպես պետական կամքի արտահայտություն: Օրենքի «ոգու» լիակատար համապատասխանությունը հանրային իրավագիտակցությանը գրեթե անհասանելի կատարելություն է: Հաճախ ստացվում է այնպես, որ հասարակական իրավագիտակցությունն է առաջ անցնում օրենսդրությունից՝ պահանջելով փոփոխել արդեն հնացած իրավական կարգավորումները, կամ օրենսդրությունն է համարվում առավել առաջադիմական՝ ի տարբերություն կարծրացած և չեզոք հանրային իրավագիտակցության: Պետությունը պետք է ձգտի լուծել նման հակասությունները՝ հոգուտ առաջադեմ հանրային իրավագիտակցության և այդպիսով ժամանակին արձագանքել հասարակության մեջ տեղի ունեցող փոփոխություններին:

Իրավաստեղծումը հատուկ գիտելիքներ և ունակություններ պահանջող ինտելեկտուալ գործունեություն է, որը կապված է իրավական նորմերի ստեղծման, փոփոխման կամ վերացման հետ: Իրավաստեղծ գործունեության անհրաժեշտությունը թելադրված է կարգավորման կարիք ունեցող հասարակական հարաբերությունների գոյության օբյեկտիվ պահանջով⁷: Իրավունքի ձևավորումը՝ որպես հատուկ մշատված իրավաստեղծման ընթացակարգ, իրենից ենթադրում է օրենսդրական նախագծերի

⁷ Տե՛ս նույն տեղը, էջ 417:

մշակման հստակ արտահայտված փուլերի առկայություն, որոնց շարքում սկզբունքային կարևոր նշանակություն ունի քաղաքացիների և իրավակիրառողների կարծիքի նախնական ուսումնասիրությունը՝ հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման անհրաժեշտության վերաբերյալ: Ապագա նորմատիվ իրավական ակտի հայեցակարգի մշակումը պետք է համակարգված ձևով որոշակիացնի այդ ակտն ընդունելու նպատակները, խնդրիները, միջոցները, եղանակները և իրավական կարգավորման հնարավոր արդյունքները⁸: Այս նպատակին հասնելու համար պետությունը, իրավաստեղծ գործունեություն իրականացնելու իրավասությունը վերապահելով հանրային-իշխանական մարմիններին, բնավ չի զրկում հասարակական միավորումներին, քաղաքական կուսակցություններին և ոչ պետական այլ կառույցներին այս գործընթացին ներգրավված լինելու հնարավորությունից: Վերջիններս զգալի դերակատարում ունեն ինչպես իրավական ակտերի մշակման, հանրային լսումների և այլ քննարկումների, այնպես էլ իրավաստեղծ գործունեության առանձին բաղադրիչների նկատմամբ հասարակական վերահսկողություն իրականացնելու գործընթացներում:

Կարևորելով հանրային կարծիքի բացահայտման անհրաժեշտությունը, որը առկա հասարակական իրավագիտակցության դրսևորումն է, օրենսդիրը «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի կարգավորումներում անդրադառնում է հանրային քննարկումների ներկայացվող նախագծերին և այդ քննարկումներին ներկայացվող պահանջներին: Մասնավորապես 3-րդ հոդվածի համաձայն՝ օրենսդրական ակտերի նախագծերը ենթակա են հանրային քննարկման՝ բացառությամբ միջազգային պայմանագրի վավերացման (դրան միանալու) մասին օրենքի նախագծի: Այլ նորմատիվ իրավական ակտերի նախագծերը հանրային քննարկման կարող են դրվել նախագիծը մշակող կամ այն ընդունող մարմնի նախաձեռնությամբ: Ինչ վերաբերում է 4-րդ հոդվածին, ապա այն կարգավորում է հանրային քննարկումների կազմակերպմանն ու անցկացմանը ներկայացվող պահանջները⁹: Հանրային կարծիքի բացահայտման հարցում անգնահատելի է հանրաքվեի՝ որպես ժողովրդաիշխանության իրացման ձևի, դերակատարությունը: Վերջինիս ներքո ընդունված է հասկանալ Սահմանադրությամբ կամ օրենքով քվեարկության համար չարգելված հանրային կարևորագույն նշանակություն ունեցող հարցերով քաղաքացիների կամ համայնքի բնակչության՝ քվեարկության եղանակով անմիջական կամարտահայտություն, որի արդյունքները պետք է կանխորոշեն պետության քաղաքականության հիմնարար ուղղությունները և հնարավորինս երաշխավորեն հանրային իշխանության իրացման կայունություն և կանխատեսելիություն¹⁰: Բոլոր այն դեպքում, երբ իրավաստեղծման գործընթացն իրականացվում է մեխանիկորեն կամ նպատակ է հետապնդում

⁸ См. у Теория государства и права. Курс лекций / Под ред. Н. И. Матузова и А. В. Малько. – М.: Юрист, 1997, էջ 566:

⁹ См. у «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք, 21.03.2018, ՀՕ-180-Ն:

¹⁰ См. у **Մարանդյան Ռ. Ռ.**, Հանրաքվեն որպես ժողովրդաիշխանության իրացման ձև Հայաստանի Հանրապետությունում: Մենագրություն - Եր.:«ԹԱՄԿ» ՄՊԸ, 2019.- էջ 164:

արտահայտել հասարակության որոշ խմբերի կամ քաղաքական ուժի նեղ, անձնավորված շահերը, ապա նման իրավական նորմերը հակասության մեջ են մտնում հանրային իրավագիտակցություն հետ: Նման իրավիճակում հաճախ պարզվում է, որ իրավական նորմը չի կատարում իր բուն գործառույթը, անարդյունավետ է, իսկ դրա իրականացումը՝ խնդրահարույց:

Ժամանակակից կյանքի բնութագրական գծերից է այն, որ տարբեր անհատներ և սոցիալական խմբեր կարող են ունենալ իրարից սկզբունքորեն տարբերվող շահեր, հետաքրքրություններ և պահանջմունքներ, ինչն էլ իր հերթին պայմանավորում է մարդկանց ոչ միատեսակ վերաբերմունքն ամենատարբեր հասարակական երևույթների, այդ թվում՝ իրավական իրականության և իրավաբանական գործունեության նկատմամբ: Իրավագիտակցության ազդեցությունը տեսանելի է իրավունքի իրացման գործընթացում՝ մեծամասամբ պայմանավորելով մարդկանց վարքագծի իրավաչափ և ոչ իրավաչափ տարբերակների ընտրությունը: Անհատների և խմբերի իրավագիտակցությունը ոչ միայն ուղղորդում, այլև կարգավորում է անձանց վարքագիծը՝ հիմնված իրականության ճանաչման և օբյեկտիվ գնահատման վրա, որն էլ իր հերթին արտահայտվում է իրավունքի պահպանման, իրավունքի կատարման և իրավունքի օգտագործման ձևերում:

Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ իրավագիտակցությունը կարևոր դեր ունի նաև իրավասու մարմինների և պաշտոնատար անձանց իշխանական գործունեության արդյունք հանդիսացող իրավակիրառման գործընթացում, որտեղ առաջնային են դառնում մասնագիտական իրավագիտակցության առկա որակները: Դժվար է պատկերացնել իրավական նորմի կիրառման այնպիսի դեպքեր, երբ այն կարող է տեղի ունենալ դատավորի, դատախազի, քննիչի կամ այլ իրավասու սուբյեկտի իրավագիտակցությունից դուրս: Իրավասու անձը, նախքան իրավունքի կիրառմանն անցնելը, նախ պետք է պարզի, վերլուծի և հասկանա իրավական նորմի իմաստը, պահանջները և կիրառելիության սահմանները: Ակնհայտ է, որ, առանց զարգացած իրավագիտակցության, հնարավոր չէ հասնել ցանկալի արդյունքի: Իրավագիտակցության վրա է հիմնված նաև ցանկացած վարույթային գործի լուծման համար անհրաժեշտ ապացույցների գնահատումը: Հաշվի առնելով այս հանգամանքը՝ ՀՀ դատական օրենսգրքի սահմանադրական օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ դատարանը գործը կամ հարցը քննում և լուծում է Սահմանադրությանը և օրենքին համապատասխան՝ գործի հանգամանքները գնահատելով իր ներքին համոզմամբ¹¹: Իրավագիտակցության դերակատարությունը հատկապես կարևորվում է վարույթային գործերի քննության արդյունքում որոշում կայացնելիս: Մասնավորապես, ՀՀ քրեական օրենսգրքի «Պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքները» վերտառությամբ 69-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ պատժի տեսակը և չափը որոշվում են

¹¹ Տե՛ս «ՀՀ Դատական օրենսգիրք», ՀՀ սահմանադրական օրենք, 07.02.2018, ՀՕ-95-Ն:

հանցագործությամբ պատճառված վնասի բնույթով և չափով, հանցագործության եղանակով, տեղով, ժամանակով, հանցագործության շարժառիթներով և նպատակներով, դիտավորության կամ անգոյշության տեսակով, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքներով, ինչպես նաև նշանակվող պատժի՝ հանցավորի վերասոցիալականացման և իրավահպատակ վարքագծի ձևավորման գործընթացի ու նրա ընտանիքի կենսապայմանների վրա ազդեցությամբ¹²:

Որպես օրենսդրության մեջ առկա իրավական բացերի լրացման արդյունավետ միջոց՝ ընդունված է համարել օրենքի կամ իրավունքի անալոգիան, որը, ինչպես հասկանում ենք, չի կարող տեղի ունենալ առանց իրավագիտակցության ազդեցության: Այսպես, ըստ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի՝ եթե օրենսդրության մեջ բացակայում է կոնկրետ հասարակական հարաբերությունը կարգավորող իրավական նորմը, սակայն օրենսդրությամբ սահմանված է համանման հարաբերությունները կարգավորող այլ իրավական նորմ, ապա այդպիսի հարաբերությունների նկատմամբ (եթե դա չի հակասում դրանց էությանը) կիրառվում են համանման հարաբերություններ կարգավորող իրավական նորմերը (օրենքի անալոգիա): Օրենսդրության մեջ կոնկրետ հասարակական հարաբերությունը կարգավորող իրավական նորմի բացակայության և օրենքի անալոգիայի կիրառման անհնարինության դեպքում այդպիսի հարաբերությունների նկատմամբ կիրառվում են իրավունքի տվյալ ճյուղի սկզբունքները կամ տվյալ իրավահարաբերության էությանը համապատասխան իրավունքի ընդհանուր սկզբունքները (իրավունքի անալոգիա)¹³: Վերոգրյալից պարզ է դառնում, որ իրավունքի անալոգիան, ի տարբերություն օրենքի անալոգիայի, իրավակիրառ մարմնից պահանջում է ավելի բարձր որակավորում, իրավագիտակցության ավելի բարձր աստիճան և տեսագործական իրավամտածողություն¹⁴:

Հասարակական կյանքում կան վարքագծային դրսևորումներ, որոնց սուբյեկտների իրավամտածողության առանցքը կազմում է այն գաղափարը, որ նպատակի «արդարացի» լինելը ոչ միայն չպետք է հանգեցնի դրանց անպատժելիության, այլև լինի խրախուսելի: Որպես առավել տեսանելի օրինակներ՝ կարելի է ներկայացնել «վենդետայի՝ արյան վրեժ» կամ «աղջիկ փախցնելու» վարքագծային դրսևորումները: Չանդրադառնալով հիշյալ արարքների «արդարացված» կամ բարոյապես հիմնավորված լինելուն՝ նշենք, որ քաղաքակիրթ հասարակությունը և պետությունն իրավական միջոցներով արդեն տևական ժամանակ պայքարում են վերջիններիս դեմ: Ուստի, հաշվի առնելով իրականության մեջ նմանատիպ արարքների աստիճանաբար նվազման միտումները՝ վստահաբար կարելի է ասել, որ իրավունքը՝ իր դաս-

¹² Տե՛ս «ՀՀ Քրեական օրենսգիրք», ՀՀ օրենք, 05.05.2021, ՀՕ-199-Ն:

¹³ Տե՛ս «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենք, 21.03.2018, ՀՕ-180-Ն:

¹⁴ Տե՛ս՝ Պետության և իրավունքի տեսություն, Ուսումնական ձեռնարկ, Հեղ. Խումբ: Գիտ. Խմբ.՝ Ա. Ղամբարյան, Մ. Մուրադյան. 3-րդ լրամշակված հրատ. - Երևան: Լուսաբաց հրատարակչատուն, 2018, էջ 502:

տիարակչական ներուժով և ունեցած ազդեցությամբ, հասել է հանրային և անհատական իրավագիտակցության վերաիմաստավորմանը, ինչն էլ իր հերթին ուղղակի վկայությունն է իրավունքի իրավագիտակցության նկատմամբ ունեցած ներգործության:

Ամփոփելով՝ կարելի է փաստել, որ իրավունքի և իրավագիտակցության փոխկապակցվածությունը նման է յուրատեսակ և անվերջանալի շրջափուլի, երբ պատմական զարգացման որոշակի էտապում իրավագիտակցության ազդեցությամբ ստեղծվում են իրավունքի դրսևորումն համարվող իրավական նորմերը: Իր հերթին իրավունքն իրավական կարգավորման գործառույթի միջոցով ժամանակի ընթացքում սկսում է ներգործել հասարակական, մասնագիտական և անհատական իրավագիտակցության նկատմամբ՝ պայմանավորելով երկրում իրականացվող իրավական բարեփոխումների ընթացքը և արդյունքները:

ВЗАИМОВЛИЯНИЕ ПРАВА И ПРАВОСОЗНАНИЕ

Маргарян Абгар

*Старший преподаватель кафедры общеправовых дисциплин отдела подготовки
полицейских Образовательного комплекса Министерства внутренних дел
Республики Армения*

Аннотация. В научной статье рассматриваются вопросы, связанные с понятием и сущностью правосознания, взаимозависимостью права и правосознания, а также ролью и влиянием правосознания в процессе правотворчества и правоприменения. Более того, создание правовых норм является ещё и результатом постоянного воздействия правосознания. В свою очередь, право, воздействуя на общественное, профессиональное и индивидуальное правосознание, формирует обновлённую модель поведения и правовосприятия, тем самым также определяя ход и результаты реализуемых в стране правовых реформ.

Ключевые слова: Право, правосознание, взаимодействие, общественное мнение, общественное сознание, общественные отношения, поведение.

THE MUTUAL INFLUENCE OF LAW AND LEGAL CONSCIOUSNESS

Margaryan Abgar

*Senior Lecturer at the Department of General Legal Subjects of the Police Training
Division of the Educational Complex of the Ministry of Internal Affairs
of the Republic of Armenia*

Abstract. This scientific article discusses issues related to the concept and essence of legal consciousness, the interdependence of law and legal consciousness, as well as the role and influence of legal consciousness in the process of lawmaking and law enforcement. Moreover, the creation of legal norms is also the result of the constant influence of legal awareness. In turn, law, influencing public, professional and individual legal consciousness, forms an updated model of behavior and legal perception, thereby also determining the course and results of legal reforms implemented in the country.

Keywords: Law, legal consciousness, interaction, public opinion, public consciousness, social relations, behavior.

Հոդվածը գրախոսվել է՝ 04.10.2024թ.
Ներկայացվել է տպագրության՝ 18.10.2024թ.

**ԿԵՆՍԱԲԺՇԿԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ
ՓՈԽՊԱՏՎԱՍՏՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՄԱՐԴՈՒ
ՕՐԳԱՆՆԵՐԻ ԵՎ ՀՅՈՒՄՎԱԾՔՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

ԱՆՆԱ ՄԿՐՏՈՒՄՅԱՆ

*Հայաստանի Հանրապետության առողջապահական
և աշխատանքի տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի
սահմանադրական իրավունքի ամբիոնի հայցորդ
DOI: 10.63925/18294847-2025.19op-10*

Համառոտագիր Հոդվածը նպատակ է հետապնդում բացահայտելու մարդու օրգանների և հյուսվածքների իրավական կարգավիճակը դրանց՝ փոխապատվաստման շրջանակում քաղաքացիական շրջանառության առարկա դառնալու գործընթացում, բացահայտելու դրանց նկատմամբ սեփականության իրավունքի ճանաչման, դրանց գույքի կարգավիճակ հաղորդելու, իրավական ռեժիմը սահմանելու և որպես քաղաքացիական իրավունքների օբյեկտ դասակարգելու անհրաժեշտությունը:

Դրված նպատակին հասնելու համար ուսումնասիրվել են տարբեր տեսաբանների կարծիքներ և այլ երկրների օրենսդրական կարգավորումներ, որի արդյունքում առաջարկվել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում ի թիվս քաղաքացիական իրավունքների այլ օբյեկտների, ներառել նաև մարդու օրգանները և հյուսվածքները, միաժամանակ ոլորտային օրենսդրությամբ հստակ սահմանել դրանց շրջանառության թույլատրելի սահմանները:

Բանալի բառեր- օրգան; հյուսվածք; փոխապատվաստում; կենսաբժշկական հետազոտություն; սեփականության իրավունք; գույք; իրավունքների օբյեկտ; իրավական ռեժիմ; դոնոր; ռեցիպիենտ; քաղաքացիական օրենսգիրք; իրազեկված համաձայնություն; ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիություն:

I. Նախաբան

Ժամանակակից բժշկության առաջադեմ և գերաբազմազան ձեռքբերումների շնորհիվ մարդու օրգանները և հյուսվածքները առանձնացվում են մարդու մարմնից և պահպանում իրենց օգտակար հատկությունները և օգտագործվում են մարդու կյանքը փրկելու և առողջությունը վերականգնելու բուժական այնպիսի մեթոդի շրջանակում, ինչպիսին փոխապատվաստումն է:

20-րդ դարի վերջից և 21-րդ դարի սկզբից փոխապատվաստումը կենտրոնացավ բժշկական օգնության և սպասարկման այնպիսի ոլորտներում նվաճումների վրա,

ինչպիսիք են վիրաբուժությունը, վերակենդանացումը, անեսթեզիոլոգիան, իմունոլոգիան, դեղաբանությունը և կենսաբժշկական այլ ոլորտները:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մարդու օրգանների և հյուսվածքների փոխադաստման հետ կապված միջամտությունների թիվը անընդհատ աճում է, փոխադաստման ընթացակարգի կարգավորումը դարձել է այսպես կոչված «բժշկական» օրենսդրության հիմնահարցերից մեկը:

Մարդու օրգանները և հյուսվածքները շրջանառության մեջ քաղաքացիական գործարքների առարկա են՝ մասնավորապես նվիրատվության, պահպանման, փոխադրման, ներմուծման, արտահանման և այլն: Միևնույն ժամանակ, պետությունների մեծ մասի, այդ թվում նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը մարդու օրգանները և հյուսվածքները չեն դիտարկում որպես իրավական կարգավորման անկախ օբյեկտ:

II. Մարդու օրգանների և հյուսվածքների իրավական կարգավիճակի վերաբերյալ ոլորտային օրենսդրության վերլուծությունը

Գործող օրենսդրության վերլուծությունը ցույց է տալիս, որ օրգանները և հյուսվածքները իրենց իրավական կարգավիճակով գտնվում են իրավական վակուումում: Ինչպես օտարերկրյա օրենսդրությունների, այնպես էլ Հայաստանի Հանրապետության, սակավաթիվ և հիմնականում ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերը^{1,2,3,4,5} սահմանում են հիմնականում տեխնիկական պահանջներ մարդու օրգանները կամ

¹ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2019 թվականի փետրվարի 1-ի «Փոխադաստման նպատակով օրգաններ և (կամ) հյուսվածքներ վերցնելու, մշակելու կանոնները և փոխադաստման իրականացնելու կարգը հաստատելու մասին» Առողջապահության նախարարի N 04-Ն հրաման:

² Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հունիսի 30-ի «Արտամարմնային բեղմնավորման եղանակով ստացված և չօգտագործված սաղմերի անհատույց տրամադրման, ոչնչացման կամ պահպանման վերաբերյալ գրավոր համաձայնության ձևը, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված ամուսնության մեջ գտնվող կնոջը (ամուսնուն) կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված ամուսնության մեջ չգտնվող կնոջը կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցված (վավեր ճանաչված) ամուսնության մեջ չգտնվող և հայկական ծագում ունեցող՝ Հայաստանի Հանրապետությունում գտնվող կամ բնակվող օտարերկրացի զույգին կամ կնոջը սաղմի անհատույց տրամադրման կարգն ու պայմանները սահմանելու մասին» N 1003-ն հրաման:

³ Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի մարտի 7-ի «Վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառման կարգը, մեթոդների տարատեսակներն ու բժշկական գործելակերպը սահմանելու մասին» N 214-Ն որոշում:

⁴ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մայիսի 27-ի «Անվճար կամ արտոնյալ պայմաններով վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական օգնության և սպասարկման կարգն ու շահառուներին ներկայացվող պահանջները սահմանելու մասին» N 568-Ն որոշում:

⁵ Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի հունվարի 13-ի «Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողություններին մասնակցելու կամ հակառակորդի հետ շփման գծում մարտական հերթապահություն կամ հատուկ առաջադրանք կամ ծառայողական պարտականություններ կատարելու ընթացքում կամ հակառակորդի նախահարձակ գործողության հետևանքով գոհված(մահացած) կամ հայաստանի հանրապետության պաշտպանության մարտական գործողություններին մասնակցելու կամ հակառակորդի հետ շփման գծում մարտական հերթապահության կամ հատուկ առաջադրանք կամ ծառայողական պարտականություններ կատարելու ժամանակ անհայտ կորելու հետևանքով դատական կարգով անհայտ բացակայող կամ մահացած ճանաչված յուրաքանչյուր զինծառայողի ծնողների վերարտադրողական առողջությանն աջակցելու նպատակով վերարտադրողականության օժանդակ տեխնոլոգիաների կիրառմամբ բժշկական օգնության և սպասարկման որոշ ծախսերի մասնակի փոխհատուցման տրամադրման միջոցառումը և կարգը հաստատելու մասին» N 64-Լ որոշում:

հյուսվածքները վերցնելու, պահելու, բժշկական և այլ նպատակներով օգտագործելու, փոխհատուցելու համար՝ թողնելով դրանց իրավական բնույթի, պատկանելության և շրջանառության իրավական կարգավորման հարցերը իրավական կարգավորման շրջանակից դուրս:

Արդյունքում մարդու մարմնից առանձնացված օրգանների և հյուսվածքների օգտագործումը բժշկական, գիտական և այլ նպատակներով տեղի է ունենում իրավական կարգավորման իսպառ բացակայության կամ դրվագային կարգավորման պայմաններում:

ՀՀ առողջապահության նախարարի 2019 թվականի փետրվարի 1-ի «Կենդանի դոնորից վերցվող փոխպատվաստման ենթակա օրգանների և (կամ) հյուսվածքների ցանկը սահմանելու և առողջապահության նախարարի թիվ 03-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» 2024 թվականի հուլիսի 24-ի թիվ 234-Ն հրամանի⁶ հավելվածով հաստատվել է կենդանի դոնորից վերցվող փոխպատվաստման ենթակա օրգանների և (կամ) հյուսվածքների ցանկը, այն է՝ մեկ երիկամ, լյարդի բլիթ, ըստ էության վկայակոչելով միայն կենդանի դոնորից վերցվող օրգանների և (կամ) հյուսվածքների ցանկը, սակայն ՀՀ առողջապահության նախարարի 2019 թվականի փետրվարի 1-ի «Փոխպատվաստման օրգաններ և (կամ) հյուսվածքներ վերցնելու, մշակելու, պահպանելու և տեղափոխելու կանոնները և փոխպատվաստումն իրականացնելու կարգը հաստատելու մասին» թիվ 04-Ն հրամանի հավելվածի 2-րդ կետի համաձայն՝ կենդանի դոնորից կամ դիակային դոնորից փոխպատվաստման նպատակով վերցվում են միայն այն օրգանները և (կամ) հյուսվածքները, որոնք ընդգրկված են առողջապահության բնագավառի պետական լիազոր մարմնի կողմից սահմանված փոխպատվաստման ենթակա օրգանների և (կամ) հյուսվածքների ցանկում: ՀՀ առողջապահության նախարարի 2019 թվականի փետրվարի 1-ի թիվ 05-Ն հրամանի⁷ մինչև 2024 թվականի օգոստոսի 13-ը գործող խմագրությամբ հավելվածի 2և 3-ով⁸ սահմանված էր դիակային դոնորից օրգաններ և (կամ) հյուսվածքներ վերցնելու հնարավորության մասին եզրակացության ձևը, որտեղ առկա էր մի շարք օրգանների և հյուսվածքների ցանկ, որոնք կարող էին վերցվել դիակային դոնորից ուղեղային մահվան փաստի հաստատման հիմքով,⁹ որոնք, ըստ էության, չէին համընկնում ՀՀ առողջապահության նախարարի 2024

⁶ Ընդունվել է 24.07.2024 թվականին, ուժի մեջ է մտել 27.07.2024 թվականին, Միասնական կայք 2024.07.22-2024.08.04 Պաշտոնական հրապարակման օրը 26.07.2024:

⁷ Ընդունվել է 01.02.2019 թվականին, ուժի մեջ է մտել 21.03.2018 թվականին, ուժի մեջ է մտել 07.04.2018 թվականին, ՀՀՊՏ 2018.03.28/23(1381) Հոդ.373:

⁸ 2և 3

Օրգաններ/հյուսվածքներ ենթակա է օգտագործման Ոչ օգտագործելի լինելու պատճառը Սիրտ այտ/ոչ Ձախ թոք այտ/ոչ Աջ թոք այտ/ոչ Լյարդ այտ/ոչ Ենթաստամոքսային գեղձ այտ/ոչ Ձախ երիկամ այտ/ոչ Աջ երիկամ այտ/ոչ Փայծաղ այտ/ոչ Աղիք այտ/ոչ Էնդոկրին գեղձեր այտ/ոչ Եղջերաթաղանթ այտ/ոչ Մաշկ այտ/ոչ Ոսկոր այտ/ոչ Էնդոկրին հյուսվածք/հստակեցնել հյուսվածքի տիպը/ այտ/ոչ

⁹ «Մարդուն օրգաններ և (կամ) հյուսվածքներ փոխպատվաստելու մասին» օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի համաձայն՝ ուղեղի մահը գլխուղեղի կենսագործունեության լրիվ և անդադնալի դադարումն է, որը գրանցվում է աշխատող սրտի և թոքերի արհեստական օդափոխության պայմաններում:

թվականի հուլիսի 24-ի թիվ 234-Ն հրամանով հաստատված ցանկի հետ: Եթե նշված հակասությունը փորձեինք կարգավորել իրավական կոլիզիաների լուծման կանոններով, ապա դիակային դոնորից օրգաններ և հյուսվածքներ վերցնելու հարցը դուրս կմնար, քանի որ «Նորմատի իրավական ակտերի մասին» օրենքի¹⁰ 40-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջի համաձայն ավելի ուշ ուժի մեջ մտած նորմատիվ իրական ակտը ՀՀ առողջապահության նախարարի 2024 թվականի հուլիսի 24-ի թիվ 234-Ն հրամանն է, որը միայն մեկ երիկամը և լյարդի բլիթն է դիտարկում որպես փոխպատվաստման նպատակով վերցվող օրգան կամ հյուսվածք: Ըստ այդմ առկա էր օրենսդրական փոփոխության և դիակային դոնորից վերցվող օրգանների և (կամ) հյուսվածքների ցանկը սահմանելու իրավական բացի լուծման անհրաժեշտություն, սակայն Առողջապահության նախարարի 2024 թվականի օգոստոսի 7-ի «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2019 թվականի փետրվարի 1-ի N 05-Ն հրամանում փոփոխություն կատարելու մասին» թիվ 255-Ն հրամանով վերոնշյալ հավելվածի Ձև 3¹¹-ը շարադրվել է նոր խմբագրությամբ, որտեղ դիակային դոնորից վերցվող որևէ օրգան կամ հյուսվածք նշված չէ: Ըստ էության նման փոփոխության նպատակը դիակային դոնորից նույն հրամանում նշված բժշկական հանձնաժողովի

¹⁰ Ընդունվել է 21.03.2018 թվականին, ուժի մեջ է մտել 07.04.2018 թվականին, ՀՀՊՏ 2018.03.28/23(1381) Հոդ.373:

¹¹ Ձև 3

Ե Զ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՈՒՂԵՂԱՅԻՆ ՄԱՀՎԱՆ ՓԱՍՏ ՀԱՍՏԱՏԵԼՈՒՑ ՀԵՏՈ ԴԻԱԿԱՅԻՆ ԴՈՆՈՐԻՑ ՕՐԳԱՆՆԵՐ ԵՎ (ԿԱՄ) ՀՅՈՒՍՎԱԾՔՆԵՐ ՎԵՐՑՆԵԼՈՒ ՀՆԱԴԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Դոնորի անունը, ազգանունը, հայրանունը _____
 Դոնորի սեռը _____, ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը _____
 Դոնորի արյան խումբը _____, Ռեզուս պատկանելիությունը _____
 Դոնորի գենոտիպ (HLA- տիպավորում և այլն) _____
 Դոնորի օրգանիզմի իմունային համակարգի առանձնահատկությունները _____

Դոնորի մահվան պատճառը _____

Տեղեկություններ՝ կիրառված սրտային վերակենդանացման գործողությունների թվի, սրտի կանգի (կանգերի), դրա տևողության, արհեստական շնչառության ապարատին միացված լինելու և դրա տևողության, միզային կաթետերին միացված լինելու և դրա տևողության մասին

Բժշկական հանձնաժողովի եզրակացությունը
 Օրգաններ, հյուսվածքներ
 (նշել՝ անվանում/ներ/ը) Ենթակա է օգտագործման
 (նշել՝ այո կամ ոչ) Ոչ օգտագործելի
 լինելու պատճառը Բժշկական հաստատության անվանումը

Բժշկական հանձնաժողովի անդամներ
 (պաշտոնը) (ստորագրությունը) (անունը, ազգանունը, հայրանունը)
 Օրը, ամիսը, տարեթիվը

եզրակացության հիման վրա ցանկացած օրգան կամ հյուսվածք վերցնելու հնարավորությունն ախատեսելն է եղել, սակայն խնդիրը ամենևին չի լուծվել և դեռ շարունակում է մնալ ակտուալ, դեռ ավելին՝ բարդացել է, քանի որ դարձյալ իրավական կոլիզիաների լուծման կանոնի համաձայն գործում է Առողջապահության նախարարի 2024 թվականի հուլիսի 24-ի թիվ 234-Ն հրամանով նախատեսված կանոնը, ըստ որի անգամ դիակային դոնորից վերցման ենթակա են լինում միայն մեկ երիկամը կամ լյարդի բլիթը, որոնք հնարավոր է վերցնել նաև կենդանի դոնորից՝ ըստ էության իսպառ բացառելով դիակային դոնորությունը:

III. Օրգանների և հյուսվածքների՝ որպես քաղաքացիական իրավունքների օբյեկտի նկատմամբ տեսական մոտեցումը:

Մինչ օրս գիտնականները և օրենսդիր մարմինը չունեն միատեսակ մոտեցում քաղաքացիական իրավունքի կարգավորման օբյեկտների համակարգում մարդու օրգանների, հյուսվածքների կարգավիճակի տեսական ըմբռնման շուրջ:

Գործնականում մարդու հյուսվածքները և օրգանները մասնակցում են քաղաքացիական շրջանառությանը, իսկ ժամանակակից քաղաքակրթության մեջ գերակշռող մոտեցումն այն է, որ դոնորական օրգանները և հյուսվածքները քաղաքացիական իրավունքի անկախ օբյեկտներ են:

Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների մեծ մասի քաղաքացիական օրենսդրությունը բարոյական, էթիկական, սոցիալական, կրոնական և այլ պատճառներով մարդու օրգանները և հյուսվածքները ուղղակիորեն չի ճանաչում որպես քաղաքացիական իրավունքների օբյեկտ:

Մարդու օրգանները և հյուսվածքները քաղաքացիական իրավունքների օբյեկտների կատեգորիային դասակարգելու իմաստը նրանց համար որոշակի քաղաքացիաիրավական ռեժիմ սահմանելն է, այսինքն՝ նրանց հետ որոշակի գործողություններ (գործարքներ) կատարելու հնարավորությունը կամ անհնարինությունը, որը ենթադրում է հայտնի իրավական (քաղաքացիական) արդյունք¹²:

Մի շարք հետազոտողներ, հիմնվելով անձի ռեիֆիկացիայի¹³ անթույլատրելիության վրա, ժխտում են մարդու օրգաններին և հյուսվածքներին քաղաքացիական իրավունքների օբյեկտների գույքային-իրավական բնույթ տալու հնարավորությունը, քանի որ վերջիններս չեն համապատասխանում քաղաքացիական իրավունքների օբյեկտի հատկանիշներին:

¹² Стн Лапач В.А. Система объектов гражданских прав: теория и судебная практика. СПб., 2002. С.388

¹³ Ռեիֆիկացիան փիլիսոփայական և սոցիոլոգիական հասկացություն է, որը ներկայացրել է Կ. Մարքսը, որը ցույց է տալիս սոցիալական հարաբերությունների պատմականորեն անցողիկ ձևը, որտեղ մարդկանց միջև հարաբերությունները ստանում են իրերի միջև հարաբերությունների տեսք: Ռեիֆիկացիան առաջացնում է անձի ապաանձնավորում, իրերն օժտվում են առարկայի հատկություններով (անձնավորում): Դրա դրսևորումներից է առարկայական ձևերի ֆետիշիզմը (ապրանքների, փողի, կրոնական, իրավական և այլն խորհրդանիշների, լեզվի և այլն): Ռեիֆիկացիան առավելապես բնութագրում է տնտեսական և գաղափարական կյանքը կապիտալիզմի ներքո: Մարքսը «Կապիտալում» տվել է ռեիֆիկացիայի հատուկ վերլուծություն. «Այնտեղ, տրտեղ... տեսնում էին իրերի փոխհարաբերություններ (ապրանքների փոխանակումը ապրանքների հետ), Մարքսը այնտեղ բացահայտեց մարդկանց միջև փոխհարաբերությունները» (Ленин В.И. Полн. собр. соч., т. 23, с. 45).

Ըստ Լ.Օ. Կրասավչիկովայի, մարդու օրգանները, հյուսվածքները, արյունը անձնական ոչ նյութական բարիքներ են, որոնք պատկանում են նրան ծննդյան պահից և անբաժանելի են առանց հատուկ բժշկական միջամտության¹⁴:

Որոշ գիտնականներ կարծում են, որ գույքային հայեցակարգի կիրառումը փոխպատկաստման համար նախատեսված օրգանների և հյուսվածքների իրավական ռեժիմի նկատմամբ արդարացված չէ: Օրինակ, Վ.Լ. Սկրիպնիկը նշում է, որ դոնորական օրգանները և այլ անատոմիական նյութերը ոչ մի դեպքում չեն կարող ճանաչվել որպես առարկաներ. դրանք քաղաքացիաիրավական պայմանագրերի անկախ սուբյեկտներ են՝ սահմանափակված քաղաքացիական շրջանառությամբ¹⁵:

Այս տեսակետի օգտին առանձին փաստարկ է այն պնդումը, որ մարդու օրգաններն ու հյուսվածքները ունեն հատուկ ծագում, հետևաբար, դրանք չեն կարող նույնացվել իրերի հետ, քանի որ «դրանք ուղղակիորեն մարդկային բարձրագույն արժեքներ են՝ կապված նրա կյանքի իրավունքի և առողջության հետ, որը պետք է անձեռնմխելի լինի ցանկացած դեպքում»¹⁶:

Օրգանների և հյուսվածքների նկատմամբ սեփականության իրավունքի կիրառման դեմ փաստարկ է նաև այն, որ նման անատոմիական նյութերը չեն կարող լինել վաճառքի կամ գնման կամ այլ առևտրային հարաբերությունների առարկա:

Բայց հետազոտողների մեծամասնությունը, վերլուծելով մարդու օրգանների և հյուսվածքների իրավական էությունը, դրանք ճանաչում է որպես քաղաքացիական իրավունքի հատուկ օբյեկտներ, ընդ որում՝ գույքային բնույթի:

Ա.Վ. Գոլովիզնինը մարդու օրգաններն ու հյուսվածքները դիտարկում է որպես «բարոյական պատճառներով քաղաքացիական շրջանառությունից բացառված իրեր»¹⁷:

Գ.Ս. Վասիլևը նշում է, որ «իրավագիտությանը հայտնի միակ նյութական առարկան իրն է: Ուստի կենսանյութի գույքային-իրավական կարգավիճակն այլևս կասկածի տակ չի դրվում արտերկրում, որտեղ կենսատեխնոլոգիան մեծ առաջընթաց է գրանցել»¹⁸:

Ս.Ա. Սինիցինը, խոսելով մարդու օրգանների և հյուսվածքների շրջանառության մասին, դրանք ճանաչում է որպես քաղաքացիական իրավունքների օբյեկտներ, որոնք ունեն շրջանառության էական սահմանափակումներ՝ պայմանավորված ոչ միայն գործող օրենքի պահանջներով, այլև բարոյականության և իրավագիտակցության նորմերով¹⁹:

Ի.Վ. Սպասիբո-Ֆատենան ընդգծում է մարդու մարմնից դուրս օրգանների և

¹⁴ См. у Красавчикова Л.О. Понятие и система личных, не связанных с имущественными прав граждан (физических лиц) в гражданском праве РФ. Екатеринбург, 1994. Ёз 28:

¹⁵ См. у Skrypnik, V.L. (2018). Donor organs as objects of civil relations. Entrepreneurship, Economy and Law, 5, Ёз 62-67:

¹⁶ См. у Lisnych, O.M. (2020). Bodies and tissues of human as special objects civil law. Comparative and Analytical Law, 1, Ёз 172-174:

¹⁷ См. у Головизнин А.В. Оборотоспособность объектов гражданских прав // Право и экономика. 2018. № 4, Ёз 33:

¹⁸ См. у Васильев Г.С. Человеческий биоматериал как объект права // Известия ВУЗов. Правоведение. 2018. № 2. Ёз 67:

¹⁹ См. у Синицын С.А. Исковая защита вещных прав в российском и зарубежном гражданском праве: актуальные проблемы. М., 2015. Ёз 179:

հյուսվածքների գոյության հնարավորությունը, ինչը ցույց է տալիս, որ դրանք կապված չեն անձի հետ և չեն կազմում նրա էությունը: Գիտնականը կարծում է, որ օրգաններն ու հյուսվածքները բժշկական նշանակության միջոցներ են և այն բարիքներն են, որոնք հայտնվում են իրավական միջավայրում և, հետևաբար, կարող են վերագրվել իրավունքի օբյեկտներին²⁰:

Օ.Վ. Հուբսկին նշում է, որ մարդու օրգանները և հյուսվածքները, որոնք հանդիսանում են ոչ նյութական բարիքի՝ առողջության և, ի վերջո, կյանքի բարօրության նյութական հիմքի տարրեր, իրենց հերթին նյութական երևույթ են, և, հետևաբար, դրանք կարող են իրավաչափորեն կոչվել քաղաքացիական նվիրատվության առարկաներ²¹:

Ըստ Վ.Դոնցովի, մարդու օրգաններն ու հյուսվածքները ունեն շոշափելի, տեսանելի ձև, ունեն մարդկային տիրապետության համար մատչելի արժեք և կարող են ունենալ դրամական արժեք, ինչի կապակցությամբ մարդու օրգանները և հյուսվածքները քաղաքացիական իրավունքի անկախ օբյեկտներ են²²:

Իրավաբանական դոկտրինում կա նաև կարծիք, որ որոշակի առանձնահատկություններով պայմանավորված՝ օրգանները և հյուսվածքները քաղաքացիական իրավունքի անկախ օբյեկտներ են, որոնք, սակայն, կարող են լինել սեփականության իրավունքի օբյեկտներ, բայց միայն սահմանափակ ժամկետով՝ մինչև դրանց մարդու մարմնից հեռացումը և այլ օրգանիզմում փոխպատվաստման պահը (կամ մինչև այլ օգտագործման պահը)²³:

Ն.Մ. Կվիտը նշում է, որ անհնար է միանշանակ խոսել սեփականության իրավունքի առաջացման մասին այն անձի մոտ, ումից առաջացել է այդ օրգանը կամ հյուսվածքը: Այս իրավիճակում արժե հիշել մարդու մարմնի և նրա մասերի առևտրայնացման արգելքի սկզբունքը, քանի որ սեփականության իրավունքը թույլ է տալիս նաև օգտվել նման իրավունքի օբյեկտների տնօրինումից, որն այս դեպքում վիճելի է²⁴: Բացի այդ, որոշ գիտնականներ²⁵ հակված են կարծելու, որ օրգանները և հյուսվածքները որպես սեփականություն ճանաչելը հավասարազոր է ստրկության և խախտում է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 4-րդ հոդվածը²⁶:

Այլ գիտնականներ, ընդհակառակը, պնդում են, որ օրգաններն ու հյուսվածքները

²⁰ Տե՛ս Spasibo-Fateeva, I.V. (2015). Objects of civil rights and their types. *Časopis Civilistiki*, 18, էջ 13-18:

²¹ Hubskey, O.V. (2014). Characteristics of objects of civil relations in the field of organs, anatomical materials and reproductive cells donation. *Our Law*, 10, էջ 142-146:

²² Տե՛ս Dontsov, D.S. (2011). The role of civil-law norms in regulating social relations of clinical transplantation (Doctoral thesis, Kuban State University, Krasnodar, Russian Federation).

²³ Տե՛ս Stefanchuk, R.O. (2007). Personal inviolable rights of an individual (concept, content, system, peculiarities of realization and protection. Khmelnytskyi: Publishing House of Khmelnytsky University of Management and Law.

²⁴ Տե՛ս Kvit, N.M. (2019). Biological material as an object of civil legal relations for the creation and use of biobanks in Ukraine. *Forum Prava*, 3, էջ 48-57: doi: 10.5281/zenodo.3240910.

²⁵ Տե՛ս Petrini, C. (2012). Ethical and legal considerations regarding the ownership and commercial use of human biological materials and their derivatives. *Journal of Blood Medicine*, 3, 87-96. doi: 10.2147/JBM.S36134.

²⁶ Տե՛ս <https://www.un.org/en/about-us/universal-declaration-of-human-rights> հղումով, հասանելի է 20.08.2024 թվականի դրությամբ:

տարանջատման արդյունքում ձեռք են բերում իրերի իրավական ռեժիմ, և դրանց դինամիկան հիմնված է սեփականության իրավունքի վրա²⁷:

Քաղաքացիական դոկտրինում ավանդաբար սեփականությունը հասկացվում է որպես իրավունքի մի տեսակ, որը դասական իմաստով ներառում է տիրապետման օգտագործման և տնօրինման իրավագործությունները: Այս համատեքստում Դ.Մ. Վազները կարծում է, որ մարդն ունի սեփականատիրոջ իրավունքներ իր մարմնի նկատմամբ, քանի որ իրավունքները, որոնք գոյություն ունեն մարդու մարմնի նկատմամբ, նման են այն իրավունքներին, որոնք ավանդաբար ներառված են սեփականության իրավունքի խմբում²⁸:

Փիլիսոփա Ջ. Լոքը կարծում էր, որ յուրաքանչյուր մարդ ունի սեփական անձի նկատմամբ սեփականության իրավունք²⁹:

Ալտրոուիզմի փիլիսոփայությունը և դոնորական օրգանների և հյուսվածքների ընկալումը որպես «կյանքի պարզև» առանցքային է դոնորության և փոխպատվաստման պրակտիկայում ամբողջ աշխարհում: Դոնորական օրգանների և հյուսվածքների՝ որպես «կյանքի պարզև» հասկացությունը ենթադրում է, որ նման փիլիսոփայությունը ժխտում է օրգանների և հյուսվածքների նկատմամբ սեփականության իրավունքի կիրառումը: Բանն այն է, որ մարդու օրգանները և հյուսվածքները պետք է դիտարկվեն որպես նվեր, բայց ոչ որպես սեփականություն: Այնուամենայնիվ, արտասահմանյան ակադեմիական գրականության մեջ կա այս կարծիքի հերքումը, ըստ որի օրինական նվիրատվությունը ենթադրում է սեփականության իրավունքի իրականացում: Նվեր տալու համար պետք է սեփականատեր լինել, հետևաբար, մարդը պետք է իրավունք ունենա ինչ-որ բանի նկատմամբ այն նվիրատվությամբ տալու համար³⁰:

Հետաքրքիր դիրքորոշում են որդեգրել այն գիտնականները, ովքեր պնդում են, որ մարմինը և դրա մասերը սեփականության իրավական ռեժիմին չհամապատասխանող առարկաներ ընկալելը միակ միջոցը չէ փոխպատվաստման համատեքստում նվիրատվության ալտրոուիստական ոգին պահպանելու և դրանք բիզնեսից դուրս բերելու համար: Այս տեսակետի կողմնակիցների կարծիքով՝ օրգանների և հյուսվածքների սեփականություն ճանաչելը չի խոչընդոտում մարմնի հետ առևտրային գործարքների անօրինական ճանաչմանը³¹:

²⁷ St' u Stefanchuk, R.O. (2007). Personal inviolable rights of an individual (concept, content, system, peculiarities of realization and protection. Khmelnytskyi: Publishing House of Khmelnytsky University of Management and Law.

²⁸ St' u Wagner, D.M. (1995). Property rights in the human body: The commercialization of organ transplantation and biotechnology. *Duquesne Law Review*, 33, էջ 931-958:

²⁹ St' u Locke, J. (2012). Second treatise of government. Retrieved from <https://english.hku.hk/staff/kjohnson/PDF/LockeJohnSECONDTREATISE1690.pdf>

³⁰ Goold, I., & Quigley, M. (2014). Human biomaterials: The case for a property approach. In *Persons, parts and property: How should we regulate human tissue in the 21st century?* (pp. 231-262). Oxford: Hart Publishing. [13, էջ. 252; 21, էջ. 627]: Jefferies, D.E. (1998). The body as commodity: The use of markets to cure the organ deficit. *Indiana Journal of Global Legal Studies*, 5(2), էջ 621-658

³¹ Büchler, A. (2012). Regulating the sacred – organ donation and transplantation: Autonomy and integrity of the person or social responsibility of the body? New York: NYU School of Law

Եվ թերևս միայն Ֆրանսիայում է, որ օրենսդրությամբ հստակ ամրագրված է, որ բջիջները, օրգաններն ու հյուսվածքները չեն ճանաչվում որպես սեփականության իրավունքի օբյեկտ³²:

V. Մարդու (այդ թվում դիակի) օրգանների և հյուսվածքների իրավական կարգավիճակի ուսումնասիրությունը

Ըստ էության կարելի է առանձնացնել օրգանների և հյուսվածքների մի քանի խումբ՝ կախված օրգանի կամ հյուսվածքի՝ դոնորի կամ ռեցիպիենտի համար փոխպատվաստման գործընթացի կազմակերպման արդիականությունից:

Նախ՝ դրանք այն օրգանները և հյուսվածքներն են, որոնց հեռացումը մարդու օրգանիզմից բացարձակապես չի ազդի մարդու կյանքի և առողջության վրա (մազեր, եղունգներ, մաշկի մասնիկներ, նվազագույն չափաբաժնով արյուն, որը վերցվում է բժշկական միջամտությամբ, քրտինք և այլ արտազատվող նյութեր):

Երկրորդ՝ օրգաններ և հյուսվածքներ, որոնց հեռացումը կարող է զգալի վնաս հասցնել մարդու առողջությանը կամ նույնիսկ հանգեցնել նրա մահվան:

Երրորդ՝ դիակը, նրա օրգաններն ու հյուսվածքները:

Հարկ է նշել, որ «Մարդուն օրգաններ և (կամ) հյուսվածքներ փոխպատվաստելու մասին» օրենքը տարածվում է միայն օրգանների և հյուսվածքների երկրորդ և երրորդ խմբերի վրա, իսկ վերարտադրողական նյութերի (ամորձիներ կամ սաղմեր, ձու, սերմնաբջիջ, ձվարաններ), ինչպես նաև արյան և դրա տարրերի իրավական կարգավիճակի վրա չի տարածվում:

Գույքային իրավունքի տեսության տեսանկյունից անհրաժեշտ է դիտարկել հետևյալ օբյեկտների կարգավիճակը.

Անձի մարմինը, որը կենդանության օրոք չի կարող ստանալ գույքային կարգավիճակ և ներգրավվել քաղաքացիական շրջանառության մեջ:

Մահացած անձի մարմինը, որը սուբյեկտի նյութական մարմնավորում չէ, և այդ հիմքով դրա նկատմամբ գույքային իրավունքի ճանաչումը խնդրահարույց չի լինի:

Մարդու մարմնից անջատված մասերը (օրգանները կամ հյուսվածքները), որոնց որպես գույք ճանաչելը չպետք է խախտի մարդու անձնական ոչ գույքային իրավունքները դրանց հեռացման պահին և առավել ևս հանգեցնի օրգանիզմի կենսագործունեության կամ անձի՝ որպես իրավունքի սուբյեկտի գոյության դադարեցմանը:

Հայաստանի Հանրապետության փոխպատվաստման մասին օրենսդրության համապարփակ վերլուծությունը ցույց է տալիս, որ օրգաններն ու հյուսվածքները քաղաքացիական շրջանառության մեջ գտնվող բացառիկ առարկաներ են, որոնք օգտագործվում են բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների մատուցման նպատակով, միաժամանակ կարող են լինել այլ գործարքների առարկա(օրինակ՝

³² Sté u Code civil de France. 21.03.1804. URL: www.legifrance.gouv.fr հղումով, հասանելի է 15.09.2024 թվականի դրությամբ:

նվիրատվություն, ծառայությունների մատուցում), բացառությամբ առուվաճառքի:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում մարդու օրգանների և հյուսվածքների՝ որպես քաղաքացիական իրավունքների օբյեկտի վերաբերյալ որևէ կարգավորում առկա չէ:

Նույն օրենսգրքի 132-րդ հոդվածի համաձայն քաղաքացիական իրավունքների օբյեկտներն են՝

1) գույքը՝ ներառյալ դրամական միջոցները, արժեթղթերը և գույքային իրավունքները.

2) աշխատանքները և ծառայությունները.

3) տեղեկատվությունը.

4) մտավոր գործունեության արդյունքները՝ ներառյալ դրանց նկատմամբ բացառիկ իրավունքները (մտավոր սեփականություն).

5) ոչ նյութական բարիքները:

Եթե մարդու օրգանները և հյուսվածքները դիտարկենք որպես ոչ նյութական բարիքներ, ապա թեև նույն օրենսգրքի 133-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն քաղաքացիական իրավունքների օբյեկտները կարող են ազատորեն օտարվել կամ անցնել մեկ անձից մյուսին համապարփակ իրավահաջորդության կարգով (ժառանգում, իրավաբանական անձի վերակազմակերպում), կամ այլ եղանակով, եթե դրանք հանված չեն շրջանառությունից, կամ դրանց շրջանառությունը սահմանափակված չէ, այնուամենայնիվ 162-րդ հոդվածի 1-ին մասի³³ 33-րդ կետի համաձայն, որով տրվում է ոչ նյութական բարիքների հասկացությունը, ի թիվս այլնի, անձի կյանքը և առողջությունը, անձնական անձեռնմխելիությունը, որի բաղադրատարր են նաև ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիությունը, քաղաքացուն ի ծնե կամ օրենքի ուժով պատկանող այլ անձնական ոչ գույքային իրավունքները և ոչ նյութական բարիքները դիտարկում են որպես անօտարելի ու անփոխանցելի՝ բացառություն նախատեսելով միայն մահացած անձի համար:

Վերոգրյալից հետևում է, որ անհրաժեշտ է օրենսդրությամբ հստակ սահմանված կառուցակարգով սահմանափակել օրգանների և հյուսվածքների շրջանառությունը, որպեսզի ժառանգման հարց չառաջանա կամ առաջնահերթության կարգով փոխանցվի միայն այն հարազատին, որը փոխապատվաստման կարիք ունի:

«Մարդուն օրգաններ և (կամ) հյուսվածքներ փոխապատվաստելու մասին» օրենքի³⁴ 7-րդ հոդվածի համաձայն փոխապատվաստման նպատակով դիակից օրգաններ և

³³ Անձի կյանքը և առողջությունը, արժանապատվությունը, անձնական անձեռնմխելիությունը, պատիվն ու բարի անունը, գործարար համբավը, մասնավոր կյանքի անձեռնմխելիությունը, անձնական ու ընտանեկան կյանքի գաղտնիությունը, ազատ տեղաշարժվելու, բնակվելու և գտնվելու վայր ընտրելու իրավունքը, անվան իրավունքը, հեղինակության իրավունքն ու քաղաքացուն ի ծնե կամ օրենքի ուժով պատկանող այլ անձնական ոչ գույքային իրավունքները և ոչ նյութական բարիքներն անօտարելի են ու անփոխանցելի: Օրենքով նախատեսված դեպքերում ու կարգով անձնական ոչ գույքային իրավունքները և այլ ոչ նյութական բարիքները, որոնք պատկանել են մահացածին, կարող են իրականացվել ու պաշտպանվել այլ անձանց՝ ներառյալ իրավատիրոջ ժառանգների կողմից:

³⁴ Ընդունվել է 16.04.2002 թվականին, ուժի մեջ է մտել 25.11.2002 թվականին: ՀՀՊՏ 2002.05.29/16(191) Հոդ.347

հյուսվածքներ չեն կարող վերցվել միայն այն դեպքում, երբ տվյալ անձն իր կենդանության օրոք, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, ներկայացրել է իր անհամաձայնությունը մահից հետո հանդես գալու՝ որպես օրգանների և հյուսվածքների դոնոր:

Օրգանների և հյուսվածքների դոնորների և ռեցիպիենտների ռեեստրում նրա՝ որպես դիակային դոնոր հանդես գալու գրավոր անհամաձայնության բացակայության դեպքում փոխպատվաստման նպատակով դիակից օրգաններ և հյուսվածքներ կարող են վերցվել նրա հարազատների (ազգականների) համաձայնությամբ հետևյալ առաջնահերթությամբ.

- ա) ամուսինը,
- բ) չափահաս երեխան,
- գ) ծնողներից մեկը,
- դ) հարազատ եղբայրը կամ քույրը,
- ե) հայրական կամ մայրական կողմի պապը կամ տատը:

Միևնույն առաջնահերթությամբ մի քանի հարազատների առկայության դեպքում բավարար են նրանցից մեկի տեղեկացվածությունը և համաձայնությունը: Ըստ էության հարազատի համաձայնությունը ստանալը իր մեջ գործարքի տարրեր է պարունակում՝ դրանով իսկ բարձրացնելով օրգանների և հյուսվածքների առևտրայնացման հնարավորությունը:

Այստեղ հարազատների (ազգականների) համաձայնությունը ստանալու պահանջը հակասություն է առաջացնում նույն հոդվածի 1-ին մասի կարգավորման հետ, քանի որ եթե անձը իր կենդանության օրոք չի ներկայացրել իր անհամաձայնությունը մահից հետո հանդես գալու՝ որպես օրգանների և հյուսվածքների դոնոր, ապա այլ անձի, ներառյալ հարազատի (ազգականի) համաձայնությունը չպետք է դիտարկվի, քանի որ նույնիսկ նրանց անհամաձայնության դեպքում, առաջնային պետք է լինի անձի կենդանության օրոք թեկուզև անգործությամբ դրսևորված կամքը: Բացի այդ հարազատների (ազգականների) համաձայնությունը ստանալու ընթացակարգ օրենսդրությամբ նախատեսված չէ³⁵ և պարզ չէ, թե ինչ բնույթ է կրում, ինչ ձևակերպում ունի հոդվածի 3-րդ մասում նշված տեղեկացվածությունը, միաժամանակ կարգավորված չէ նաև կենդանության օրոք մահից հետո որպես օրգանների և հյուսվածքների դոնոր հանդես գալու անհամաձայնությունը չներկայացնելու դեպքում հարազատների՝ (ազգականների) անձի մահից հետո փոխպատվաստման նպատակով դիակից

³⁵ ՀՀ առողջապահության նախարարի 2019 թվականի փետրվարի 1-ի թիվ 05-Ն հրամանի հավելվածի 4-րդ կետի համաձայն՝ դիակային դոնոր հանդես գալու համաձայնություն ստանալու նպատակով դոնորների և ռեցիպիենտների ռեեստրի կողմից հաստատված/կամ նշանակված համակարգողի կողմից դիակային դոնորի հարազատներին տրվում է լիարժեք տեղեկատվություն գործընթացի վերաբերյալ, տարվում է գրույց, բացատրական աշխատանք, որը թերևս միակ իրավական ձևակերպումն է դիակային դոնորի հարազատի համաձայնությունը ստանալու համար, սակայն դրա արդյունքում համաձայնության գրավոր ձևակերպման վերաբերյալ իրավական կարգավորման հարցում առկա է բաց և համաձայնությունը գործնականում ստացվում է միայն հարազատների տեղեկացվածության մակարդակում:

օրգաններ և հյուսվածքներ վերցնելու անհամաձայնության դեպքը, ինչի արդյունքում ըստ էության այդ նորմը դեկլարատիվ բնույթ է կրում: Ավելորդ չէ խոսել միևնույն հերթի առաջնահերթությամբ մի քանի հարազատների առկայության դեպքում նրանցից մեկից համաձայնություն ստանալու դեպքում նրանց միջև այդ հարցի շուրջ ծագող տարաձայնությունների հնարավորության մասին, ինչը հավանական է հարազատների (ազգականների) այդ հարցին բարոյական, էթիկական, կրոնական կամ այլ տեսանկյունից մոտենալու պարագայում, մյուս կողմից էլ լրացուցիչ համաձայնության ձեռքբերումը կարող է օրգանների կամ հյուսվածքների վաճառքի ռիսկ առաջացնել:

Կարելի է փաստել, որ Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը տալիս է մահից հետո օրգանների և հյուսվածքների տնօրինման իրավասություն, ինչը կարող է առաջացնել նաև թյուր կարծիք, որ օրգաններն ու հյուսվածքները կարող են ժառանգվել: Այստեղից կարելի է հետևություն անել, որ անհրաժեշտ է օրենքի մակարդակում մարդու օրգանների և հյուսվածքների շրջանառությունը սահմանափակել՝ հստակ ուրվագծելով դրա սահմանները, որպեսզի քաղաքացիաիրավական հարաբերություններում տարբերակումներ չառաջանան դրանց շրջանառության և առևտրայնաման հարցերի շուրջ:

Կասկածից վեր է, որ մինչև մարդու մարմնից հեռացման պահը մարդու օրգաններն ու հյուսվածքները մեկ ամբողջական օրգանիզմի մաս են կազմում և, հետևաբար, պաշտպանված են անձնական ոչ գույքային իրավունքների հիման վրա, որոնք ապահովում են անձի ամբողջականությունը, ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիությունը: Հեռացման պահից այդ անատոմիական նյութերը կորցնում են իրենց կապը օրգանների կամ հյուսվածքների դոնորի հետ և դառնում նյութական աշխարհի առարկաներ, ինչը նույնպես հիմք է տալիս դրանք դասակարգելու իրերի շարքին:

VI. Օրգանների և հյուսվածքների իրավական ռեժիմը

Օրգանների և հյուսվածքների իրավական ռեժիմը պետք է տարբերակված լինի, քանի որ օրգաններն ու հյուսվածքները կարող են լինել նաև ոչ մարդկային ծագումնաբանության: Մասնավորապես, բժշկական պրակտիկայում կիրառվում է քսենոտրանսպլանտացիան³⁶, որը ենթադրում է օրգանի կամ հյուսվածքի փոխպատվաստում կենդանուց մարդուն, թեև փոխպատվաստման այս տեսակը դեռևս մնում է փորձարարական փուլում: Այնուամենայնիվ, ակնհայտ է, որ մարդու փոխպատվաստման համար կենդանուց հեռացված օրգանների և հյուսվածքների իրավական ռեժիմը պետք է տարբերվի մարդկային ծագման օրգանների և հյուսվածքների իրավական ռեժիմից: Ի վերջո, օրգաններն ու հյուսվածքները կարող են արհեստականորեն ստեղծվել նաև գենետիկ ինժեներիայի ժամանակակից

³⁶ Տե՛ս

<https://hy.wikipedia.org/wiki/%D5%94%D5%BD%D5%A5%D5%B6%D5%B8%D5%BF%D6%80%D5%A1%D5%B6%D5%BD%D5%BA%D5%AC%D5%A1%D5%B6%D5%BF%D5%A1%D6%81%D5%AB%D5%A1> հղումով, հասանելի է 20.08.2024 թվականի դրությամբ:

հնարավորություններով, ինչը նույնպես պահանջում է տարբերակված մոտեցում իրավական ռեժիմի սահմանման համատեքստում:

Մարդու կենսաբանական նյութերի իրավական կարգավիճակի առանձնահատկությունն այն է, որ դրանք, նույնիսկ նյութականացումից հետո, ունեն ոչ նյութական արժեք, ինչը կանխորոշված է ոչ միայն դրանց մարդուց ստացված լինելու բնույթով, այլ նաև դոնորից առանձին դրանց գոյության հատուկ նպատակով, որն արտահայտվում է ռեցիպիենտին կորցրած առողջությունը վերականգնելու կամ կյանքը փրկելու, այսինքն՝ նրա անձնական ոչ նյութական օգուտները պահպանելու նպատակի մեջ:

Քաղաքացիական շրջանառության մեջ օրգանների և հյուսվածքների իրավական ռեժիմը սահմանելիս անհրաժեշտ է հաշվի առնել, որ դրանք մարդու օրգանիզմից հեռացվում են մեկ հստակ՝ փոխպատվաստման արդյունքում այլ օրգանիզմի մաս դառնալու նպատակով, որն էլ սահմանում է դրանց իրավական բնույթը և պայմանավորում սոցիալական նշանակալի արժեքը: Հետևաբար, դրանք հատուկ առարկաներ են, որոնց յուրահատկությունը պայմանավորված է կիրառման նպատակով, ինչն էլ պետք է հիմք հանդիսանա օրգաններն ու հյուսվածքները որպես քաղաքացիական իրավունքների սահմանափակ շրջանառությամբ անկախ օբյեկտներ դասակարգելու համար: Ըստ էության դրանք պետք է ստանան հատուկ իրավական ռեժիմ՝ հաշվի առնելով դրանց ծագումնաբանությունը, բնույթը, օրգանիզմից հեռացման նպատակը, առևտրայնացման արգելքը՝ իրավական որոշակիության ապահովման պայմաններում:

VII. Մարդու օրգանների և հյուսվածքների փոխպատվաստման ժամանակ դոնորի ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության ապահովումը

Կենսաբժշկական հետազոտությունների համար մարդու օրգանների և հյուսվածքների օգտագործման ժամանակ անձի ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության ապահովման միակ երաշխիքը, տվյալ դեպքում հանդիսանում է իրազեկված համաձայնության հայեցակարգը³⁷, որն ըստ էության անալոգիայի կարգով կիրառվում է այդ հարաբերությունների նկատմամբ: Իրազեկված համաձայնությունը ըստ էության նաև հանդիսանում է բժշկական գաղտնիքի և անձնական տվյալների գաղտնիությունը պահպանելու հիմնական մեխանիզմը, ներառյալ այն տվյալների, որոնք պարունակվում են մարդուց առանձնացված կենսաբանական նյութերում՝ որպես անձնական տվյալների և անձի մասնավոր կյանքի անձեռնմխելիության ապահովման մեխանիզմ: Ներկայումս իրազեկված համաձայնությունը գործում է որպես համընհանուր և հաճախ հիմնական գործիք կենսաբժշկության ոլորտում ծագող տարբեր բնույթի հարաբերությունները կարգավորելու համար՝ բժշկական օգնություն տրամադրելիս, բժշկական, գիտական, արդյունաբերական և այլ նպատակներով գիտական հե-

³⁷ Տե՛ս <https://pub.ysu.am/index.php/state-and-law/article/view/9232> հղումով, հասանելի է 20.08.2024 թվականի դրությամբ:

տագոտություններ կատարելիս (ինչպես մարդու անմիջական մասնակցությամբ, այնպես էլ առանց դրա), վերարտադրողական տեխնոլոգիաների կիրառման, գենետիկական թեստավորման անցկացման, նվիրատվության, փոխպատվաստման, կենսաանյութերի օգտագործման և դրանցում պարունակվող գենետիկական և այլ տվյալների մշակման ժամանակ:

Նման համընդհանուր կիրառումը հանգեցնում է իրազեկված համաձայնության իրավական իմաստի ընդլայնմանը, այն քաղաքացիական գործարքին բնորոշ իրավական հետևանքներ է ստանում, ինչը խոչընդոտում է դրա նախնական նպատակների իրականացմանը: Արդյունքում, այս ոլորտում գործող օրենսդրությունը չի արտացոլում մարդու մարմնից առանձնացված օրգանների և հյուսվածքների օգտագործման հետ կապված հարաբերությունների իրավական էությունը և այն հարմարեցված չէ ժամանակակից իրականության փոփոխված հանգամանքներին՝ ստեղծելով իրավունքների խախտման վտանգ:

Առողջապահության նախարարի 2024 թվականի հուլիսի 10-ի թիվ 215-Ն հրամանի³⁸ հավելվածի 6-րդ կետի համաձայն՝ բժշկական միջամտության համար գրավոր համաձայնություն տալու դեպքերի ցանկում առաջին անգամ նախատեսվել են մարդու օրգանների և (կամ) հյուսվածքների, ինչպես նաև ոսկրածուծի/արյունաստեղծ ցողունային բջիջների դոնորության և փոխպատվաստման նպատակով բժշկական օգնության և սպասարկման ընթացքում իրականացվող միջամտությունները: Թեև Հելսինկյան հռչակագիրը³⁹, իր հերթին, պարտավորեցնում է հետազոտողին ստանալ այդ համաձայնությունը:

VIII. Եզրակացություն

Ամփոփելով վերոգրյալը կարելի է փաստել, որ մարդու օրգանները և հյուսվածքները, որոնք կարելի է դասակարգել որպես շարժական, անհատապես որոշվող, սպառվող իրեր, կարող են իրավական իմաստով դիտվել որպես գույք, որոնց տարանջատումը ուղղակիորեն կամ անուղղակիորեն չի հանգեցնի սուբյեկտի՝ դրանց անմիջական կրողի, կենսագոյության դադարեցմանը և չի ազդի նրա՝ որպես իրավունքի սուբյեկտի կարգավիճակի վրա: Մարդու մարմնի մասերի գույքային-իրավական կարգավիճակի ի հայտ գալը կապված է մարմնից դրանց փաստացի անջատման, անձի՝ որպես իրավունքի սուբյեկտի հետ դրանց նույնականացման դադարեցման հետ:

Վերլուծության արդյունքում հանգում ենք այն եզրակացությանը, որ օրգաններն ու հյուսվածքները, իրենց հատուկ բնույթով պայմանավորված, պետք է դասակարգվեն որպես քաղաքացիական իրավունքների անկախ օբյեկտներ՝ սահմանափակ շրջանառությամբ:

³⁸ Ընդունվել է 10.07.2024 թվականին, ուժի մեջ է մտել 19.07.2024 թվականին: Միասնական կայք 2024.07.08-2024.07.21 Պաշտոնական հրապարակման օրը 18.07.2024:

³⁹ World Medical Association. World Medical Association Declaration of Helsinki: ethical principles for medical research involving human subjects. JAMA. 2013 Nov 27;310(20):2191-4. doi: 10.1001/jama.2013.281053. PMID: 24141714.

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով այն հանգամանքը, որ առանց օրենսդրական հստակ կառուցակարգերի առկայության և առանց անձի իրազեկված համաձայնության մարդու մարմնի նկատմամբ ցանկացած միջամտություն իրականացնելը իրենից ներկայացնում է անձի ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության խախտում՝ առաջարկում ենք խնդրի լուծման նպատակով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 132-րդ հոդվածում թվարկվող գույքի ցանկում լրացնել նաև մարդու օրգանները և հյուսվածքները՝ որպես քաղաքացիական իրավունքների օբյեկտ՝ դրանց վերագրելով իրերի իրավական կարգավիճակ: Միաժամանակ անհրաժեշտ է «Մարդուն օրգաններ և (կամ) հյուսվածքներ փոխպատվաստելու մասին» օրենքում սահմանել կարգավորումներ, որոնք հստակ կկարգավորեն օրգանների և հյուսվածքների քաղաքացիական շրջանառության թույլատրելի սահմանները:

**ПРАВОВОЙ СТАТУС ОРГАНОВ И ТКАНЕЙ ЧЕЛОВЕКА,
ИСПОЛЬЗУЕМЫХ ДЛЯ ТРАНСПЛАНТАЦИИ В РАМКАХ
БИМЕДИЦИНСКИХ ИССЛЕДОВАНИЙ,
В ГРАЖДАНСКО-ПРАВОВОМ ОБОРОТЕ**

Анна Мкртумян

Соискатель кафедры конституционного права ЕГУ

Аннотация:

В связи с прогрессивными и стремительными достижениями современной медицины, а также развитием возможностей проведения биомедицинских исследований в области трансплантологии, вопрос определения правового статуса органов и тканей человека в гражданском обороте становится все более актуальным с точки зрения обеспечения физической и психической неприкосновенности личности. В гражданском обороте органы и ткани человека являются объектами гражданского договора, имеющими имущественный статус, однако их правовой статус законодательством не определен, в результате чего биомедицинские исследования в области трансплантологии проводятся в условиях законодательного вакуума, что чревато с риском нарушения или ущемления прав человека.

Решением этой проблемы является включение органов и тканей человека в перечень объектов прав, предусмотренных Гражданским кодексом, установление их правового режима с учетом цели их изъятия из организма человека — в результате трансплантации стать частью другого организма для спасения жизни человека, восстановления здоровья.

Ключевые слова: орган; ткань; трансплантация; биомедицинское исследование; право на собственность; вещь; объект прав; правовой режим; донор; реципиент; гражданский кодекс; информированное согласие; физическая и психическая неприкосновенность.

THE LEGAL STATUS OF HUMAN ORGANS AND TISSUES USED FOR TRANSPLANTATION IN THE FRAMEWORK OF BIOMEDICAL RESEARCH IN CIVIL CIRCULATION

Anna Mkrtumyan

Applicant at the YSU Chair of Constitutional Law

Abstract

In connection with the progressive and rapid achievements of modern medicine, as well as the development of opportunities for conducting biomedical research in the field of transplantology, the issue of determining the legal status of human organs and tissues in civil circulation is becoming increasingly relevant in terms of ensuring the physical and mental integrity of the individual. In civil circulation, human organs and tissues are objects of a civil contract that have property status, but their legal status is not defined by law, as a result of which biomedical research in the field of transplantology is carried out in a legislative vacuum, which is fraught with the risk of violating or infringing human rights. The solution to this problem is to include human organs and tissues in the list of objects of rights provided for by the Civil Code, establishing their legal regime taking into account the purpose of their removal from the human body - as a result of transplantation to become part of another organism to save a person's life, restore health.

Key words: organ; tissue; transplantation; biomedical research; property rights; goods; object of rights; legal regime; donor, recipient; civil code; informed consent, physical and mental integrity.

Հոդվածը գրախոսվել է՝ 03.03.2025թ.
Ներկայացվել է տպագրության՝ 10.03.2025թ.

**ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՕՐԵՆՔՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ՆՈՐՄԱՏԻՎ
ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՄԻԱՏԵՍԱԿ ԿԻՐԱՌՄԱՆ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ
ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ
ՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՍՊԵԿՏՆԵՐ**

Նալբանդյան Անահիտ

ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի

և իրավունքի ինստիտուտի հայցորդ

DOI: 10.63925/18294847-2025.19op-11

Համառոտագիր: Սույն հոդվածում հեղինակը հանգամանորեն քննարկել է ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառման և դատական պրակտիկայի (իրավական դիրքորոշումների) միասնակության ապահովման վերաբերյալ տեսական և կիրառական ասպեկտները: Հոդվածում հիմնավորվում է այն տեսակետը, որ 2021-2022 թթ. օրենսդրական փոփոխությունները որոշակիորեն նպաստում են, որպեսզի Վճռաբեկ դատարանը կատարի իր առաքելությունը նշված ոլորտում: Բայց միևնույն ժամանակ ընդգծվում է, որ կան դեռևս խնդիրներ օրենսդրական դաշտում և պրակտիկայում, որոնք պետք է համարժեք լուծումներ ստանան սահմանադրական և դատաիրավական բարեփոխումների համատեքստում:

Բանալի բառեր՝ դատաիրավական բարեփոխումներ, դատական պրակտիկա, օրենսդրություն, սահմանադրական փոփոխություններ, նորմատիվ իրավական ակտ, արդարադատություն:

Հայաստանի Հանրապետությունը դատաիրավական բարեփոխումների շրջադարձային փուլում է. 2021-2022 թվականներին կատարվեցին օրենսդրական հսկայական փոփոխություններ՝ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում, «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքում, ընդունվեցին նոր քրեական և քրեական դատավարության օրենսգրքերը, որոնք կոչված են բարելավելու և բարձրացնելու դատական իշխանության հեղինակությունը, արդարադատության արդյունավետությունը, դատավորների մասնագիտական որակները, ինչպես նաև մտցվեց կոռուպցիոն հանցագործությունների քննության մասնագիտացված դատարանների համակարգը՝ առաջին ատյանի, վերաքննիչ և վճռաբեկ դատարանում հակակոռուպցիոն հանցագործությունների քննության պալատ: Նախատեսվում է նաև դատավորների թվակազմի ավելացում, դատարանների ծանրաբեռնվածության թեթևացում և այլն:

Անվիճելի է, որ ցանկացած նոր բարեփոխում պետք է էականորեն տարբերվի նախկին բարեփոխումներից: Ասվածը հատկապես վերաբերում է արդարադատության

համակարգին և դատական ակտերին: Այս առումով անհրաժեշտ է նշել, որ նախկին բարեփոխումների վերաբերյալ միջազգային և ազգային գնահատականները հիմք են տալիս արձանագրելու, որ այդ բարեփոխումները, մի շարք նորամուծություններով հանդերձ, իրենց նպատակին չհասան, անձի իրավունքների և ազատությունների, դատական պաշտպանության արդյունավետությունը չբարձրացավ¹: Մեր կարծիքով, այդպիսի չափանիշների թվին կարելի է դասել դատարանի (դատավորի) անկախության երաշխիքները, անաչառությունը և մասնագիտական գործիմացությունը, արդարադատության որակը, դատական ակտերի և դատական պրակտիկայի հեղինակության և դրանց իրավագործության ուժը, դատարանների թափանցիկությունը և մատչելիության իրավունքը, դատարանների նկատմամբ հասարակական վերահսկողության և վստահության ազդեցությունը և այլն:

Հենց վերոնշյալ հանգամանքների վրա է ուշադրություն դարձնում 2022-2026 թվականների դատաիրավական բարեփոխումների ռազմավարությունը: Խոսելով մեզ հուզող հարցի՝ դատական նախադեպի մասին՝ պետք է նշել, որ այն ձևավորվում է ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից՝ որպես բարձրագույն դատական ատյան՝ բացառությամբ սահմանադրական արդարադատության ոլորտի: Վճռաբեկ դատարանի գործունեության նպատակն է ապահովել օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի, ինչպես նաև դատական պրակտիկայի միատեսակ կիրառությունը, ինչպես նաև վերացնել մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումները (ՀՀ Սահմանադրության 171-րդ հոդված): Նշված նպատակները Վճռաբեկ դատարանն իրականացնում է վերաքննիչ դատարանի, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ իր հրապարակված դատական ակտերը վերանայելու միջոցով:

Այսպիսով՝ ՀՀ ընդհանուր իրավասության, այդ թվում՝ մասնագիտացված դատարանների համակարգում Վճռաբեկ դատարանն առանձնանում է հետևյալ հատկանիշներով. 1) Վճռաբեկ դատարանը քաղաքացիական, քրեական, վարչական, սնանկության և հակակոռուպցիոն հանցագործությունների քննության արդարադատության ոլորտում հանդիսանում է բարձրագույն ատյան, 2) Վճռաբեկ դատարանն օրենքով սահմանված կոնկրետ գործերով ընդունում է վերջնական դատական ակտ, որը կարող է ունենալ նախադեպային բնույթ, հետևաբար, օրինակելի և պարտադիր լինի մյուս դատական ատյանների համար, 3) Վճռաբեկ դատարանը կոչված է ապահովելու օրենքների և մյուս նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը, 4) Վճռաբեկ դատարանը նաև կոչված է ապահովելու դատական պրակտիկայի միասնականությունը, 5) Վճռաբեկ դատարանը, օրենքով սահմանված կարգով, կոչված է վերացնելու մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումները:

¹ Տե՛ս **Ավետիսյան Սերժիկ**, Հայաստանի Հանրապետության դատական համակարգի և քրեական դատավարության զարգացման հիմնախնդիրները: Երևան, 2010, էջ 5:

Միևնույն ժամանակ, հարկ է ընդգծել, որ «Բարձրագույն դատական մարմին» հասկացությունն ամեննին չի ենթադրում դատական համակարգի տարբեր աստիճանների միջև ղեկավարման կամ ենթակայության հարաբերություններ: Վճռաբեկ դատարանը ՀՀ դատական համակարգի բարձրագույն դատական մարմինն է, քանի որ կայացնում է վերջնական բնույթի որոշում՝ վերաքննիչ դատարանի վճիռների, դատավճիռների և որոշումների վերաբերյալ:

Վճռաբեկ դատարանի ակտն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման: Վճռաբեկ դատարանի ակտերը ենթակա են հրապարակման «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրում»:

Մեր կարծիքով՝ ՀՀ վճռաբեկ դատարանի նորմաստեղծ գործունեությունը (այս բառի տեսական և կիրառական իմաստով, բայց ոչ օրենսդրական առումով) իրականացվում է հետևյալ երկու հիմնական եղանակով. ա) օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառման և բ) դատական պրակտիկայի միասնականության ապահովման միջոցով:

Օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը Վճռաբեկ դատարանն ապահովում է, եթե՝ 1) առկա է իրավունքի զարգացման ինդիք, 2) տարբեր դատական գործերով դատարանների կողմից նորմատիվ իրավական ակտեր տարաբնույթ է կիրառվել և 3) նորմատիվ իրավական ակտեր չի կիրառվել տարաբնույթ իրավաբնական հետևանքով (ՀՀ դատական օրենսգիրք, 29-րդ հոդված, 3-րդ մաս):

Դատական պրակտիկայի միասնականության ապահովման գործառույթը դեռևս օրենսդրական ամրագրում չի ստացել: Այս առումով հաշվի առնելով մի շարք երկրների (հատկապես ՌԴ Գերագույն դատարանի) փորձը՝ այդ գործառույթը ՀՀ վճռաբեկ դատարանը լիարժեք կարող է իրականացնել, եթե օրենսդրական կարգով ներդրվի, այսպես կոչված «պլենումի» (բարձրագույն դատական աստիճանի համաժողովի) ինստիտուտը, որով պարբերաբար (որպես կանոն՝ տարեկան) գումարվում է բարձրագույն դատարանի համաժողով, որում քննարկվում և ամփոփվում է տարեկան կտրվածքով դատական պրակտիկայի նյութերը (տարբեր ոլորտների վերաբերյալ), արտահայտվում են դրական և բացասական (թույլ տրված դատական սխալները՝ օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի ճիշտ կիրառման, իրավաբանական փաստերի գնահատման և այլն) կողմերը և դատավորների, ինչպես նաև փորձագետների մասնակցությամբ համընդհանուր համաձայնությամբ ընդունված պարզաբանումները, մեկնությունները, իրավադրույթները, դատական նորմերը (նախադեպերը, իրավական դիրքորոշումները, հանձնարարականները և այլն), որոնք կապահովեն դատական պրակտիկայի միասնականությունը և կբարձրացնեն արդարադատության արդյունավետությունն ու որակը:

Իրավակարգավորումների ոլորտում օրենսդրական բացերի, իրավական անորոշությունների, իրավական նորմերի հակասությունների, դրանց ոչ հստակ ձևակերպումների և այլ թերությունների մեծ մասը բացահայտվում է հենց օրենսդրության իրացման (կիրառման), հատկապես՝ դատարանի կողմից կոնկրետ գործերի քննության

և լուծման գործընթացում: Հետևաբար, այդ գործընթացն այնպես պետք է կազմակերպվի (ընթանա), որ դատարանը հնարավորություն ունենա այդ բացերը, հակասությունները և մյուս թերությունները հաղթահարելու համար օգտագործել իր կուտակած և արդեն օբյեկտավորված փորձն ու մասնագիտական հմտությունները: Իրավագիտության և օրենսդրության մեջ, ինչպես նաև իրավակիրառ պրակտիկայում որպես այդպիսի իրավաբանական միջոց դիտարկվում է դատական մտավոր բարդ գործունեության արդյունք հանդիսացող դատավարական մեկնաբանությունը, որն ուղղված է կոնկրետ գործեր լուծելիս կիրառվող իրավական նորմի (նորմերի) իմաստի և բովանդակության բացահայտմանը²:

Հաշվի առնելով, որ իրավական նորմերի դատական մեկնաբանման բարդ գործընթացին տիրապետում է միայն գործնական փորձ ունեցող դատավորական խավը, (մեկնաբանությունը սերտորեն կապված է Ժամանակակից իրավակիրառության հետ) դատավարագետ Ա.Վ. Ավերինն իրավացիորեն նշում է, որ «Օրենքի մեկնաբանությունը բարդ մտավոր գործընթաց է, որը պահանջում է առնվազն երկու պահանջների առկայություն՝ մարդու կողմից ոչ միայն գործող օրենսդրության, այլ նաև իրավաբանական մեկնաբանության բոլոր կանոնների խորագույն իմացություն. ակնհայտ ուստպիս է բոլոր քաղաքացիներից պահանջել հասնելու այդ պահանջներից թեկուզև մեկին»³:

Իրավական նորմերի մեկնաբանման հարցում դատավորներին առաջնային դերակատարում վերագրելը պայմանավորված է երկու հիմնական հանգամանքներով՝ ա) վիճելի իրավական իրադրությունների կարգավորման հիմնական բեռն ընկած է դատարանի վրա, բ) հենց դատարանն է հանդիսանում նման վեճերի լուծման վերջնական ատյանը: Չէ՞ որ ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանությունն օրենքով սահմանված կարգով, սկզբունքներով և դատավարական արժեքների պահպանմամբ ընդհանրապես իրականացնում է դատարանը, իսկ դրանց պաշտպանությունը վարչական կարգով իրականացվում է միայն օրենքով նախատեսված սահմանափակ դեպքերում և այն էլ՝ վարչական կարգով ընդունված որոշումը միշտ էլ կարող է բողոքարկվել դատարան:

Իրավական նորմի (նորմերի) մեկնաբանության անհրաժեշտությունը ծագում է նախևառաջ իրավական ակտերի արտաքին ձևի մշակման ժամանակ կամ իրավաբանական տեխնիկայի եղանակներ և միջոցներ ընտրելիս, որն իր հերթին կապված է իրավական նորմի բովանդակության, բառային-փաստաթղթային շարադրման և այդ բովանդակության նորմատիվային, հատուկ իրավաբանական արտահայտման ձևերի հետ: Այդ անհրաժեշտությունն առաջ է գալիս այն ժամանակ,

² Տե՛ս **Պետրոսյան Գ.**, Բացերն իրավունքում և Հայաստանի Հանրապետության օրենսդրության մեջ: Երևան, 2019, էջ 263:

³ Տե՛ս **Аверин А.В.**, Правоприменительная деятельность суда и формирование научно-правового сознания у судей. М., 2003. էջ 172:

Երբ օրենսդիրը չի կարողանում իրավական նորմում լիարժեք կամ հստակ ձևակերպել իր մտադրությունը, և դրա կիրառման ժամանակ կարիք է առաջանում պարզաբանել նորմի իսկական իմաստը: Հենց այդ նկատի ունի Ս.Ս Ալեքսենը, երբ առաջարկում է «մեկնաբանում» եզրույթը դիտարկել որպես իրավաբանական տեխնիկայի շարունակություն, որի նպատակն է ապահովել օրենսդրի՝ այդ ակտերում ամրագրված կամքի լրիվությունն ու ճշգրտությունը և այն, թե ինչպես է հարկավոր պարզաբանել ու արդյունավետորեն իրացնել այդ կամքն արտացոլող նորմերը⁴: Ասվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ իրավունքի նորմի իրավաբանական մեկնաբանությունը դատարանին և իրավակիրառ այլ մարմիններին հնարավորություն է ընձեռում լիարժեք բացահայտել և կոնկրետացնել նորմի ողջ իմաստը, իրավաբանական և սոցիալ-քաղաքական բովանդակությունները, սկզբունքներն այն դեպքերում, երբ նորմն ավելի լայն (ընդարձակ) բովանդակություն ունի, քան դրա բառացի կամ տառացի արտահայտությունն է: Այս կապակցությամբ ռուս դատավարագետ Տ.Նասիրովան նշում է. «Իրավական նորմերի հստակությունը կախված է տեքստի արտահայտությունից և ձևակերպումից, դրանց գործառնություններից և նպատակներից»⁵: Լրացնելով այս հեղինակի միտքը՝ Դ.Թումանովը նշում է. «Իրավական... նորմերը տարբերվում են իրենց առանձնահատկություններով, քանի որ քիչ չեն դեպքերը, երբ նորմի իրական իմաստը ոչ լրիվ է համընկնում դրա տառացի, բառային արտահայտության հետ: Որպեսզի հասկանալի լինի նորմի իսկական իմաստը, հաճախ հարկ է լինում դիմել մեկնաբանման տրամաբանական, պատմական կամ պարբերական եղանակներին, որոնց հետևանքով նորմի բացահայտման իմաստը կարող է նեղ կամ լայն լինել դրա տառացի իմաստից»⁶:

Այսպիսով՝ իրավունքի նորմի մեկնաբանման հիմքում առաջին հերթին և գլխավորապես պետք է դրվի դրա ընդհանուր իմաստը, դրա հիմնական նպատակը բնութագրող տարածական մեկնաբանության տեսակը, որովհետև դատարանների կողմից այն իրականացվում է մարդու և քաղաքացու սահմանադրական իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանությանն ուղղված գործերի քննության ժամանակ ու լրացնում է դրանց բովանդակությունը:

